«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունները

Համահամայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ «Մասնակցային քաղաքականություն՝ կայուն գյուղատնտեսություն» ենթադրամաշնորհային ծրագրի հետ համագործակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տեսակետներն ու կարծիքները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2018

Երևան 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 4
Ներածություն 5
Մեթոդաբանություն 6
Համահամայնքային քննարկումների ձևաչափը 6
Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 8
Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 11
Կոոպերացիայի ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա 11
Բնական աղետների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների և պարենային անվտանգության վրա 13
Գյուղատնտեսական ապահովագրության ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա 14
Ֆինանսների մատչելիության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա 16
Ենթակառուցվածքների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա 17
Գյուղատնտեսական տեխնիկայի հետ կապված խնդիրները եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման գործում 18
Գիտելիքի, խորհրդատվության, ծառայությունների և տեխնոլոգիաների ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա 20
Սննդի անվտանգության ապահովման խնդիրները գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման հարցերում 22
Իրացման, արտահանման, եկամուտների և հարկման ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա 23
Կառավարման, կոռուպցիայի և վստահության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա 27
Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք 30
Ա. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ 30
Բ. ԱՂԵՏՆԵՐ 37
Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ 40
Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 46
Ե. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՈՌՈԳՈՒՄ 53
Զ. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ 57
Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 60
Ը. ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 72
Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ 74

Ժ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ... 83
4. Սոցիալական երկխոսություն ... 92
Ա. ԿՈՌՊԵՐԱՑԻԱ ... 92
Բ. ԱՂԵՏՆԵՐ ... 100
Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ... 104
Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ ... 112
Ե. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՈՌՈԳՈՒՄ ... 121
Զ. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ ... 126
Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ... 129
Ը. ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ... 144
Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ ... 146
Ժ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ... 159
Հավելված 1. Գունային կոդավորում ... 167
Հավելված 2. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավոր զարգացումների քննարկման սցենարները ... 168
Սցենար 1. «Մայրիկը հենց այսպես էլ նկարագրում էր քեզ...» («Տղամարդիկ») ... 168
Սցենար 2. «Բա կարծում ես մի մարդով եզ շուռ տալը հե՞շտ է» («Մենք ենք, մեր սարերը») ... 169
Սցենար 3. «Կեղնի՞ մե օրմ, օր տեսնիմ էս աշխարհին ինչի՞ է ըսպես ծուռ...» («Մեր մանկության տանգոն») ... 170
Սցենար 4. «Էդ մեքենան ինչքան քոնն է, էդքան էլ իմն է, հասկացա՞ր...» («Խոշոր շահում»).. 171
Սցենար 5. «Ուրեմն ես՝ Փարսադանի տղա Մուրադս, գամ հասնեմ էստեղ՝ ինձ ասեն «նյե՞տ»...» («Հարսնացուն հյուսիսից») ... 172
Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը ... 173
Հավելված 4. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով ... 174
Հավելված 5. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները ... 175
Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը ... 178

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի շրջանակներում ՀՀ երեք մարզերում գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վերաբերյալ համահամայնքային քննարկումների կազմակերպմանը: Շնորհակալ ենք նրանց մասնակցության, կառուցողական քննադատության և ընկերական խորհուրդների համար:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Եվրոպական հանձնաժողովին, որը մեզ ընձեռել է քննարկումներն ու սույն ամփոփումն իրականացնելու հնարավորությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Պյոտր Սվիտալսկուն: Արդյունավետ կառավարման, քաղաքացիական մասնակցության և երկխոսության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը նրա անմիջական և եռանդուն աջակցությունը նպաստել է ծրագրի և մասնավորապես՝ քննարկումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և այս խնդիրները որպես գերակայություն ճանաչելու գործին:

Քննարկումների նախապատրաստման և իրականացման համար ոգեշնչման աղբյուր են դարձել գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման գործում հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք կառույցների և գործիչների եռանդուն ջանքերը: Անցած տարիներին նրանց հետևողական և նվիրված աշխատանքի արդյունքում ձևավորված գյուղատնտեսության ոլորտում հանրային քաղաքականության բարեփոխման օրակարգը հնարավոր դարձավ ամբողջականացնել և ներկայացնել քաղաքացիների, ֆերմերների, կոոպերատիվների, գյուղմթերք արտադրողների, վերամշակողների և արտահանողների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, սպառողների և ֆինանսական աջակցություն տրամադրողների շահագրգիռ քննարկմանը, լսելի դարձնել նրանց ձայնը և ամփոփել նրանց բարձրաձայնած կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները սույն փաստաթղթում:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում գյուղատնտեսական դաշինքի անդամ կազմակերպություններին՝ «ՕքսԵՋեն» Երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամին, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնին, ՎԻՍՏԱԱ Փորձագիտական կենտրոն խորհրդատվական հասարակական կազմակերպությանը, ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպությանը, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամին, ՊրոՄեդիա-Գենդեր հասարակական կազմակերպությանը և «Իրազեկ» համայնքների զարգացմանն աջակցող հասարակական կազմակերպությանը, մեր գործընկերներին, ում շահագրգիռ և արդյունավետ մասնակցությամբ մշակվել են համահամայնքային քննարկումների սցենարները: Դաշինքի անդամների անմիջական գործուն դերակատարման շնորհիվ հնարավոր դարձավ հանրապետության երեք մարզերում ապահովել գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման խնդիրների վերաբերյալ շահագրգիռ հարյուրավոր քաղաքացիների մասնակցությունը քննարկումներին: Քննարկումները նախապատրաստելու և արդյունքներն ամփոփելու ընթացքում ՄՋՄԿ աշխատակազմը բովանդակալից քննարկումներ է ունեցել դաշինքի անդամների հետ: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել համագործակցության և սույն ամփոփման պատրաստման գործում մեծ ներդրում ունենալու համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում դաշինքը համակարգող խմբին և անձամբ Լիլիթ Քոչինյանին, Արթուր Գոմկցյանին, Հրաչյա Զաքոյանին, Անահիտ Նավասարդյանին, Մերի Նիկողոսյանին, Վադիմ Ուզունյանին, Գոռ Մովսեսյանին, Արտակ Մարտիրոսյանին, Սիմոն Ասատրյանին մասնագիտական մոտեցման և քննարկումները նախապատրաստելու և կազմակերպելու գործում մեծ ներդրում ունենալու, քննարկումներին մասնակցելու, անգնահատելի գաղափարների և ողջամիտ դիտողությունների համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Կառուցողական երկխոսություն» ծրագրի մեր գործընկերներին՝ Իրավաբանների հայկական ասոցիացիային, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնին (ՍԻՎԻՏԱՍ), ՓՄՁ համագործակցության ասոցիացիային, Հայաստանի համայնքների միությանը և «Ագորա Սենթրլ Յուրոփ» հասարակական կազմակերպությանը (Չեխիա) իրենց ներդրման և համագործակցության համար:

Ներածություն

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վերաբերյալ ՀՀ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը, ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի շրջանակներում, ՀՀ երեք մարզերի քաղաքային համայնքներում 2018թ. օգոստոսին նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման, ՀՀ պաշտպանության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումները, որոնց մասնակցել են հանրապետության ավելի քան 265 քաղաքացի, իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր և ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքներում:

Քննարկումներն իրականացվել են գյուղատնտեսության ոլորտում վարվող պետական քաղաքականության փաստաթղթերի, ընթացիկ ծրագրերի և նախագծերի, մասնագետների, այդ թվում՝ ԵՄ աջակցությամբ իրականցվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում «Օքսեջեն» հիմնադրամի գյուղատնտեսական ձեռնարկությունների զարգացման ծրագրի և գործընկեր կազմակերպությունների հետ քննարկումների, մամուլում հրապարակումների, կարծիքների և վերլուծականների հիման վրա ՄԶՄԿ փորձագետների կողմից մշակված գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման հինգ հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են Հավելված 2-ում:

Համահամայնքային քննարկումների ՄԶՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են ՄԶՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ http://www.ichd.org հասցեում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և վստահելի տեղեկությունների աղբյուր են գյուղատնտեսության զարգացմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և աղքատության հաղթահարմանն ուղղված հանրային քաղաքականության բարեփոխումների մշակման պատասխանատուների և շահագրգիռ պետական, համայնքային, հասարակական, մասնավոր հատվածի կազմակերպությունների և միջազգային զարգացման գործընկերների համար:

Մեթոդաբանություն

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

«Է՛հ, աստված սիրես, թող դրանց, պապի,
Ես շատ եմ զըզվել քաղքից, գազեթից,
Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի,
Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից...»
Հ. Թումանյան

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության սփռման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է

բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողները ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 3-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

«Այս ամենը արդյոք ի՞նչ է.
Խեղճի նվոց ու ճռի՞նչ է,
Թե՞ մի ճիչ է
Ու մորմոքում
Հզոր հոգու...»
Պ. Սևակ

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վերաբերյալ ՀՀ երեք մարզերի քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 4):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների (Հավելված 5) և երեք հիմնական՝ գիտելիք[1], վերաբերմունք[2] և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՛ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը)

[1] Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու հմտությունները, խնդրո առարկայի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ու փաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. http://www.oed.com:

[2] Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Զգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքը առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pratkanis, S. J. Breckler, & A. C. Greenwald (Eds.), Attitude structure and function. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության մեջ մտնելու պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՛ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՛, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների քննարկումը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում՝ հնարավորությունների զարգացման նախաձեռնությունները կարող են դուրս գալ ուղեգծերից[3]:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն- համադրություն (Contrast-Coherence) սանդղակով (Հավելված 6): Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք[4] կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունները հիմնախնդիրների (Հավելված 5) և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

Փուլ 4-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն-հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենա գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման այս կամ այն հնարավորությունը առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ

[3] Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

[4] Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այդ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ կարևորության մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

Կոոպերացիայի ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա

«Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ...»
Ու. Շեքսպիր

Քաղաքացիները, ընդհանուր առմամբ, համարում են, որ մասնատված փոքր հողատարածքները էականորեն խոչընդոտում են գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ձևավորմանը, սահմանափակում են գյուղացիական տնտեսությունների մրցունակությունը և ներդրումների ու նոր տեխնոլոգիաների ներդրման գրավչությունը, գործունեության նպատակով կատարվող ծախսերի արդյունավետությունը: Նման իրավիճակի պատճառը հողի սեփականաշնորհման գործընթացն է, պնդում են քննարկման մասնակիցները և կարևորում հողակտորների խոշորացման և գյուղացիական տնտեսությունների միավորման հրամայականը: Քաղաքացիների մի խումբ կարևորում է կոոպերացիան, որպես հողերի և գյուղարտադրության միջոցների, ֆինանսական միջոցների և արդյունավետ կառավարման, տեխնոլոգիաների և ինովացիայի, արտադրանքի իրացման և ռիսկերի կառավարման կոնսոլիդացման հուսալի միջոց: Քննարկման մասնակիցները նշում են կոոպերացիայի հաջողված օրինակներ: Առաջարկում են նաև չմշակվող, այդ թվում՝ արտագաղթի արդյունքում անմշակ հողակտորների մշակման տարբերակներ:

Քաղաքացիների մեկ այլ խումբ նշում է, որ խոշոր հողակտորները ավելի մեծ ջանք, աշխատուժ ու ֆինանսներ, նոր տեխնոլոգիաներ ու գիտելիք են պահանջում, մինչդեռ փոքր հողակտորի մշակումը նվազ պահանջկոտ է: Քննարկման մասնակիցները կարևորում են սեփականության խնդիրը կոոպերացիայում և պատրաստակամություն հայտնում վարձու աշխատողի կարգավիճակով մշակել վարձակալությամբ հանձնված սեփական հողերը: Շատերը, անգամ նրանք, ովքեր համարում են, թե կոոպերացիան հեռանկարում այլընտրանք չունի, թերահավատ են, թե հողերը բավարար կերպով կխոշորացվեն, թերահավատությունը փաստարկելով «ազգային մենթալիտետով», համագործակցության անպատրաստակամությամբ, անհանդուրժողականությամբ, քաղաքական վերջին զարգացումներով ու մշակույթով, փոխադարձ անվստահությամբ, անբավարար ֆինանսներով և աջակցությամբ, հարկային բեռի ավելացման գործոնով և տեղեկատվության պակասով, ինչպես նաև համատեղ ռիսկերը կրելու, ներդրումներն ու արդյունքները արդարաբար վերաբաշխելու պատրաստակամության բացակայությամբ: Նշում են ձախողված կոոպերացիայի օրինակներ և կարծիք հայտնում, թե անհատ ֆերմերը երբեմն ավելի մրցունակ է, քան կոոպերացիան կամ դրա անդամը: Քննարկման մի շարք մասնակիցներ գտնում են, թե կոոպերացիան կարող է արդյունավետ լինել անասնապահության ճյուղում:

«Եկել է նորը, դաշտում տրակտորը, խնդության օրը...»
Վ. Ալազան

Քաղաքացիները առանձնացնում են հողերի մասնատվածության և խոշորացման ազդեցությունը, կոոպերացիայի նշանակությունը գյուղտեխնիկայի ձեռքբերման և արդյունավետ օգտագործման հարցում: Հողերի մասնատվածության արդյունքում գյուղտեխնիկայի շահագործումն անարդյունավետ է և նվազ մատչելի, նշում են մասնակիցները: Կոոպերատիվներն ավելի արդյունավետ են կառավարում գյուղտեխնիկան ու ավելի սրտացավ են, երաշխավորում են գյուղտեխնիկայի շահագործման ծառայությունների գնի հարաբերական կայունությունը, կարծում են մասնակիցները: Հատկանշական է, որ մասնակիցների մի մասը կոորպերացիան համարում է ժամանակակից գյուղտեխնիկա, սառնարաններ, տեխնոլոգիաներ ձեռք բերելու միջոց, մինչդեռ մյուսները կոոպերացիայի նախապայման են համարում գյուղտեխնիկայի և ենթակառուցվածքների առկայությունը: Տեխնիկան ու հողն առանձին են և պետք է միանան, վստահ են քաղաքացիները:

Մասնակիցները նշում են միաժամանակ, թե կոոպերատիվներին պետական աջակցության ծրագրերի շրջանակներում գյուղտեխնիկայի կամ սարքավորման տրամադրման գործընթացում կոոպերատիվների կարիքները միշտ չէ, որ հաշվի են առնվում: Մտահոգություններ են հնչում նաև նման ծրագրերի վարչարարության վերաբերյալ: Ստեղծված կոոպերատիվների հաջողության համար երբեմն փորձաքար է հենց մատչելի պայմաններով անհրաժեշտ գյուղտեխնիկայի ձեռքբերման իրական հնարավորությունը: Առանձին դեպքերում կոոպերատիվների ձևավորման ընթացքում ձեռքբերված արտադրության

կոլեկտիվ միջոցները դարձել են ինչ-որ մեկի մենաշնորհը: Մտահոգիչ են ընդհանուր սեփականության օգտագործման պայմաններն ու դրանց ֆինանսական բեռի բաշխումը: Լիզինգային սխեմաների շրջանակներում կոոպերատիվներին առաջարկվող գյուղտեխնիկայի գինը շուկայականից նկատելիորեն բարձր է, նշում են մասնակիցները: Քաղաքացիները դժգոհություն են հայտնում նաև համայնքների խոշորացման արդյունքում համայնքի տնօրինած գյուղտեխնիկայի ֆիզիկական հասանելիությունից:

«Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի»
Ժողովրդական

Քննարկման մասնակիցները կոոպերացիայից ակնկալում են նաև որակյալ պարարտանյութերի ու թունաքիմիկատների, իրացման և նոր տեխնոլոգիաների, խորհրդատվության և ծառայությունների հասանելիության ու մատչելիության էական բարելավում, օրինակ՝ մեծածախ մատակարարների հետ աշխատելու հնարավորություն ստանալու արդյունքում: Քաղաքացիները նշում են նաև, թե կոոպերացիան հնարավորություն կտա ֆերմերներին ավելի արդյունավետ կերպով պայքարել բնական աղետների դեմ, կբարելավի կարկտապաշտպան ցանցերի ու գյուղապահովագրության մատչելիությունը կոոպերատիվի մասնակիցների համար

«Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի, արի՛ մեզ մոտ հարսանիք...»
Հ. Թումանյան

Քննարկման մասնակիցները նշում են, թե կոոպերացիայի խթանման գործում կարևոր դեր ունի պետության աջակցությունը, այդ թվում՝ սուբսիդավորվող վարկերի տրամադրման միջոցով: Մի կողմից սուբսիդիաների տրամադրումը բացառապես կոոպերատիվներին և ֆերմերների միավորումներին էականորեն կշահագրգռի գյուղատնտեսություն վարողներին ընդգրկվել կոոպերատիվներում, մյուս կողմից, սուբսիդավորվող առանձին վարկեր պետք է հասանելի լինեն բացառապես կայացած և հաջողակ կոոպերատիվներին: Մասնակիցները կարևորում են նաև սուբսիդավորվող վարկի տրամադրման պայմանները՝ կոոպերատիվի անդամների տեսանկյունից, այդ թվում գրավային ապահովության խնդիրներն ու կոոպերատիվի անդամների մասնակցությունը համապատասխան խնդիրների լուծմանը:

Քաղաքացիները նշում են, թե կոոպերացիայի ձևավորման ու զարգացման գործում սուբսիդավորվող վարկերի առկայությունը որոշիչ գործոն չէ, հատկապես, որ առաջարկվող ֆինանսական ռեսուրսների մի մասը մատչելի է համեմատաբար խոշոր կոոպերատիվների համար միայն: Նշում են նաև առանձին ծրագրերին մասնակցության համար կոոպերատիվներից պահանջվող համաֆինանսավորման և կոոպերատիվների բյուջեի ձևավորման համար անհրաժեշտ միջոցների սահմանափակ առկայությունը:

«Այսպես շատ անհատ երբ որ միանան, մեծ և չափազանց մեծ ուժ կստանան...»
Ղ. Աղայան

Քննարկման մասնակիցները նշում են նաև, թե կոոպերացիայի համար խթան է նաև արտադրության ծավալների և արտադրանքի իրացման հնարավորությունների մեծացումը: Միաժամանակ նշում են, թե վերամշակող խոշոր ընկերությունները գերադասում են աշխատել անհատ ֆերմերների հետ, քանի որ նման համագործակցությունը վերամշակողին բանակցային ուժի առավելություն է երաշխավորում:

«Հարկող եկան, բարվոր գացին...»
Կոմիտաս

Քաղաքացիները բարձրաձայնում են կոոպերացիայի ձևավորման և ֆորմալացման արդյունքում ստեղծվող գյուղատնտեսական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հարկային պարտավորությունների շուրջ մի շարք մտահոգություններ: Հարկային դաշտում հայտնվելը մեծ բեռ է ֆերմերների համար, կարծում են քննարկման մասնակիցները, նշելով, որ վերջնական արտադրանքն այդպիսով սպառողին է հասնում ավելի բարձր գնով, քան անհատ ֆերմերների առաջարկածը, ինչը կոոպերատիվների առաջարկած արտադրանքը շուկայում դարձնում է նվազ մրցունակ: Մասնակիցներն առաջարկում են կոոպերատիվների հարկման այլ դրույքաչափեր և մեխանիզմներ սահմանել:

Բնական աղետների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների և պարենային անվտանգության վրա

«Ցավերը գալիս, չեն գալիս հատ-հատ լրտեսների պես, այլ հոծ գնդերով...»
Ու. Շեքսպիր

Քննարկման մասնակիցները գրեթե միաբերան նշում են, թե բնական աղետները նշանակալի բացասական վնաս են հասցնում գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտներին և պարենային անվտանգությանը: Հայաստանում գյուղատնտեսական գործունեությունը բնական աղետների պատճառով անչափ ռիսկային է, նշում են քաղաքացիները: Մտահոգիչ են հատկապես ցրտահարություններն ու կարկտահարությունները, երաշտն ու գերխոնավությունը, վայրի գազանների հարձակումները: Մասնակիցները նշում են, թե աղետների վտանգների ու ազդեցության մեղմման առկա մեխանիզմները բավարար չեն: Գյուղատնտեսական գործունեությունից ձևավորվող եկամուտների և պարենային անվտանգության խնդիրների վրա բնական աղետների բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով քաղաքացիներն առաջարկում են ներդնել ապահովագրական մեխանիզմներ, որոնք հատկապես կարևորվում են գյուղատնտեսական վարկեր ունեցողների և մեծ ներդրումներ կատարած տնտեսությունների ու ձեռնարկությունների համար: Առաջարկում են նաև բնական աղետները կանխելու միջոցներ, այդ թվում՝ կարկտապաշտպան ցանցերի տեղադրում, հակակարկտային համակարգերի զարգացում: Կանխարգելելը ավելի նպատակահարմար է, քան բնական աղետի վնասները փոխհատուցելը, վստահ են քաղաքացիները: Միաժամանակ, քննարկումների մասնակիցները նշում են, թե բնական աղետների վտանգներն ու հասցրած վնասները առաջնային խնդիր չեն և կարևորությամբ զիջում են, օրինակ՝ իրացման խնդիրներին:

«Մեր ապրուստն ի՞նչ է. - մի կտոր չոր հաց, էն էլ հըրեն հա՛ - երկընքից կախված...»
Հ. Թումանյան

Քաղաքացիները պնդում են նաև, որ պետությունը կարևոր դերակատարում պիտի ունենա բնական աղետների կանխման և գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների վրա բացասական ազդեցության մեղմման գործում, օրինակ՝ բնական աղետից բերքը վնասվելու դեպքում հարկային և վարկային պարտավորությունները ժամանակին և պատշաճ ծավալով կատարելու, փոխհատուցումներ տրամադրելու, ապահովագրության բեռը թեթևացնելու, հակակարկտային կայանների համակարգ ստեղծելու և զարգացնելու միջոցով: Քննարկման մի խումբ մասնակիցներ բարձրաձայնում են բնական աղետներից պաշտպանության նպատակով տրամադրվող պետական աջակցությունից իրենց դժգոհությունը և նշում, որ երբեմն ստիպված են լինում դիմել շահերի պաշտպանության ծայրահեղ միջոցների իրենց ձայնն ու կարիքները լսելի դարձնելու նպատակով: Նշում են նաև տարբեր գոտիներում բնական աղետների դեմ պայքարի առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտության մասին:

«Արև:
Կեսօր:
Տապ ահարկու:
Եվ թփի տակ՝
Մի բուռ կարկուտ...»
Պ. Սևակ

Կարկտապաշտպան ցանցերը քաղաքացիները համարում են կարկտահարությունից պաշտպանության արդյունավետ միջոց և ակնկալում են դրանք ձեռք բերելու գործում պետության ֆինանսական աջակցությունը՝ սուբսիդավորվող կամ անտոկոս վարկերի տրամադրման տեսքով, ընդ որում մարման հնարավորինս երկար ժամկետով: Շատերը համարում են, որ հանրային կամ մասնավոր ներդրումները ավելի արդյունավետ է ուղղել կարկտապաշտպան համակարգերի ստեղծմանն ու զարգացմանը, քան ֆինանսական միջոցներն ուղղել կարկուտից ապահովագրելուն: Դրական ակնկալիքներ կան Ռուսաստանի Դաշնությունից ներկրված հրթիռային կայանների արդյունավետությունից: Նշում են նաև, որ փոքր հողատարածքների պաշտպանության համար գազագեներատորային և ազդանյութով աշխատող կայանքները նույնպես կարող են արդյունավետ գործել:

Միաժամանակ, քաղաքացիները պնդում են, թե կարկտապաշտպան միջոցների ընտրությունն ու դրանց ուղղվող ֆինանսական միջոցները պետք է հաշվի առնեն գոտիականությունը: Այսպես, Գեղարքունիքի մարզում նշում են, թե ի տարբերություն Արարատյան դաշտավայրի մարզում ավելի արդյունավետ կարող են լինել ոչ թե կարկտապաշտպան ցանցերը, այլ հենց հրթիռային համակարգերը, մինչդեռ Արմավիրի մարզում նշում պնդում են, թե հրթիռային համակարգերի համեմատ կարկտապաշտպան ցանցերն ավելի արդյունավետ են: Նշում են հրթիռային և գազագեներատորային ու ազդանյութով աշխատող կայանքների արդյունավետության մի շարք առանձնահատկություններ և սահմանափակումներ, պայմանավորված գոտիականությամբ, տարածքի չափերով, բարձրությամբ, կայանքների հզորությամբ ազդանյութի բնույթով և որակով: Մասնակիցները նշում են նաև հրթիռային համակարգերի ծածկույթի խնդիրը՝ դրանք պիտի ապահովեն կարկտաբեր ամպերի հեռացումը ոչ թե կոնկրետ համայնքի, այլ մշակվող գյուղատնտեսական հողերի տարածքից ընդհանրապես: Քաղաքացիները տարակուսում են, թե խոշոր հողատերերը հազվադեպ են տեղադրում կարկտապաշտպան ցանցեր, ինչը կասկած է առաջացնում ցանցերի արդյունավետության հանդեպ: Գեղարքունիքի մարզում նշում են նաև, որ թեև կարկտապաշտպան ցանցերը թանկ են, այդուհանդերձ դրանք չեն պաշտպանում ցրտահարությունից, մինչդեռ հենց ցրտահարությունն են համարում ավելի մեծ ու ազդեցիկ վտանգ: Ընդհանուր առմամբ, կարկտապաշտպան ցանցերի ձեռքբերումն ու տեղադրումը զգալի ֆինանսական միջոցներ են պահանջում, կարծում են քաղաքացիները, մինչդեռ շուկայում ավելի մատչելի առաջարկի դեպքում շատերը կարող են տեղադրել ցանցերը: Ավելի՛ն, շատերը բավարար կերպով տեղեկացված չեն կարկտապաշտպան ցանցերի արդյունավետության, գների և դրանց ձեռքբերման նպատակով տրամադրվող վարկերի պայմաններին, այդ թվում՝ մասնակիորեն սուբսիդավորվող վարկերին:

Գյուղատնտեսական ապահովագրության ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա

«Է՜հ, ո՞վ գիտի, մենք ապիկար՝ ժամանակի խաղալիք,
Ու անհայտ են միշտ մեզ համար օրն ու սերը մեր գալիք...»
Հ. Թումանյան

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա բնական աղետների բացասական ազդեցության նվազեցման գործում քաղաքացիները հատկապես կարևորում են ապահովագրական մեխանիզմների ներդրումն ու զարգացումը: Ապահովագրությունը, այս առումով, նախընտրելի լուծում է շատերի համար, ընդ որում համակարգի ներդրումը որոշակի բեռ է ենթադրում, սակայն ապահովագրության երաշխիքները և օգուտներն անհամեմատ ավելի են: Ոմանք առաջարկում են ապահովագրել ոչ միայն գյուղմթերքի արտադրությունը, այլև իրացումը: Մյուսները նշում են, որ անհատական ռիսկերի ապահովագրումն անհամեմատ ավելի արդար է, քան հարկատուների հաշվին աղետների պատճառած վնասները փոխհատուցելը:

Քննարկման մասնակիցները բարձրաձայնում են նաև ապահովագրական համակարգի ներդրման խոչընդոտներն ու սահմանափակումները, այդ թվում՝ ֆինանսական միջոցների անբավարարությունը, հողի մշակման ցածր արդյունավետությունն ու եկամտաբերությունը, ռիսկայնության բարձր մակարդակն ու մեծ ծածկույթը, վարչարարությունն ու երաշխիքները: Քաղաքացիները նշում են, որ կոոպերացիան և տնտեսությունների միավորումը ապահովագրական համակարգը կդարձնի ավելի մատչելի և հրապուրիչ ֆերմերների համար: Ոմանք պնդում են, թե աղետներն ու դրանց պատճառած վնասները կանխելու նպատակով գումարներ ծախսելն ավելի նպատակահարմար է, քան ռիսկերն ապահովագրելը: Մտահոգություն է հնչում նաև ապահովագրական ընկերությունների հանդեպ վստահության հարցում:

«Վարի՛, գութան ջան, վարի՛,
Շատ է դըժար էս տարի...»
Հ. Թումանյան

Քաղաքացիների մի մասը համարում է, թե գյուղատնտեսական գործունեությունից եկամուտների՝ բնակլիմայական աղետների ազդեցությունից ապահովագրությունը պիտի լինի պարտադիր: Մասնավորապես, նշում են, թե միայն պարտադիր ապահովագրության պարագայում է հնարավոր ապահովել ռիսկերի համաչափ այնպիսի բաշխումը, որի դեպքում ապահովագրական ընկերությունները կապահովագրեն ռիսկերը: Միաժամանակ, քննարկման մասնակիցները կարևորում են ապահովագրական փաթեթների պայմանների մատչելիության խնդիրը: Նշում են նաև, թե գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը կընդլայնի ֆերմերների սեփականության գրավադրման հնարավորությունները, ուստի՝ կմեծացնի գյուղվարկերի և ֆինանսական միջոցների մատչելիությունը:

Քաղաքացիների մեկ այլ խումբ համարում է, որ ապահովագրությունը չպետք է լինի պարտադիր՝ ապահովագրական համակարգում ընդգրկումը պետք է իրականացվի բացառապես կամավորության սկզբունքով: Ապահովագրական համակարգը պիտի լինի գրավիչ և առաջարկվող հնարավորություններով ու պայմաններով հրապուրի ֆերմերներին ներգրավելու համակարգում: Այս առումով, կարևորում են իրազեկման խնդիրը: Քննարկման մասնակիցները կարծում են նաև, թե հնարավոր է սկզբնական շրջանում ներդնել ապահովագրության կամավոր համակարգ, ապա աստիճանական անցում կատարել պարտադիր ապահովագրման համակարգի:

«Մուժիկին հարկավոր է մի զույգ կոշիկ:
Դիմել է մուժիկն ուրիշի, ասել են՝ չի՛ք:
Դե նա էլ եկել է Իլյիչին...»
Ե. Չարենց

Քաղաքացիները ակնկալում են մի շարք ռիսկերից գյուղատնտեսական գործունեության ապահովագրության համակարգի ներդրման գործում պետության նշանակալի աջակցությունը. պետությունը պիտի իր վրա վերցնի ապահովագրական համակարգի ներդրման բեռի մի մասը, մասնավորապես՝ սուբսիդավորման միջոցով, հատկապես՝ համակարգի ներդրման սկզբնական փուլում:

Քննարկման մասնակիցները կարծում են նաև, թե խոշորացված համայնքները նույնպես կարող են աջակցել ապահովագրական բեռի թեթևացմանը: Միաժամանակ, քաղաքացիներն ակնկալում եմ, որ ապահովագրական ընկերությունները կարող են շահագրգռված լինել ապահովագրվող ռիսկերի նվազեցմանն ուղղված կապիտալ ծրագրերում ներդրումներ կատարելու հարցում, այդ թվում՝ կարկտապաշտպան համակարգերի զարգացման, ՋՕԸ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարելավման, գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման գործում: Հարկային քաղաքականությունը նույնպես պիտի որոշակի երաշխիքներ ապահովի՝ ապահովագրական համակարգի ներդրման սկզբնական փուլում հարկատու ֆերմերների և կոոպերատիվների ֆինանսական բեռը թեթևացնելու նպատակով:

Քննարկման մասնակիցները համարում են, թե ապահովագրական համակարգը պիտի տարբերակված սխեմաներ, մեխանիզմներ և պրոդուկտներ առաջարկի գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտ ստացողներին՝ տարբեր ռիսկեր ապահովագրելու, ապահովագրական վճարների տարբերակման, տնտեսության մեծության և եկամտաբերության, գոտիականության և երրորդ կողմի գործունեության կամ անգործության հետևանքով պատճառված վնասի, և այլ մոտեցումներ հաշվի առնելով: Քաղաքացիների մի խումբ համարում է, թե ապահովագրական համակարգի ներդրումն առավել նպատակահարմար է սկսել անասնապահական-անասնաբուծական գործունեությունից, մինչդեռ մեկ այլ խումբ համարում է, թե ապահովագրության կարիք ունի առավելապես այգեգործությունը: Կարծիքներ են հնչում նաև, թե այդուհանդերձ, գյուղապահովագրությունը որևէ խտրական մոտեցում չպետք է ունենա ֆերմերների հանդեպ:

Ֆինանսների մատչելիության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա

«...դարդըս կանց մե ճարըն շատացիլ է...»
Սայաթ Նովա

Քաղաքացիները կարևորում են գյուղատնտեսական և հարակից գործունեությամբ զբաղվող տնտեսություններին և տնտեսվարողներին պետական աջակցության տրամադրումը՝ ֆինանսական միջոցների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով: Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացմանն ուղղված ներդրումների և ծախսերի ֆինանսավորումը և վարկային ռեսուրսների մատչելիությունն ապահովելու նպատակով՝ պետության կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում տրամադրվող մասնակի սուբսիդավորումը գնահատվում է կարևոր և անհրաժեշտ: Սուբսիդավորման քննարկվող թիրախները լայն են՝ ռիսկերի ապահովագրական համակարգում ընդգրկումից՝ մինչև կաթիլային ոռոգման համակարգերի ստեղծում, դիզելային վառելիքի, պարարտանյութերի, թունաքիմիկատների ու սերմնացուի ձեռքբերումից՝ ոռոգման ենթակառուցվածքներ, կարկտապաշտպան համակարգեր ու գյուղտեխնիկայի ձեռքբերում, ջերմոցների հիմնումից՝ մինչև անասնաբուժական ծառայությունների տրամադրում:

Սուբսիդավորումը մասնակիցների կարծիքով կարող է նաև խթանիչ գործիք լինել պետական քաղաքականության այլ գերակայությունների, այդ թվում՝ կոոպերացիայի և հողերի կոնսոլիդացման խթանման համար: Միաժամանակ, քաղաքացիները կարծում են, թե որոշ պայմանների բավարարման պարագայում սուբսիդավորումը պիտի տրամադրվի նաև անհատ ֆերմերներին:

«Ավելի հաճելի է նվեր ստանալու հույսը, քան ստացած նվերը..»
Վ. Դավթյան

Քաղաքացիների մեկ այլ խումբ համոզված է, թե սուբսիդավորումը արդյունավետ գործիք չէ այս կամ այն գերակա ուղղությամբ առանձին խնդիրների լուծման, այդ թվում՝ խոշորացման համար: Սուբսիդավորման սպեկտրն ու ծավալները հարկավոր է կրճատել, պնդում են նրանք: Ավելի՛ն, քաղաքացիները կարծում են, թե սուբսիդավորվող վարկային ծրագրերը կոռուպցիոն մեծ ռիսկեր են պարունակում, սուբսիդավորվող վարկերով ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները պատշաճ որակի և գնի չեն և երբեմն «հոնքը շինելու տեղ, աչքն են հանում»: Մյուս կողմից, ֆերմերներն իրենք էլ ոչ միշտ են սուբսիդավորումը արդյունավետ և նպատակային օգտագործում, հայտնվելով վարկային բեռի ծուղակում: Նշում են նաև սուբսիդիաների և վարկերի տրամադրման ընթացակարգերի հետ կապված դժվարությունները:

«Ամեն անգամ քո տրվածից երբ մի բան ես դու տանում,
Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ի՞նչքան է դեռ մնում,-
Զարմանում եմ, թէ՝ ո՜վ Շրռայլ, ի՞նչքան շատ ես տվել ինձ,
Ի՞նչքան շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից...»
Հ. Թումանյան

Քննարկման մասնակիցները նշում են, թե անգամ սուբսիդավորման պայմաններում վարկերի սպասարկումը բեռ է ֆերմերի համար, քանի որ այս կամ այն խնդիրը լուծելու (օրինակ՝ գյուղտեխնիկայի կամ կարկտապաշտպան ցանցերի ձեռքբերում, կաթիլային ոռոգման համակարգի գնում և տեղադրում, սերմացուի կամ դիզվառելիքի ձեռքբերում և այլն) նպատակով տրամադրված վարկը չի լուծում կայուն եկամուտ ունենալու խնդիրը՝ գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ ստանալը մնում է ռիսկային (օրինակ՝ աննպաստ բնակլիմայական պայմանների կամ բնական աղետների, պետական քաղաքականության կամ արտադրանքի իրացման շուկաներում աննպաստ պայմանների, արժույթի տատանումների և ֆերմերային տնտեսության վատ կառավարման պատճառներով) մինչդեռ վարկի սպասարկումը շարունակում է մնալ ֆերմերի պարտավորությունը: Արդյունքում, հաճախ վարկային պարտավորությունները կատարելու նպատակով գյուղացին մեկնում է արտագնա աշխատանքի:

«Թան էլ չէ, փրթած մածուն...»
Ն. Փաշինյան

Քննարկման մասնակիցները հատկապես մտահոգ են տրամադրվող վարկերի տոկոսադրույքի, վարկերի մարման ժամկետների և վարկերի սահմանային չափերով: Քաղաքացիները առաջարկում են ապահովել վարկերի հնարավորինս ցածր տոկոսադրույքներ և մարման երկար ժամկետներ: Միաժամանակ, մասնակիցները ընկալում են, որ գյուղատնտեսական գործունեությանը տրամադրվող վարկերը էականորեն ռիսկային, ինչը ներկա իրավիճակում հանգեցնում է համեմատաբար բարձր տոկոսադրույքների և մարման կարճ ժամկետների: Ցածր տոկոսադրույքով և մարման երկար ժամկետով վարկերը մասնակիցները համարում են առավել գրավիչ: Այսպես, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման նպատակով տրամադրվող լիզինգային պայմանագրերի առավել նպատակահարմար ժամկետ են համարում տաս և ավելի տարին, գինեգործությանը տրամադրվող վարկերի մարման ժամկետը՝ երեք տարին: Խնդրահարույց են նաև գրավադրման պահանջները, պնդում են մասնակիցները: Կա նաև կարծիք, թե տրամադրվող վարկերը, ըստ էության, մատչելի են: Ավելի՛ն, ոմանք պնդում են, թե վարկերի տրամադրման ներկա պայմանները շատերի համար զգոնության և սթափ հաշվարկի գործոն են: Քաղաքացիները պնդում են, թե երեք միլիոն նվազագույն շեմը հնարավորություն չի տալիս ավելի փոքր գումարի ֆինանսական միջոցներ հայթհայթել և առաջարկում են իջեցնել առաջարկվող գյուղատնտեսական վարկերի շեմը որոշ պրոդուկտների համար մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ:

Ենթակառուցվածքների ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա

«Գլգլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերեն...»
Ա. Իսահակյան

Քննարկումների մասնակիցները մտահոգ են գյուղատնտեսական ենթակառուցվածքների վիճակով և համարում են, թե դրանք նշանակալի բացասական ազդեցություն ունեն գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների վրա: Բարձրաձայնվող խնդիրների շարքում առանձնանում է ոռոգման համակարգի և ջրամատակարարման խնդիրը: Քաղաքացիները մշակվող հողերի ոռոգելիության մակարդակը համարում են անբավարար, իսկ մինչև 70 տոկոսի հասնող զգալի կորուստները՝ անընդունելի: Անմխիթար է թե՛ ջրատար մայրուղիների և ջրանցքների, թե՛ ոռոգման ներքին ցանցերի, թե՛ ջրամբարների, թե՛ խորքային հորերի վիճակը: Արմավիրի մարզում քննարկման մասնակիցները նշում են, թե ձկնաբուծարանները ոռոգման ջրամատակարարման համար խոչընդոտ են:

«Հե՛յ ճամփանե՛ր, ճամփանե՛ր...»
Հ. Թումանյան

Խնդրահարույց է նաև այլ ենթակառուցվածքների՝ ճանապարհների, սառնարանային տնտեսությունների, լաբորատորիաների, մաքրման կայանների, գյուղմթերքի վերամշակման ենթակառուցվածքների վիճակը:

«Դու ո՞ր այգին կերթաս, ջրի՛կ.
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ...»
Հ. Թումանյան

Քննարկման մասնակիցները նշում են, թե ենթակառուցվածքների զարգացմանը հանրային ֆինանսական միջոցների հատկացումից մեծ և փոքր համայնքներն անհամաչափ կերպով են օգտվում, ընդ որում, ներդրումների ներկա մակարդակը, նրանց կարծիքով բավարար չէ: Նշում են նաև ոռոգման ջրի բաշխման գործում առկա կոռուպցիան:

«Առավոտից իրիկուն ջուր եմ ծախում, սառը ջուր...»
Ժողովրդական

Քաղաքացիներն անդրադառնում են նաև ոռոգման ջրի և գազի սակագներին և նշում, թե սակագներն անհրաժեշտ է վերանայել՝ ցուցաբերելով տարբերակված մոտեցում՝ ըստ գոտիների: Նշում են նաև ոռոգման ջրի վճարների հավաքագրման դժվարությունները:

«Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ զօրէ...»
Գ. Նարեկացի

Քննարկումների մասնակիցները, Հատկապես Վայոց Ձորի մարզում, կարևորում են կաթիլային ոռոգման և մշակման ավտոմատ կառավարման համակարգերի ու համապատասխան տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մատչելիության ապահովումը: Կաթիլային ոռոգման համակարգն շոշափելի դրական ազդեցություն է գործում գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման վրա՝ մշակման ընթացքի ու կատարվող ծախսերում փոփոխությունների միջոցով:

Կարևորում են նաև նոր ոռոգման նոր տեխնոլոգիաներն առավել արդյունավետ կիրառելու համար անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները: Գեղարքունիքի և Արմավիրի մարզում քննարկման մասնակիցները կարծում են, թե կաթիլային ոռոգումը կարտոֆիլի մշակման համար առաջնային չէ, թեև նշում են, որ նման համակարգը կնպաստեր ջրի տնտեսմանը, ինչը կարևորում են: Քաղաքացիները կարծում են նաև, թե կաթիլային ոռոգումը կարող է բերել հողի տեխնիկական դեգրադացման:

Քաղաքացիները վստահ են, թե ոռոգման նոր համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մատչելիությունն ապահովելու և համակարգերի ներդրումը խթանելու նպատակով պետությունը պետք է որոշակիորեն սուբսիդավորի համակարգերի ձեռքբերման և տեղադրման նպատակային վարկերը: Պնդում են, թե խորքային հորերի սպասարկման և ոռոգման մայրուղիների կապիտալ հիմնանորգման ծախսերը պիտի հոգա պետությունը: Միաժամանակ, աննպատակահարմար են համարում սուբսիդավորվող վարկերի տրամադրման պայմաններում գնման աղբյուրները սահմանափակելը: Հատկանշական է, որ ՋՕԸ-երի նպատակային սուբսիդավորումը քննարկման մասնակիցները համարում են անարդյունավետ ու աննպատակահարմար:

Գյուղատնտեսական տեխնիկայի հետ կապված խնդիրները եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման գործում

«Շո՛ւտ, մի ձի՛ տվեք, թագավորությունս մի ձիու կը տամ...»
Ու. Շեքսպիր

Քաղաքացիները նշում են, թե գյուղատնտեսական տեխնիկան, ընդհանուր առմամբ, նշանակալիորեն մաշված է՝ թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես, ինչի արդյունքում զգալիորեն նվազում է դրա օգտագործման արդյունավետությունը մեծանում են ծախսերը: Նշում են նաև, որ մաշվածության, ինչպես նաև տեխնիկայի վերանորոգման համար անհրաժեշտ մասնագիտական կադրերի անբավարարության պատճառով գյուղտեխնիկայի շահագործման ծախսերը շոշափելիորեն ավելացել են, ուստի դրա թարմացմանը նպաստելը ոլորտում պետական քաղաքականության գերակայություն պիտի լինի:

« - Հող ունե՞ս:
- Իհարկե: Խլեցի՛նք:
- Ընչի՞ ես եկել:
- Դելեգա՛տ եմ:
- Խնդրել եմ գեղական գործիք -
- Ստացել եմ շատը...»
Ե. Չարենց

Միաժամանակ, քննարկման մի շարք մասնակիցներ կարծում են, թե անգամ լիզինգով ձեռք բերված նոր գյուղտեխնիկայի առկայության պայմաններում դրա սպասարկումը մնում է խնդրահարույց: Սպասարկման ծառայությունները մտել են հարկային դաշտ, ինչն իր հերթին բարձրացնում է ծառայությունների արժեքը: Սուբսիդավորվող ծրագրերով ձեռք բերված դիզելային վառելիքի որակը նույնպես բացասաբար է ազդում տեխնիկայի վրա: Հողերի մասնատվածություն ու կոնսոլիդացման խնդիրները նույնպես խոչընդոտում են նոր գյուղտեխնիկայի արդյունավետ օգտագործմանը:

«Կոլխոզի հողերը տրակտորը վարում է,
Շարքացանով, տես, ի՛նչ տեսակ մաքուր ցանում է.
Ընկերնե՛ր, կոլխոզն ինչի՞ նման է, -
Մաքուր ապրող, լավ աշխատող, վարդի նման է...»
Գուսան Գրիգոր

Քաղաքացիները կարծում են, թե գյուղատնտեսական տեխնիկայի թարմացմանն ուղղված պետական ծրագրերը պիտի աջակցությունը տրամադրեն բացառապես կոոպերատիվներին: Քննարկումների մասնակիցները նշում են, թե կոոպերատիվներն ավելի արդյունավետ են կառավարում գյուղտեխնիկան, քան անհատ ֆերմերները: Նման մոտեցումը կնպաստի նաև գյուղտեխնիկայի կիրառմամբ ծառայությունների շուկայական գների հետագա կարգավորմանը, տեխնիկայի ձեռք բերումն ու սպասարկումը ֆերմերների համար կդառնա ավելի մատչելի:

Միաժամանակ, քաղաքացիները մտահոգություն են հայտնում, թե գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը աջակցող պետական ծրագրերը միշտ չէ, որ հաշվի են առնում կոոպերատիվների կամ տնտեսությունների կարիքներն ու կարծիքը: Կոոպերատիվների կառավարման անարդյունավետությունը նույնպես խոչընդոտում է գյուղտեխնիկայի ծառայությունների մատչելիությանը: Անհատ ֆերմերները նշում են, թե կոոպերատիվներին գյուղտեխնիկայի տրամադրումը համապատասխան ծառայությունների արհեստական մենաշնորհ է ստեղծել: Միշտ չէ, որ ֆերմերները տեղյակ են խոշորացված համայնքում առկա կոոպերատիվների և դրանց կողմից տեխնիկայի տրամադրման ծառայությունների մասին: Խնդրահարույց է նաև գյուղտեխնիկայի ձեռքբերման նպատակով կոոպերատիվին տրամադրված վարկերի սպասարկմանը կոոպերատիվների անդամների համաչափ մասնակցության հարցը:

«Գութանի վադեն թըմմել ա,
Տրակտորի տարին ա:
Ճամփեքը շոշել ենք,
Կոլխոզը դոշել ենք...»
Վ. Տալյան

Անգամ կոոպերատիվների բացակայության պարագայում, գյուղտեխնիկայի ձեռքբերումն ու համապատասխան ծառայությունները հարկավոր է կենտրոնացնել պետական կամ համայնքային մեքենա-տրակտորային պարկերի ձևաչափով, կարծում են քաղաքացիները, ինչը հնարավորություն կընձեռի կարգավորել ծառայությունների գնագոյացումը: Գյուղտեխնիկա ձեռբերած և ծառայություններ մատուցող ձեռնարկատերերը, գնագոյացման որոշակի պայմաններն ընդունելու պարագայում պետք է ազատվեն հարկերից, կարծում են քննարկման մասնակիցները: Առաջարկները քաղաքացիները հիմնավորում են գյուղտեխնիկայի անմատչելիության և համապատասխան ծառայությունների տեղական մենաշնորհների պայմաններում գնագոյացման հայեցողականության արդյունքում չափազանց բարձր գներով, ինչպես նաև ծառայությունների որակի և կառավարման խնդիրներով: Գյուղտեխնիկայի լիզինգային պրոդուկտները նույնպես բոլորին չէ, որ հասանելի են, նշում են քաղաքացիները:

Գիտելիքի, խորհրդատվության, ծառայությունների և տեխնոլոգիաների ազդեցությունը եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման վրա

«Հարկավոր է ցնցել գյուղացուն
Ու բանվորին կրթել:
Հարկավոր է քանդել հին բերդը:
Հարկավոր են գրքեր, թերթեր...
Իսկ հետո՝ դպրոցին կգա հերթը...»
Ե. Չարենց

Քաղաքացիները վստահ են, թե գյուղատնտեսական գործունեության ոլորտում ներկայում նոր գիտելիքի, տեղեկատվության ու նոր հմտությունների մեծ կարիք կա, հատկապես՝ գյուղատնտեսության վարման ժամանակակից տեխնոլոգիաների, մեթոդների և նյութերի, ինչպես նաև ձեռնարկատիրության վերաբերյալ: Քննարկման մասնակիցները կարծում են, թե գիտելիքի պակաս արդյունքում խախտվում են կարևոր գյուղատնտեսական կանոնները, փչանում է բերքի զգալի մասը: Գիտելիքի պակասն անգամ անկանոն ոռոգման և ցրտահարության պատճառ կարող է լինել: Մյուսները նշում են, թե ավանդական մեթոդները երբեմն ավելի արդյունավետ են ու արդարացված, քան նոր տեխնոլոգիաները, իսկ անհրաժեշտ գիտելիքը ինտերնետում հասանելի է ցանկացած պահի:

Քննարկումների մասնակիցները կարևորում են մասնագետների և մասնագիտական կառույցների կողմից համապատասխան խորհրդատվությունը, սակայն շեշտում են, թե խորհրդատուն պիտի մասնագիտական լուրջ պատրաստվածություն և պրակտիկ փորձ ունենա, այլապես օգուտի փոխարեն կարող է վնասել: Խորհրդատվության կարիք տարբեր խնդիրների, այդ թվում՝ բուժանյութերի ու հիվանդությունների, ցանքաշրջանառության վերաբերյալ: Նշում են նաև ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության միջոցների և գործիքների կիրառության նպատակահարմարությունը խորհրդատվության տրամադրման նպատակով: Խոչընդոտներ նույնպես կան՝ ինտերնետի հասանելիությունը և կոնկրետ ռեսուրսների մատչելիությունը որոշակիորեն սահմանափակ է, միշտ չէ որ ֆերմերները ժամանակ և ցանկություն ունեն նոր գիտելիք և հմտություն սովորելու, միշտ չէ նաև դրանց մասին տեղեկատվությունը հասանելի: Քաղաքացիներն առաջարկում են հեռուստատեսային շարունակական հաղորդաշար պատրաստել և հեռարձակել:

«Ու աղմըկելով ամեն մինը ջոկ,
Ինչպես որ եկել
Դեմ էին ընկել,
Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կըրկին -
Սարի պես փիղը պարզ լուսի տակին...»
Հ. Թումանյան

Քաղաքացիների մեկ այլ խումբ նշում է, թե չնայած խորհրդատվության կարիքին, տրամադրվող ծառայություններն ու տեղեկատվությունը միշտ չէ, որ պատշաճ որակի են, իսկ այդ նպատակով կատարված ծախսերը՝ արդյունավետ: Հաճախ չկա անգամ դրա անհրաժեշտության ընկալումը: Բոլոր դեպքերում կարևոր են պրակտիկ գիտելիքներն ու հմտությունները, ոչ թե տեսական, դասագրքային ճշմարտությունները, նշում են քննարկման մասնակիցները, մինչդեռ խորհրդատուները միշտ չէ, որ ունեն համապատասխան գիտելիք և փորձ:

«Երեք խելոք մի հին տաշտով,
Ավելն առան մըտան մեծ ծով:
Թե տաշտակը շատ դիմանար,
Իմ հեքիաթն էլ կըլներ երկար...»
Հ. Թումանյան

Քաղաքացիները եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հիմնական խնդիրներից մեկը համարում են որակյալ և փորձառու մասնագիտական կադրերի՝ գյուղատնտեսների, ինժեներների, տեխնոլոգների, խաղողագործների, այգեգործների, զոոտեխնիկների, անասնաբույժների պակասը: Ոլորտը գրավիչ չէ նաև երիտասարդ կադրերի, մենեջերների համար, եկամուտները ցածր են,

նշում են մասնակիցները, միջին մասնագիտական և բարձրագույն կրթական հաստատությունները որակյալ կադրեր չեն պատրաստում:

«- Բժի՛շկ, բժի՛շկ, ե՛կ մեր տուն,
Շատ հիվանդ է մեր կատուն,
Մի ճար արա՛ լավանա,
Թե չէ ձեռքից կգնա...»
Ռ. Ղարիբյան

Քաղաքացիները մտահոգ են համայնքներում որակյալ անասնաբուժական ծառայությունների հասանելիությամբ և մատչելիությամբ: Որակյալ անասնաբույժները քիչ են, նշում են նրանք: Քննարկման մասնակիցները, մի կողմից կարծում են, թե անասնաբուժության գործը կազմակերպելու համար պետական աջակցությունը անարդյունավետ է, մյուս կողմից, դեմ են մասնավոր անասնաբուժական ծառայությունների զարգացմանն աջակցության գաղափարին: Անասնաբույժի աշխատավարձը ցածր է, աշխատանքը՝ ոչ գրավիչ, կարծում են քաղաքացիները: Պետականորեն երաշխավորված ծառայությունները ներկայում փաստացի ֆորմալ և ոչ ֆորմալ համաֆինանսավորվում են ֆերմերների կողմից, նշում են մասնակիցները:

«Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը...»
Հ. Սահյան

Քաղաքացիները կարևորում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը գյուղատնտեսական գործունեության մեջ: Նշում են, թե պետական աջակցությունն ու սուբսիդիաները անարդյունավետ են, եթե չեն ուղեկցվում նոր տեխնոլոգիաների ներդրմամբ ու գիտելիքի ապահովմամբ, քանի որ ներկայում լայնորեն կիրառվող տեխնոլոգիաները չեն երաշխավորում կայուն և գրավիչ եկամուտներ գյուղատնտեսական գործունեությունից:

Միաժամանակ քննարկումների մասնակիցները նշում են, որ տեխնոլոգիական նորամուծությունները պիտի կատարվեն հաշվի առնելով գոտիականությունն ու տարածքային առանձնահատկությունները, ֆերմերային տնտեսությունների և կոոպերատիվների ֆինանսական հնարավորություններն ու սահմանափակումները:

«Սերմերը մինչև կարգին չգժվեն՝
Բե՛րք չեն դառնալու...»
Պ. Սևակ

Քաղաքացիները մտահոգություն են հայտնում ներմուծվող սերմերի որակի վերաբերյալ: Նշում են, թե սերմացու ներկրողները հաշվի չեն առնում գոտիականության առանձնահատկությունները, ինչի արդյունքում ֆերմերների եկամուտները նվազում են, երբեմն էլ ներկրվող սերմացուն պատճառ է դառնում մշակաբույսերի հիվանդությունների: Քննարկման մասնակիցները մտահոգ են սերմացուի շուկայի վերահսկողության և խորհրդատվության անբավարար մակարդակով: Սերմացուն անգամ համեմատաբար բարձր գինը նույնպես որակի երաշխիք չէ:

Քաղաքացիները մտահոգ են նաև շուկայում առկա և պետական աջակցությամբ առաջարկվող պարարտանյութերի, թունաքիմիկատների և դիզելային վառելիքի որակով և մատչելիությամբ, պահպանման պայմանների ապահովման, համապատասխան խորհրդատվական ծառայությունների և լաբորատոր վերահսկողության անբավարար մակարդակով:

Սննդի անվտանգության ապահովման խնդիրները գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման հարցերում

«Շնախոտ լինի,
Թե գինձ ու կոտեմ՝
Ինչ էլ տալիս են,
Ասում է՝ կուտեմ:
Մարսողությունը դ
Ասենք թե սուր է,
Բայց, խելքի՛դ մեռնեմ,
Բա խե՛լքը դ ուր է...»
Պ. Սևակ

Քննարկման մասնակիցների մի խումբ համարում է, թե սննդի անվտանգության ապահովման խնդիրների մասին պիտի հոգա պետությունը: Ընդ որում, սննդի անվտանգության ապահովման գործառույթները պետությունը պիտի իրականացնի թե՛ անասնապահության, թե բուսաբուծության ճյուղերում, նշում են քաղաքացիները: Օրգանական բուսաբուծությունը և թունաքիմիկատների օգտագործումը վերահսկելու նպատակով, օրինակ, անհրաժեշտ է էկոտեսչություն, նշում են մասնակիցները: Քաղաքացիները կարծում են, թե սննդի անվտանգությունը պիտի իրականացվի կենտրոնացված և միասնական կարգով: Սերմերի որակը վերահսկելու նպատակով նույնպես անհրաժեշտ են ավելի արդյունավետ լուծումներ:

Միաժամանակ, քաղաքացիների մեկ այլ խումբ նշում է, թե սննդի անվտանգության բազմաթիվ խնդիրներ ներկայում կամ լուծված չեն, կամ դրանց լուծումը ծանրացած է ֆերմերի ուսերին: Որպես օրինակ նշում են վարակների տարածումը, կոյուղաջրերի խառնվելը ոռոգման ջրերին Արմավիրի մարզում, կերային բաղադրիչների և թունաքիմիկատների օգտագործման քանակի և ժամանակային ռեժիմի հանդեպ վերահսկողությունը, շուկայում իրացվող պանրի որակի ստուգումը, անասնաբուժական լաբորատորիաների գործունեությունը, որակի ստուգման ոլորտում կոռուպցիան և այլն: Սննդի անվտանգության նպատակով կատարվող շատ լաբորատոր ստուգումներ մակերեսային են և խորքային վերլուծություններ չեն արվում, նշում են քաղաքացիները:

«Դե տղեքը սոված էին, երկու ոչխար ենք մորթել, ի՞նչ ես՝ «գիտահետազոտակա՛ն-միտահետազոտակա՛ն»..»
Հ. Մաթևոսյան

Քաղաքացիներ մի մասը պնդում է, թե սննդի անվտանգության ապահովման առումով անասունների մորթն ավելի նպատակահարմար է կազմակերպել սպանդանոցում, ուստի անհրաժեշտ է ապահովել դրանց հասանելիությունն ու որակյալ ծառայությունների մատչելիությունը: Միաժամանակ, նշում են, թե սպանդանոցների առկայությունը կհանգեցնի մսի գների բարձրացման:

Քննարկումների մասնակիցները նշում են նաև, թե ֆերմերներին սպանդանոցների գործունեության ներկա տրամաբանությունը չի գոհացնում և դրանց ծառայություններից օգտվելը ձեռնտու չէ. գյուղացին զարտուղի ճանապարհներ է փնտրելու՝ անասունի մորթը այլ կերպ կազմակերպելու:

Իրացման, արտահանման, եկամուտների և հարկման ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա

«Մեկ, երկու, երեք՝ մի ձմերուկ բերեք:
Չորս, հինգ, վեց՝ ընկավ կոտրվեց:
Յոթ, ութ, ինը՝ ասեք դրա գինը:
Տասը՝ էս էլ վնասը...»
Մանկական

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման վրա ազդող գործոնների շարքում քաղաքացիները մեծապես կարևորում են իրացման խնդիրը: Իրացման խնդիրների սպեկտրում նշում են մթերման գների անհամապատասխանությունը ակնկալիքներին և ջանքերին: Օրինակ, քննարկումների մասնակիցների կարծիքով կաթի մթերման գինը բավականին ցածր է, մինչդեռ վերջնական սպառողին կաթնամթերքը հասնում է մանրածախ վաճառքի անհամեմատ ավելի բարձր գներով: Պետությունը պիտի որոշակի կարգավորիչ գործառույթ ստանձնի գյուղմթերքի մթերման գների կայունացման գործում:

Ներկրվող գյուղմթերքի ավելի մրցունակ գները ևս խնդրահարույց են, նշում են քաղաքացիները, ինչի արդյունքում տեղական գյուղմթերքի իրացման շուկայական գինը կարող է ավելի ցածր լինել, քան ինքնարժեքը: Կարևորում են նաև ինքնարժեքն իջեցնելու ուղղությամբ նախաձեռնությունները՝ գյուղարտադրանքն ավելի մրցունակ դարձնելու գործում: Երկրում աղքատության բարձր մակարդակն ու հայաստանցիների ցածր գնողունակությունը նույնպես էականորեն սահմանափակում են գյուղատնտեսական գործունեությամբ բարձր եկամտի հնարավորությունները:

«Քար քաղեցի, հող մաղեցի,
Տեսա գլխիս ճարը,
Հույս թաղեցի, ցավ քաղեցի.
Այդպիսին էր դարը...»
Հ. Սահյան

Քննարկումների մասնակիցները նշում են նաև, թե խնդրահարույց է տվյալ տարում կոնկրետ գյուղարտադրանքի գերարտադրությունը, ինչը նույնպես նվազեցնում է եկամուտները: Վերամշակման և արտահանման ներկա ծավալները սահմանափակում են գյուղարտադրության ընդլայնման հնարավորությունները, մինչդեռ մի շարք ռազմավարական կարևորության մշակաբույսերի պարագայում եկամուտ կարելի ունենալ բացառապես արտադրության մեծ ծավալների պարագայում: Սպառողական շուկայի հետագա կրճատումը էլ ավելի է դժվարացնելու իրացման խնդիրը: Իրացման խնդիրները լուծելու գործում քննարկման մասնակիցները ակնկալում են պետական աջակցություն, այդ թվում՝ փաթեթավորման և արտահանման կազմակերպման գործում:

«Երբ գյուղից քաղաք եկա,
Փեշերս մղեղոտ էին...»
Հ. Սահյան

Նշում են նաև, որ անհրաժեշտ է մշակել իրացման առավել մեծ կամ նոր շուկաներ և համեմատաբար մեծ եկամտաբերություն ու հեռանկար ունեցող մշակաբույսեր՝ սխտոր, բրոկոլի, օրգանական ու էկոլոգիապես մաքուր բնամթերք, ինչպես նաև կենդանիներ՝ ոչխար: Բարձրաձայնում են սպառման և արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվության անհրաժեշտությունը: Միաժամանակ, նշում են, թե իրացման սահմանափակումները երբեմն պայմանավորված են գյուղմթերքի ոչ բավարար որակով: Չրանոցները քննարկման մասնակիցները համարում են ավելի հարմար մթերող, քան արտահանողները: Իրացմանը խոչընդոտող խնդիրների շարքում քննարկման մասնակիցները նշում են պաշտոնյաների կողմից չարաշահումներն ու կոռուպցիան:

«Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի...»
Ֆրիկ

Քննարկումների մասնակիցները մի կողմից նշում են, թե իրացմանը և ավելի բարձր եկամուտներ ստանալուն խոչընդոտող գործոններից մեկը վերավաճառողներն են. նրանք թույլ չեն տալիս որ մթերողը «հասնի գյուղացուն», ավելի շատ եկամուտ են ստանում գյուղմթերքի իրացումից, քան այն արտադրող ֆերմերը: Գյուղմթերքի մեծածախ շուկաները և երևանյան մեծա-մանրածախ շուկաները հասանելի չեն գյուղացուն, քանի որ միջնորդները «զավթել» են դրանք ու գին են թելադրում, թե՛ արտադրողին, թե՛ սպառողին, կարծում են քաղաքացիները: Մասնակիցները կարծում են, թե գյուղացին ավելի շահում է, երբ անձամբ է արտահանում իր մթերքը՝ ծիրանը Ռուսաստան, քան երբ հանձնում է բերքը միջնորդ - մթերողներին: Մթերող-արտահանող կազմակերպություններն էլ հաճախ մթերման ընթացքում ավելի շատ բերք են փչացնում, քան մթերում են, նշում են քաղաքացիները: Նշում են, թե հաճախ ավելի նախընտրելի է բնամթերքի բարտերային փոխանակումը հարևանների այլ մթերքի հետ, քան վաճառքը: Վայոց Ձորի և հեռավոր մարզերի ֆերմերների համար երևանյան շուկաները նվազ հասանելի են, Արարատյան դաշտավայրի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզի ֆերմերային տնտեսությունների համեմատ, նշում են մի խումբ քաղաքացիներ:

«Մի օր Չրդջիկն ու Ճայն եկան
Թե՝ ե՛կ դառնանք վաճառական...»
Հ. Թումանյան

Միաժամանակ, քաղաքացիները նշում են, թե ֆերմերն ինքնուրույն չի կարող արդյունավետ կերպով զբաղվել և չպետք է զբաղվի արտահանման գործունեությամբ, քանի որ գրեթե չունի համապատասխան գիտելիք, հմտություններ, փորձ և տեխնոլոգիաներ, դրա համար կենսական հարցերի, այդ թվում՝ բրենդավորման ու մարկետինգի, որակի հսկողության, փաթեթավորման ու գովազդի վերաբերյալ: Արդյունքում, քաղաքացիները նշում են, թե բոլոր դեպքերում գյուղմթերքի մթերումը, իրացումն ու արտահանումը միջնորդների միջոցով կազմակերպելն անխուսափելի է ծավալներ, արտադրողականություն ու մասնագիտացում պահանջող ժամանակակից իրականության մեջ: Մանրածախ շուկաները լուծում չեն, ըստ քաղաքացիների, քանի որ մեծ ծավալի իրացում փոքր սպառողական շուկայում ապահովել հնարավոր չէ: Քննարկման մասնակիցները նշում են, թե անհրաժեշտ է մթերողի և ֆերմերի հարաբերությունները ավելի ֆորմալացնել՝ լրացուցիչ իրավական երաշխիքներով պաշտպանելով նրանց շահերը, ընդ որում, կարծում են, թե պետությունը պայմանագրերի կիրարկման երաշխիքները պետք է ապահովի իր գործիքակազմով: Նշում են նաև, թե մթերող կազմակերպությունների մենաշնորհային կամ գերիշխող դիրքը անցանկալի է, թեև միաժամանակ շեշտում են, թե դրանք պիտի լինեն բավականին խոշոր և կարողանան ներդրումներ իրականացնել բեռնատարների, սառնարանային տնտեսությունների մեջ և այլ ենթակառուցվածքներում, և իրենց միջազգային կապերի ու պայմանագրերի շնորհիվ երաշխավորեն իրացման կայունությունը տարեց-տարի: Միջնորդ, մթերող և վերամշակող կազմակերպություններին նույնպես անհրաժեշտ է պետական աջակցություն, կարծում են մասնակիցները:

«Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ, մենք հույսեր ունենք պահված մեր երկրում...»
Հ. Թումանյան

Քաղաքացիները կարևորում են գյուղմթերքի արտահանումից եկամտի վրա ազդող մի շարք խնդիրներ: Արտահանման տարբեր շուկաներում գյուղմթերքի որակին ներկայացվող պահանջներն ու չափորոշիչները տարբեր են, մասնավորապես՝ ՌԴ և ԵՄ շուկաներում տարբեր են արտահանվող գյուղմթերքի որակին ներկայացվող պահանջներն ու գները: Նշում են, թե ԵՄ և ԵԱՏՄ շուկաները որոշակիորեն հասանելի են, միաժամանակ, սերտիֆիկացման և արտահանման խնդիրները մարտահրավերն են: Մի շարք քաղաքացիներ կարծում են, թե հայաստանյան ֆերմերներն ի վիճակի են առկա տեխնոլոգիաներով և արտադրության միջոցներով ապահովել եվրոպական շուկաներում մրցունակ գյուղարտադրանք, մասնավորապես, նշում են ծիրանը: Ծիրանի արտահանումը ՌԴ չի ընդհատվել անգամ 2008թ. ռուս-վրացական զինված հակամարտության օրերին ընթացքում, նշում են մասնակիցները:

«Ես չեմ կարող չհառաչել,
Որովհետև
Այսքան տարի չարչարելով՝
Աշխարհը մեզ, ու մենք՝ իրեն,
Իրար, կարգին չենք ճանաչել...»
Հ. Սահյան

Գյուղարտադրանքի եվրոպական շուկան որոշակիորեն գրավիչ է, այն նաև համարում են արտահանման այլընտրանք ՌԴ շուկային: Միաժամանակ, քննարկման մասնակիցները նշում են, թե ԵՄ շուկա արտահանումը ենթադրում է արտադրանքի փաթեթավորման և ներկայացման այլ, ավելի բարձ չափանիշների, ինչն ապահովելու համար անհրաժեշտ է նոր գիտելիք, նոր տեխնոլոգիաներ, նոր ենթակառուցվածքներ և ներդրումներ: Քաղաքացիները կարևորում են, թե միջազգային՝ թե՛ ԵԱՏՄ, թե՛ ԵՄ շուկաներ գյուղմթերքի արտահանման գործում պետական աջակցությունը: Պետական աջակցություն պահանջող հիմնական խնդիրներ են նշում ստանդարտացումն ու սերտիֆիկացումը, չափանիշների և շուկաների վերաբերյալ իրազեկումն ու նոր գիտելիքների ու տեխնոլոգիաների ներդրման գործում աջակցությունը, արտահանման շուկաներ հայաստանյան գյուղմթերքի ներմուծման հանդեպ երբեմն կիրառվող սահմանափակումների վերացմանը նպաստելը, ենթակառուցվածքների բարելավումը, արտահանման համար նպաստավոր մաքսային ռեժիմների բանակցումն ու երաշխավորումը, վարչարարության պարզեցումը, արժույթի փոխարժեքն ու դրամավարկային քաղաքականությունը: Դեպի ՌԴ արագ փչացող գյուղմթերքի արտահանման համար կենսական նշանակություն ունի Վերին Լարսի անցակետի թողունակությունը ու դրանով պայմանավորված սահմանափակումների հաղթահարում, այլընտրանքային ճանապարհների ստեղծումը:

«- Թե կարելի է թոխլիների գինը տաս, գիտես մեր հալը...
- Ուզում ես հիմիկուց գին դնենք, վեր առ, չես ուզում, մնա՛, աշնանը ծախեմ և թոխլիներիդ գինը տամ...»
Ավրպետ

Մի շարք գյուղմթերքների՝ ցորենի, մսի, կարագի երաշխավորված գների քաղաքականության ներդրման հնարավոր ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և սննդի անվտանգության ապահովման խնդիրների վրա քաղաքացիները միանշանակորեն դրական են գնահատում: Պետության կարիքների համար գյուղմթերքի գնումների գործող համակարգում քննարկումների մասնակիցները մի շարք խնդիրներ են նշում, այդ թվում՝ պետության կարիքների վերաբերյալ տեղեկատվության վաղօրոք տրամադրման վերաբերյալ: Միաժամանակ, փոքր և համեմատաբար ցածր արդյունավետությամբ աշխատող ֆերմերական տնտեսություններին նման երաշխիքների տրամադրումը կարող է նվազեցնել խոշորացման գրավչությունը: Քննարկումների մասնակիցները նշում են, թե մյուս կողմից, երաշխավորված գներով մասնակի իրացման առկայությունը նախադրյալներ կստեղծի գյուղարտադրանքի ծավալների մեծացման և որակի բարելավման համար, ինչն իր հերթին կնպաստի արտահանման շուկաներում հայաստանյան գյուղարտադրանքի մրցունակության բարձրացմանը:

«Պապին տարան քյոխվի դուռ,
Հարկ են ուզում. - տո՛ւր հա, տո՛ւր...»
Հ. Թումանյան

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման առումով քննարկման մասնակիցները անդրադառնում են նաև հարկային քաղաքականության մի շարք խնդիրների: Մի մասը համարում է, որ գյուղատնտեսական գործունեությունը որոշակիորեն պիտի գտնվի հարկային դաշտում՝ փոքր տնտեսությունների և խոշոր միավորումների միջև շուկայում հավասար մրցակցության պայմաններ ապահովելու համար:

Միաժամանակ, շատերը համարում են, թե գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտները, շրջանառությունը և գործունեությունն ընդհանրապես չպետք է հարկվեն, քանի որ հարկերի վճարումը ընկալում են որպես եկամտի նվազեցում, ոչ թե լրացուցիչ ծախս գյուղմթերքի վերջնական սպառողի համար: Նշում են նաև, թե հարկման դրույքաչափերը պիտի լինեն տարբերակված, անգամ պետական աջակցության տրամադրման տարբերակված մոտեցման առկայության պարագայում: Առաջարկում են հարկային պարտավորություններ սահմանել շղթայի

վերավաճառքի օղակից սկսած: Քննարկման մասնակիցները գյուղատնտեսական գործունեությունը հարկելուն դժկամ վերաբերմունքը հիմնավորում են իրենց գործունեության ծավալմանն ու եկամուտների ստացմանը նպաստելուն ուղղված պետական աջակցության ծրագրերից, ենթակառուցվածքների զարգացման ծավալներից և միտումներից բավարարված չլինելու հանգամանքով:

«Ճանաչե լավ բանի արժեքը, գինը,
Ներսինին չի հասնիլ գոված դրսինը.
Մինչև նորը ճարես, կկորչի հինը...»
Ջիվանի

Քաղաքացիները կարծում են, թե գյուղարտադրանքի ներմուծման ներկա ծավալներն ու կարգավորումը սահմանափակում են գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտներն ու պարենային անվտանգության ապահովման հնարավորությունները: Ներմուծման պատճառով գյուղմթերքի գինը նվազում է և ֆերմերները չեն կարողանում իրենց հարմար գնով իրացնել արտադրանքը, նշում են քննարկումների մասնակիցները: Պետությունը պիտի իր մաքսային կարգավորման գործիքակազմով որոշակի սահմանափակումներ մտցնի ներմուծվող գյուղարտադրանքի համար, որպեսզի երաշխավորի տեղական արտադրանքի լիակատար իրացումն ու սպառումը «խելամիտ» գներով: Միաժամանակ, նշում են, թե ներկրման առկա ծավալներն ու միտումները հետևանք են հայաստանյան գյուղատնտեսական գործունեության ցածր արտադրողականության, գյուղմթերքի անկայուն որակի և բարձր գների:

«Խաղաղությո՛ւն հյուղերիդ մութ
Ու գետնափոր.
Մկաններիդ՝ հանգիստ չառած.
Պարզ սրտերիդ,
Վայելքների միշտ անհաղորդ...»
Շ. Կուրղինյան

Քաղաքացիները նշում են, թե գյուղատնտեսական գործունեության ցածր արտադրողականությունը, ոչ կայուն և ցածր եկամուտը, աշխատանքի ծանրությունը, կենսամակարդակի առանձնահատկությունները գյուղատնտեսական գործունեությունը դարձնում են երիտասարդների համար նվազ գրավիչ, քան ասենք ծառայությունների ոլորտում վարձու աշխատանքն ու ձեռնարկատիրական գործունեությունը: Երիտասարդները տեղափոխվում են քաղաքային համայնքներ, մայրաքաղաք, ինչի արդյունքում գյուղատնտեսության ճյուղը զրկվում է աշխատուժից և տաղանդից: Ցածր եկամտաբերության և գերազանցապես տղամարդկանց ներգրավող արտագնա աշխատանքների պայմաններում գյուղատնտեսական գործունեությունը որոշակիորեն ֆեմինիզացվել է, նկատում են քննարկման մասնակիցները:

Կառավարման, կոռուպցիայի և վստահության ազդեցությունը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության վրա

«Այսօր՝ կուշտերս վայելքին գերի
Ապրում ենք հանգիստ, անվիշտ անվաստակ
Ձեր բանուկ ձեռքը խոնարհ է, բարի,
Այսօր մեզ տվեք, վաղն էլ՝ կը մուրաք...»
Շ. Կուրղինյան

Քաղաքացիները վստահ են, թե գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման գործում մեծ դեր ունի պետական աջակցությունը: Նրանց կարծիքով պետությունը պիտի մասնակցություն ունենա տեղական գյուղատնտեսական արտադրանքի առաջնայնությունը ապահովելու և իրացնելու, գյուղմթերքը մթերելու և վերամշակումը կազմակերպելու, անասնաբուժական ծառայությունների ապահովման, մշակաբույսերի ընտրության, ոռոգման ենթակառուցվածքների զարգացման և ջրամատակարարման, պարարտանյութերի, սերմացուի ու տնկիների ներկրման, բաշխման և շուկան կարգավորելու, չմշակվող հողերի պետականացումն ու վերաբաշխումն իրականացնելու, արտահանումը խթանելու նպատակով միջպետական պայմանագրեր բանակցելու, կարևորագույն գյուղմթերքներ արտադրողին արտոնություններ տրամադրելու, սահմանների անվտանգության և խաղաղության ապահովման հարցերում:

«Փիսիկը նըստել
Մի մութ անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում...»
Հ. Թումանյան

Միաժամանակ քննարկումների մասնակիցները նշում են, թե գյուղատնտեսության ոլորտում պետական քաղաքականությունն ու ինստիտուտները որոշակիորեն մասնատված են, այս ոլորտում հանրային քաղաքականությունը կտրված է իրական խնդիրներից և տեսանելի չէ ֆերմերների համար, իսկ պետական կառավարման ինստիտուտները թերանում են ու ականջալուր չեն գյուղատնտեսությամբ եկամուտ վաստակողների կարիքներին, նաև չունեն այդ կարիքների բավարարմանն ուղղված արդյունավետ հանրային քաղաքականություն մշակելու, իրականացնելու և վերահսկելու պատշաճ կարողություններ: Շատ խնդիրների բախվելիս գյուղացին չի զգում որևէ կառույցի աջակցությունը, պնդում են քաղաքացիները: Վարակների տարածումը ծանրացած է բացառապես գյուղացու ուսերին, պնդում են քննարկման մասնակիցները, իսկ վարակների կանխարգելման նպատակով ներկրվող և տարածվող պատվաստանյութերի, ինչպես նաև դիզելային վառելիքի որակը մտահոգիչ է: Անասնապահության ճյուղում զարգացման շատ խնդիրների լուծման մասին հոգում է ոչ թե պետությունը, այլ միջազգային կառույցներն ու հասարակական կազմակերպությունները:

«Մի տեղ իշխան ու տեր,
Մի տեղ համեստ հովիվ,
Մի տեղ ճորտ եմ եղել...»
Հ. Սահյան

Քաղաքացիները պնդում են, թե գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման խնդիրներում նշանակալի դերակատարում ունեն նաև մարզպետարաններն ու ՀՀ պետական կառավարման տարածքային գործադիր մարմինները: Հենց նրանք են ավելի մոտ կանգնած ֆերմերների կարիքներին, նշում են քննարկման մասնակիցները: Մարզերի զարգացման ռազմավարական փաստաթղթերում հարկավոր է հստակ սահմանել ոլորտի զարգացման գերակա ուղղությունները՝ հաշվի առնելով գոտիականությունն ու համայնքների առանձնահատկությունները, ֆերմերների կարիքները: Միաժամանակ, քաղաքացիները նշում են, թե մարզպետարանները ներկայում չունեն բավարար կարողություններ գյուղատնտեսության ոլորտում պատշաճ աջակցություն տրամադրելու համար, նրանց իրականացրած գործառույթներն արդյունավետ չեն, իսկ վստահությունը այս մարմինների հանդեպ ցածր է:

«Այս համայնական դաշտերում մեր լայն
Հերկում է խոփը եռանդով անդուլ,
Այն ոչ թե հողն է մշակում միայն,
Այլև մեր ոգու ճանապարհը լայն...»
Ե. Չարենց

Քննարկման մասնակիցները կարևորում են նաև համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների դերը գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման գործում: Միշտ չէ որ համայնքում կատարվող ենթակառուցվածքների զարգացման կամ այլ համապատասխան կապիտալ ծրագրերն ու ներդրումներն իրականացվում են համայնքի կարիքներն ու կարծիքը լսելով, նշում են քաղաքացիները: Թեև տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ու գործառույթները այս ոլորտում սահմանափակ են, այդուհանդերձ, ՏԻՄ-երը փորձում են հնարավորինս ակտիվ դերակատարում ունենալ, կարծում են մասնակիցները: Քաղաքացիները նշում են նաև, թե տեղական ինքնակառավարման արդյունավետությունը նույնպես անթերի չէ, նշում են նաև մի շարք կոռուպցիոն դրսևորումներ, ուստի պնդում են, թե պետական աջակցության ծրագրերի իրականացման համար ՏԻՄ-ը լավագույն համակարգող օղակը չէ: Քաղաքական ներկա իրավիճակն, իր հերթին, չի նպաստում ՏԻՄ-երի ակտիվ ու նախաձեռնող գործունեությանը այս ոլորտում:

«Հուզվում են, հոսում հեղեղները մեծ,
Մագլցում վերև և թավալվում ցած,
Զմրուխտե ջրեր, ձեզ ո՞վ վրդովեց...»
Վ. Տերյան

Քաղաքացիները մտահոգություն են հայտնում գյուղատնտեսական գործունեության և եկամուտների վրա փոքր և մեծ ՀԷԿ-երի ազդեցությամբ: Նրանք կարծում են, թե վերջիններս նշանակալի բացասական ազդեցություն ունեն գետերի էկոհամակարգերի ու կենսաբազմազանության, հողի և անտառաշերտերի, անգամ բնակլիմայական պայմանների վրա: Հանքարդյունաբերությունը նույնպես զգալի բացասական ազդեցություն ունի, պնդում են մասնակիցները:

«Քո խոնարհ ջրկիրն եմ եղել,
Եղել եմ՝ և տերդ...»
Հ. Սահյան

Քաղաքացիները ՋՕԸ-երի աշխատանքը համարում են անարդյունավետ, դրանց գործունեության վերահսկողության մեխանիզմներն ու իրենց իրավունքների պաշտպանության երաշխիքները անկատար: Բարձրաձայնում են նաև ՋՕԸ-երի գործունեության մեջ առկա կոռուպցիոն երևույթները և հաշվետվողականության ապահովման բացթողումները:

«Այս աշխարհում ես ապրեցի
Պարտք առնելով ու մարելով,
Ցավը ցավին գումարելով,
Լավը լավին գումարելով...»
Հ. Սահյան

Քաղաքացիները անդրադառնում են նաև սեփական եկամտի ու բարեկեցության համար գյուղացու դերին ու պատասխանատվությանը: Նշում են, որ գյուղացին հաճախ ծույլ է, հույսն ու աչքը ավելի շատ սրա-նրա օգնությանն են, քան սեփական ուժերին, հողի ու գյուղացու կապը՝ եկամտի կապը կտրվել է և շատ դեպքերում գյուղացին ինքն է մեղավոր բազմաթիվ սեփական խնդիրների համար:

«Դիփս էլ խաբում ինք ու խաբված ինք...»
Գ. Սունդուկյան

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության մարտահրավերների շարքում քաղաքացիները նշում են օրինականության և կոռուպցիայի խնդիրները: Նման խնդիրներ կան թե՛ սուբսիդիաների նպատակային ու արդար օգտագործման, թե՛ շուկայում

սերմացուի և տարբեր նյութերի վաճառքի ու իրացման, թե՛ ՋՕԸ-երի, թե՛ սպանդանոցների գործունեության, թե՛ մթերման, թե՛ սննդի անվտանգության ու որակի վերահսկողության բնագավառներում: Միաժամանակ, քննարկման մասնակիցները նշում են, թե նման անօրինականությունների հարկադիր մասնակիցը կամ վկան լինելու պարագայում անգամ, գյուղացին հակված չէ ազդարարելու հանցանքի կամ դրա կասկածների մասին իրավապահներին:

«Դու ուզեցիր, որ ես.
Քեզ տիրություն անեմ,
Ու ես անտեր մնամ:
Ամեն, ամեն ինչ տամ,
Տեղը ոչինչ չառնեմ,
Ու քեզ ընկեր մնամ...»
Հ. Սահյան

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման մեկ այլ մարտահրավեր են հանրային և մասնավոր հատվածներում համապատասխան գործառույթներ իրականացնող տարեր կառույցների ու կազմակերպությունների գործունեության հանդեպ հանրային վերահսկողության թերությունները: Ոչ պատշաճ վերահսկողության խնդիրները բազմաշերտ են լայնասպեկտր. նշում են, թե պետական մարմինները պատշաճ կերպով չեն վերահսկում ձկնորսության սահմանափակումների կատարումը, պահպանվող տարածքներում անասունների արածեցման սահմանափակումները, թունաքիմիկատների ու պարարտանյութերի որակի պահպանումն ու կիրառության սահմանափակումները: Միաժամանակ, քննարկումների մասնակիցները դժգոհում են ստուգումների և ստուգողների գործունեությունից ու մեծ քանակից:

«Վստահություն են ներշնչում հողին,
Ա՛յն վաղընջական - հինավուրց հողին,
Որ չի կորցնի վստահությունը...
- Այդ... իմ քայլե՛րն են...»
Պ. Սևակ

Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության ապահովման ևս մեկ խոչընդոտ է վստահության համատարած պակասը, որը որդի պես կերել է փոխադարձ հարաբերությունների արմատը՝ օրենքի թերի գերակայության և պայմանագրային հարաբերությունների կիրարկման երաշխիքների ոչ լիարժեք առկայության արդյունքում: Վստահության բացակայությունը նկատելի է բազմաթիվ հարցերում. գյուղացուն տրամադրվող սերմերի որակի հանդեպ ու վարկերի, գործընկերների ու իրացման պարտավորությունների հանդեպ, օրենքների ու դատական համակարգի, բանկերի ու ապահովագրական ընկերությունների, և այսպես շարունակ:

«Անտառում ամպի ծվեններ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:...»
Հ. Սահյան

Քաղաքացիները բարձրաձայնում են նաև գյուղատնտեսական գործունեությանն առընչվող բնապահպանական խնդիրներ: Մտահոգություն են հայտնում բնապահպանական ու դաշտապաշտպան շերտերի վերացմամբ, և կարծում են, թե պետությունն իր վրա պիտի վերցնեի այդ շերտերի վերականգմանն աջակցելու հոգսը: Անտառն ու բնական ջրավազանները քննարկման մասնակիցները համարում են կարևոր ռեսուրս և մտահոգություն հայտնում դրանց նշանակալի աղտոտմամբ ու անխնա օգտագործմամբ: Քաղաքացիները նշում են, թե նման անհոգ ու անպատասխանատու բնօգտագործման արդյունքում սերունդները հայտնվելու են էլ ավելի բարդ մարտահրավերների առջև:

Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք

Ա. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Փոքր հողատարածքները մարդկանց եկամուտի հիմնական աղբյուրը չեն, մարդիկ հակված չեն խոշոր ներդրումներ անել:

Մարդիկ սկսել են հավատալ **կոոպերացիաներին** մեր տարածաշրջանում:

Կոոպերացիաներ ստեղծելը մեզ համար բավականին բարդ է եղել սկզբից. մարդիկ բացարձակապես չէին հավատում, մտածում էին էլի կոլխոզ ենք ստեղծում:

Այսօր մարդիկ ավելի բաց են, ընդունում են մեր օգնությունը՝ **կոոպերացիա** ստեղծելու, գալիս են սեմինարների, լսում են ուրիշների խորհուրդները: Առաջ այդպես չէր...

Եթե **կոոպերատիվներին** ես տրամադրում տեխնիկան, իրենք շատ սրտացավ են լինում, շատ ավելի արդյունավետ են օգտագործում:

Եթե պետությունը **կոոպերատիվ** է ստեղծել, բայց կարիքները հաշվի չի առնում, ասում ենք այս սարքավորումն է մեզ պետք, բայց մեզ տալիս են ուրիշ տեխնիկա, որովհետև ասում են ծրագրով դա է նախատեսված, իմաստը էլ որն է, որ քննարկենք մեր կարիքներն ու կարծիքները:

Կոոպերատիվի ստեղծումը դա հինգ հոգու հարստացում է:

Որպես **կոոպերատիվի** անդամ, մենք շատ ենք դիմել, որ մեզ օգնեն մեքենա ձեռք բերել, մինչ օրս չի հաջողվել. թղթաբանությունը շատ է:

Կոոպերացիաներ ստեղծեցին, բայց եթե մեր ձայնը չեն լսում, էլ իմաստը որն է... կամ էլ կառավարման մոդելը պետք է փոխել:

Հայերը թիմային խաղացողներ չեն **կոոպերատիվի** մեջ միավորվելու համար՝ ամեն մեկը վերմակն իր վրա կքաշի:

Կոոպերատիվները պետք է վերացվեն, քանի որ ոչ մի օգուտ չեն տալիս ու չեն կատարում իրենց ֆունկցիան՝ կոոպերատիվի անդամներին ավելի էժան գնով տեխնիկա չի տրամադրում:

Համայնքի բնակիչը տեղյակ չէ, որ իր համայնքում գոյություն ունի **կոոպերատիվ** ու կարող է իրեն տեխնիկա տրամադրել:

Կոոպերացիան էֆեկտիվ գործոն կլինի, եթե չլինի կոռուպցիա:

Մեզ մոտ գործում է հողերի ջրարբիացման ծրագիր, ստեղծվում են **կոոպերատիվներ**, բայց պետք է նայել հստակ ծառայում է նպատակին, թե ուղղակի «պտիչկա» է դրվում:

Կոոպերատիվները ստեղծվելու ընթացքում կոլեկտիվ տեխնիկան մտել է գյուղ ու դարձել մենաշնորհ:

Կոոպերացիան միայն թղթի վրա է, իրականում մարդիկ չեն կարողանում համագործակցել:

Կոոպերացիան կայանում է ինքնաբերաբար, երբ մի քանի մարդ, տեսնելով խնդիրները, որոշում են համագործակցել:

Կոոպերացիան պետք է խնդիրների գիտակցումից սկսվի. սուբսիդիա տալով կոոպերացիա չես ստեղծի:

Պետությունը պետք է սուբսիդիա տա արդեն կայացած **կոոպերացիաներին**:

Մեր մենթալիտետի դեպքում **կոոպերացիան** հնարավոր չէ:

Ունենք ոչ ֆորմալ խմբեր որոնք **կոոպերատիվի** չեն վերածվել բայց աշխատում են իրար հետ:

Կոոպերատիվի ցուցակագրված անդամների մեծ մասը տեղյակ չէ, որ կոոպերացիայի անդամ է:

Հարկային տեսանկյունից **կոոպերացիա** ստեղծելը ճիշտ չէ:

Կոոպերատիվի վերահսկողության կարիք կա:

Կոոպերատիվներին տեխնիկա տալուց ոչ միայն պետք է կարիքը հաշվի առնել, այլև պայմաններդ, ռելիեֆդ, քանի որ ունենք դեպքեր, երբ տրված տեխնիկան մեր հողում ու պայմաններում չի աշխատում:

Կոոպերացիաների ստեղծումը կանխեց գյուղտեխնիկայի աշխատանքի գների աճը, սպասարկումը դարձրեց գյուղացու համար ավելի մատչելի:

Կոոպերացիան տեսնում եմ միայն մեքենատրակտորային կայանի դեպքում: Մնացած դեպքերում փորձը ցույց է տալիս, որ կոոպերացիան արդյունավետ չէ:

Կոոպերացիայի դեպքում ծախսերը բավականին մեծ են լինում:

Մեր **կոոպերացիան** այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, բայց հարկային և վարկային բեռի պատճառով մեր ամբողջ եկամուտը ուրիշներին ենք տալիս:

Կոոպերատիվին տրված տեխնիկան եթե չես էլ օգտագործում, բայց դրա վարձավճարը մեկ է մուծում ենք. մենեջմենթի խնդիր կա:

Այս պահին գյուղացին ավելի մրցունակ է անհատապես, այլ ոչ թե **կոոպերացիայի** կազմում:

Հողերի միավորումը անհնար է, **կոոպերացիան** կարող է աշխատել անասնապահության բայց ոչ երբեք հողերի միացման հարցում:

Պետք է տեղի ունենա հողերի խոշորացում ու ստացվի ոչ պետական **կոոպերացիա**, որի պատճառով արդյունք կլինի:

ԱԱՀ հարկը բավականին բեռ է **կոոպերատիվի** համար, աշխատանքները դժվարանում են, որովհետև ամեն ինչ ձեռք են բերում շուկայից՝ շուկայական գներով:

Թող թունաքիմիկատի ամբողջական ծառայությամբ հենց **կոոպերատիվը** զբաղվի. խորհրդատվություն, վաճառք, կիրառում...

Գյուղատնտեսության զարգացման համար անհաժեշտ է գյուղացիական տնտեսությունների **միավորում**: Միասին ավելի հեշտ է հաղթահարել խնդիրները:

Գյուղատնտեսությունը վատ վիճակում է մեզ մոտ, սխալ ձևով **սեփականաշնորհում** արեցին, տարբեր զոնաների բաժանեցին: Ցանքաշրջանառությունը չենք կարողանում իրականացնել:

Մեր համայնքում հողակտորները **փոքր** են, մարդիկ մասսայաբար հրաժարվում են հողագործությունից, քանի որ փոքր հողակտորի վրա տնտեսություն վարելը մեծ ինքնարժեքի է բերում: Մարդիկ ուղղակի սոված չմնալու համար զուտ իրենց ընտանիքի համար են բույս աճեցնում:

Անտեր լիքը **հողեր** կան, որ տերերը Ռուսաստաններում են, դրանց կարգավիճակը ոնց պետք է լինի:

Առանց մարդկանց սեփականության իրավունքը ոտնահարելու, պետք է մտածել հողակտորների **խոշորացման** մասին:

Տեխնիկան պետք է **կենտրոնացնել**. թող մի կազմակերպություն դա իրականացնի ու ոչ պետական լինի:

Հողերի **կտրտվածությունը** բերում է գյուղտեխնիկայի շահագործման անմատչելիության:

Մանր տնտեսությունները չեն ցանկանում **միավորվել**, որովհետև դրանք ունեն յուրահատուկ բնավորություն:

Հացառատ թաղամասում **մանր-մունր հողակտորները** անտերության են մատնված, տերերը Ռուսաստանում են, թող միավորեն այդ հողերը, տան ֆերմերներին, որ մշակվի:

Միավորման կազմակերպիչները գյուղատնտեսությունից շատ հեռու են: Սա շատ նուրբ խնդիր է:

Ով հողը ասֆալտից չի տարբերում, որոշում է **միավորում** կազմակերպել: Մեր տարածաշրջանում բոլոր տնտեսությունները բաժանվում են:

Գործից չհասկացող գյուղացիներին կարելի է **միավորել** և կցել հաջողակ գյուղացիներին:

Մարդիկ պետք է գիտակցեն, որ **խոշորացման** արդյունքում իրենք նոր հնարավորություններ կունենան, նոր ծառայություններն ավելի հասանելի կլինեն:

Կա կարտոֆիլագործների, չիչխանարտադրողների **խմբեր** որոնք ֆորմալ խմբեր են, որոնք աշխատում են իրար հետ:

Մարդիկ **միավորվում** են, թունաքիմիկատները գնում են միասին, որպեսզի գնեն մեծածախի գնով:

Մարդիկ **միավորվում** են, որ մեծ քանակությամբ օրինակ միս արտադրեն և հանձնեն կոնկրետ ռեստորաններին, առանց միջնորդի:

Հայերի մենթալիտետի պատճառով երբեք հողերը իրար չեն **միացնի**:

Հողերի **խոշորացումից** առաջ, նախ պետք է տեխնիկական պարկեր լինեն:

Գյուղացին պետք է հոգեբանորեն էլ պատրաստ լինի **խոշորացմանը**:

Հայ ազգի մենթալիտետը թույլ չի տալիս **միավորված** աշխատել:

Տեխնիկան ու հողը առանձին են: Պետք է **միանան**:

Ինչ տարբերություն գյուղացին վարձու աշխատող է, թե ֆերմեր:

Մեր **հողերը փոքր** են և իմաստ չկա թանկ գներով նոր տեխնոլոգիաներ գնել:

Գյուղացին համաձայն չէ **կոոպերատիվների** ստեղծմանը, որովհետև համաձայնություն չի լինում բաշխման հարցում:

Կոոպերատիվ ստեղծելը չի նշանակում, որ հողերը պարզապես միավորում են: Կոոպերատիվը ենթադրում է նոր տեխնոլոգիաների ներդնում:

Կոոպերատիվի ձախողման պատճառը անդամների՝ միմյանց չվստահելն է:

Պետք է **կոոպերատիվների** այնպիսի ձևեր մշակենք, որոնց դեպքում յուրաքանչյուրը կպահպանի իր սեփականությունը:

Կոոպերատիվներում շղթան ամբողջական չի գործում, չկա համագործակցությունը և աշխատանքի հավասար բաժանումը:

Մեր մոտ **կոոպերացիան** թղթի վրա է:

Կոոպերացիաները ժամանակին անկում ունեցան, որովհետև միմյանց հանդեպ վստահություն չունեին գյուղացիները:

Սուբսիդիան թող տրվի փոխառության, պարտքի ձևով, բերքը վաճառելուց հետո, **կոոպերատիվը** թող վերադարձնի:

Կոոպերացիան լավ բան է, բայց զարգացում չունի:

Պետք է սուբսիդավորել, որ **կոոպերացիաները** զարգանան. դա կշահագրգռի գյուղացիներին միավորվել:

Արարատյան դաշտի համար **կոոպերատիվներ** ստեղծելը հետքայլ է. այսօր կոոպերատիվների ռիսկերը ո՞վ է վերցնելու իր վրա:

Կոոպերացիաների զարգացմանը աջակցություն չի ցուցաբերվում: Պետք է ձեռք բերել գյուղտեխնիկա, սառնարաններ, որոնք գյուղացին իրեն չի կարող թույլ տալ:

Կոոպերացիայի ստեղծմանը պետք է նպաստի ենթահամակարգերի ներդրումը, որը բացակայում է:

Պետք է այնպիսի հարկային քաղաքականություն վարվի, որպեսզի **կոոպերացիաները,** խոշորացումը ավելորդ բեռ չդառնան. ցանկություն լինի մեծանալ:

Անասնապահության դեպքում միգուցե **կոոպերատիվն** արդարացված է, իսկ հողի դեպքում՝ ոչ, քանի որ մեծ ու փոքր հողատարածքներ կան: 91-ից հետո բացվեցին, բայց չգործեցին: Հիմա էլ չեն գործելու:

Կոոպերացիայի ձախողման հիմնական խնդիրներն են՝ մենթալիտետը, իրար հանդեպ անվստահությունը, ֆինանսների բացակայությունը, աջակցության բացակայությունը:

Կոոպերացիայի միջոցով ֆեդերացիայից օրինակ պարարտանյութ էինք ստանում ու բաժանում գյուղացուն՝ նույն գնով ու աշնանը հավաքում դրա փողը: Բայց դատական քաշքշուկների մեջ ընկանք ու հազիվ ապացուցեցինք, որ գումար չենք աշխատել արանքում:

Կոոպերացիան օգնում է շատ հարցեր ավելի հեշտ լուծել:

Հողերի **խոշորացումը** վաղ թե ուշ լինելու է, ավելի էժան կնստի դրա մշակելը: Բայց առաջիկա տասը տարում դեռ գյուղացին պատրաստ չի լինի դրան:

Խոշոր արտադրողները չեն աշխատում **կոոպերացիաների** հետ, նախընտրում են անհատ ֆերմերների:

Կոոպերատիվների ստեղծումը միակ ճիշտ ճանապարհն է մեր երկրում: Շատ կարևոր բան է, որ կարող անում ես դրսում հանդես գաս, որպես իրավաբանական անձ:

Կոոպերատիվում արտադրանքը պետք է համամասնորեն բաժանվի, ով ունի մի հեկտար, դրան համապատասխան բերք պիտի ստանա ու բաշխումն էլ համամասնորեն պիտի լինի, ով ավել՝ ավելին:

Կոոպերատիվը պետք է ունենա բյուջե, որը չգիտեմ ոնց կարող է ձևավորվել, քանի որ բոլոր անդամները վարկերի տակ են:

Իսկ **կոոպերատիվի** բյուջեն անհրաժեշտ է իր ադմինիստրատիվ ծախսերը փակելու համար գոնե:

Պետությունը պետք է **կոոպերատիվին** ընդառաջի, ամեն հեկտարի հաշվով անհատույց գումար տա: Հակառակ պարագայում դժվար գյուղատնտեսությունը զարգանա:

Կարևոր է քննարկել, թե սուբսիդավորման դեպքում ոնց է **կոոպերտիվին** վարկ տրվելու, գրավ են ուզելու, անդամներից ում բնակարանը պետք է գրավ դնել, նման հարցերը պետք է հասկանալ նաև:

Կոոպերատիվն այսօրվա գաղափար չէ, այսօր ամեն մեկը իր հողակտորն ունի, քիչ թե շատ վերամշակում ենք:

Խնդիր ունենք **կոոպերատիվի** ու մթերողի հետ պայմանագրեր կապելու հետ, ուզում են անհատների հետ կնքեն, քանի որ համարում են, որ այդպես ռիսկը ավելի քիչ է, չեն ուզում ընդհանուր կոոպերատիվի հետ գործ ունենալ որպես մեկ միավոր:

Պետությունը **կոոպերատիվները** պետք է չհարկի:

Կոոպերատիվները ձեռք են տալիս միայն պետությանը, որ հեշտ կառավարի, ինձ դա ձեռնտու չի:

Կոոպերատիվների անդամավճարների պատճառով գյուղացին երկար չէր մնում:

Մեր պայմաններում **կոոպերատիվները** չեն գործելու, քանի որ հողերի չափերն են տարբեր, մշակում են տարբեր բաներ ու ազգային մենթալիտետը հաշվի առնելով կոնֆլիկտները շատ են լինելու: Ֆերմերային տնտեսությունն ավելի արդյունավետ եմ համարում:

Կոոպերատիվների գոյությունը անիմաստ է այս պահի դրությամբ:

Կոոպերատիվը, պիտի նորից պլանային տնտեսության անցնի, հակառակ դեպքում իրացման խնդիր կունենա:

Կոոպերատիվներին պետությունը ֆինանսավորում է ամբողջ աշխարհում, մեզանում դա ևս պետք է արվի, որ կարողանան կոոպերատիվները կայանան:

Ես երբեք չեմ միանա **կոոպերացիային**, քանի որ հայի բնավորության պատճառով երկու հոգի նույնիսկ չեմ կարողանում լեզու գտնել, ինչպես կարող են մի քանի հոգի հաշտ ու համերաշխ համագործակցեն:

Կոոպերատիվների անհաջողության դեպքում միշտ մեղքը գցում են կոոպերացիայի ղեկավարի վրա:

Մենք կարող ենք **կոոպերատիվ** ստեղծել այսօր, տեխնիկա վերցնենք, վարկ վերցնել, բայց սա թղթի վրա է մնալու միայն նորից:

Առանձին **կոոպերատիվ** պիտի լինի տեխնիկական պարկ պահելու համար, սակայն պետական վերահսկողության ներքո:

Կոոպերացիայում ռիսկային է միջոցների և ներդրումների անհավասարությունը:

Գյուղտեխնիկայի հարցը ևս խնդիր է, սկզբից բերեցին ու **կոոպերատիվներին** տվեցին ու հարմար էր անցան մի քանի տարի լիզինգով սկսեցին տրամադրել ու գրեթե երկու անգամ թանկ:

Կոոպերատիվները պետք է քվոտայով աշխատեն, սովետի պայմանները պետք է փոխվեն կոոպերատիվներ կազմելու:

Կոոպերատիվները այսօր սեփական արժեք ստեղծելու հնարավորություն ունեն՝ դրսի միջոցներով ու ծրագրերով անգամ, տեղեկացվածություն է պետք:

ԱԱՀ-ն գյուղացու համար՝ **կոոպերատիվ**, թե ոչ, սխալ է:

Մեր հողերը փոքր են և իմաստ չկա թանկ գներով նոր տեխնոլոգիաներ գնել:

Գյուղացին կաշկանդված է, քանի որ հողի սեփականաշնորհումը սխալ է կատարվել:

Օլիգարխները հարյուրավոր հեկտարներով հողեր ունեն մեր մարզում, ես ունեմ մեկ հեկտար, արդյոք օլիգարխը կմիավորվի մեկ հեկտար ունեցողի հետ:

Գյուղացին մի հեկտար հող ունենալով ոչ մի օգուտ չի կարող ստանալ: Պետք է մեծացնել հողակտորները:

Մեծ հողակտորը մեծ ծախսեր է պահանջում, շատ աշխատողներ, տեխնոլոգիաներ:

Մեծ հողակտորի համար պետք է նաև շատ տեխնոլոգիաներ կիրառել, իսկ փոքրի վրա ձեռքով էլ կարող ես աշխատել:

Փոքր ծավալ ունեցող տնտեսությունները չեն կարող մրցել մեծ տնտեսությունների հետ:

Փոքր տնտեսության վրա ծախսված միջոցները անիմաստ կորչում են:

Մեծ հողատիրոջը ձեռք կտա ունենալ հակակարկտային ցանցեր, փոքրերին ձեռք չի տա:

Տնտեսությունների միավորման դեպքում պետք է լինի ռեսուրսների համատեղ կառավարում:

Երբ կոոպերատիվով է ապրանք արտադրվում, հարկերի հաշվին ավելի թանկ է դառնում, իսկ գյուղացին կարում է առանց դրա անի ու մրցակցության խնդիր կա:

Ոչ բոլոր հողերն են մշակվում, ոռոգվող հողերի մոտ քսանհինգ տոկոսն են մշակվում մեր մարզում: Վայոց Ձորը դարձել է ավելի ռիսկային, կիսաչոր-անապատային գոտի: Ցածր եկամտաբերության պատճառով հրաժարվում են մշակել: Եթե **կոոպերատիվներ** լինեն, դա կարելի է ապահովագրել:

Գյուղատնտեսական հողատեսքերը պետք է **խոշորացվեն**: Փոքր հողակտորները ոչ ոք չի ապահովագրի:

Կարելի է ստեղծել գյուղատնտեսական **կոլեկտիվներ**, անջրդի հողատարածքների նկարներն ուղարկել այդ կոլեկտիվներին, նրանց ապահովել գյուղատնտեսական տեխնիկայով և կողմնորոշել, թե ինչպես այս կոլեկտիվները կարող են մշակել այս տարածքները:

Սուբսիդավորումը շատ կարևոր է, բայց ավելի մեծ **կոոպերատիվների** համար:

Սուբսիդիա ստանալու լավագույն տարբերակը հողերի **խոշորացումն** է:

Հողերը պետք է **միավորել**, որպեսզի սուբսիդավորումն ավելի արդյունավետ լինի: Խոշորացումը հնարավորություն կտա մշակել նաև անմշակ հողերը, որոնք այսօր ձեռքից գնում են:

Եթե իմ հողը ջրի մոտ է, լավ տարածք է, կյանքում չեմ համաձայնվի կոոպերացիայի մեջ մտնեմ ուրիշների հետ:

Տեխնիկա ձեռք բերելու համար **կոոպերատիվները** շատ հարմար են, բայց հետագա աշխատանքը՝ կախված՝ մեր մենթալիտետից չի աշխատի:

Կոոպերատիվները ստեղծվում են, որպեսզի ինչ-որ մեկի համար ձեռք բերեն տեխնիկա և վերջ:

Տեխնիկան երբ բերվում է **կոոպերատիվ**, այն օգտագործվում է բոլորի համար:

Ով շահագրգռված է տեխնիկա ձեռք բերել, մտնում է **կոոպերատիվի** մեջ:

Կոոպերատիվները կունենան սեփական մեխանիզմները և դրսից եկողը չի կարող գին պարտադրել: Համայնքի սեփականություն տեխնիկան ամենաճիշտն է:

Մենք խոշորացած համայնք ենք, ունենք ավտոպարկ, որը մեզանից քսան կիլոմետր հեռու է և արդյունավետ չի: Մեզ ասում են՝ ձեզ տեխնիկա տվել ենք, բայց այդ տեխնիկան մեր մոտ չի կարող հասնել:

Գյուղտեխնիկան շատ թանկ է, գյուղացին չի կարող մենակ գնել տեխնիկա, իսկ **կոոպերատիվում** վստահություն չկա, որ բոլորով պատասխանատու կլինեն վարկի համար:

Պետք է հարևանությամբ գտնվող մանր հողակտորները, նույն մշակաբույսով զբաղվեն կամ, ավելի լավ է, խոշորացում իրականացվի, որպեսզի տեխնիկայի օգտագործումը իմաստ ունենա ու ընդհանուր ծախսերը պակասեն:

Քանի որ **կոոպերատիվի** նախագահը բարձ, վտանգավոր տարիքում է, վարկ չեն տրամադրում:

Մի կաթիլ մեղրի նման, պետք է շիրա տան, որ ժողովուրդը շահագրգռվի խոշորացմամբ: Թե չէ դժվար կլինի **կոոպերատիվներ** ստեղծելը:

Եթե **կոոպերացիան** ճիշտ կազմակերպեն, խնդիրներ չեն առաջանա: Կոլխոզ տեսել ենք, կոոպերացիան դրա մինի-տարբերակն է:

Քաղաքական համակարգը այնպես արեց, որ ժողովուրդը այսօր թշնամացել է, ինչ **կոոպերացիա** էլ ստեղծել:

Վերնաշենում արդեն երեք տարի է հիմնադրվել **կոոպերատիվ**, բայց մեխանիզմ պետք է տրամադրվեր, որոշակի գումար է մուծվել, բայց մինչ այժմ ձգձգում են:

Հեռավոր գյուղերում պետք է մարդկանց պարզ բացատրվի, թե ինչ է **կոոպերատիվը**, իրավունքները, պարտականությունները:

Ոչ թե **կոոպերատիվի** գաղափարն է վատը, այլ ուղղակի մարդիկ ովքեր զբաղվում են խնդրում կոմպետենտ չեն, նրանք սրտացավ չեն, դրա համար էլ գյուղատնտեսությունը հետընթաց է ապրում:

Մեր հասարակությունը պատրաստ չէ **կոոպերացիա** ստեղծելու՝ մենք վարելու, կառավարելու մշակույթ չունենք:

Անասնապահության ոլորտում ինչ որ տեղ հնարավոր է աշխատել **կոոպերացիայով**, այգեգերծության պարագայում անհնար է:

Կոոպերատիվն ունի մոտ երեսուն անդամ, բայց իրար հանդիպում են միայն ժողովների ժամանակ:

Կոոպերացիա ստեղծելու արդյունքում շատ գյուղացիներ կդառնան ուղղակի վարձու աշխատողներ:

Կոոպերատիվը շատ լավ բան է, բայց մեր մենթալիտետի դեպքում մի քիչ անհնարին է:

Գաղափարապես **կոոպերատիվը** շատ լավն է, բայց պրակտիկայում անհնար է իրականացնել:

Այսօրվա կաթի մթերման գների պայմաններում անասուն պահելը լրիվ անիմաստ է դառնում է: Էլ չենք խոսում **կոոպերատիվների** մասին:

Մեր **կոոպերատիվը**, որն ստեղծվել և միշտ աջակցվում էր Օքսֆամի կողմից, շատ էլ լավ աշխատում էր՝ հավասար պայմաններով, անգամ սոցիալական ծրագրեր էինք իրականացնում: Հիմա որ այլևս աջակցություն չկա, մենք չենք կարողանում արդյունավետ աշխատել:

Կոոպերատիվի անդամները գումար չունեն որպեսզի ներդնեն համաֆինանսավորման համար:

Բանկերը հրաժարվում են **կոոպերատիվներին** ֆինանսավորել: Նրանք գիտեն, որ սրանք չաշխատող կառույցներ են:

Կոոպերատիվների կանոնադրությունը փոխվել է, և հինգ հոգին էլ կարող են համարվել կոոպերատիվ, սա մի քիչ ավելի իրատեսական է:

Կոոպերատիվները նախկին կոլխոզներն են, ոչ մի բան չի փոխվել դրանց գործունեության մեջ:

Մարդիկ սովոր են իրենց անհատական տնտեսությունը վարել: **Կոոպերատիվի** կարիք չեմ տեսնում:

Կոոպերատիվի համար պետք է լինի նորմալ կանոնադրություն և ճիշտ վերահսկողություն:

Եթե մի քիչ ժողովրդավարություն լինի, **կոոպերատիվը** կաշխատի:

Դեռ չի հասունացել այն պահը, որ մենք հաջողված **կոոպերատիվներ** ունենանք: Տալիս են մի համակարգիչ ամբողջ կոոպերատիվին ու կռիվ է սկսվում այն օգտագործելու համար:

Անհատական **կոոպերացիա** պետք է լինի, այսինքն, կոոպերատիվի անդամները պետք է, օրինակ, նույն բանը արտադրեն, բայց ամեն մեկը իր հողատարածքը ունենա, կամ իր ջերմոցը:

Կոոպերացիաները մեր մարզում օգուտ չեն տա, փոքր են մեր ցանքատարածքները, անորակ են հողերը:

Կոոպերատիվում գլուխ պահողներ շատ են լինում, դրա համար էլ վստահություն չկա դրա հանդեպ:

Սովետի ժամանակ խոշոր էր, հետո էլի մասնավոր, հիմա նորից խոշորացում... մենք հո էքսպերիմենտների դաշտ չենք:

Մեր մարզում հողերը փոքր են ու անբերրի, **խոշորացումը** դժվար կլինի:

Պիտի **միավորվեն** արտադրողները, որպեսզի կարողանան թելադրել իրենց արտադրանքի գինը և իրենց աշխատանքի պայմանները:

Թող ներդրողներ գան, մեր հողերը անհատույց տրամադրենք, մենք էլ գնանք նրանց մոտ որպես վարձու աշխատող աշխատենք: Միաժամանակ այդ հողերը մնան որպես մեր սեփականություն: Միայն թե թող մեզ մոտ գյուղատնտեսությունը կայանա ու զարգանա:

Մեր մարզի վարելահողերը շատ քիչ են, գյուղացու հողատարածքները **փոքր** են, գյուղատնտեսությունը չի արդարացնում իրեն:

Արտահանման ոլորտում թող պետությունը օգնի խոշորին: Մանրն էլ թող արտահանի խոշորի միջոցով:

Մենք չենք ուզում կոլխոզ ստեղծենք, մենք ուզում ենք հողը վարձակալման գրասենյակ ստեղծել, որտեղ մարդիկ միասին աշխատեն և միասին էլ օգուտ քաղեն:

Համայնքի խոշորացման արդյունքում մենք կարողացանք սառնարանային տնտեսություն ձեռք բերել: Բայց ոչ բոլոր համայնքները կարող են իրենց դա թույլ տալ:

Խոշորացո՞ւմ, թե՞ ոչ. պատասխանը պետք է տալ՝ ելնելով համայնքի առանձնահատկություններից: Օրինակ՝ համայնքներ կան, որի բնակիչներն ավելի շատ ներգրավված են ինտելեկտուալ աշխատանքում: Արդյոք խոշորացումը նպատակահարմար է այստեղ: Պետք է բոլոր համայնքներում առանձին քննարկել այս խնդիրը:

Կարելի է բոլոր մեղվաբույծներին երկարաժամկետ հատվածում միավորել, ու մեղրը համատեղ հանձնել մթերման:

Մասնավոր, այլ ոչ թե պետական խոշորացում է անհրաժեշտ: Անգամ եթե վարձակալությամբ իրականացվի խոշորացումը, չաշխատող գյուղացին էլ կսկսի աշխատել, թեկուզ որպես վարձու աշխատող:

Վայոց Ձորում հատուկ մոտեցում է պետք արդյունավետ գյուղատնտեսական գործունեություն կազմակերպելու համար. հողը էրոզիայի է ենթարկված, կրծողների դեմ մեր ուժն էլ չի պատում, Նորավանքի շուրջ ժայռերը կարող են մի օր շուռ գալ, գետը կտրել ու զրկել ջրից, հողի բաղադրության մեջ կավի քանակությունը չափազանց մեծ է: Այս խնդիրները լուծելու համար պետական մոտեցում է պետք. հասարակ գյուղացին, ինքնուրույն կամ կոլեկտիվ, սրանց լուծում չի կարող տալ:

Բազմաթիվ համայնքներ կան՝ անմշակ հողերով, որոնք ավելանում են: Անհրաժեշտ է նախաձեռնող խումբ, որը կգնահատեր, թե ինչքան անմշակ հող կա համայնքում, կմիավորեր դրանք, բաժնետերեր կդառնային մի մեծ տնտեսության ու կսկսեին շահավետ տնտեսություն վարել:

Բ. ԱՂԵՏՆԵՐ

Տարերային **աղետների** պատճառով բերքի վնասի դեպքում վարկային մարումների հարցում պետական աջակցության կարիք կա:

Հակակարկտային կայանները օգտագործվում է միայն խաղողագործության համար: Իսկ մասնավորի եկամուտները չեն բավարարի հակակարկտային կայանի կառուցման համար: **Երաշտ** է լինում, բայց պետությունը երաշտ չի հայտարարում: Արդյունքում ապահովագրական ընկերությունը փոխհատուցում չի տալիս:

Պետք է հասկանալ, թե ինչ դեպքեր է ապահովագրում ապահովագրողը՝ **երաշտ**, վարակիչ հիվանդություններ, թե բոլոր դեպքերում:

Մի քանի օր առաջ **կարկուտը** վերացրեց հացահատկի մեր ամբողջ բերքը:

Գեղարքունիքում հրատապ է ապահովագրությունը. ամեն տարի **երաշտից** ու **կարկուտից** տուժում ենք:

Համաձայն եմ կոնկրետ **կարկուտից** կամ կոնկրետ վտանգից ապահովագրել, բայց ոչ «Կասկո» անել:

Պետք է լինեն ապահովագրության տարբեր սակագներ կախված այս կամ այն տարածաշրջանի ռիսկերից՝ **ցրտահարություն**, **կարկտահարություն**:

Կարկտահարությունից տուժածները երազում են ապահովագրության մասին:

Մարդիկ մեծ վարկեր են վերցնում, թանկարժեք սերմ գնում, բայց **կարկտահարության** պատճառով ամբողջ բերքը կորցնում են:

Շատ արդիական է **հակակարկտային** ցանցերը, թող ապառիկով տան գյուղացուն:

Կարկուտից այս տարի շատ ենք տուժել:

Հակակարկտային ցանցը ցրտահարությունից չի փրկի, սա մեզ համար առաջնային է, այդ ցանցերը շատ թանկ են, անգամ գիտակցելով, որ այն շատ արդյունավետ է, ոչ մի գյուղացի չի կարող իրեն թույլ տալ գնել, անգամ եթե գիտակցում է, որ մի յոթ տարի իր բերքը ապահովագրված է լինելու կարկուտից և նույնիսկ որոշ վնասատուներից:

Մեր մարզում ոչ մի **հակակարկտային** կայան չկա:

Կարկտից տուժածներին որևէ աջակցություն մինչև հիմա չի եղել:

Այսօր խնդիրները շատ-շատ են, և **կարկուտը** առաջնային խնդիր համարելը սխալ է:

Հակակարկտային ցանց տեղադրելիս պետք է անպայման հասկանալ, օրինակ տվյալ տարածաշրջանում ինչ է աճում, գոտիականությունն է, եթե թզուկաճ ծառեր կան, այո, պետք է ցանց տեղադրել:

Կարկտահարությունը տարածված է, բայց հակակարկտային համակարգ չունենք ընդհանրապես: Այստեղ ամենանպատակահարմարը երևի կրակող համակարգերի տեղադրումն է, ցանցը շատ թանկ է ու մենք չունենք այդ այգիները, ոնց Արարատյան դաշտավայրում, որպեսզի արդարացված լինի այդ ծախսը:

Գեղարքունիքում ամբողջ տարին ռիսկային է գյուղատնտեսության համար՝ **գերխոնավությունից** մինչև **երաշտ**:

Ֆրանսիացի խաղողագործի հետ էի խոսում, ով ասում էր, որ պետությունը պարտադիր ապահովագրում է գյուղատնտեսությունը, հատկապես բնական **աղետների** դեպքում: Դա իրական օգնություն է:

Ապահովագրությունը լավ բան է, այս տարի օրինակ **ցուրտը** տարավ այգիս ու պարտքերի տակ եմ:

Ավելի լավ է այգիները պաշտպանեն **հակակարկտային** համակարգերով, քան ապահովագրել:

Հակակարկտային ցանցերի ներդրումը շատ ավելի արդյունավետ կլինի քան ապահովագրությունը:

Ապահովագրական ընկերությունները իրենց եկամուտից կարող են հատկացնել **հակակարկտային** միջոցներին, իրենց համար էլ է շահավետ, քիչ տուժող կլինի, քիչ կվճարեն:

Փոխհատուցումն էլ գրոշներ են ու ծիծաղելի՝ 40,000 դրամ են մի անգամ տվել ամեն տնտեսությանը, կամ էլ ջրի հարկն են զիջում:

Սուբսիդավորված վարկերը բնական **աղետների** պատճառով դառնում են բեռ:

Ցանկալի է **հակակարկտային** միջոցներ ձեռք բերելու վարկային միջոցներ կամ սուբսիդիաներ լինեն:

Սուբսիդիաները թող ուղղվեն **կարկուտից** պաշտպանված ցուցադրական այգիներ հիմնելուն:

Հակակարկտային ցանցերը ճիշտ տեղադրելու համար կարևոր է պետության սուբսիդավորումը:

Հակակարկտային ցանցերի գների և սուբսիդավորված վարկերի մասին գյուղացին իրազեկված չի:

Երբ այգիս **ցուրտը** տարավ, որտեղ տարիներով 15 աշխատող եմ ունեցել, դիմեցի մարզպետարան, որ ցածր տոկոսով վարկ տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին մերժել անհիմն պատճառներով, խաբեբայության նման մի բան էր սա:

Քանի՞ տարի պետք է աշխատեմ, որ **հակակարկտային** ցանցերի վարկերը փակեմ:

Այսօր մեր ունեցած **հակակարկտային** կայանները բացարձակ արդյունավետ չեն, հատկապես մեծ տարածքների համար չէ, բարձրադիր տարածքների համար էլ չէ:

Կարկուտը Լոռում երկու հատ կարտոլ ու փորչուլուխ է ջարդել, Արմավիրում՝ խաղող, պոմիդոր, ծիրան... Գյուղնախարարը եթե տարբերություն չի տեսնում, ի՞նչ զարգացում պիտի ակնկալել;:

Սովորական բնական գազով են աշխատում **հակակարկտային** կայանները, ու բնականաբար, անարդյունավետ են:

Ացետիլենային գազով **հակակարկտային** կայանը միգուցե արդյունավետ լիներ, հրթիռայինին ծանոթ չենք:

Հակակարկտային կայանները արդյունք տալիս են, բայց քիչ են:

Հակակարկտային կայանները կամ կարկուտի դեմ պայքարի այլ միջոցները մատչելի չեն:

Ռուսաստանից հրթիռային կայաններ են բերել, տեսնենք դա ինչ օգուտ կտա **կարկուտի** դեմ:

Հակակարկտային համակարգերը որ ներդրեցին բոլորը ծափ էին տալիս, հիմա պարզվեց որ ոչինչ է:

Հակակարկտային կայանների հետ կապված տեխնոլոգիական խնդիր կա:

Եթե պայմանները հարմար լինեն, մենք էլ կուզենք հակակարկտային համակարգի ներդրման հարցում ներդրում ու մասնակցություն ունենալ:

Թե՛ գազային, թե՛ հրթիռային **հակակարկտային** կայանները չեն արդարացնում իրենց: Լուծումը հակակարկտային ցանցերն են:

Կողմ ենք **հակակարկտային** ցանցերին, իհարկե թանկ է, բայց ավելի արդյունավետ:

Փոքր **կարկտակայանը** որ կան հիմիկվա՝ գազագեներատորները, ընդհանրապես արդյունավետ չեն մեր դեպքում: Եթե ցանցերը տրվեն երկար ժամանակով, 5-6 տարով, կկարենանք ձեռք բերել:

Զենիթային համակարգը միայն բիզնես էր, ոչ մի օգուտ չէր տալիս:

Ամեն այգու վրա հնարավոր չէ **հակակարկտային** ցանց քաշել: Պետք է հասցեական լինի:

Հակակարկտային կայանները չաշխատեցին Հայաստանում, գյուղացիները շատ մեծ կորուստներ ունեցան:

Հակակարկտային կայանները արդյունավետ են, բայց շատ թանկ են գյուղացին իրեն թույլ տալ չի կարող:

Հակակարկտային ցանցերը շատ արդյունավետ են, բայց թանկ են:

Եթե մատչելի լինեն, ապա գյուղացիների 90 տոկոսը կտեղադրի **կարկտապաշտպան** ցանցերը:

Կարկտապաշտպան որևէ համակարգի ներդրումը Հայաստանում միանշանակ պետք է:

Անտառաշերտերի նվազումը նույնպես նպաստում է բնական **աղետների** բացասական ազդեցությանը գյուղատնտեսությանը:

Ամեն դեպքում պետությունը պետք է մասնակցի **աղետների** դեմ պայքարին:

Ավելի լավ է կանխարգելել ռիսկերը, քան **աղետներից** հետո վնասները փոխհատուցի, սա նաև աշխատանքային մշակույթի համար է լավ գյուղացու:

Եղած **հակակարկտային** կայաններն օգնում են թույլ ամպերի դեպքում: Հզորություն չունեն, ասում են օրիգինալ գազը չեն լցնում մեջը:

Հրթիռային համակարգերը այսօր անարդյունավետ են աշխատում, պետք է ներդնել ավելի հզոր համակարգեր:

Պետություն-գյուղացի հիսուն-հիսուն պետք է ներդրում անեն **կարկտապաշտպան** ցանցերի դեպքում: Եթե գյուղացին փող դնի, սրտացավ կլինի ցանցերի նկատմամբ: Իսկ կայանները մենակ պետությունը պետք է անի:

Մեծ հողատիրոջը ձեռք կտա ունենալ **հակակարկտային** ցանցեր, փոքրերին ձեռք չի տա:

Ֆինանսների բացակայության պատճառով չեն օգտագործվում այն **հրանոթները**, որոնք ժամանակին շատ արդյունավետ էին:

Պետք է տնտեսագիտական ճիշտ հաշվարկներ անել՝ նոր ձեռք բերել **հակակարկտային** ցանցեր, պետք է հաշվի առնել նաև գոտիականությունը, բացարձակ ձեռնտու չէ վարկ վերցնել ու ցանց գնել:

Համայնքապետը պիտի վստահություն վայելի գյուղացիների շրջանում ու աղետի դեպքում ճիշտ հաշվի վնասները:

Արդյոք բնական աղետների դեմ պայքարի միջոցների ներդրումը չպիտի ազդի գյուղարտադրանքի գների վրա:

Բնական աղետների դեմ պայքարի շատ լավ միջոցներ կան, բայց անգամ ամենաէժանները ֆինանսապես հասանելի չեն միջին վիճակագրական գյուղացուն:

Բնական աղետների դեմ պայքարի միջոցները պետք է համակարգված լինեն, չի կարող մեկը դնել, մյուսը չէ...

Հակակարկտային կայաններն այսօր ուղղակի սակավ ֆինանսական միջոցների վատնում են, որովհետև բոլորովին արդյունավետ չեն:

Մեր համայնքում **կարկուտի** համար գյուղացին մի լումայի աջակցություն չի ստացել: Պիտի ճանապարհ փակե՞նք, որ մեր ձայնը լսվի:

Վայոց ձորում **կարկտահարությունը** մշտական երևույթ է, չկա որ մի կարկտակայան:

Առաջին հերթին պետք է ներդնել **հակակարկտային** կայաններ և ցանցեր:

Հակակարկտային կայանները և ցանցերը տեղադրեցին, բայց որ կարկուտը եկավ, բերք չմնաց:

Այժմ ներդրված **հակակարկտային** համակարգերը այսօր արդյունավետ չեն:

Կառավարությունը պետք է օժանդակի, որ գյուղացիները տեղադրեն **հակակարկտային** կայանները և նրանց տարեկան ծախսերը:

Սովետի ժամանակ երկու **հակակարկտային** կայան կար, շատ արդյունավետ գործում էր, ոչ-ոք մարզում կարկուտ չէր տեսել:

Ոչ մի գյուղացի իր գրպանից փող չի տա **հակակարկտային** ցանց գնելու համար, շատ թանկ է, և կոնկրետ մեր տարածքի համար դա ձեռնտու չի:

Մեր հարևան գյուղում **հակակարկտային** կայան կա, իրենց մոտից հեռացնում են ամպերը ու մենք մնում ենք առանց անձրևի:

Հակակարկտային ցանցերը պետք է մատչելի լինեն բոլոր գյուղացիների համար:

Փոքր գյուղերի համար «զենիթներն» էլ մեզ բավարար են **կարկուտի** դեմ պայքարելու համար:

Կարկտապաշտպան ցանցի ծախսը մեկ հեկտարի համար ինն ամբողջ յոթ միլիոն դրամ է կազմում: Մեզ լուրջ աջակցություն է պետք այս հարցում:

Մեր տարածաշրջանում **հակակարկտային** կայանները չեն աշխատի ռելիեֆի պատճառով: Ցանցեր է պետք ներդնել:

Հակակարկտային ցանցերը մեծ տարածքի վրա է արդարացնում: Վայոց Ձորում նման տարածքները քիչ են, մեկ հեկտարի վրա դնելը չի լինի:

Գյուղացուն ոչ թե **կարկուտն** է վնաս տալիս, այլ մթերման խնդիրը: Մեր տարածաշրջանում մթերումը շատ վատ է կազմակերպված:

Մեր տարածաշրջանում հաճախ են կարկուտները, բայց ոչ մի պաշտպանություն չունենք:

Հրթիռային հակակարկտային կայաններն իրենց արդարացնում են, եթե յոթ կիլոմետրից ցածր են:

Հրթիռային համակարգը շատ թանկարժեք է ու օդը կեղտոտում է, դրա փոխարեն պետությունը պիտի ցանցեր արտադրի ու անվճար բաժանի գյուղացուն:

ԱԻՆ-ը շատ լավ իրականացնում է վերահսկողությունը, նրանք պետք է նաև տեղադրումն իրականացնեն:

Մեր համայնքում արջեր ու գայլեր են գալիս ու մեծ վնաս տալիս: Ի՞նչ կարող ենք մենք անել:

Մեր լավագույն հողերը խոշոր հողատերերինն է, օլիգարխներինը: Եթե իրենք ցանց չեն տեղադրել, ուրեմն մի բան գիտեն:

Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրությունը պետք է պարտադիր լինի:

Մեր բնակլիմայական պայմանների համար **ապահովագրությունը** պարտադիր է, հատկապես մեր մարզի համար:

Գեղարքունիքում հրատապ է **ապահովագրությունը**. ամեն տարի երաշտից ու կարկուտից տուժում ենք:

Ապահովագրությունը սկզբում բեռ կլինի գյուղացու վրա, հետո՝ ոչ:

Ավելի լավ է եկամուտից տասը տոկոսը տանք **ապահովագրության**:

Խոշոր ֆերմերները հաստատ **կապահովագրեն**, մանրերի համար դժվար կլինի:

Մանր տնտեսություններով անհնար է **ապահովագրություն** կազմակերպել: Անհրաժեշտ է միավորել տնտեսությունները:

Եթե **ապահովագրությունը** եղավ կամավոր և դա իրեն արդարացրեց, մարդիկ տեսան, որ ամեն ինչ նորմալ աշխատում է, մի տարի հետո անպայման կմիանան այդ համակարգին:

Ապահովագրությունը միանշանակ լուծում է:

Մեքենաների **ապահովագրության** մասին էլ ասում էին սկզբում որ բեռ է, հետո պարզվեց շատ օգտակար էր:

Ապահովագրությունը պետք է անպայման լինի կամավոր:

Պետք է սկզբից գյուղացուն օգնեն, որ մտնի **ապահովագրության** համակարգի մեջ:

Ապահովագրությունը պետք է գյուղացու համար հասկանալի լինի: Գյուղացին դա պետք է յուրացնի և համոզվի:

Ապահովագրությունը լավ բան է, բայց եթե ժամանակին արվի: Թողնենք ըստ ցանկության՝ կամավոր: Բերքի կորստից ելնելով կամաց-կամաց ավելի շատ կընդգրկվեն:

Ցանկացած պարագայում **ապահովագրումը** պետք է կամավոր լինի:

Ապահովագրության հարցում մեկնարկային փուլում թող պետությունն օգնի, 50% առաջին անգամ մասնակցի:

Կարծում եմ ճիշտ է **ապահովագրությունը** կամավորից սկսելը:

Գյուղացին բերքը վաճառելու շուկա չունի, որ **ապահովագրի** բերքը:

Այսօր գյուղացու համար անգամ մեկ լուման է բարդ տալ ուրիշին, թող խոշորները սկսեն պարտադիր վճարել **ապահովագրական** վճարները:

Նախ պետք է գյուղացուն սովորեցնել հողից բերք ստանալ, նոր **ապահովագրել**:

Բնակլիմայական պայմանների շարունակական վատթարացումը **ապահովագրությունն** ավելի անհրաժեշտ է դարձնում, բայց բնակչության մեծ մասը հնարվորություն չունի, գոնե կեսը պետք է սուբսիդավորվի պետության կողմից:

Պետք է տարբեր լինեն **ապահովագրության** վճարները՝ մեծ կազմակերպությունները այլ վճար թող տան, փոքրերը՝ այլ:

Համաձայն եմ կոնկրետ կարկուտից կամ կոնկրետ վտանգից **ապահովագրել**, բայց ոչ «Կասկո» անել:

Գյուղատնտեսությունը պետական գարանտի մեծ կարիք ունի, այսինքն **ապահովագրության**, որովհետև գյուղատնտեսությունը արտադրություն է բաց երկնքի տակ ու կախված է Աստծո քմահաճույքից:

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսությունը հիմնականում օգուտ չի բերում, որի պատճառով էլ ժողովուրդը չի կարող վճարել **ապահովագրության** համար:

Ռիսկային գոտում գտնվող համայնքներում փոխհատուցումը պետք է ավելի բարձր լինի: Անհրաժեշտ է հստակ սահմանել փոխհատուցման չափը:

Առաջարկվում է, որ **ապահովագրության** համակարգը պետք է լինի կամ պետական հոգածության ներքո կամ այլ ծրագրերի շրջանակներում:

Մի մասը տեղյակ չի, որ կամավոր **ապահովագրություն** կա:

Պետք է **ապահովագրությունը** չդիտարկվի բիզնես՝ ապահովագրողի համար. շատ կարևոր է, թե ով է ապահովագրում և ինչ պայմաններով:

Վստահության չկա պետական **ապահովագրության** նկատմամբ, քանի որ նախադեպ է եղել առաջ, որ գողացել են փողը: Այդ վստահության բացակայության պատճառով գյուղացիները կամավոր չեն ապահովագրում: Պետք է գտնել մասնավորներ, ովքեր գյուղացու համար վստահելի են:

Կան առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ կարգի հողեր, որոնց **ապահովագրական** վճարը պետք է տարբեր լինի:

Բանկային համակարգը գյուղացու շնորհիվ գերշահույթ ունի, թող դրա մի մասով պետությունը աջակցի **ապահովագրությանը**:

Ապահովագրությունը ամենաճիշտ քայլն է, եթե կամավոր լինի՝ գյուղի 5%-ը հազիվ ապահովագրի, դրա համար հողերի մեծ մասը ցանքսեր են դարձել, խոտ են ցանում, որ ռիսկերն ավելի քիչ լինեն:

Ապահովագրելու համար բոլորին մի սանդղակով չպիտի հաշվեն, յուրահատկությունները շատ են:

Եթե **ապահովագրման** համակարգը իսկապես արդար աշխատի, միանշանակ կողմ ենք:

Ապահովագրական ընկերությունները պետք է իրենց վրա վերցնեն նաև մեծ ցանքատարածություններ ունեցող գյուղացիների ապահովագրման խնդիրը ու նախապես վճարեն նաև ենթակառուցվածքների ստեղծման համար:

Պարտադիր **ապահովագրությունն** ինչի համար է՝ որ խոտհարք չդառնան հողերը մեր, Վիճվարչության ցույց տված թվերը լրիվ սուտ բաներ են:

Չեմ պատկերացնում ինչպես **ապահովագրական** ընկերությունը կփոխհատուցի մի ամբողջ համայնքի վնասը:

Կարծում եմ **ապահովագրությունը** պետք է սկսել խոշորներից:

Մասնավոր **ապահովագրականները** վախենում են գյուղացու հետ ապահովագրության պայմանագրեր կնքել, քանի որ վստահություն չունեն, որ գյուղացին եկամուտ կունենա:

Առաջարկվում է, որ մեծ համայնքները հանդիսանան որպես **ապահովագրական** ընկերություն ու իրականացնեն ընկերության ֆունկցիաները:

Կամավոր **ապահովագրությունը** ձեռնտու չէ, քանի որ քչերն են ցանկություն հայտնում:

Պարտադիր **ապահովագրությունը** կարող է բերել հողերի հանձնմանը, դա էլ կբերի հողերի խոշորացման:

Պետք է լինեն **ապահովագրության** տարբեր սակագներ կախված այս կամ այն տարածաշրջանի ռիսկերից՝ ցրտահարություն, կարկտահարություն:

Անասնապահությունը ավելի քիչ ռիսկային է, **ապահովագրությունը** պետք է սկսել անասնապահությունից:

Ապահովագրական գործակալությունները չեն ստանձնի կամավոր ապահովագրությունները, գումարները շատ քիչ կլինեն:

Ապահովագրության գները պետք է խելամիտ լինեն գյուղացու համար:

Կարկտահարությունից տուժածները երազում են **ապահովագրության** մասին:

Այսօր կովն արժե հազար հինգ հարյուր դոլար, իսկ հին ժիգուլին հարյուր դոլար: Հարյուր դոլարանոց ժիգուլին պարտադիր **ապահովագրվում** է, իսկ կովը՝ ոչ:

Երաշտ է լինում, բայց պետությունը երաշտ չի հայտարարում: Արդյունքում **ապահովագրական** ընկերությունը փոխհատուցում չի տալիս:

Վրաստանի կարտոֆիլագործության **ապահովագրման** փորձը պետք է ուսումնասիրել ու կիրառել:

Եկեք **ապահովագրությունը** մտցնենք, երկու-երեք տարի աշխատենք, ոտքի կանգնենք, նոր հարկվենք:

Պետք է հասկանալ, թե ինչ դեպքեր է **ապահովագրում** ապահովագրողը՝ երաշտ, վարակիչ հիվանդություններ, թե բոլոր դեպքերում:

Պետությունը թող սուբսիդավորի **ապահովագրական** համակարգի վճարները:

Պետք է սուբսիդավորել համակարգերի ներդրումը՝ **ապահովագրություն**, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Գյուղատնտեսությունը պարտադիր **ապահովագրել** է պետք, այլապես մեր այս խոսակցությունները կլինեն անիմաստ:

Գյուղատնտեսության **ապահովագրությունը** կարող է հարցեր լուծել, եթե միայն թղթի վրա չլինի, այլ իրապես գործի:

Ապահովագրական համակարգը պարտադիր է, քանի որ գյուղացին առանց ապահովագրության մեծ վտանգի տակ է:

Ցանկալի է կամավոր գյուղապահովագրություն, որովհետև մեքենաների պարտադիր ապահովագրությունը կարծես, թե իրեն չի արդարացնում:

Ապահովագրությունը ոչ թե պետք է այլ անհրաժեշտ է: Գյուղացին պատրաստ չէ բնության արհավիրքներին:

Գյուղատնտեսությունը պետք է պարտադիր ունենա իր **ապահովագրությունը**: Գյուղացին ունի դրա կարիքը:

Ապահովագրությունն այսօր ամենակարևոր բանն է մեզ համար, անպայման պետք է անցնել այդ համակարգին:

Գյուղ **ապահովագրության** հարցում գյուղացու համար հասանելիության խնդիրն է կարևոր:

Գյուղացին պատրաստ է իր եկամտի մի մասը տալ **ապահովագրությանը**:

Ապահովագրությունը պետք է լինի կամավոր, որին ժամանակի ընթացքում բոլորը կմիանան:

Պարտադիր ապահովագրություն է կարևոր, որ դա լինի իսկապես գործող, ոչ թե ձևական:

Ապահովագրության կարիք ունի առավելապես այգեգործությունը:

Ապահովագրական ընկերությունն էլ, գյուղացին էլ պետք է գնահատեն բոլոր ռիսկերը, որը ձեռնտու լինի:

Ապահովագրական համակարգը լավ բան է, հարցի լուծում է:

Մասնավոր ապահովագրական համակարգը գյուղատնտեսության մեջ ռիսկային է շատ, հետևաբար **պետության երաշխավորությունը** անհրաժեշտ է:

Ապահովագրական համակարգի վճարումները սկզբնական շրջանում գյուղացու փոխարեն պետք է կատարի պետությունը:

Ֆրանսիացի խաղողագործի հետ էի խոսում, ով ասում էր, որ պետությունը պարտադիր **ապահովագրում** է գյուղատնտեսությունը, հատկապես բնական աղետների դեպքում: Դա իրական օգնություն է:

Գյուղացու համար շատ կարևոր է իմանալ **ապահովագրության** համար նախատեսված նվազագույն վճարը:

Սկզբնական շրջանում պետք է կամավոր լինի ապահովագրությունը, պետությունը պետք է որոշ չափով օգնի, **մասնակցի**, մինչև գյուղացին ոտքի կանգնի:

Պետք է նաև ունենալ ճիշտ ենթակառուցվածքներ, որոնք կապահովեն **ապահովագրման** համակարգը:

Ապահովագրության ամենաանհրապույր ասպեկտը թղթաբանությունն է:

Ապահովագրությունը կարող է լինել սկզբում ըստ ցանկության հետո պարտադիր:

Ցանկալի է, որ պարտադիր գյուղապահովագրությունը լինի պետական հովանավորությամբ:

Ապահովագրությունը պետք է սկզբից կամավոր լինի, հատկապես ձեռ կտա խոշորներին, մանրներն էլ անպայման կմիանան ընթացքում:

Պետք է **ապահովագրել** նաև ապրանքի իրացումը, ոչ միայն արտադրությունը:

Անկախ ամեն ինչից գյուղապահովագրությունը այսօր անհրաժեշտություն է:

Ապահովագրությունը սկզբնական շրջանում պետք է պարտադիր լինի, և պետությունը սուբսիդավորի ապահովագրության վճարի մի մասը:

Ապահովագրությունը երբեք չի փոխհատուցի վատ բնակլիմայական պայմանների համար: Էլ ի՞նչ իմաստ ունի այն:

Եթե գինը մատչելի լինի, թող պարտադիր լինի **գյուղապահովագրությունը**, բոլորն էլ կապահովագրեն:

Ավելի լավ է սկզբում **գյուղապահովագրությունը** պիլոտային կամավոր լինի, հետո նոր որոշել՝ պարտադիր, թե՝ չէ:

Ապահովագրական ընկերությունների համար, բայց, դժվար թե շահավետ լինի, շատ ռիսկային է ոլորտը, մեր կլիման լավը չէ:

Պետությունը պետք է մի քանի տարի գյուղացուն սատար կանգնի, մինչև **ապահովագրական** ծառայությունները բարելավվեն:

Ի՞նչ պայմաններով է իրականացվելու **ապահովագրությունը**: Այն պետք է լինի կատարված ծախսի համար: Օրինակ՝ մեկ հեկտար խաղողի արտադրության համար անհրաժեշտ է տաս միլիոն դրամ: Այս ծախսը պետք է ապահովագրվի:

Պետք է մարզային առանձնահատկությամբ տարբերվի **ապահովագրական** վճարները: Մի տեղ հողերը բերրի են, մի այլ վայրում ոչ: Տարբեր են ոռոգման վճարները:

Ասենք ես արտադրում եմ 30 տոննա խաղող: Կոնյակի գործարանի հետ պայմանագիր ունեմ այդքան խաղողի իրացման համար: Հանձնումից մի շաբաթ առաջ կարկուտը բերքն ամբողջությամբ փչացնում է: **Ապահովագրական** ընկերությունը որքանո՞վ կփոխհատուցի... Սա է պետք քննարկել:

Օրինակ, շատ տաք եղանակին, ջրային տնտեսությունը կարող է յոթ օրով անջատել ջուրը. արդյոք **ապահովագրական** գործակալությունը դա ֆինանսավորելու է, թե ոչ, և նման շատ օրինակներ՝ բույսերի հիվանդություններ և այլն:

Գյուղացիների մեծ մասը պատրաստ չէ պարտադիր **ապահովագրության**, քանի որ չունեն բավարար դրամագլուխ ներդրումներ կատարելու համար:

Ապահովագրությունը լավ բան է, այս տարի օրինակ ցուրտը տարավ այգիս ու պարտքերի տակ եմ:

Ավելի լավ է այգիները պաշտպանեն հակակարկտային համակարգերով, քան **ապահովագրել**:

Ապահովագրությանը պետք է պետական մոտեցում լինի:

Մասնավոր **ապահովագրական** համակարգը գյուղատնտեսության մեջ ռիսկային է շատ, հետևաբար պետության երաշխավորությունը անհրաժեշտ է:

Ի տարբերություն մյուս ոլորտների, մեր երկրում գյուղատնտեսության **ապահովագրությունը** շատ ռիսկային է:

Ապահովագրությունը լավ կլինի որ երկկողմանի լինի, ինչպես ծախսերը, այնպես էլ շահույթն ապահովագրի, կասկոյի պես, բայց ա ևս ընտրության վրա պետք է լինի գյուղացու:

Ապահովագրությունը պետք է խտրականություն չդնի թե որ մշակաբույսը ապահովագրի, որ այգին, որը չի:

Պետք է ապահովագրել նաև կառավարության սխալներից: Փորձ ունենք, որ Գյուղնախարարի որոշումներից տուժել կամ փչացել են այգիները:

Գյուղացին եթե չունի առանձնապես կորցնելու բան, նրան ձեռք չի տա պարտադիր **ապահովագրությունը**: Եթե օրինակ հարյուր հատ անասուն ունի, կուզենա ապահովագրել, օրինակ՝ տասին:

5-7% վարկեր են մեզ պետք, ինչպես Իսրայելում, որտեղ ամբողջ գյուղատնտեսական գործունեությունն է **ապահովագրված**:

Սուբսիդիաներով վարկը ռիսկ չի լինի գյուղացու համար, եթե ունենանք **ապահովագրություն**:

Ապահովագրություն ասվածը խիստ վերացական է:

Ոչ մի գյուղացի չի ուզում ցանց ունենալ, որովհետև թանկ արժե, ուստի մտածում է **ապահովագրելը** ավելի արդյունավետ է, քան ինքնուրույն պաշտպանվելը:

Ապահովագրական ընկերությունները լուրջ միջոցներ պետք է ներդնեն գյուղատնտեսության ոլորտում:

Գյուղացին երբեք չի ուզի իր հույսը դնել **ապահովագրության** վրա:

Պետությունը պետք է թելադրի, որ **ապահովագրական** ընկերությունը իր գործունեությունը ծավալի գյուղատնտեսության ոլորտում:

Հակակարկտային ցանցերի ներդրումը շատ ավելի արդյունավետ կլինի քան **ապահովագրությունը**:

Ապահովագրական ընկերությունները իրենց եկամուտից կարող են հատկացնել հակակարկտային միջոցներին, իրենց համար էլ է շահավետ, քիչ տուժող կլինի, քիչ կվճարեն:

Պետությունը **ապահովագրության** հիսուն տոկոսը թող սուբսիդավորի, մյուսը թողնի գյուղացին որոշի:

Երաշխավորված գինը պետք է պատվերով լինի, այսքան հա, այս սերմով, այս գնով կվերցնեմ, կվաճառեմ ապրանքդ, որ ռիսկերը նվազեցվի, պետական աջակցությունն ու **ապահովագրությունը** այդպիսին լինի:

Ապահովագրությունը ցանկալի է կամավոր լինի, պարտադիր բաղադրիչը միշտ խանգարում է:

Ապահովագրական ընկերությունը թող գումարը շատ վերցնի, բայց լիիրավ վերահսկողություն ապահովի, հատկապես ՋՕԸ-երին վերահսկի:

Ապահովագրությունը պետք է լինի պարտադիր, բայց միևնույն ժամանակ պետությունը պետք է անպայման աջակցի, հատկապես սկզբից:

Կամավոր պետք լինի **ապահովագրությունը**, որոշակի կայուն աջակցություն էլ պետք է տրամադրվի պետության կողմից:

Ապահովագրությունը անհրաժեշտություն է: Եվրոպայում պետությունը երբեք մասնավորի վնասները չի փոխհատուցում, այլ այդ ամենը թողնում են ապահովագրությանը:

Եթե ուզում են գյուղատնտեսությունը զարգանա, պետք է անպայման **ապահովագրեն**:

Անասնապահության ոլորտի **ապահովագրության** խնդիրը նրանում է որ հինգ հարյուր հազար դրամանոց անասունի սատկելու դեպքում փոխհատուցում են օրինակ հարյուր հազարը:

Գյուղատնտեսությունը պետք է **ապահովագրվի**, անհրաժեշտ է: Բայց չեմ հավատում, որ կլինի: Երկիրը մենակ մեքենաներն է ապահովագրում, քանի որ ձեռնտու է:

Պետությունը և գյուղացին պետք է ունենան պայմանագրային հարաբերություններ, և պետությունը պետք է լինի հենց այդ «**ապահովագրական** կազմակերպությունը»:

Գյուղատնտեսությունը ռիսկային ոլորտ է, դժվար թե մտցնեն **ապահովագրություն**:

Վայոց Ձորի տարածաշրջանը շատ ռիսկային է գյուղատնտեսության համար, ուստի **ապահովագրությունը** շատ կարևոր է, բայց կարծում եմ, որ այն չպետք է պարտադիր լինի:

Եթե **գյուղապահովագրության** տոկոսները բարձր լինեն, գյուղացին պատրաստ չէ վճարել:

Պետք է լինի հստակ նախագծված սխեմա՝ **ապահովագրության** համակարգին անցնելու համար:

Ապահովագրությունը բիզնես է, ռիսկայնությունը հաշվի առնելով պետությունը պետք է իր մասնակցությունն ունենա:

Տարածաշրջանի համար ամենակարևոր խնդիրներից մեկը **ապահովագրությունն** է: Օրինակ՝ մեր մարզում կարկուտը շատ է, շատ հաճախ սեզոնի վերջում բերք չենք ստանում:

Ապահովագրությունը պետք է լինի երկաստիճան՝ ինչպես ԱՊՊԱ-ն, և ԿԱՍԿՈ-ն:

Անասունների **ապահովագրությունը** ռիսկային է: Եթե իմ կովը մի սարում սատկի, ինչպե՞ս եմ ապացուցելու որ սատկել է, կամ գայլը կերել է:

Ոչ բոլոր հողերն են մշակվում, ոռոգվող հողերի մոտ քսանհինգ տոկոսն են մշակվում մեր մարզում: Վայոց Ձորը դարձել է ավելի ռիսկային, կիսաչոր-անապատային գոտի: Ցածր եկամտաբերության պատճառով հրաժարվում են մշակել: Եթե կոոպերատիվներ լինեն, դա կարելի է **ապահովագրել**:

Գյուղապահովագրությունը պետք է շահավետ լինի երկու կողմերի համար էլ՝ գյուղացու էլ ապահովագրողի էլ:

Պետությունը թող **ապահովագրական** կազմակերպությանը վճարի որոշ գումար, վերադարձնելու պայմանով, երբ որ այդ ընկերությունը կայանա:

Կողմ եմ **գյուղապահովագրմանը**, բայց ոչ այս գյուղատնտեսության զարգացման պայմաններում: Այս պայմաններում անիմաստ է:

Գյուղացուն չես կարող պարտադրել **ապահովագրվել**: Պետք է մեխանիզմներ մշակվեն:

Գյուղատնտեսական հողատեսքերը պետք է խոշորացվեն: Փոքր հողակտորները ոչ ոք չի **ապահովագրի**:

Եթե համայնքներում ոռոգման խնդիրը չենք լուծում, **ապահովագրությունը** դառնում է անիմաստ:

Գյուղատնտեսության մեջ կարելի է **ապահովագրել** միայն կենդանիները:

Չորս տարի առաջ դեպք պատահեց ֆերմայի հետ: Գայլը հոշոտեց կենդանիներին: Կառավարությունից եկան, փոխհատուցում խոստացան: Հարկայինը եկավ տուգանեց, ասում էր վաճառել ես, չես ասում: Եթե **ապահովագրություն** լիներ, նման խնդիր չէր լինի:

Եթե գյուղատնտեսության **ապահովագրումը** լինի կամավոր, ապա ոչ մեկ չի ապահովագրվի:

Իմ կարծիքով **ապահովագրությունը** սկզբում պետք է լինի կամավոր, հետո դառնա պարտադիր:

Որոշ մարզերում **ապահովագրական** փաթեթներ են առաջարկում: Մեր մարզին էլ են նման փաթեթներ պետք: Կախված եկամտաբերությունից, հողատարածքի չափից՝ կորոշվեն տոկոսադրույքները:

Կողմ եմ **ապահովագրությանը**, բայց ոչ պարտադիր հիմունքներով:

Անասնապահության մեջ պետք չի պարտադիր **ապահովագրություն**, իսկ այգեգործության պարագայում պարտադիր է:

Գյուղատնտեսական **ապահովագրության** գումարը չափազանց մեծ է լինելու. ո՞ր գյուղացին կկարողանա նման գումար վճարել:

Տարբերակված մոտեցում է պետք **ապահովագրության** ներդրման համար: Օրինակ՝ խաղողն ու ընկույզը տարբեր գին ունեն, ու կախված մշակաբույսից, պետք է տարբեր փաթեթներ առաջարկել:

Եթե **ապահովագրությունը** կամավոր լինի, շատ քիչ մարդ կհամաձայնի: Պետք է պարտադիր ապահովագրություն մտցնել, որը մատչելի կլինի:

Ապահովագրությունը կարելի է երկու փուլով կազմակերպել՝ սկզբում կամավոր, հետո՝ պարտադիր:

Բնական աղետների դեմ պայքարի լավագույն միջոցը կարող է **ապահովագրությունը** լինի, բայց միևնույն է դա պետք է շատ մտածված լինի և հարմար:

Ապահովագրական ընկերությունների վերաբերյալ վստահություն չկա:

Մենք գիտենք, որ այլ վայրերում, ուր կարկուտ է եղել և **ապահովագրված** են, բայց նրանք էլ գոհ չեն:

Ապահովագրություն ներդնելուց առաջ պետությունը պետք է որոշակիորեն իր վրա վերցնի բեռը. օրինակ՝ սուբսիդավորման միջոցով: Իսկ ներդրումը պետք է կամավոր լինի, գոնե սկզբնական փուլում:

Անասնապահության **ապահովագրության** հնարավորությունը շատ ցանկալի կլիներ:

Արտահանելիս շատ կարևոր է սահմանին **ապահովագրել** արտադրանքը. ապահովագրությունը շատ կարևոր բան է:

Նախ պետք է կարկուտից և այլ աղետներից պաշտպանվելու համար համակարգեր ներդնել, կաթիլային ոռոգում ապահովել, նոր **ապահովագրության** համակարգը ներդնել:

Ավելի լավ է **ապահովագրությունը** սկզբում կամավոր լինի, հասկանանք՝ լավ է աշխատում, թե ոչ, հետո նոր պարտադիր:

Պարտադրելու կարիք չկա, եթե մարդը ուզում է տուժել ու փոխհատուցում չստանալ, թող ինքը որոշի:

Եթե պետությունը չաջակցի, ոչ մի մասնավոր **ապահովագրելու** ռիսկին չի գնա: Պարտադիր պետք է լինի, կամավորի դեպքում կարող է շատերը չմասնակցեն:

Անասնապահության մեջ **ապահովագրությունը** պետք է լինի պարտադիր, որպեսզի կարողանանք բանկերում անասունները գրավադրել գուղատնտեսական վարկերի ժամանակ:

Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Բնակլիմայական պայմանների շարունակական վատթարացումը ապահովագրությունն ավելի անհրաժեշտ է դարձնում, բայց բնակչության մեծ մասը հնարվորություն չունի, գոնե կեսը պետք է **սուբսիդավորվի** պետության կողմից:

Պետությունը թող **սուբսիդավորի** ապահովագրական համակարգի վճարները:

Պետք է **սուբսիդավորել** համակարգերի ներդրումը՝ ապահովագրություն, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Կոոպերացիան պետք է խնդիրների գիտակցումից սկսվի. **սուբսիդիա** տալով կոոպերացիա չես ստեղծի:

Պետությունը պետք է **սուբսիդիա** տա արդեն կայացած կոոպերացիաներին:

Սուբսիդիաները վառելիքի, ցանքի, ցույց տվեց, որ մարդիկ սկսեցին ընդլայնել իրենց գործունեությունը:

Պետությունը նախապես պետք է **սուբսիդավորի**, հետագայում աստիճանաբար նվազեցնի սուբսիդավորման աստիճանը:

Գյուղատնտեսության **սուբսիդավորումը** մինչև հիմա հարստացնում էր օլիգարխներին. սուբսիդավորվում էր դիզվառելիքը, քիմիկատը: Պետք է սուբսիդավորել ցանքսի հեկտարը:

Ենթակառուցվածքի ստեղծումը երբեք հոգս չի, հոգսն այն է, որ հասցնենք սպասարկել ենթակառուցվածքներն ու ծառայությունները: Ենթակառուցվածքների շահագործումն ու պահպանությունը պետք է իրականացվի պետության **սուբսիդավորմամբ** անպայման:

Առանց **սուբսիդիայի** մի կերպ աշխատում ենք:

Սուբսիդավորումը ճիշտ է, եթե ճիշտ է իրականացվում, առանց ծանոթ-բարեկամի, առանց կոռուպցիայի:

Սուբսիդավորումը լավ բան է, ազատում է ռիսկերից:

Պետությունը **սուբսիդավորում** է, բայց գյուղացին հաճախ նպատակային չի օգտագործում վարկը, որովհետև չկա վերահսկողություն:

Մինչև 70 տոկոս ոռոգման կորուստ կա, **սուբսիդիայի** մեծ մասը գնում է դրան:

Սուբսիդիան պետք է տրվի հող մշակողին: Դիզվառելիքին, պարարտանյութին, սերմնացուին պետք է տալ սուբսիդա:

Կյանքը ցույց տվեց, որ սուբսիդավորումը բլեֆ էր. **սուբսիդավորման** գումարը գնում էր Ֆլե-ին ու մյուս օլիգարխներին:

Կարելի է **սուբսիդավորել** խոշորացողներին:

Վառելիքը պետք է **չսուբսիդավորվի**, քանի որ մեխանիզատորը էժան գնով գնում է, բայց գյուղացուն ասում է գին՝ հաշվարկված շուկայականով ու գյուղացին չի զգում, որ սուբսիդիա կա:

Եթե ապացուցվի, որ տարիների **սուբսիդավորման** արդյունքում ցանքատարածություն է ավելացել կամ գյուղացու եկամուտն է ավելացել, ես կփոխեմ իմ անունը:

Սուբսիդիա պետք է ստանա հաջողակ գյուղացին. նա եկամուտ կարող է ստանալ, անհաջողակը գնում iPhone է առնում:

Եթե 1 հա ցորեն մշակեմ, ապա պետք է հասկանալ տվյալ գոտում դա ինչ ծախսեր է ենթադրում ու ըստ դրա **սուբսիդավորեն** հող մշակողին: Պետք չի առանձին-առանձին վառելիք, պարարտանյութ ֆինանսավորեն, որ թափանցիկ չլինի:

Եթե գյուղացին սխալ տեխնոլոգիա կիրառի, ի՞նչ օգուտ կարող է տալ **սուբսիդավորումը**:

Պետք է փորձնական **սուբսիդավորել** ցորենի ցանքը (ոչ թե վառելիքը կամ պարարտանյութը), իսկ վերահսկողության համար, ասենք, օգտագործել դրոններ՝ տեսնել ցանքը իրոք կա, թե չէ:

Սուբսիդիան պետք է տալ հող մշակողին, ոչ թե ուժեղ ու թույլ, հարուստ ու աղքատ նայել:

Սուբսիդավորումը պետք չէ նախապես անել, պետք է տեսնել ով ինչ է անում, ըստ դրա տալ:

Պետք է **սուբսիդավորել** բոլորին անկախ նրանից բարվոք բնակլիմայական պայմաններում է հողատարածքը, թե վատ:

Մեր երկրում ռեսուրսի կեսը չի օգտագործվում, նա ով կարողանում է ճիշտ աշխատել, կարել հենց նրան **սուբսիդավորել** և նրան տալ մնացած չմշակվածը:

Դասընթացներ են անցկացնում, հետո խոսք տալիս **սուբսիդավորված** վարկ, բայց հետո գնում ես բանկ, ասում են՝ դու գերծանրաբեռնված ես, քեզ չենք կարող սուբսիդավորված վարկ տալ, պետք է մեծ տոկոսով սովորական վարկ վերցնես:

Որտեղ պետությունը գումար ավելի շատ է կորցնում, այդ տարածքներում քիչ պետք է **սուբսիդավորում**, ավելի բարվոք պայմանների պետք է նայել նախապատվություններ տալուց:

Սուբսիդավորումը պետք է ուղղվի կայացած ֆերմերներին և տնտեսություններին:

Սուբսիդիան պետք է հավասար տրվի, եթե գյուղացին հող է մշակում, չպետք է նայել ինքը ինչ պայմաններում է գտնվում:

Սուբսիդավորման համար մրցակցային նորմալ պայմաններ չեն ստեղծված: Տեղ չի տրվում սկսնակ ֆերմերներին: Պետք է լինի քաղաքականություն, որը նոր սկսող ֆերմերին **սուբսիդավորի**:

Սուբսիդավորման մինիմալ գումարը՝ երեք միլիոնը, հասանելի չէ բոլորին:

Պետությունը թող **սուբսիդավորի** բոլորին հավասար՝ խոշորին էլ, փոքրին էլ:

Գյուղացուն **սուբսիդավորելը** սխալ է: Դա նման է Փարոսին, չեն աշխատում, որ նպաստ ստանան:

Պետք է գյուղացիներին օբյեկտիվ դասակարգել ու ըստ այդմ **սուբսիդիա** տրամադրել, արդար կլինի:

Տոհմային ցեղերի **սուբսիդավորումը** կարևոր է, բայց վատ է, որ 25-ից պակաս չեն տալիս:

Գյուղացուն ավելի ձեռնտու է ոչ թե **սուբսիդիա**, այլ ապրանքը իրացնելու օգնություն:

Մարզի կտրվածքով առաջնահերթություններ են. գյուղտեխնիկայի թարմացում, վարելահողերի խոշորացում, որակյալ թունաքիմիկատների **սուբսիդավորում**, սերմերի ոլորտի կարգավորում՝ որակի և գների առումով:

Վարկային բեռը, միևնույն է, մնում է գյուղացու ուսերին:

Նորմալ **վարկերի** քա՞նի տոկոսն է ծառայում բուն նպատակին:

Վարկավորման տոկոսադրույքները շատ բարձր են:

Կարտոֆիլի համար գոնե երեք-հինգ տոկոս պետք է լինի **վարկի** տոկոսադրույքը:

Բանկին դիմել եմ, ասել եմ, որ իրավիճակը փոխվել է երկրում, ինձ ուղարկել են դասընթացի, բայց մեկա բանկը **վարկ** չի տալիս, չի հանել սև ցուցակից:

Գյուղատնտեսական **վարկերը** ինչպես և մյուս վարկերը պետք է վերահսկողություն ունենան:

Մեր կոոպերացիան այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, բայց հարկային և **վարկային** բեռի պատճառով մեր ամբողջ եկամուտը ուրիշներին ենք տալիս:

Մարդիկ մեծ **վարկեր** են վերցնում, թանկարժեք սերմ գնում, բայց կարկտահարության պատճառով ամբողջ բերքը կորցնում են:

ACBA բանկը, որ գյուղատնտեսական բանկ էր, հիմա ձևը փոխել են, 3.000.000-ից ոչ պակաս **վարկ** չի տալիս, իսկ ինձ՝ գյուղացուս համար դա մեծ բեռ է, ինչ եմ անում այդքանը:

Մենք չենք կարողանում մինիմալ պայմաններ ստեղծել, որպեսզի Սևան զբոսաշրջիկ բերենք, չունենք այդ հնարավորությունները, թող մեզ օգնեն, լավ պայմաններով **վարկեր** տան:

Գյուղացուն այսօր ոչ թե **վարկ** է պետք տալ, այլ սովորեցնել, թե ինչից ինչ է պետք ստանալ:

Գյուղվարկերի համար մեծ խնդիր է դոլարի և դրամի տատանումները:

Պետք է գյուղացու համար այնպիսի **վարկ** տրամադրել, որ նա գերադասի այդ վարկը հենց գյուղատնտեսության համար վերցնի:

Տարերային աղետների պատճառով բերքի վնասի դեպքում **վարկային** մարումների հարցում պետական աջակցության կարիք կա:

Ավելի լավ է **վարկեր** տան, ամեն գյուղացի իր հարցերը լուծի:

Ես **վարկ** եմ ուզում կաթիլայինի համար, ինձ ասում են՝ կտան, բայց էն դեպքում, եթե տվյալ կազմակերպությունը անցկացնի այդ համակարգը: Ինձ փողը տվեք, ես ինքս ամեն ինչ կկազմակերպեմ:

Ինձ ձեռք չի տա **լիզինգով** գյուխտեխնիկա գնել:

Աքբա բանկով **լիզինգով** հնարավոր է գումարներ վերցնել, բայց տեխնիկան անմատչելի է, ամբողջ կյանքդ չես կարող փակել:

Գյուղտեխնիկայի քանակի խնդիր գրեթե չունենք, հնացած էլ կա, նորերն էլ՝ **լիզինգով**:

Սկզբնական շրջանում պետք է կամավոր լինի ապահովագրությունը, պետությունը պետք է որոշ չափով օգնի, **մասնակցի**, մինչև գյուղացին ոտքի կանգնի:

Ցանկալի է, որ պարտադիր գյուղապահովագրությունը լինի պետական **հովանավորությամբ**:

Ապահովագրությունը սկզբնական շրջանում պետք է պարտադիր լինի, և պետությունը **սուբսիդավորի** ապահովագրության վճարի մի մասը:

Պետությունը պետք է մի քանի տարի գյուղացուն **սատար** կանգնի, մինչև ապահովագրական ծառայությունները բարելավվեն:

Սուբսիդիաներով վարկը ռիսկ չի լինի գյուղացու համար, եթե ունենանք ապահովագրություն:

Պետությունը ապահովագրության հիսուն տոկոսը թող **սուբսիդավորի**, մյուսը թողնի գյուղացին որոշի:

ՋՕԸ-ի **սուբսիդավորումն** անարդար է, քանի որ սրանք նախատեսված են իբր շահույթ չհետապնդող կազմակերպություններ, սակայն պրակտիկան այլ բան է ցույց տալիս. դրանք գնալով հարստանում են: Մինչդեռ պետք է սուբսիդավորել հենց անհատ ջրօգտագործողին:

Ջրի կորուստները նվազեցնելու համար կաթիլային ոռոգումը խրախուսելու համար, անտոկոս **վարկեր** պետք է տալ սրա համար:

ՋՕԸ-ի **սուբսիդավորումն** անարդար է:

Մեզ մոտ հարցերի հարցը ոռոգումն է, և պետությունը պետք է զբաղվի կաթիլային ջրամատակարարման հարցերով, պետությունը պետք է դա ամբողջությամբ ֆինանսավորի և ոչ թե **սուբսիդավորի**:

Ո՞վ է տալիս կաթիլային ոռոգման համար ցածր տոկոս վարկեր, գյուղացին այդպիսի **վարկերից** տեղյակ չեն:

Պետք է **սուբսիդավորել**, որ կոոպերացիաները զարգանան. դա կշահագրգռի գյուղացիներին միավորվել:

Կարևոր է քննարկել, թե **սուբսիդավորման** դեպքում ոնց է կոոպերտիվին վարկ տրվելու, գրավ են ուզելու, անդամներից ում բնակարանը պետք է գրավ դնել, նման հարցերը պետք է հասկանալ նաև:

Կոոպերատիվներին պետությունը **ֆինանսավորում** է ամբողջ աշխարհում, մեզանում դա ևս պետք է արվի, որ կարողանան կոոպերատիվները կայանան:

Սուբսիդավորումը լավ բան է, բայց մարդիկ ամեն դեպքում խուսափում են **վարկ** վերցնելուց:

Սուբսիդավորումները ընկալվում էին որպես փող աշխատելու միջոց:

Ցանկալի է, որ **սուբսիդավորման** փոխարեն ապառիկ գումար ձևակերպվի:

Պետք է **սուբսիդավորել** կոնկրետ գյուղացուն, ոչ թե ավելի մեծ միավորումներին, գյուղերին, համայնքներին:

Տարբերակված մոտեցում է պետք **սուբսիդավորման** համար՝ խոշորին՝ խոշոր, փոքրին՝ փոքր:

Հավասար պետք է լինի **սուբսիդավորումը**: Օրինակ՝ ես մի կով ունեմ, դա ավելի թանկ է, քան խոշոր ֆերմերի մի քանի տասնյակ կովերը:

Սուբսիդավորման 70 տոկոսը տեղ չի հասնում:

Մեր մոտ մի հեկտարի վրա մեկ միլիոն երկու հարյուր հազար ծախս է արվում, իսկ Գեղարքունիքում էդպիսի տեղ չկա, որ նման ծախս արվի: Իհարկե, տարբերակված պիտի լինի **սուբսիդավորումը**:

Այսօր մենք մեր մարզում, **սուբսիդավորման** շնորհիվ, ունենք ջերմոցներ, որոշել ենք գաճաճ կեռասի ծառեր աճեցնել:

Վերջին երկու տարին վառելիքի **սուբսիդավորում** չի եղել:

Սուբսիդավորված պարարտանյութը շատ անորակ է:

Եթե **սուբսիդավորեն** մենակ թույլերին, մի տարի հետո բոլորը թույլ կդառնան:

Սուբսիդավորման ապրանքները համայնքապետը բաժանում է ծանոթ բարեկամներին:

Միայն մեծերի **սուբսիդավորումը** կբերի նրան, որ փոքրերը կսկսեն հողերը վաճառել:

Դրսի ներկրածը մեր տեղականի կեսն արժի՞... առանց **սուբսիդավորման** տեղականը չենք կարողանա ապահովել:

Նախկին իշխանության ժամանակ կոռուպցիան սխեմաների պատճառով գյուղացուն **սուբսիդավորվող** պարարտանյութը վերջնական սպառողին թանկ էր հասնում:

Սուբսիդավորումները բոլորին պետք է հասանելի լինի՝ և՛ մեծ տնտեսություններին, և՛ փոքրերին:

Պետությունը պետք է առաջնահերթ **սուբսիդավորի** պարարտանյութը, թունաքիմիկատները, սերմը, վառելիքը:

Սուբսիդավորված վարկերը բնական աղետների պատճառով դառնում են բեռ:

Վարկային կազմակերպությունը տալիս է **սուբսիդավորված** վարկ ցածր տոկոսներով, բայց գյուղացու եկամուտը այնքան քիչ է, որ ծանրաբեռնվում է վարկերով:

Պետությունը պետք է **սուբսիդավորի** առանց գրավադրման, բայց մեծ պատասխանատվությամբ հետևի:

Ես բանկ եմ դիմել **սուբսիդավորվող վարկի** համար, բայց մերժել են անասուն չունենալու պատճառով:

Սուբսիդիան ձևի համար հայտարարվում է, օդի մեջ անհետանում:

Ահռելի փողեր են գնում **սուբսիդիաների** վրա, ավելի ճիշտ կլինի այլ տեղ ներդնել:

Ցանկալի է հակակարկտային միջոցներ ձեռք բերելու վարկային միջոցներ կամ **սուբսիդիաներ** լինեն:

Եթե **սուբսիդիան** տրամադրվի պարարտանյութ ներկրող կամ վաճառողին և նա «նիսյա» մեզ տա բերքը ստանալուց հետո վճարենք:

Սուբսիդիաները թող ուղղվեն կարկուտից պաշտպանված ցուցադրական այգիներ հիմնելուն:

Հակակարկտային ցանցերը ճիշտ տեղադրելու համար կարևոր է պետության **սուբսիդավորումը**:

Գոտիականությունն էլ պետք է հաշվի առնել կազմակերպելու համար գյուղատնտեսությունը, օրինակ Էջմիածնի տարածաշրջանում ջերմոցներ, Արմավիրում այգիներ, մշակաբույսեր, Բաղրամյանի տարածաշրջանում ավելի շատ անասնապահությունը: Նման հարցերը պետք է հաշվի առնի պետությունը **սուբսիդավորման** ուղղություններն ընտրելիս ու նախապատվությունը տալ նրան, որտեղ ինչը լավ է լինում:

Պետությունը պետք է **սուբսիդիա** տրամադրի կաթիլային համակարգի ստեղծման համար:

Պետությունը **սուբսիդավորում** է անասնաբուժության չորս ծառայություն: Իսկ մյուս մասը մնում է գյուղացու վրա:

Գյուղացուն ամեն ինչի համար էլ անհրաժեշտ է **սուբսիդավորել**՝ օբյեկտիվ ուսումնասիրությունների պայմաններում: Չեմ ասում 1 հա ունեցողը գնա ասի տեխնիկա տուր ինձ:

Կոռուպցիայի պատճառով **սուբսիդավորվող** տեխնիկան գյուղացուն վաճառվում է անհամեմատ թանկ գնով:

Հակակարկտային ցանցերի գների և **սուբսիդավորված** վարկերի մասին գյուղացին իրազեկված չի:

Անտառ կտրելն արգելված է, մյուս կողմից էլ գյուղացու վրա փաստացի բարձր տոկոսով **վարկեր** են թողնում: Փակուղային է վիճակը:

Սահմանադրությունն ինչի՞ հետ համեմատելով ընդունեցին՝ Ֆրանսիայի: Եկեք **վարկերն** էլ ֆրանսիականի հետ համեմատենք: Մեզ մոտ շատ բարձր են տոկոսները:

Եթե **վարկը** ձևակերպում են, տան անձամբ գյուղացուն, առանց միջնորդ կազմակերպության ու հենց գյուղացուն էլ հսկեն:

Երբ այգիս ցուրտը տարավ, որտեղ տարիներով 15 աշխատող եմ ունեցել, դիմեցի մարզպետարան, որ ցածր տոկոսով **վարկ** տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին մերժել անհիմն պատճառներով, խաբեբայության նման մի բան էր սա:

Բանկը այնպիսի պայմաններ են առաջարկում, որ գյուղացին երբեք չի կարող ապահովել ու ցածր տոկոսով **վարկը** միֆ է, հետո կարող են զանգել ւ ասել, որ կարանք ավելի բարձր տոկոսով վարկ տանք. տեխնիկա է ինչ-որ սա:

Եթե բարձր տոկոսով **վարկերը** մինչև հիմա փակել ենք, մինչև 24%-ով, ցածր տոկոսով ինչի չպետք է ուզենք ու չկարողանանք:

Գյուղատնտեսական **վարկերը** վերցնում են ու նպատակին չեն ծառայեցնում, պետք է լինի լուրջ վերահսկողություն:

Գյուղացին իրեն տրամադրված **վարկը** ոչ նպատակային է իրացնում: Կով գնելու փոխարեն հեռուստացույց է գնում:

Պետությունը գյուղացուն տալիս է հինգ տոկոսանոց **վարկ**, բայց նվազագույն շեմը երեք միլիոն դրամ է: Գյուղացին, որին մեկ միլիոն դրամ է պետք, չի կարողանում օգտվել:

Բանկերը պետք է ճիշտ ձևով տրամադրի **վարկը**: Շատ գյուղացիներ և ֆերմերներ բողոքում են բանկերում առաջացող խնդիրներից:

Ով անասուն չունի, ռիսկային է դառնում նրան **վարկ** տրամադրելը:

Գյուղացին **վարկերի** տակ է ինչպես բնության և պետության քաղաքականության, այնպես էլ միջոցների ոչ ճիշտ կառավարման պատճառով:

Վարկերը տրամադրելուց գյուղացին խաբվում է:

Մեր մեծ սխալը գյուղացուն ֆինանսական աննորմալ վիճակի մեջ դնելն էր: Գյուղացու համար չպետք է լինի նման **վարկավորում**:

Գյուղացուն չպետք է տալ կարճաժամկետ **վարկեր**:

Բանկերը մտածված գյուղացուն գցում է բարձր ռիսկայնության շահառուների ցանկում, որպեսզի **վարկերը** բարձր տոկոսադրույքով տան:

Քանի՞ տարի պետք է աշխատեմ, որ հակակարկտային ցանցերի **վարկերը** փակեմ:

Նախ պետք է պահենք հողը, լավ հող ունենանք, պետք է պետությունը կես գին դարձնի կալիումական աղի և ֆոսֆորաթթվի գինը, որ հողը նորից իր գործը անի: Պետությունը միայն **վարկ** տալու համար չէ: Գյուղատնտեսությունը պետք է ճանաչվի առաջին ռազմավարական ուղղություն:

Սառնարանային տնտեսությունները պետք է լինեն բոլոր մարզերում: Մարդիկ սեփականաշնորհում են դրանք, բայց չեն կարողանում օգտագործել, որովհետև **վարկ** չեն տալիս:

Պարարտանյութի ու վառելիքի փոխարեն թող **գումարը** տան:

Գյուղացիները տարիներ շարունակ ֆինանսական մեծ բեռի տակ են, քանի որ տոկոսադրույքները շատ բարձր են:

Ապահովագրությունը պետք է լինի պարտադիր, բայց միևնույն ժամանակ պետությունը պետք է անպայման **աջակցի**, հատկապես սկզբից:

Կամավոր պետք լինի ապահովագրությունը, որոշակի կայուն **աջակցություն** էլ պետք է տրամադրվի պետության կողմից:

Պետությունը թող ապահովագրական կազմակերպությանը վճարի որոշ **գումար**, վերադարձնելու պայմանով, երբ որ այդ ընկերությունը կայանա:

Ապահովագրություն ներդնելուց առաջ պետությունը պետք է որոշակիորեն իր վրա վերցնի բեռը. օրինակ՝ **սուբսիդավորման** միջոցով: Իսկ ներդրումը պետք է կամավոր լինի, գոնե սկզբնական փուլում:

Եթե պետությունը **չաջակցի**, ոչ մի մասնավոր ապահովագրելու ռիսկին չի գնա: Պարտադիր պետք է լինի, կամավորի դեպքում կարող է շատերը չմասնակցեն:

Գյուղացիներին պետք է **սուբսիդավորել** ըստ գյուղացու փաստացի զբաղվածության ոլորտի, այսինքն գյուղացին էդ սուբսիդիան օգտագործի այն ոլորտում, ինչը որ ինքը կարողանում է անել:

Հիմա **սուբսիդիա** են տալիս գյուղացուն, սելիտրա, սերմեր, վառելիք: Բայց արդյունք չկա, չենք իմանում ում հասավ կոնկրետ:

Վարկերի տրամադրման կանոնները վերանայման կարիք կա՝ մասնավորապես ժամկետների մասով:

Պետությունը արտոնյալ **վարկեր** է տալիս ինտենսիվ այգիների համար, բայց մարդիկ միևնույն է խուսափում են այդ վարկերից, քանի որ գումարն է մեծ ստացվում՝ քսանհինգ միլիոն դրամ մի հեկտարին:

Սուբսիդավորվող վարկերը, բացի կաթիլային և ցանցային ոռոգումը, բավականին մեծ տոկոսներ են պահանջում, որն արդեն անարդյունավետ է դարձնում նման վարկերից օգտվելը:

Կաթիլային ոռոգման ու հակակարկտային ցանցերը **սուբսդիավորելիս** պետությունը չպիտի ուղղորդի ումից առնել: Թող ֆերմերը որոշի ումից ձեռք բերի:

Թող պետությունը **սուբսիդավորի** ոռոգումը: Ոռոգումը դառնա ծրի:

Գինին սարքելուց անմիջապես հետո չի վաճառվում: Գոնե երկու տարի պիտի պահես, որ շշալցնես: Կաթիլային ոռոգման դեպքում հինգ տարով են առաջարկում վարկը, իսկ գինու արտադրության համար՝ մեկ տարով: Որքանո՞վ է սա խելքին մոտ: **Սուբսիդավորվող** վարկն առնվազն երեք տարվա համար պետք է տրվի գինեգործության համար:

Պետությունը **սուբսիդավորում** է գյուղատնտեսական վարկերը, բայց մեզ վարկ չեն տալիս, անգամ գրավի դիմաց:

Մեզ պետք է, որ **սուբսիդավորումը** լինի դրամական, այլ ոչ թե, ասենք, դիզվառելիքի տեսքով:

Պետք է ապացուցես որ գյուղատնտեսությամբ զբաղվում ես, որ **սուբսիդավորվող** վարկ ստանաս: Պահանջում են մեծ տարածքներ, անասունների մեծ գլխաքանակ:

Սուբսիդավորումը շատ կարևոր է, բայց ավելի մեծ կոոպերատիվների համար:

Սուբսիդավորման ցանկացած տարբերակ օգտակար լինել, կարևորը կոռուպցիա չլինի:

Եթե մարդը չի կարողանում կամ ուզում աշխատել, ոչ մի **սուբսիդիա** չի օգնի:

Սուբսիդիա ստանալու լավագույն տարբերակը հողերի խոշորացումն է:

Միայն դիզվառելիքի վարկը պետք է **սուբսիդավորել**:

Սուբսիդավորման համակարգը այնքան կոռումպացված է այսօր, որ զրո էֆֆեկտիվություն ունի:

Պետությունը բերում է անորակ սերմեր, **սուբսիդիայով** տալիս են մեզ և մրցունակ արտադրանք չի ստացվում:

Դիզվառելիքի գները անընդհատ փոխվում են: Ասենք, էսօր դրա գինը տասը հազար դրամ է, և քեզ սուբսիդավորված ութ հազարով են տալիս: Հետո որոշ ժամանակ տևում է, մինչև վառելիքը բերեն հասցնեն քեզ: Երբ հասնում է քեզ, պարզվում է դիզ. վառելիքը արդեն շատ ավելի էժան է՝ ասենք, յոթ հազար դրամ: Էդ **սուբսիդիան** դառնում է լրիվ անիմաստ:

Մեզ **սուբսիդավորում** պետք է տնտեսությունը կայացնելուց: Դրանից հետո, սուբսիդիա պետք չէ:

Սուբսիդիան պետք է տալ շատ խիստ ուսումնասիրված տնտեսությանը, որը իսկապես այդ գումարով կարող է զարգանալ և դրա կարիքն իսկապես ունի:

Սուբսիդիաների որոշ մասն է հասնում գյուղացուն: Կամ գյուղացին սուբսիդավորված վարկը այլ նպատակներով է օգտագործում:

Պետությունը վարկը **սուբսիդավորելու** փոխարեն, թող լավ անասուններ ներմուծի:

Պետք է մոնիտորինգ անցկացնել գյուղում, որ տեսնեն, թե ով ինչպես է աշխատում, հետո նոր **սուբսիդիա** տան:

Սուբսիդավորում կա ինտենսիվ այգի ստեղծելու համար, սակայն բանկը վարկը տալիս է ինչ-որ կազմակերպության, որը որոշում է ինչ-որ անհասկանալի մշակաբույս արտադրել, իսկ գյուղացու համար, որը գիտի ինչը երբ ու որտեղ ավելի լավ կաճի, այդ ֆինանսական միջոցները հասանելի չեն:

Գյուղացի կա, որ ծույլ է, ի՞նչ իմաստ ունի իրեն **սուբսիդիա** տրամադրել:

Պետությունը պետք է գյուղացուն **սուբսիդավորի** փոքր տոկոսադրուքով վարկեր տա: 16-24 տոկոսանոց վարկերով անհնար է աշխատել:

Վայոց ձորում հողի մեկ հեկտարի մշակման մասով գներն ամենաթանկն են, մոտ հիսուն հազար դրամ: Տեխնիկան թեև **սուբսիդավորված** է ձեռք բերում տերը, բայց գինը չի էժանացնում:

Գյուղատնտեսությունն այնքան անկանխատեսելի է, որ շղթայի բոլոր օղակներն էլ պետք է **սուբսիդավորվեն**:

Հողերը պետք է միավորել, որպեսզի **սուբսիդավորումն** ավելի արդյունավետ լինի: Խոշորացումը հնարավորություն կտա մշակել նաև անմշակ հողերը, որոնք այսօր ձեռքից գնում են:

Սուբսիդավորումը պետք է տարբերակված լինի: Արտադրողին այլ չափի տան, իսկ մշակող գյուղացուն՝ այլ:

Սուբսիդիաները պետք է նպատակային տրվեն: Գործից հասկացող մարդկանց պետք է տան:

Սուբսիդիան պետք է նպատակային բաժանվի, ոչ թե ձևական:

Գյուղատնտեսական տեխնիկայի **լիզինգի** ժամանակահատվածը պետք է երկարացնել մինչև տաս տարի և ավելին, որպեսզի ես կարողանամ և՛ ընտանիքս պահել, և՛ գյուղատնտեսական գործունեությանը մասնակցեմ:

Վարկը պետք է անտոկոս լինի գյուղացու համար, կամ շատ ցածր լինի, այնքան էլ ընթացիկ ծախսեր ես անում, որ անիմաստ է լինում այդ վարկը վերցնել:

Վարկի տոկոսը պետք է իջեցնել, գյուղացուն գիտելիքով զինել, վարկերի ժամկետներն էլ երկարացնել:

Վարկերի տոկոսադրույքը այնքան բարձր է, որ գյուղացին չգիտի աղետի դեպքում ինչպես պիտի փակի վարկերը:

Քանի որ կոոպերատիվի նախագահը բարձ, վտանգավոր տարիքում է, **վարկ** չեն տրամադրում:

Գյուղացուն առանց գրավի հակակարկտային ցանցի համար **վարկ** չեն տալիս:

Ես երեք միլիոն դրամ **վարկի** համար դիմել էի, բայց արդեն մի քանի ամիս է, չեն տալիս:

Գյուղացուն **վարկ** չեն տալու որ մեծ հողատարածք ցանի ու անձամբ վաճառի Ռուսաստանում: Եթե մեծ հողատարածք ունենամ կվաճառեմ դրսում:

Կայուն շուկայի ստեղծումն ու երկարաժամկետ ցածր տոկոսով **վարկերը** առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ են:

Բանկերը հրաժարվում են կոոպերատիվներին **ֆինանսավորել**: Նրանք գիտեն, որ սրանք չաշխատող կառույցներ են:

Մեզ համար կարևոր է ցածր տոկոսով երկարաժամկետ **վարկերի** տրամադրումը:

Ով կարողանում է, ասենք, տասը միլիոն **վարկ** վերցնի բանկից, զբաղվում է ծիրանի արտահանմամբ, հետո գնում Լարսում մնում բերքը փչացնում է, գալիս ասում է՝ մենք պետք է ծիրանը հիմա հարյուր դրամով գնենք, որ փչացածի տեղը հանենք: Գյուղացին էլ ընտրության հնարավորություն չունի, ստիպված էժան տալիս է:

Բարձր տոկոսով վարկերը շատ **լավ** է, դա ստիպում է գյուղացիներին ավելի զգոն լինել:

Այնքան թուղթ են ուզում մի հատ **վարկ** տալու համար, որ մի հազար անգամ գնալ-գալուց հետո այնպես ես հիասթափվում, որ դու ես պատրաստ լինում վճարել, որ քեզ այլևս վարկ չտան:

Գյուղատնտեսության մեջ ցանկացած ներդրում պահանջում է առնվազն երեք տարի որպեսզի արդյունքը տեսնենք, հետևաբար **վարկերը** պետք է սկսենք մարել երեք տարի հետո:

Բնական աղետների դեմ պայքարի շատ լավ միջոցներ կան, բայց անգամ ամենաէժանները **ֆինանսապես** հասանելի չեն միջին վիճակագրական գյուղացուն:

Դիզվառելիքի, պարարտանյութի սուբսիդավորում ես չեմ ընդունում: Խոշոր գումար պահանջվող դեպքերում է ինձ պետք, որ պետությունը օգնի: Ընդհանրապես օգնել պետք է ըստ կոնկրետ ծրագրի:

Դեմ եմ փող տալուն: Փողը թուլացնում է աշխատողին: Ոնց որ նպաստ ստանալը օրինակ: Գյուղացին ոչինչ չի անում, որ միավորը չբարձրանա, նպաստից չկտրվի:

Այնտեղ, որտեղ հարթավայր է, մեխանիզացիան հեշտ է օգտագործել: Իսկ մենք համայնքներ ունենք, որտեղ կոմբայն չկա, որ հացահատիկ հավաքի: Ասենք, լիզինգով կոմբայն վերցրեցի: Դա աշխատելու է երկու ամիս միայն, մինչդեռ ես 12 ամիս պիտի վճարեմ **լիզինգը**:

Սուբսիդիաների տրամադրման ժամանակ, բոլորը օգտվում են բացի գյուղացուց ու պետությունից:

Ես գումար եմ վճարել երեք ամիս առաջ, մի կերպ ստացել եմ իմ պարարտանյութը գյուղապետարանի միջոցով. մի քանի օր հետո նույն պարարտանյութը խանութում ավելի էժան եմ տեսել. էլ ինչիս էր պետք այդ օգնությունը:

Նախորդ տարիներին սերամցու տվեցին, նորմալ չաճեց, բայց ֆերմերին ստիպեցին վճարել:

Գյուղատնտեսության **վարկերը** մարելու համար գյուղացին ստիպված գնում է Ռուսաստան:

Ե. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ, ՈՌՈԳՈՒՄ

Եթե ուզում ենք գյուղատնտեսություն զարգացնել, պետք է դիֆերենցված մոտեցում ցուցաբերել: Չպետք է, օրինակ, Արարատյան դաշտում ու մեզ մոտ **ջուրը** նույն գինը ունենա:

Հողերի **ոռոգելիության** մակարդակը մտահոգիչ է:

Կաթիլային ոռոգման համակարգի անհրաժեշտությունը մեզ մոտ էդքան էլ կարևոր չի, ոչ համապատասխան մշակաբույս ունենք, կարտոֆիլ ենք աճեցնում, որը կաթիլայինով չես ոռոգի: Չնայած որ կաթիլային համակարգը կտնտեսեր ջրի օգտագործումը, ինչի խնդիրը ունենք:

Կաթիլային ոռոգումը օգտակար է միայն ջերմոցային տնտեսության համար: Այլ դեպքերում ծախսերը շատ են լինում:

Պետք է սուբսիդավորել համակարգերի ներդրումը՝ ապահովագրություն, **կաթիլային ոռոգման** համակարգ և այլն:

Մինչև 70 տոկոս **ոռոգման** կորուստ կա, սուբսիդիայի մեծ մասը գնում է դրան:

Ճիշտ **ջրամատակարարումից** շատ բան է կախված: Գյուղացին շատ գումար է կորցնում, եթե ոռոգումը ճիշտ չի կազմակերպվում:

Ենթակառուցվածքների բացակայությունը խնդիր է:

Համայնքներ կան, որտեղ **կաթիլային ոռոգումն** անիմաստ է, քանի որ այլ օգտակար եղանակներ կան:

Կաթիլային ոռոգման համակարգը չի աշխատում այստեղ ու նպատակահարմար չէ:

Ենթակառուցվածքների առկայության դեպքում, գյուղացիները բնությանը ավելի խնայողաբար կվերաբերվեն:

Երեսուն տարի յոթանասուն տոկոս կորստի պայմաններում հնարավոր էր մի քանի անգամ նորոգել **ոռոգման** համակարգը:

Ջրի խնդիր ունենք: Ընդամենը մի քանի կիլոմետր խողովակաշարի խնդիր ունենք, չենք կարողանում լուծել այդ խնդիրը: Պետք է Ակնալճից խողովակաշարով ինքնահոս ջուրը բերել:

Մեզ մոտ ձմեռը ութ ամիս է, իսկ Արարատյան դաշտում՝ չորս: Առաջարկում եմ, որ **գազի** գինը տարբեր լինի:

Խոտաբույսերի բիզնեսը շատ ձեռնտու է, մենք շատ գնորդներ էլ ունենք, բայց այսօր անգամ մի մեքենա չենք կարողանում ձեռք բերել, որ ուսներիս դրած չբերենք:

Ավելի լավ է անհատներին ֆինանսավորեն, որպեսզի ենթակառուցվածքները պահպանի: Ես մեծ այգի ունեմ, որտեղ **ջուրը** գետով է գնում, ինձ եթե ֆինանսավորեն ու խողովակ քցեմ այդ նույն ջրով մի քանի այգի կջրվի:

ՋՕԸ-ի սուբսիդավորումն անարդար է:

Ջրի կորուստները նվազեցնելու համար կաթիլային ոռոգումը խրախուսելու համար, անտոկոս վարկեր պետք է տալ սրա համար:

ՋՕԸ-ի սուբսիդավորումն անարդար է, քանի որ սրանք նախատեսված են իբր շահույթ չհետապնդող կազմակերպություններ, սակայն պրակտիկան այլ բան է ցույց տալիս. դրանք գնալով հարստանում են: Մինչդեռ պետք է սուբսիդավորել հենց անհատ ջրօգտագործողին:

Համայնքների **ոռոգման** ներքին ցանցի վիճակն անմխիթար է ու այստեղ պետք է ներդրումներ արվեն:

Ջրի վարձերը բարձր են, վերցրել են սովետական ժամանակի նորմատիվները հա-ին 1000 լ է պետք, բայց մենք փորձարկել ենք, որ դրա 50%-ը բավարարում է: Եթե 50%-ով վարձը էժանացնեն, բոլորին էլ ավելի հեշտ կլնի, իսկ գումարները հավաքելը դժվար է:

Պայմանագիրը կնքում են, **ջրաղբյուրում** ջուր չկա ու իրենք ալտերնատիվ չունեն, թե նման դեպքում ինչ պետք է անել:

Գյուղատնտեսական **ենթակառուցվածքները** ահավոր վիճակում են:

Եղեգնուտում 4 **խորքային հորի** ծրագիր կա, բայց վերջին ժողովին ասում են փող չկա, եկեք 2-ը սարքենք:

Խորքային հորերի սպասարկումը պետության գործն է:

Ամենակարևորը **ոռոգման** հարցն է, որը գյուղերի մեծ մասին ունի: Մոտ 90 տոկոս կորուստներ ունենք:

Թող **կաթիլային** համակարգը պետությունը ստեղծի, ընդհանուր մի աղբյուր ստեղծի, որ մի քանի տնտեսություն օգտվի: Մի հոգին մեկ միլիոն չի կարող ծախսել:

Մեզ մոտ հարցերի հարցը **ոռոգումն** է, և պետությունը պետք է զբաղվի կաթիլային ջրամատակարարման հարցերով, պետությունը պետք է դա ամբողջությամբ ֆինանսավորի և ոչ թե սուբսիդավորի:

Կան գյուղեր, ուր **ոռոգման** ջուրը ավելի ուշ է հասնում: Բնականաբար իրենց նկատմամբ վերաբերմունքը այլ պետք է լինի:

Մեր երկրում անապատացում է սկսվում, մենք կաթիլային **ոռոգում** չենք կարող իրականացնել:

Կաթիլային **ոռոգումը** բերելու է հողի տեխնիկական վիճակի դեգրադացման, և իսկական աղետի է բերելու:

Ո՞վ է տալիս կաթիլային **ոռոգման** համար ցածր տոկոս վարկեր, գյուղացին այդպիսի վարկերից տեղյակ չեն:

Զարթոնքում **ոռոգման** ջրերն Արմավիրի ու Մեծամորի կոյուղաջրերն են, տանում են, ստուգում, նորմալ արդյունքներ են... Ի՞նչ վերահսկողության մասին է խոսքը: Տարբեր պետական մարմիններին դիմել ենք մաքրման կայաններ սարքելու համար, առայժմ անարդյունք:

Ոռոգման ջրի էժանացում, թունաքիմիկատներ՝ էժան և որակով, մեխանիզմների զարգացում, իրացման աջակցություն: Սա է բանաձևը զարգացման:

Պետք է մեր հարստությունը՝ **ոռոգման** ջուրը չպետք է մեր երկրից դուրս տան: Գյուղատնտեսության համար սա ստրատեգիական հարց է:

Մեկ լիտր **ոռոգման ջուրը** 90,000 դրամ է: Գյուղացին չորրորդ ձեռքն է՝ ջուրը ջրամբարից Ախուրյանի ջրառն է վերցնում, հետո՝ ՋՕԸ-ն, հետո նոր մենք...

Հողի տեսակները հաշվի չեն առնում, թե տարվա կտրվածքով քանի անգամ պետք է **ջրել**, հստակ քանակ է որոշված բոլորի համար ու հերիք չի ամեն տարի վճարում եմ էտ ֆիքսված քանակի համար, բայց չեմ ջրում այդքան, նաև առանձնահատկությունները հողի հաշվի առնվեն:

Պայմանագրային հարաբերությունները պետք է միակողմանի չլինեն, միայն իրենց շահերն են, ոչ մեր, այ որ մեզ էլ համապատասխան **ջրով** են ապահովում ու այգիս չորանում է, ես էլ կարողանամ դատի տալ:

Նախապես տարվա սկզբում ծանուցումն էլ շատ կարևոր է, թե **ջրային** ռեսուրսները որքան են ու հաշվի առնենք մշակաբույսերը ընտրելիս:

Պետք է այնպես անել, որ **ջրի** հասանելիությունը բոլորին հավասար լինի կամ ըստ պահանջարկի, ոչ թե ավել կամ պակաս:

Այսօր մեր **ջրային** ռեսուրսները սխալ կառավարման արդյունքում այլ պետություններին է գնում, մենք էլ մնում ենք առանց ջուր: Մինչև ջրի հարցը չլուծվի, ոչ մի հարց չի լուծվելու: Այս հարցը պետք է պետությունը լուծի:

Ջան ֆիդայի մոտ **ջրամբար** կառուցելու և՛ տեղ կա, և՛ անհրաժեշտություն, իսկ պետությունը մինչ օրս ոչ մի աշխատանք չի կատարել էտ ուղղությամբ:

Թուրքիան արդեն երեք **ջրամբար** է կառուցել ու կուտակումներ է կատարել:

Ջրային ենթակառուցվածքների ստեղծման համար կատարվում են աշխատանքներ, բայց ոչ բավարար:

Ունենք 70 տոկոս **ջրային** կորուստներ:

Բամբուկների պատճառով **ջրի** մեծ կորուստներ է լինում, քանի որ բամբուկները գյուղացուն հասանելիք ջրի մեծ մասը «քաշում են»:

Զարթոնքում նախկինում Սև **ջրերից** էինք օգտվում, որոնք ուղղեցին դեպի Մասիս ձկնաբուծության համար: Ոչինչ չենք կարողանում անել այս առումով:

Ջրանցքների կապիտալ վերանորոգում է անհրաժեշտ:

Գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր դեր ունի **ջրամատակարարումը**, մեր մոտ այդ խնդիրը շատ խորն է:

Մեծ համայնքների համար **ենթակառուցվածքների** համար ներդրումները արդարացված են, բայց փոքր համայնքների համար՝ ոչ: Այսինքն՝ էլի հարուստը շահեց, աղքատը՝ ոչ:

Պետությունը պետք է սուբսիդիա տրամադրի **կաթիլային ոռոգման** համակարգի ստեղծման համար:

Սառնարանային տնտեսությունները պետք է լինեն բոլոր մարզերում: Մարդիկ սեփականաշնորհում են դրանք, բայց չեն կարողանում օգտագործել, որովհետև վարկ չեն տալիս:

Ջուրը սուբսիդավորվում է, բայց գյուղացին չի զգում դա:

Գյուղատնտեսական ինֆրաստրուկտուրաներ էլ չկան: Օրինակ **լաբորատորիաներ**: Մասնագետները աչքաչափով են ստուգում որակը:

Որոշ պտղատու ծառերի համար մուչապատումը ևս լուծում է, **կաթիլայինին** հավասար:

Ջուրը մեր մարզում ամենագլխավոր խնդիրն է, իսկ պետական կառույցները սին խոստումներ են տալիս:

ՋՕԸ շատ անարդյունավետ են աշխատում, եթե ես դատի տամ անգամ, ես տանուլ կտամ, ես պաշտպանված չեմ իրենց վատ գործունեությունից. իրավական դաշտում պետք է փոփոխություններ իրականացնել: ՋՕԸ մեզնից չի վախենում, ինչպես ուզում է, այնպես էլ վարվում է: Մենք այսօր ոչ մի ոլորտում պաշտպանված չենք:

Մինչև **ջուրը** հասնում է մեզ, ՀԷԿ-երը գիտեք ինչ գումարներ են աշխատում ու ինչ աննշան գին են վճարում, իրենք գերշահույթ են ստանում՝ օգտագործելով իմ ջուրը, թող մի մասը՝ իմ ուսերին դրվածի իրենք վճարեն, իրենք իմ հասանելիք ջուրն են օգտագործում:

Ամեն տեղ չէ, որ **կաթիլային** համակարգը իրեն արդարացնում է:

Եթե համայնքներում **ոռոգման** խնդիրը չենք լուծում, ապահովագրությունը դառնում է անիմաստ:

Նախ պետք է կարկուտից և այլ աղետներից պաշտպանվելու համար համակարգեր ներդնել, **կաթիլային ոռոգում** ապահովել, նոր ապահովագրության համակարգը ներդնել:

Երբ **ջուրը** ինքնահոսով գնում է Նախիջևան, ո՞վ է վճարում դրա համար: Իսկ երբ մենք ենք տանում մեր հողերը ջրելու, մեծ գումարներ ենք վճարում:

Ժողովուրդը չի կարողանում **ջրի** վճարները տալ, որովհետև ոչ մի աշխատանք չկա մեզ մոտ:

Մեր **ջրերը** ձրի գնում են թուրքին, իսկ մենք ջուր չունենք:

Հայաստանի տարածքների մեծ մասն **անջրդի** են, ուստի առաջարկում եմ դարավանդներ սարքել և մասրենի տնկել: Սա իսկապես շահավետ ծրագիր կլինի:

Մինչև **ջուրը** ինքնահոսով հասնում է մեր գյուղ, ջուր չի մնում: Ջուրը ճիշտ չի բաշխվում մեզ մոտ:

Կաթիլային **ոռոգման** օգտակարությունը հասկանալու համար, նախ պետք է հասկանանք դրա արժեքը:

Ջուրը պետք է տալ համայնքին, այլ ոչ թե ստեղծել ջրային տնտեսություններ, քանի որ համայնքը ավելի լավ գիտի իր խնդիրները:

Ես այգի եմ տնկել, բայց խնդիրներ կան **ջրելու** հետ կապված. կամ ջուր չկա, կամ եղածն էլ թանկ է:

Ես տարեկան մոտ 100.000 դրամ **ջրի** համար վճար եմ տալիս, իսկ մեր ջրերն էլ դուրս են գալիս երկրից ու անիմաստ հոսում:

Այսօրվա որևէ փոքր տնտեսություն ի վիճակի չի անցնել **կաթիլային** համակարգի առանց պետական աջակցության:

Հողի որոշ հատվածներ է հնարավոր **կաթիլային** համակարգով ջրել, մյուս մասը շատ ծախսատար է:

Կաթիլային ոռոգման համակարգի օգտակարության մասին պատկերացումները չափազանցված են:

Այսօր շատ կարևոր է **ոռոգման** համակարգի արդիականացումը, որովհետև գործող համակարգն ամբողջությամբ կոռումպացված է:

Կաթիլային համակարգը ամբողջապես փոխում է մշակման ընթացքը և ծախսերը:

Մեզ մոտ կլանային համակարգ է գործում: Եթե ծանոթ ունես, կկարողանաս **ջրել** քո այգին:

Ջրի խնդիր էլ ունենք, մեզ օգնություն է պետք այդ հարցում, ուզում ենք վերականգնել մեր խնձորի այգիները:

Կաթիլային համակարգի մասին մենք ոչինչ չգիտեինք, մեզ եկան և սովորեցրեցին, ցույց տվեցին, սկսեցինք օգտվել, շատ գոհ ենք:

Շատ ցանկալի կլիներ, որ Վայոց Ձորի մարզում ներդրվի **կաթիլային** ոռոգման համակարգ, որովհետև քարքարոտ հողեր են, որը թույլ է տալիս, որպեսզի ջուրն ավելի ներքև իջնի:

Սուբսիդավորվող վարկերը, բացի կաթիլային և ցանցային **ոռոգումը**, բավականին մեծ տոկոսներ են պահանջում, որն արդեն անարդյունավետ է դարձնում նման վարկերից օգտվելը:

Մեր համայնքը՝ Գնդեվազը հայտնի է իր ծիրանով ու այստեղ ծիրան է պետք աճեցնել՝ դա է թելադրում շուկան: Բայց ծիրան աճեցնելու համար, մեզ պետք է, որ, ասենք, **ոռոգման** համար առաջին մի քանի տարին պետությունը օգնի, մինչև ծառը սկսի բերք տալ:

Կաթիլային **ոռոգման** ու հակակարկտային ցանցերը սուբսդիավորելիս պետությունը չպիտի ուղղորդի ումից առնել: Թող ֆերմերը որոշի ումից ձեռք բերի:

Կաթիլային **ոռոգում** որոշ տնտեսություններ արդեն ներդրել են: Շատ օգտակար բան է, քանի որ համակարգիչն է որոշում, թե երբ և ինչքան ջրի, ու ըստ այդմ խուսափում գերոռոգումից կամ ուշ ջրելուց: Բացի դրանից կարող ես նույն համակարգով պարարտանյութ տաս: Բայց քանի որ մեր տարածաշրջանում ջրի խնդիր որպես այդպիսին չկա, քչերն են հետաքրքրված կաթիլային համակարգով:

Թող պետությունը սուբսիդավորի **ոռոգումը**: Ոռոգումը դառնա ձրի:

Գինին սարքելուց անմիջապես հետո չի վաճառվում: Գոնե երկու տարի պիտի պահես, որ շշալցնես: Կաթիլային **ոռոգման** դեպքում հինգ տարով են առաջարկում վարկը, իսկ գինու արտադրության համար՝ մեկ տարով: Որքանո՞վ է սա խելքին մոտ: Սուբսիդավորվող վարկն առնվազն երեք տարվա համար պետք է տրվի գինեգործության համար:

Կառավարությունը պետք է ստեղծի սիմվոլիկ գումար **ջրի** վարձի համար, օրինակ հեկտարի ջրապահովումն արժի որոշակի գումար ըստ մշակաբույսերի: Սա հնարավորություն կտա գյուղացուն նախապես իմանալ գումարի չափը:

Մեր գյուղում **ջրամատակարարման** խնդիր չունենք, գետ և առու ունենք, ու ոչ մի գումար չենք մուծում, որովհետև մեր սարերի ջուրն է:

Համայնքապետարանը պետք է **ջրելու** հստակ հերթ սահմանի, որ առավելություններ ունեցողներ չլինեն:

Որոշ համայնքներում **ջրի** վարձը 11 դրամ է, սակայն կարիք կա վերանայել այս սակագինը Վայոց Ձորում, որտեղ կավի պատճառով հսկայական ծավալով ջուր է կորչում: Այստեղ որոշ տոկոսով պետք է սակագինն իջեցվի:

Միջնակարգ դպրոցի կոլեկտիվով կցանկանայինք օգտագործել համայնքի չմշակվող հողատարածքները: Ցանկապատման ու **ջրի** առկայության դեպքում կարող ենք ծաղիկների ջերմոցային տնտեսություն վարել:

Եթե իմ հողը **ջրի** մոտ է, լավ տարածք է, կյանքում չեմ համաձայնվի կոոպերացիայի մեջ մտնեմ ուրիշների հետ:

Ենթակառուցվածքները մեր ամենացավոտ տեղն է:

Գյուղատնտեսական ապրանքի վերամշակման զարգացումը գյուղերում խիստ անհրաժեշտ է և շատ շահավետ կարող է լինել:

Պետությունը պետք է անիմաստ կորչող **ջուրը** հասցնի գյուղացուն:

Զ. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ

Եթե կոոպերատիվներին ես տրամադրում **տեխնիկան**, իրենք շատ սրտացավ են լինում, շատ ավելի արդյունավետ են օգտագործում:

Մեր գյուղում երկար ժամանակ չէր մշակվում, հիմա սկսել են մշակել, գյուղում **կոմբայն** չկա, կողքի գյուղից բերելու ենք, կարող է կամայական գին ասել:

Եթե պետությունը կոոպերատիվ է ստեղծել, բայց կարիքները հաշվի չի առնում, ասում ենք այս սարքավորումն է մեզ պետք, բայց մեզ տալիս են ուրիշ **տեխնիկա**, որովհետև ասում են ծրագրով դա է նախատեսված, իմաստը էլ որն է, որ քննարկենք մեր կարիքներն ու կարծիքները:

Կոոպերատիվները պետք է վերացվեն, քանի որ ոչ մի օգուտ չեն տալիս ու չեն կատարում իրենց ֆունկցիան՝ կոոպերատիվի անդամներին ավելի էժան գնով **տեխնիկա** չի տրամադրում:

Համայնքի բնակիչը տեղյակ չէ, որ իր համայնքում գոյություն ունի կոոպերատիվ ու կարող է իրեն **տեխնիկա** տրամադրել:

Կոոպերատիվները ստեղծվելու ընթացքում կոլեկտիվ **տեխնիկան** մտել է գյուղ ու դարձել մենաշնորհ:

Կոոպերատիվներին **տեխնիկա** տալուց ոչ միայն պետք է կարիքը հաշվի առնել, այլև պայմաններդ, ռելիեֆդ, քանի որ ունենք դեպքեր, երբ տրված **տեխնիկան** մեր հողում ու պայմաններում չի աշխատում:

Կոոպերացիաների ստեղծումը կանխեց **գյուղտեխնիկայի** աշխատանքի գների աճը, սպասարկումը դարձրեց գյուղացու համար ավելի մատչելի:

Կոոպերատիվին տրված **տեխնիկան** եթե չես էլ օգտագործում, բայց դրա վարձավճարը մեկ է մուծում ենք. մենեջմենթի խնդիր կա:

Տեխնիկան պետք է կենտրոնացնել. թող մի կազմակերպություն դա իրականացնի ու ոչ պետական լինի:

Հողերի խոշորացումից առաջ, նախ պետք է **տեխնիկական** պարկեր լինեն:

Տեխնիկան ու հողը առանձին են: Պետք է միանան:

Մարզի կտրվածքով առաջնահերթություններ են. **գյուղտեխնիկայի** թարմացում, վարելահողերի խոշորացում, որակյալ թունաքիմիկատների սուբսիդավորում, սերմերի ոլորտի կարգավորում՝ որակի և գների առումով:

Ինձ ձեռք չի տա լիզինգով **գյուխտեխնիկա** գնել:

Աքբա բանկով լիզինգով հնարավոր է գումարներ վերցնել, բայց **տեխնիկան** անմատչելի է, ամբողջ կյանքդ չես կարող փակել:

Գյուղտեխնիկայի քանակի խնդիր գրեթե չունենք, հնացած էլ կա, նորերն էլ՝ լիզինգով:

Այսօր **գյուղտեխնիկայի** հարցը լուրջ է, որովհետև փչանալու դեպքում մասնագետ չկա: Չկա ինժեներ պատրաստող որևէ օղակ:

Գլխավոր խնդիրը **գյուղտեխնիկայի** թարմացումն է:

Համայնքի ղեկավարի կողմից սխալ ցուցակագրում է տեղի ունենում և **տեխնիկայի** օգտագործման սխալ վերաբաշխում:

Պետությունից խնդրում ենք մի փոքր աջակցություն նոր **տեխնիկայի** տեսքով:

Հին **տեխնիկայի** պատճառով հացահատիկի վերամշակման ժամանակ 40 տոկոս կորուստ է ունենում գյուղացին, իսկ նոր տեխնիկայի վարձակալության գինը թանկ է և այդ գործով զբաղվում է գյուղապետի եղբայրը:

Գյուղտեխնիկայի բացակայության պատճառով այլ գյուղից է տեխնիկա բերելու համար գյուղացին մեկ հեկտարի համար կրկնակի է վճարում, քան այն գյուղերում որտեղ տեխնիկա կա:

Գյուղ **տեխնիկայի** մոնոպոլիան նույնպես հանգեցնում է գների աճին:

Պետք է լինի գյուղապետարանին կից **գյուղտեխնիկայի** հավաքակայան, որը պետք է վճարովի հիմունքներով տեխնիկա տրամադրի բոլորին անխտիր:

Գյուղատնտեսական **տեխնիկան** մասնավոր է և շատ հին:

Այսօր բացակայում է այն օղակը, որը կօգնի գյուղացուն **գյուղտեխնիկայի** օգտագործման հարցում:

Ռազմավարական քայլ՝ ստեղծել հնարավորություններ չմշակվող վարելահողերի մշակման համար, որոնք այսօր կազմում են շուրջ 40000 հեկտար, որի համար անհաժեշտ է **գյուղտեխնիկայի** թարմացում,

էժան վառելանյութ, որակյալ սերմնացու և իրացման շուկայի կարգավորում, արտահանման շահավետ պայմաններ:

Թող ստեղծեն մեքենա-տրակտորային պարկեր առաջվա նման, տրակտորիստը ուղղակի աշխատավարձ ստանա, ոչ թե կամայական գնով սպասարկի գյուղացուն:

Գյուղտեխնիկայի հարցը ևս խնդիր է, սկզբից բերեցին ու կոոպերատիվներին տվեցին ու հարմար էր անցան մի քանի տարի լիզինգով սկսեցին տրամադրել ու գրեթե երկու անգամ թանկ:

Տեխնիկա ունենք, դրանից չենք նեղվում, ավելի շատ մասնագետների վճարելիության հարցն է: Դա մտել է հարկային դաշտ:

Պետության տրամադրած դիզվառելիքը անորակ է, որի օգտագործման պատճառով վնաս է կրում **տեխնիկան**:

Գյուղապետարանն էլ որ ձեռք է բերում տեխնիկա, ԽԾԲ-ով են տրամադրում:

Գյուղտեխնիկան ներմուծում են մոնոպոլիաները, ինչ գին ուզում դնում են:

Մեծ հողատերերին 20 հա ու ավելի ձեռք կտա տեխնիկա առնել, հակառակ դեպքում գումարով վարձում են:

Վարչապետը որ լինեի, կբերեի գյուղապետին կտայի երկու տրակտոր, որը կծառայի ամբողջ գյուղին, պետությունը պետք է գյուղացուն դուխ տա:

Մասնավոր ձեռնարկատիրոջը պետք է ազատել հարկերից և ուղղորդել, որ գումարները ներդնի **գյուղտեխնիկայի** ձեռք բերման մեջ և վարձակալությամբ աշխատի գյուղացու համար:

Տասը տոկոսն է ապահոված տեխնիկայով, թանկ հաճույք է:

Համայնքին թող գումար տրամադրվի, տեխնիկա գնի համայնքը:

91 թվականից հետո նոր տեխնիկա ձեռք չի բերվել: Պետությունը պետք է օգնի, որպեսզի տեխնիկայի օգտագործման սանդղակ ձևավորվի: Օրինակ՝ մեկ հեկտարը վարելու համար 40,000 փող են ուզում: Մինչդեռ 20,000 է նման ծառայության գինը: Այսօր մասնավորն է թելադրում գինը:

Գյուղտեխնիկան ընդհանուր մաշված է:

Կողմ եմ որ մեքենաների պարկ ստեղծվի պետության կողմից, ֆերմերը պայմանագիր կնքի հետը և բերքը ստանալուց հետո վճարի:

Այսօր մեծ խնդիր է գյուղտեխնիկայի մաշվածությունը: Պետք է գյուղտեխնիկայի կենտրոնական պարկ ստեղծել:

Սովխոզտեխնիկայի պես կառույց է պետք, որը գյուղացիներին կապահովի գյուղտեխնիկայով:

Տրակտոր ու **տեխնիկա** ամբողջովին մասնավորի ձեռքին է. գնագոյացումն ամբողջովին կամայական է:

Ռազմավարական ծրագրի ներկայացուցիչները ասում են պետք է լինի **տեխնիկա**, որպեսզի սկսեն շինարարությունը, մյուս կողմն էլ նշում է մինչև շինարարությունը չվերջանա, տեխնիկա չենք տա: Սա մի փակ շղթա է:

Տեխնիկա ձեռք բերելու համար կոոպերատիվները շատ հարմար են, բայց հետագա աշխատանքը՝ կախված՝ մեր մենթալիտետից չի աշխատի:

Կոոպերատիվները ստեղծվում են, որպեսզի ինչ-որ մեկի համար ձեռք բերեն **տեխնիկա** և վերջ:

Տեխնիկան երբ բերվում է կոոպերատիվ, այն օգտագործվում է բոլորի համար:

Ով շահագրգռված է **տեխնիկա** ձեռք բերել, մտնում է կոոպերատիվի մեջ:

Կոոպերատիվները կունենան սեփական մեխանիզմները և դրսից եկողը չի կարող գին պարտադրել: Համայնքի սեփականություն **տեխնիկան** ամենաճիշտն է:

Գյուղատնտեսությունը ցիկլային գործընթաց է. ամեն մեկի ձեռքում մի բան է, **տեխնիկան** մեկի ձեռքում է, հողը մյուսի, նույնը նաև դեղերի դեպքում է, այդ շղթան պետք է լինի մի հոգու ձեռքում:

Գյուղատնտեսական **տեխնիկայի** լիզինգի ժամանակահատվածը պետք է երկարացնել մինչև տաս տարի և ավելին, որպեսզի ես կարողանամ և՛ ընտանիքս պահել, և՛ գյուղատնտեսական գործունեությանը մասնակցեմ:

Մենք խոշորացած համայնք ենք, ունենք ավտոպարկ, որը մեզանից քսան կիլոմետր հեռու է և արդյունավետ չի: Մեզ ասում են՝ ձեզ տեխնիկա տվել ենք, բայց այդ **տեխնիկան** մեր մոտ չի կարող հասնել:

Գյուղացին պատրաստ չէ **գյուղտեխնիկա** գնի: Պետք է պետությունը զբաղվի այդ հարցով:

Գյուղտեխնիկան մաշված է, թարմացման կարիք կա:

Տեխնիկաները բարոյապես, ֆիզիկապես մաշված են, նոր տեխնիկայի խնդիր ունենք: եթե նոր տեխնիկան մեկ հեկտարը կվարի մեկ ժամում, մենք օրերով ենք վարում:

Տեխնիկան պետք է պետությունը տա համայնքին, համայնքում աշխատի գյուղացու համար, հետո բերքահավաքի վերջում գյուղացուց գանձվի այդ գումարը:

Տեխնիկան տվել են խոշոր համայնքներին, բայց որևէ մեկը հաշվի չի առել, դա կհերիքի բոլոր գյուղերին, թե ոչ:

Գյուղտեխնիկայի մաշվածությունը լուրջ խնդիր է, մեծ ծախսեր ենք անում վերանորոգելու համար:

Գյուղատնտեսական **տեխնիկայի** ձեռքբերումն անհատի կողմից նպատակահարմար չէ, այն պետք է ստեղծվի պետության կամ կոոպերատիվների կողմից, որպեսզի կամայական գնագոյացումից չտուժենք:

Գյուղտեխնիկան շատ թանկ է, գյուղացին չի կարող մենակ գնել տեխնիկա, իսկ կոոպերատիվում վստահություն չկա, որ բոլորով պատասխանատու կլինեն վարկի համար:

Բոլոր համայնքներում առնվազն հինգ հարյուր հեկտար հող չի մշակվում: **Տեխնիկան** բերենք, ի՞նչ անենք: Գյուղացուն երաշխիք է պետք պետության կողմից իրացվելիության: Այդ դեպքում այդ հողերն էլ կմշակվեն ու հավելյալ ու նոր տեխնիկան իմաստ կունենա:

Տեխնիկայի օգտագործումն էլ է ծանոթ-բարեկամներով, այդպես չպետք է լինի:

Պետք է հարևանությամբ գտնվող մանր հողակտորները, նույն մշակաբույսով զբաղվեն կամ, ավելի լավ է, խոշորացում իրականացվի, որպեսզի **տեխնիկայի** օգտագործումը իմաստ ունենա ու ընդհանուր ծախսերը պակասեն:

Կրծողների դեմ պայքարը պետք է կենտրոնացված լինի, որովհետև եթե ես ինչ-որ կերպ իմ մկների դեմն առնեմ, հարևանի հողից են մտնելու... Ինչպես կան տրակտորային պարկեր, որոնցից բոլորն օգտվում են, այնպես էլ բուժման կենտրոններ են պետք, որոնք կմշակեն որոշակի ժամանակացույց, որով կկատարվի համայնքի բոլոր գյուղատնտեսական հողերի բուժումը:

Մեքենա-տրակտորային պարկեր պետք է սարքվեն:

Այնտեղ, որտեղ հարթավայր է, մեխանիզացիան հեշտ է օգտագործել: Իսկ մենք համայնքներ ունենք, որտեղ կոմբայն չկա, որ հացահատիկ հավաքի: Ասենք, լիզինգով կոմբայն վերցրեցի: Դա աշխատելու է երկու ամիս միայն, մինչդեռ ես 12 ամիս պիտի վճարեմ լիզինգը:

Երկար տարածքի վրա, միանգամից մի քանի գյուղ մի կոմբայն է սպասարկում: Այն էլ մաշված:

Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Գյուղատնտեսական կանոնները խախտվում են, **անգրագետ** աշխատանքի շնորհիվ բերքի մեծ մասը փչանում է:

Մենք նոր **գիտելիքների** մեծ կարիք ունենք, հատկապես նոր տեխնոլոգիաների վերաբերյալ: Ինտենսիվ գյուղատնտեսության փոխարեն, էքստենսիվ ենք անում:

Գիտելիքի մեծ պակաս կա: Պետք է վերականգնել գիտահետազոտական ինստիտուտները, գիտական միտքը:

Գիտելիքի լուրջ պակաս կա նույնիսկ սերմերի մասին տեղեկատվության պակաս գյուղացու համար: Սերմի թարմացում պետք է ապահովվի:

Լուրջ կարիք կա **գիտելիքի**, վերապատրաստման:

Զբոսաշրջիկ գրավելու համար մենք նաև համապատասխան բիզնես **գիտելիք** չունենք, միայն Սևան ունենալը բավարար չէ:

Հրթիռային կայանները որոնք տեղադրված են արդյունավետ չեն, որովհետև **գիտելիքներ** չունեն աշխատացնողները:

Գյուղացին այսօր չի կարող անգամ իր արտադրանքի ինքնարժեքը հաշվարկել, գյուղացին ոչ մի բիզնես **գիտելիք** չունի՝ չարչարվում է և զրո արդյունք ստանում:

Այսօր մարդիկ ավելի բաց են, ընդունում են մեր օգնությունը՝ կոոպերացիա ստեղծելու, գալիս են սեմինարների, լսում են ուրիշների **խորհուրդները**: Առաջ այդպես չէր...

Թող թունաքիմիկատի ամբողջական ծառայությամբ հենց կոոպերատիվը զբաղվի. **խորհրդատվություն**, վաճառք, կիրառում...

Եթե զգամ, որ **խորհրդատուն** կոմպետենտ է տվյալ մարզի գյուղատնտեսության առանձնահատկություններին, կլսեմ իր խորհուրդները:

Խորհրդատվությունը շատ կարևոր է, թող լինեն մասնագիտացված հաստատություններ:

Գյուղացիները բոլոր դարձել են ագրոնոմ, զոոտեխնիկ այս 20 տարում, ինչ **խորհրդատվություն**:

Գյուղացին հիմա մեծ կարիք ունի **խորհրդատվության**, բայց չի գիտակցում դա:

Գյուղացու համար կարևոր է **խորհրդատվությունը**, եթե օգուտ չքաղես, վնաս հաստատ չի լինի:

Ես շատ-շատ եմ կարևորում **խորհրդատվությունը**՝ կան իրոք լավ մասնագետներ, ովքեր մեծ օգնություն կարող են տրամադրել, նրանց պետք է ընդունել, լսել:

Խորհրդատվական ծառայությունների բյուջեյով կարող ենք գյուղատնտեսական շատ այլ հարցեր լուծել:

Խորհրդատվության փոխարեն կարելի ավելի շատ իրազեկման վրա ծախսել:

Պետք է լինի **խորհրդատվական** կենտրոններ, որոնք հուշեն՝ սա արտադրի, էդքան արտադրի:

Հայաստանում **խորհրդատվական** բոլոր ծախսերը արդյունավետ չեն եղել:

Գյուղացուն այսօր ոչ թե վարկ է պետք տալ, այլ **սովորեցնել**, թե ինչից ինչ է պետք ստանալ:

Նախ պետք է գյուղացուն **սովորեցնել** հողից բերք ստանալ, նոր ապահովագրել:

Հայաստանի գյուղացուն անհնար է բան **սովորեցնել**, նա միշտ կասի դու ինձ սովորեցնելու բան չունես:

Գյուղացին **կսովորի** կողքի հարևանից, պետք է օրինակ տեսնի որ հաջողվել է:

Գյուղացին պետք է հաղթահարի պապական գաղափարախոսությունը, մենք պետք է **սովորենք** լսել այլ մարդկանց, թեկուզ և ավելի երիտասարդ, թեկուզ և այլ երկրներից ժամանած, իսկ մեզնից շատերը այսօր վստահում ենք միմիայն մեզ, ավանդույթները պետք է փոխել:

Այսօր գյուղի և ոչ մի դպրոցում հասարակ հիմունքներ չեն դասավանդվում՝ գյուղատնտեսությանը վերաբերող, գյուղի երեխան տնտեսություն վարել սովորում է իր ծնողներից, նրանք էլ իրենց հերթին **սովորել** են իրենց ծնողներից, բայց աշխարհը առաջ է գնում, պետք է առաջ գնալ:

Մենք էժան **աշխատուժ** ունենք: Պետք է ճիշտ գնահատել և տեղաբաշխել գյուղատնտեսական ռեսուրսները:

Գլխավոր խնդիրներից մեկը **կադրերն** են:

Այսօր **որակյալ անասնաբույժներ** քիչ կան:

Մենք Խորհրդային Միության օրոք ու դրանից հետո հողը նպատակային օգտագործելու փոխարեն, սոցիալական մոտեցում ցուցաբերեցինք ու տվեցինք բոլորին՝ ակադեմիկոսին, փականագործին և այլն:

Վճարովի ծառայությունները կարևոր են, քանի որ գոյացած վճարներով հնարավոր կլինի հետագայում այդ ծառայությունները բարելավել:

Գյուղատնտեսության մեջ մենք պետք է արդեն շատ կարևորենք **կրթությունը**, **գիտությունը**, նոր **տեխնոլոգիաները**. մենք այսօր գիտնականներ չունենք այս ոլորտում:

Ոչ մի համայնք **գյուղատնտես կամ անասնաբույժ** չունի, ոչ մի մասնագետ չկա: **Մասնագետների** հարցն է պետք լուծել:

Գյուղատնտեսությամբ շատերը զբաղվում են ստիպված, բայց **կոմպետենտ** չեն:

Պետք է եռամսյա **դասընթաց** կազմակերպել գյուղացիների համար, թե ինչպես ճիշտ վարել տնտեսությունը:

Ծայրահեղ դժվարություններ են ստեղծում **մասնագետների**՝ անասնաբույժների լուրջ պակասը:

Այսօր **անասնաբուժությամբ** ոչ մի երիտասարդ չի զբաղվում, որովհետև ձեռնտու աշխատանք չէ:

Նկատելով **մասնագետների** պակասի խնդիրը՝ բոլորը լռում են, որովհետև չկա մասնագետը, չկա մասնագետի համապատասխան վարձատրությունը, որը մեծ վնաս կհասցնի և տնտեսվարողին և սպառողին:

Մեր համայնքներից մի քանիսում ռազմագիտության ուսուցիչն է անասնաբուժությամբ զբաղվում, որովհետև **մասնագետ** չկա:

Գյուղացին պետք է ճիշտ **կրթվի**:

Գյուղնախարարությունը **անասնաբուժության** գործը կազմակերպելու համար պետական աջակցությունը կենտրոնացրեց իր ձեռքը ու անարդյունավետ է կառավարում: Անհրաժեշտ է մասնավոր անասնաբուժական ծառայությունների կազմակերպումը: Անհրաժեշտ է անասնաբուժական ծառայությունները ապապետականացվի:

Եթե **անասնաբուժությունը** մասնավոր բիզնես դառնա, միանգամից զարգացում կլինի:

Նշանակություն չունի մասնավոր թե պետական եթե մասնավոր է ուրեմն ունի **լիցենզիա**:

Անասնաբույժի վրայից թրիքի հոտ է գալիս, մարդիկ չեն ուզում անասնաբուժ դառնա:

Ընդհանուր առմամբ դեմ են **անասնաբուժության** ապապետականացմանը:

Այսօր գյուղտեխնիկայի հարցը լուրջ է, որովհետև փչանալու դեպքում **մասնագետ** չկա: Չկա ինժեներ պատրաստող որևէ օղակ:

Մեր գյուղերում անասնաբույժների խնդիր կա. **մասնագետներ** չկան:

Թունաքիմիկատը անհրաժեշտ է, բայց դրանով պետք է **մասնագետը** զբաղվի, այլ ոչ թե ամեն մեկը ինչքան ուզենա փչի: Պետք է նախապես զգուշացնել բոլորին փչելուց առաջ, պետք է իմանալ որ սեզոնին է պետք դա անել, ինչ դոզայով և այլն:

Երևանը միակ մեծ քաղաքն է Հայաստանում, որը պիտի շահագրգռված լինի **անասնաբույժների** առկայությամբ բոլոր գյուղական համայնքներում, որովհետև դա ստրատեգիական նշանակության հարց է:

Այսօր գյուղատնտեսության ոլորտը ոչ մի **երիտասարդի** չի հետաքրքրում, ցավոք, պետք է դա էլ փոխել:

Անասնաբուժությունը ստրատեգիական նշանակություն ունի երկրի համար, որովհետև թշնամին կարող ա քեզ մեծ վնաս տալ, օրինակ, սիբիրախտ տարածելով քո երկրում:

Մեր ունեցած **փորձը** հերիք չէ բնական աղետների դեմ պայքարելու համար:

Անասնաբուժությունը միայն վակցինացիա չէ: Մարդաբուժության պես անասնաբուժությունն էլ է բարդ ոլորտ խիրուրգով, ակուշերով, տրավմատոլոգով և այլն: Պետությունը օգնում է վակցինացիայի դեպքում, մնացածը պետք է դրվի համայնքի վրա՝ համայնքի հաշվին պետք է անասնաբույժ ունենալ:

Բոլոր համայնքներում **անասնաբույժ** է պետք: Այսօր շատ գյուղեր անասնաբույժ չունեն:

Գրականությունից ենք օգտվում համապատասխան, որ ճիշտ կատարենք ամբողջ պրոցեսը:

Ո՞ր իրեն հարգող **բարձրագույն կրթություն** ունեցող տղամարդ կգնա որևէ գյուղում հիսուն հազար դրամով հիվանդ կենդանիների ու թրիքի մեջ օր ու գիշեր աշխատի: Բացի դրանից կենդանուց վարակվելու վտանգ կա:

Ամենամեծ վնասը մեր երկրում հասցրել են **անասնաբուժությանը**, բայց դրան մեծ ուշադրություն պետք է դարձնել:

Անասնաբուժության համար մասնավոր դեղատներից ենք առնում, իսկ պարտադիր միջոցառումները պետության կողմից է արվում:

Անասնաբուժ ենք պահում գյուղում, մինիմում աշխատավարձ ենք տալիս՝ 65000, բոլոր համայնքներն ունեն անասնաբուժ հիմա: Անասնաբույժը շատ անհրաժեշտ է գյուղին ու քիչ ենք վճարում:

Պետական պատվաստումների համար **անասնաբուժական** կենտրոնից է ստանում աշխատավարձ՝ ըստ գլխաքանակի: Անասնաբուժության բնագավառում ոչ մի փոփոխություն պետք չի անել, առաջ, որ կենտրոնացված էր, վատ էր:

Բոլոր **ծառայությունները** պետք է դառնան բիզնես, որպեսզի աշխատի (անասնաբուժություն, կաթի հավաքման սառնարաններ, բեղմնավորում):

Եթե **անասնաբուժությունը** մասնավորեցվի, որակը կբարձրանա, մարդիկ ավելի սրտացավ կդառնան:

Անասնաբուժական ծառայությունները լինեն տենդերներով, որը կտրամադրի պետությունը մասնավորին ու կիրականացնի վերահսկողություն:

Նեղ մասնագետ **անասնաբույժների** կարիք ունենք, կադր չկա: Այսօր դեղը տալիս ենք անասնաբույժին, ասում է՝ ես չեմ կարող դա ներարկել: Տալիս ենք տիրոջը, նա նույնպես հրաժարվում է:

Անասնապահության ոլորտի՝ բեղմնավորման, սպանդանոցների խնդիրը մնացել է գյուղացու ուսերին:

Պետությունը պետք է **ուղղորդի** գյուղացուն՝ իրացման ճիշտ ուղիներ գտնելու հարցում:

Գյուղնախարարությունը պետք է կոնկրետ **ուղղություններ տա**: Բայց դա չի աշխատում:

Մեզ շրջապատող մուսուլման երկրները շատ լավ գիտեն մեր ոչխարի համը, գիտեն, որ էկոլոգիապես մաքուր է, գիտեն մեր ալպիական արոտավայրերի մասին: Պետք է ոչխարաբուծությունը մեծ ծավալներով զարգացնել: Պետք են **մասնագետներ** առաջին հերթին:

Կադրային սովը վերացրեք, իսկ կադրային սովը կվերանա միայն այն դեպքում, երբ աշխատավարձերը բարձրացնեն:

Ներկայում մենք գյուղտնտեսության **մենեջերներ** չունենք, ովքեր ուղնուծուծով մենեջեր պետք է լինեն:

Կառավարությունը պետք է **մասնագետների** միջոցով հասկանա, թե որ հողում ինչ է պետք ցանել, որ օգուտ լինի:

Եթե գյուղացին սխալ **տեխնոլոգիա** կիրառի, ի՞նչ օգուտ կարող է տալ սուբսիդավորումը:

Եղած **տեխնոլոգիաները** չեն բավարարում:

Ինչ էլ առաջարկվի կհամաձայնենք, կարևորը նոր **տեխնոլոգիաները** բերեք:

Այսօր գյուղատնտեսության մեջ նորագույն **տեխնոլոգիաների** կարիքը շատ մեծ է:

Նոր **տեխնոլոգիան** պետք է արդյունավետ և նպատակային լինի:

Ավտոմատ կառավարվող համակարգերը այսօրվա խնդիր չեն, դրանք պետք է ապագայում ներդնել:

Մի անգամ ենք ընդամենը հավաքվել տարբեր գյուղերից, որ հասկանանք ով ինչն է ամենալավը արտադրում, աճեցնում, հիմա էլի տեղեկատվություն միմյանց մասին չունենք:

Եթե մի գյուղում ինչ որ մի նորամուծություն են օգտագործում, մյուս գյուղերը՝ նույն համայնքի, չեն էլ իմանում դրա մասին, ինֆորմացիա տարածելու, փորձ կիսելու խնդիր էլ ունենք: Եթե մի գյուղում մի ծրագիր է աշխատում, ապա դրանով էլ ամբողջ գործընթացն ավարտվում է:

Անասնապահության համար պետք է ներդնել սեզոնային սրսկումների համակարգ:

Այսօր վարելահողը դարձրել են խոտհարք, խոտհարքը՝ արոտավայր, իսկ արոտավայրերը դեգրադացվել են:

Հատուկ ցեղերի բերելն էլ պետք է հասկանալ գոտիականությունն ու պայմանները ու ըստ դրա բաժանեն: Ես կողմ եմ, որ թե թեկուզ թանկ են, բայց իրենց ծախսը հանում են, խաչասերումն էլ կարող է մեր տեսակները բարելավել:

Ոչխարաբուծությունը կամաց-կամաց վերանում է, որովհետև բուրդ չենք մշակում, կաշին թափում ենք:

Կարելի է տիբեթյան յակեր բուծել: Հովիվ պետք չի, գայլերից չի վախենում, բարձր գոտի ենք՝ ամեն ինչ նպաստավոր է:

Ներմուծվող սերմերի վատ որակի պատճառով գյուղացին վնաս է կրում:

Երիտասարդությունը խուսափում է անասնապահությունից, մեծահասակներն էլ կամաց-կամաց դուրս են գալիս աշխատանքից:

Չկան անասուն պահելու համապատասխան պայմաններ:

Պետք է ջեռուցման ճիշտ տարբերակներ գտնենք, որ բնությանն էլ չվնասենք:

Մենք որպես ՀԿ օգնել ենք իջևանատներին, անգամ արևային էներգիա ստանալու սարք ենք տրամադրել, գազ չկար, հիմա էլ շատ լավ գործում են այդ կառույցները:

«Չոր արմատից հանել բույս կարելի բան չի դնել հույս», դուք 20 լ կովին ավելի շատ կեր կտաս, թե 1լ: Իմաստ չունի ռիսկային տեղերում, վատ պայմաններում փողեր դնել: Բայց այդ 1-ից պետք է տաս կեր, որ դառնա 20լ:

Ռուսաստանից են վերջերս բերում սերմնացու ու հաշվի չեն առնում բնակլիմայական պայմանները, որ այդ սերմնացու մեզ մոտ արդարացված չի: Ավելի լավ է 150 դրամով պիտանի սերմ առնեմ, քան 130 դրամով Ռուսաստանից:

Հիմնականում դրսից ներկրված սերմերի պատճառով նոր հիվանդություններ ու մուտացիաներ են առաջանում:

Արևային էներգիա արտադրողների համար պետք է բարձրացնեն սակագինը, այլապես նպատակահարմար չի լինի:

Բարձրադիր հողեր, թեք լանջեր ունենք Գեղարքունիքում: Մենք չենք կարողանում ցանքաշրջանառություն հանել. հարթ գոտիներում կարտոֆիլ, ցորեն, գարի... ոչ ավել:

Գյուղական համայնքներում պետք է **մասնագետ** լինի, որը ճշգրիտ կստուգի վնասի չափը:

Խորհրդատվությունը երբեմն օգտակար է, բայց ոչ միշտ: Ես ավելի լավ գիտեմ, թե մեր բնակլիմայական պայմաններում ինչն է աշխատում: Խորհրդատվությունը սովորաբար բերրի հողերում մշակման համար է: Մեր հողի որակն այն չէ, պետք է անընդհատ ոռոգել:

Գյուղացին **ուսուցման** և **խորհրդատվության** կարիք ունի, քանի որ շատ տեխնոլոգիաներ օգտագործելու հմտություն չունեն:

Մենք շարունակում ենք աշխատել նույն **մեթոդներով**, ինչ հիսուն տարի առաջ: Ու սա ավելի արդյունավետ է, քան նոր մեթոդները:

Հողը **ճիշտ մշակելը** և օգուտ **քաղելը** շատ թանկ է նստում գյուղացու վրա:

Խորհրդատվությունը և դասընթացները շատ կարևոր են գյուղացու համար: Մեզ մոտ ժամանակ առ ժամանակ այգիները վնասող հիվանդությունները մուտացիայի են ենթարկվում:

Պետք է ամեն գյուղում հատուկ **մասնագետ** լինի, իրեն կանչեն սովորեցնեն, նա էլ գյուղացիներին սովորեցնի:

Գյուղացին **խորհրդատվության** կարիք շատ ունի: Ոմանք չեն լսում, բայց ավելի շատ են նրանք, ովքեր որակյալ խորհրդի կարիք ունի:

Մեր գյուղացին, առանց ամաչելու կասեմ, որ ներկայում լրիվ **անգրագետ** է. մենք ինֆորմացիայի պակաս ունենք, հատկապես նոր ինֆորմացիայի:

Միանշանակ ասել, թե գյուղացին շահագրգռված չէ նոր **տեխնոլոգիաներ** կիրառելու հարցում, սխալ է:

Նոր կուլտուրաները երբեմն ավելի մեծ եկամուտ են ապահովում, օրինակ՝ ընկերներիցս մեկը ծնեբեկ է աճեցնում ու շատ լավ է ստացվում: Բայց եթե նման **խորհուրդները** Երևանից են տալիս, ես ուղղակի չեմ լսում դրանք: Իրենք կարդում են, իսկ ես՝ աշխատում: Ո՞վ ավելի լավ գիտի...

Խորհրդատվության կարիքը չունենք, քանի որ ամեն մեկը իր փորձի վրա է սովորում:

Պարարտանյութերը ցածրորակ են:

Մենք նախկինում իրականացնում էինք **տեխնոլոգիաների** գնահատման ծրագրեր, որոնք ներդրվում էին գյուղացիական տնտեսություններում և նպաստում էին նոր մեթոդների կիրառմանը:

Խորհրդատուների մեծ մասը չի տիրապետում պրակտիկ գիտելիքների:

Գյուղնախարարության աշխատակիցները իրենց **խորհուրդներով** ու զգուշացումներով ուշանում են:

Սերմերի անվերահսկելի շուկան այսօր մեծ խոչընդոտ է. ով պետք է վերահսկի այդ շուկան, մենք չենք էլ իմանում: Այսօր մենք խանութներում ունենք ժամկետանց, անորակ թունաքիմիկատներ:

Գյուղատնտեսությամբ զբաղվում են **ոչ պրոֆեսիոնալները**, այլ նրանք՝ ում կյանքն է ստիպում:

Ագրոնոմի հաստիքի բացակայության պատճառով գյուղերում խաղողի բերքը վառվեց, քանի որ մարդիկ չգիտեին՝ ոնց սրսկումները ճիշտ կատարեն:

Ցանկալի է, որ հեռուստատեսությամբ լինի **հաղորդում** կամ անգամ մի ամբողջ ալիք, որը նվիրված լինի գյուղատնտեսությանը:

Պետք է ինչ որ տեղ լինի, որ գյուղացին դիմի՝ **մասնագիտական** խորհրդատվություն ստանալու համար:

Խորհրդատվությունը անիմաստ գումարի ծախս է, մասնագետը տեսականորեն ինչ-որ բաներ է սովորել, բայց գյուղացին պրակտիկ տարիներով գիտի իր հողը:

Մասնագետների մեծ մասը սրսկելու դեղերը չեն կարողանում տարբերակել:

Կան **խանութներ**, որտեղից գյուղացին թունաքիմիկատը գնում է "նիսյա", բնականաբար այդտեղ նաև անորակ է:

Եթե անգամ հին **մեթոդներ են** գերակշռում գյուղատնտեսությունում, բայց այսօր կա ինտերնետ ու անհրաժեշտության դեպքում կարում են մտնենք ու մեզ անհրաժեշտ ինֆորմացիան վերցնենք:

Ի՞նչ արտադրության մասին է խոսքը, երբ զիբիլը փաթեթավորում են, բերում Հայաստան, ցանում ես, չգիտես ինչ ա դուրս գալիս...

Գյուղնախարարությունը պարարտանյութերը ուշացնում է:

Մեր հողերը փոքր են և իմաստ չկա թանկ գներով նոր **տեխնոլոգիաներ** գնել:

Պետությունը սուբսիդավորում է անասնաբուժության չորս ծառայություն: Իսկ մյուս մասը մնում է գյուղացու վրա:

Ազոտով հողը պարարտացնելու պատճառով հողը փչանում է: Դա բնապահպանական լուրջ վտանգ է:

Այգիների կողքին էլ ծառեր չեն տնկում, դա էլ է վնասում գյուղատնտեսությանը:

Սահմանամերձ համայնքներում աշխատուժի պակասի պատճառով բերքի մեծ մասը չենք կարողանում հավաքել:

Առանց լաբորատոր զննման ոչ մի գյուղացի չի իմանա, թե դա ինչ էֆֆեկտիվության թունաքիմիկատ է, ինչ որակ ունի:

Ինֆորմացիայի պակաս ու խորհրդատվության կարիք կա բուժանյութերի ու հիվանդությունների վերաբերյալ, ցանքաշրջանառության մասին տեղեկատվություն տրվի գյուղացուն, բազա ստեղծվի ինչ-որ, որ մենք չդնենք ու բոլորս այդ տարի ցանենք նույն մշակաբույսը:

Ժամանակակից տեղեկատվական գործիքները՝ բջջայիններ, համակարգիչներ կարող են օգնել ժամանակին **խորհրդատվություն** ստանալու համար:

Գյուղապետարանում կա գյուղատնտես, ով մեզնից առավել ոչինչ չգիտի, ցավոք, մենք այսօր **մասնագիտական** խորհրդատվության պակաս ունենք:

Սերմերի ու բուժանյութերի հարցում են պետք **խորհրդատվությունները**: Գենամոդիֆիկացված սերմեր են բերում, գնում ենք, չենք էլ իմանում ինչ ենք առնում: Բուժանյութերն էլ խաբում են՝ մեկը մյուսի անվան տակ տալիս ու շատ հաճախ փչացնում են եղածը:

Խորհրդատվություն պետք է գյուղացուն ամեն դեպքում, մարդ կա ինտերնետն էլ չգիտի ինչ է, մյուսը սովորելու ժամանակ ու ցանկություն չունի, մեկ ուրիշն էլ կարող է չիմանա, որտեղից գտնել արժանահավատ տեղեկատվություն:

Գյուղական մենեջմենտի **խորհրդատվության** կարիք կա: Շա՛տ:

Հիմնականում դեղ ծախողները որակյալ դեղեր չեն բերում և որևէ **խորհրդատվություն** չեն տալիս:

Գյուղացին իրեն մենակ է զգում հողի հետ, պետք է մասնագիտական **խորհրդատվություն**:

Տեխնիկա ունենք, դրանից չենք նեղվում, ավելի շատ **մասնագետների** վճարելիության հարցն է: Դա մտել է հարկային դաշտ:

Գյուղացին է **անասնաբուժության** դեղերն առնում, դա մեզ ձեռք չի տալիս:

Պետական **անասնաբուժարանից** եթե գան, պետք է մի բան էլ մուննաթ գան, ավելի լավ է մենք գտնենք անասնաբույժի:

Առաջին անգամ մեկ շաբաթ առաջ **անասնաբույժը** եկավ անվճար սրսկեց հավերին. զարմացանք, հիմա չգիտենք դա լավ թե վատ:

Մենք այսօր **մասնագետ** չունենք, իրոք չունենք, նորմալ գյուղատնտես չունենք, ում դիմենք:

Անասնաբույժի աշխատավարձը մեր երկրում այնքան ցածր է, որ նա ձգտում է մի բան էլ վերցնել գյուղացուց:

Գյուղացու համար ձեռնտու է մասնավոր **անասնաբույժ** ունենալը:

Պետք է պետական **անասնաբուժության** մարմինը մնա, բայց ստեղծվեն նաև մասնավոր մարմիններ:

Անասնաբույժի աշխատավարձը պետք է բարձր լինի: Կամ կողքից էլի վճարովի ծառայություններ անի, որ շահագրգիռ լինեն անասնաբուժությամբ զբաղվելու:

Գյուղատնտեսական ինֆրաստրուկտուրաներ էլ չկան: Օրինակ լաբորատորիաներ: **Մասնագետները** աչքաչափով են ստուգում որակը:

Մասնագետների ահռելի պակաս կա, շատ հասարակ բաներ կան, որ մենք մինչ օրս չգիտենք:

Մեր **գիտելիքները** չեն բավարարում օրգանիկ ապրանք արտադրելու համար, ուստի չենք կարողանում արտահանել ԵՄ:

Պետության տրամադրած դիզվառելիքը անորակ է, որի օգտագործման պատճառով վնաս է կրում տեխնիկան:

Այսօր ոչ մի գյուղացի չգիտի, թե ինչ չափանիշների պետք է համապատասխանի իր արտադրած բերքը:

Որոշ պտղատու ծառերի համար մուչապատումը ևս լուծում է, կաթիլայինին հավասար:

Գյուղացին սեփական արտադրանքի ինքնարժեքը չի կարողանում հաշվել:

Մի գյուղատնտեսը, եթե անգամ շատ ցանկանա, չի կարող միանգամից տաս գյուղ սպասարկել:

Գյուղոլորտի կրթությունը շատ վատ վիճակում է, ոչ ոք չի ընդունվում ագրարային համալսարան, բայց մոտ երեսուն տոկոս բնակչությունը ֆերմեր է:

Միջին վիճակագրական գյուղատնտեսը այսօր ունի հնագույն ինֆորմացիա, և վերապատրաստումներն էլ մնում են թղթի վրա:

Տեխնիկական ծառայության գինը կամայական է ձևավորվում: Տրակտորի սեփականատերն ասում է, ինձ էսքան փող ա պետք, ուրեմն էսքան արժի վարելը: Մինչդեռ ԽՍՀՄ ժամանակ հստակ հաշվարկ կար՝ տրակտորի պահպանման ծախս, դիզվառելիքի ծախս և այլն...

Ասֆալտի վրայի գյուղատնտեսը այսօր գյուղատնտեսության ռազմավարություն է իրականացնում, ոչ մի բանից տեղյակ չեն...

Գյուղատնտեսությունը չի կարելի փորձադաշտ դարձնել:

Մինչև նախարարությունը չիրահանգի, ԳԱՄԿ-երը ոչ մի ձայն չեն հանում, իրենք պետական աշխատող են՝ վախեցած:

Թունաքիմիկատները ունեն հատուկ պահպանման պայմաններ, օրինակ հատուկ ջերմաստիճան, հասարակ գյուղացին անգամ դա էլ չգիտի:

Պարարտանյութեր կան, որ բարձր ջերմաստիճանի դեպքում, ուղղակի ընդհանրապես չեն աշխատում:

Պարարտանյութ և թունաքիմիկատ ներկրող կազմակերպությունները պետք է որակյալ ապրանք ներկրեն:

Պարարտանյութի ներկրումը չպիտի լինի մոնոպոլ բիզնես, պետք է սահմանված գին լինի պետության կողմից, գնային շեմ լինի հստակ:

Խաղողի սորտեր կան, որ հիմա արդեն կորստի եզրին են:

Պետական բյուջեի միջոցներով անասնաբույժը կատարում է միմիայն սրսկումները, այլ ֆունկցիաների իրականացնելու համար գյուղացին պետք է իր գրպանից «շնորհակալ» լինի անասնաբույժին:

Գյուղացուն պետք է օգնել, որ իմանա, թե ինչ կուլտուրաներ մշակի... Օրինակ՝ ԽՍՀՄ-ի ժամանակ խորդենի էինք մշակում, բայց հիմա չգիտենք ինչ անենք: Մենք մշակող ենք, իսկ հիմա ստիպված ենք ժամերով շուկաներում նստել: Պետությունը պիտի մեզ հուշի, թե ինչ է անհրաժեշտ մշակել և մեր արտադրանքի իրացման հարցը լուծի:

Կրթական համակարգը պետք է փոխել՝ ելնելով կարիքներից:

Հազարամյակների մարտահրավերներ ծրագիրը գիրք ուներ, որտեղ կային գները՝ ըստ կուլտուրաների և տարածքների, այսօր այդ ձեռնարկի մասին ոչ ոք չի էլ հիշում:

Արարատյան դաշտավայրում գարնանցան ցորենի ցանելը արդյունավետ չի, բերքը շատ քիչ է, բայց ամեն տարի բերում են ու դա ենք վերցնում ստիպված, աշնանացան չեն բերում:

Վերջին սրսկումը պետք է լինի բերքահավաքից քսանհինգ օր առաջ:

Հողի ճիշտ նախապատրաստումը և լավ սերմացուն ամենակարևոր նախապայմաններն են, մենք ներկայում մի նորմալ սերմ չունենք:

Եղեգները այսօր լուրջ խնդիր են, ես իմ ուժերով են այսօր պայքարում, բայց ինչու այս խնդիրը լուծում չունի:

Ավելի լավ է էնպես անել, որ հողը ուրիշ նյութերով չաղտոտվի, քան պայքարել միայն աղակալման դեմ:

Պետք է կազմակերպվի օրգանական գյուղատնտեսության **դասընթացներ**, սա առաջատար ճյուղ է:

Անասնաբուժությունը պետական որ մնա ավելի լավ է, նորմալ դեղորայք բերի հարմար գներով, թեկուզ 3 գյուղի մեկ անասնաբուժ, վերահսկողությունը պետականի դեպքում ճիշտ է ավելի:

Լավ կլինի ընտանեկան բժշկի նման բացվի **անասնաբուժական** ամբուլատորիա:

Գյուղ արդյունաբերությունն էլ զարգացած չէ: Դժվար է որակյալ սերմ կամ պարարտանյութ գնել, անգամ թանկից դեպքում երաշխիք չկա:

Խորհրդատվությունը չի կազմակերպվում այնպես, ինչպես պետք է. դա ավելի շատ արվում է անելու համար:

Պատրաստ եմ լսել եվրոպական տեխնոլոգիաներ ներդնող **մասնագետին**, որը մեզ խորհուրդ կտա ինչպես զարգացնել գյուղատնտեսությունը:

Գյուղերում **մասնագետների** ու խորհրդատվության մեծ կարիք կա:

Բոլորն էլ հասկանում են, որ **խորհրդատվությունը** անհրաժեշտ է, պարզապես պետք է դրա կազմակերպման արդյունավետությունը հստակեցնել:

Գյուղացին լավ գիտի իր խնդիրները և ոչ մի **խորհրդատվության** կարիք չունի:

Խորհրդատվությունը պետք է ճիշտ կատարվի: Մեզ պետք է ըստ սեզոնի խորհրդատվություն. ջրելու ժամանակ, ջրի մասնագետ, թունաքիմիկատի ժամանակ՝ դրա մասնագետը և այլն:

Մենք շատ ենք ուզում մեզ **խորհրդատվություն** մատուցեն, մենք ինքներս հասկանում ենք, որ շատ հետ ենք ընկել իրականությունից, և խորհրդատվությունը պետք է լինի նաև հագեցած պրակտիկայով, արտում, դաշտում պետք է դասընթացներ անցկացվեն:

Լավ **ագրոնոմների** մեծ կարիք ունենք: Հիմա գյուղերում ագրոնոմ չունենք:

Խորհրդատվության վրա չարժե որևէ ծախս անել: Գյուղացին ավելի լավ գիտի իր կարիքներն ու խնդիրները:

Սովետական Միության ժամանակ «կուկուռուզնիկներով» կրծողների դեմ պայքար էր տարվում: Տարեկան երկուսից երեք անգամ և՛ անտառային, և՛ գյուղատնտեսական հողերում այս աշխատանքներն արվում էին, երբեմն անգամ ըստ պահանջի: Նման մոտեցում է պետք:

Հողի հետ որևէ կապ չունեցող մարդը չպետք է **խորհրդատվություն** տրամադրի գյուղացուն:

Խորհրդատվությունը երբեմն օգտակար է, որովհետև համատեղ քննարկելու արդյունքում գյուղացին շատ բան կարող է սովորել:

Գյուղերը դարձել են ծերանոցներ, երիտասարդներ չկան, որ աշխատեն:

Յուրաքանչյուր գյուղ պետք է ունենա հատուկ կցված, շատ բանիմաց, շատ ժամանակակից **գյուղատնտես**, ում հենց պետությունը պետք է վճարի և վերահսկի իր գործունեությունը:

Խորհրդատվություն տվողը պետք է իմանա յուրաքանչյուրի հողի կարգը, կատեգորիան, բայց դա անհնար է:

Գյուղացին ունի **խորհրդատվության**, աջակցության կարիք. սա ներկայացվում է ՏԻՄ ներկայացուցիչների կողմից, բայց համապատասխան արձագանք չի գտնում մարզպետարաններում և ավելի բարձր օղակներում:

Խորհրդատվության կարիք ունենք, բայց արդյունավետ պետք է լինի:

Հաջողված գյուղատնտեսական տնտեսությունների համար հնարավորություն պետք է ստեղծել, որ իրենք կարողանան **խորհրդատվություն** տալ սկսնակներին, որովհետև դրանք պրակտիկայի վրա հիմնված գիտելիք ու հմտություններ ունեն:

Ցրտահարության իրական պատճառը շատ դեպքերում գյուղացու **անգրագիտությունն** է, ասենք անկանոն ոռոգումը: Գիտելիքի ու **խորհրդատվության** առկայության դեպքում կարելի մեծամասամբ խուսափել ցրտահարությունից:

Պետք է գյուղատնտեսության մասին լրատվություն լինի. ցանկալի է նույնիսկ ալիք լինի:

Նախարարության կողմից կան ստեղծված աջակցության կենտրոններ, բայց արդյունավետ չեն աշխատում. մոտ չեն նրանք հասարակ գյուղացուն:

Մեր գյուղացու գիտելիքները և **տեխնոլոգիաները** շատ քիչ են բնական աղետների դեմն առնելու համար:

Նոր **տեխնոլոգիաների** կարիքը շատ կա, բայց հնարավորություններ չկան: Մեզ մոտ նույնիսկ տարրական պայմաններ չկան գյուղատնտեսությամբ զբաղվելու համար, ի՞նչ խոսք կարող է գնալ նորագույն տեխնոլոգիաների մասին:

Եղեգնաձորում շատ հողեր կան, որ չեն էլ մշակվում. մի քանի անգամ ցանում են, եկամուտ չեն ունենում, հիասթափվում են: Բայց պետք է ինչ որ նոր բաներ մտածել, նոր **տեխնոլոգիաներ** ներդնել, ոչ թե հիասթափվել ու արտագաղթել:

Բնակլիմայական պայմանները նոր **տեխնոլոգիաներով** չես կարող փոխել. մեր մարզի կլիման այնպիսին է, որ այստեղ նոր մշակաբույսեր գրեթե չեն ադապտացվում: Բերում են հրաշալի մշակաբույսեր, բայց երկու տարվա մեջ այն հարմարվում է մեր հողին. հողն է թելադրողը, ու հաճախ այդ մշակաբույսի արտադրությունը դառնում է անիմաստ:

Պետք է լուրջ ուսումնասիրություն իրականացվի գոտիականության, որ այնտեղ, որտեղ մարդիկ պետք է խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվի, խնձորի այգիներ չտնկեն:

Մենք շատ հաճախ մեր բերքը կորցնում ենք միայն նրա համար, որ պարզապես սխալ ենք շատ բաներ անում, չենք իմանում ինչ պետք է անել:

Մենք շատ գյուղատնտեսական հարցեր ունենք, որոնց մասնագիտական պատասխանը մենք չենք ստանում:

Տարածաշրջանում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացի չունենք, մեզ մոտ օրինակ՝ խաղող էտող **մասնագետ** չունենք:

Մենք նաև **գիտություն** չունենք. Երկիրը ջերմանում է այսօր, գլոբալ տաքացում է, կա ինչ-որ մեկը, որ որևէ բան է անում այս ուղղությամբ, որ վաղը մեզ կօգնի:

Մեր **անասնաբուժությունը** մասնագիտական առումով պատրաստ չի որակյալ ծառայություններ մատուցել: Մասնավորը կարող է վտանգավոր լինել: Հանուն բիզնեսի վնաս կտան:

Անասնաբուժությունը քսան տարի է բարեփոխման մեջ է: Մնացել է պետական ու թիվ մեկ սխալն է: Պետք է մեծ մասը մասնավոր դառնային:

Թող խոշոր ֆերմերները մասնավոր **անասնաբուժ** պահեն, սովորական գյուղացու համար սա վտանգավոր է:

Ես **անասնաբուժ** եմ և սպասարկում եմ երկու գյուղ, բայց արդեն մեծ եմ, ինձ փոխարինող չկա:

Անասնաբուժության մեջ էլ պետք է ճանշինների պրակտիկան կիրառել:

Մասնագետի վարձատրությունը չնչին է. մեկ սրսկումը՝ հարյուր դրամ:

Սովետը փլուզվելուց հետո ոչ մեկ չի եկել, հողի նմուշ չի վերցրել տանի փորձաքննության, որ ճիշտ ախտորոշում տա, ու մենք իմանանք կոնկրետ ինչ հիվանդություն ունենք ու ինչ բուժում կիրառենք: Արդյունքում սխալ բաներ ենք անում ու էլ ավելի վատթարացնում բերքի ու հողի վիճակը:

Անասնաբույժի մեկ տարվա աշխատավարձը մեկ պատգամավորի ամսեկան աշխատավարձի կեսն է:

Անասնաբուժությամբ լավ կլիներ մասնավոր հատվածը զբաղվեր, քանի որ պետություն չի կարողանում վճարել անասնաբույժին:

Մենք, անկեղծ ասաց, այսօր լավ **մասնագետներ** ունենք, լավ անասնաբույժներ ունենք:

Ես պատրաստ եմ այսօր լավ, բանիմաց **մասնագետի** վճարել. բույսերս, ծառերս վարակվում են, ես չգիտեմ, թե ինչ անել, ինչ սրսկել, ում դիմել...

Կրծողների դեմ պայքարը պետք է կենտրոնացված լինի, որովհետև եթե ես ինչ-որ կերպ իմ մկների դեմն առնեմ, հարևանի հողից են մտնելու... Ինչպես կան տրակտորային պարկեր, որոնցից բոլորն օգտվում են, այնպես էլ բուժման կենտրոններ են պետք, որոնք կմշակեն որոշակի ժամանակացույց, որով կկատարվի համայնքի բոլոր գյուղատնտեսական հողերի բուժումը:

Հողատերեր են մարդիկ, ովքեր հողից շատ հեռու են, մինչդեռ կան մարդիկ ովքեր կարող են աշխատել, բայց հող չունեն:

Հասարակ գյուղացին իր միջոցներով է կազմակերպում գյուղատնտեսությունը՝ տրակտորների վարորդների հետ պայմանավորվելուց սկսած. սա բոշայություն է, ուրիշ ոչինչ:

Մարդկային ռեսուրսի լուրջ խնդիր ունենք գյուղերում: Գյուղերը գնում են դեպի ծերացում: Երիտասարդները ուզում են լուրջ երաշխիք ունենան եկամտի, որպեսզի գան հող մշակեն: Պետք է ոտքի կանգնեցնել գյուղատնտեսությունը, որպեսզի երիտասարդները վերադառնան գյուղ: Այսօրվա դրությամբ գյուղում նպաստող ապրող մարդիկ ավելի լավ են ապրում, քան աշխատողները:

Ես եկել եմ մի եզրակացության. ամենակարևորը՝ մարդ պետք է բաց լինի նոր բան սովորելու, նոր բան օգտագործելու, մեր ինֆորմացիան շատ հին է:

Հրեաները իրենց անապատ երկիրը սարքեցին հրաշք վայր, իսկ մեր բարբարոսները՝ մեր դրախտային երկիրն անապատ:

Խորհրդատվության ժամանակ գյուղացին շատ հարցերի պատասխան է կարողանում ստանալ, փորձի փոխանակություն կատարել:

Որպեսզի ամբողջ ինֆորմացիան, ռեալ լինի, պետք է գուղաջակցության մասնագետները, գյուղ նախարարության աշխատակիցները պտտվեն գյուղ-առ-գյուղ, տեսնեն խնդիրները, քանի որ յուրաքանչյուր համայնք իր խնդիրն ունի:

Այսօր ամբողջ դեղորայքը ներմուծվում է, շատ կեղծ և անորակ ապրանքներ կան շուկայում, հատուկ վերահսկողություն է պետք սահմանել այս ոլորտում:

Գյուղացին փող է տալիս, կեր ու դեղ առնում, բայց դրանց որակից տեղյակ չէ ու հույսը դնում է տվողի խղճի վրա:

Անասնաբույժին քո մեքենայով տեղափոխում ես, մի բան էլ գրպանը դնում ու նոր ճամփում:

Մարզում հասարակ գյուղատնտես չունենք:

Անասնաբույժները օգտվում են գյուղացու անտեղյակությունից և ստիպում են երբեմն վճարել այն պատվաստման համար, որը պետության հոգսն է:

Խաղողագործությունը, մեղվաբուծությունը, անասնապահությունը և պտղաբուծությունը մարզի առաջնահերթություններն են:

Մասրենով հարուստ տարածքներում օձերի քանակն էլ է շատ, իսկ օձի թույնը դեղագործության մեջ ամենաշատը կիրառվող բաղադրիչներից է: Մասրենու արտադրությունն այսպիսով կրկնակի շահավետ է:

Օրենքով **անասնաբույժի** աշխատավարձը գոյանում է ծառայությունների վճարից, այնքան քիչ է, որ նորմալ աշխատավարձ չի ստանում: Պետք է ստանա համայնքի բյուջեից:

Արարատյան դաշտում բերքատվությունը երեք անգամ ավելի է քան մեր մարզում: Մեր հողերը երրորդ-չորրորդ կարգի հողեր են:

Վերջին հինգ տարում Վայոց Ձորից ոչ ոք չի գնացել **անասնաբուժություն** սովորելու:

Ոչխարի բուրդը խուզում են ու վառում, որովհետև բրդի վերամշակում չի արվում:

Պետք է գյուղացիների գործունեության քարտեզագրում արվի, ըստ այդմ էլ կորոշվի ինչի կարիք կա:

Անասնաբուժության մեջ էլ կարող է տենդեր լինել: Անասնաբույժները մրցեն միմյանց հետ: Ով իր թիմով լավը կլինի, կաշխատի:

Պետք է ճիշտ ընտրվի սերմացուի բաժանման ժամանակահատվածը:

Որպեսզի մասնավորը կայանա, պետության աջակցությունը կարող է լինել ոչ դրամով: Շենքերը քանդվում են **անասնաբուժական** ծառայությունների: Թող անվարձահատույց տային անասնաբույժին, գնար աշխատեր:

Անասնաբուժությունը չպետք է ապապետականացվի, կարող է համաճարակային բում լինել. անասնաբուժությունը կարելի է դիտարկել որպես ռազմավարական ոլորտ:

Համայնքային **անասնաբույժը** պետք է անվտանգության նորմերին հետևի համայնքում:

Անասնաբույժին չնչին գումար են տալիս ու դրանով անհնար է շատ համայնքներ սպասարկել:

Համայնքային **անասնաբույժը** պետք է անվտանգության նորմերին հետևի համայնքում:

Պետք է դիմում գրեմ կառավարություն, որպեսզի օրը սարքեն 36 ժամ, որպեսզի կարողանամ սպասարկել գյուղացիներին:

Պետք է լինի պետական աջակցություն անասնաբուժության ոլորտին: Ելքը մասնավոր **անասնաբուժական** ընկերություն կամ կայան զարգացնելն է պետության աջակցությամբ:

Պետք է քայլերի հետևյալ հաջորդականությունը մեր համայնքում. (ա) նոր բնակլիմայական պայմանների համար նոր ուսումնասիրություն, թե ինչ տեսակի ինչ մշակաբույսեր մշակել, (բ) հողի ու բույսերի լաբորատոր ուսումնասիրություն դրանք ճիշտ բուժելու համար:

Անասնաբուժական ծառայությունից տուժող կենդանու համար ո՞վ պետք է փոխհատուցի:

Պետական ծառայությունների մեջ պետք է ավելացնել տուբերկուլյոզի դեմ պատվաստումները:

Հին սերմերն ավելի դիմացկուն ու բերքատու էին: Վարունգ եմ ցանում, հենց առաջին պտուղը դառն է: Սերմերը մենք ենք հավաքում ու աշխատում ենք հին սերմերը բազմացնել:

Խոշոր ֆերմերներն անասնաբույժին չեն էլ վճարում: Իրենք սովորում են սրսկել կովին ու հազար դրամ ավել չեն վճարում:

Համակարգիչների մոտ նստում են, անգամ մեր ճանապարհը չգիտեն, ինչպես կարող են հարց լուծել:

Սերմերի ձեռքբերման գործընթացը պետք է վերահսկել. խաբում են անխղճորեն...

Գյուղացին մի տարի տեսնելով, որ պետական սերմացուները օգուտ չեն տալիս, հաջորդ տարի, ստիպված մեքենա են վերցնում գնում Սիսիանի սերմնաբուծարան սերմ բերելու:

Բնակլիմայական պայմանների փոփոխությունից հետո մեր տարածաշրջանում պետք է նոր ուսումնասիրություն կատարվի ու մրգերի ու բանջարաբոստանային կուլտուրաների նոր սորտեր բերեն այստեղ ըստ այդմ:

Ը. ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Եթե վարակ է տարածվում գյուղացին է փորձում կանխել այն, պետությունը չի խառնվում:

Սննդի անվտանգությունը պետք է մնա պետության վրա:

Բրուցելոզի դեպքում հարկադիր մորթ պետք է իրականացվի, բայց դրա համար պետության աջակցությունն է պետք գյուղացուն:

Սպանդանոց պետք է ստեղծվի մարզում, բակում ենք մորթում անասուններին:

Գյուղատնտեսությունը չպետք է մնա միայն գյուղացու ուսերին, պետությունը անպայման պետք է վերահսկի, ընդ որում ավելին, քան հիմա է:

Սպանդանոցը էժան է վերցնում միսը անասնապահից, ավելի լավ է մենք մորթենք տանք շուկա:

Սպանդանոցների կառուցումը կարող է ստեղծել մրցակցային պայմաններ, պետք է շարունակել աջակցել այդ ծրագրին:

Սպանդանոցները լավ բան են, բայց ռիսկայնությունը շատ մեծ է, եթե կենտրոնացված լինի, շուկան կարող է թանկանալ, ինքը մենաշնորհ կունենա: 2 տարբերակ է լինում, կամ գյուղացին պետք է ավելի էժան վաճառի, կամ ապրանքի գինը կավելանա, քանի որ մի օղակ՝ սպանդանոցը ավելանում է:

Զարթոնքում ոռոգման ջրերն Արմավիրի ու Մեծամորի կոյուղաջրերն են, տանում են, ստուգում, նորմալ արդյունքներ են... Ի՞նչ **վերահսկողության** մասին է խոսքը: Տարբեր պետական մարմիններին դիմել ենք մաքրման կայաններ սարքելու համար, առայժմ անարդյունք:

Պետք է հստակ գործի **սպանդանոցի** վերաբերյալ օրենքը: Ով որտեղ ուզի, անասուն է մորթում: Իսկ սպանդանոցներում հնարավոր է այս գործընթացը անվտանգ դարձնել:

Բոլոր մարզերում կային **սպանդանոցներ**, բայց մասնավորեցնելուց հետո ամբողջը քանդեցին:

Ես իմ պահած անասունին իմ ձեռքով չեմ սատկացնի: Անցյալ տարի անասունս հիվանդ էր, գլուխն արագ կտրեցի, ավելի էժան գնով հանձնեցի խանութին: Ո՞վ ա ստուգելու...

Միջանկյալ օղակը գյուղացու ու մթերողի մեջ պետք է չլինի, թող գյուղացու հետ անմիջական հարաբերություններ լինեն:

Արմավիրում **սպանդանոց** չկա: Սակայն միայն սպանդանոց հանձնելը գյուղացուն ձեռնտու չի: Պետք է խանութներ հանձնելու հնարավորությունը չսահմանափակել:

Սննդի անվտանգության համակարգը լավ բան է, բայց մեխանիզմները ամբողջական չեն մշակված և շատ կարևոր է, որ մշակաբույսերի հետ կապված ստուգումներ անցկացնեն, հատկապես թույների չափաբաժնի համար:

Սննդի անվտանգության համակարգը Հայաստանում լիարժեք չի գործում ու նրանց իրավունքները սահմանափակ են:

Պտուղը տասն անգամ սրսկում են, բայց ո՞վ ունի դրա իրավունքը:

Սպանդանոցը ԱՊՀ-ի պես բան էր՝ ոչ ոք իմաստը չհասկացավ:

Որակի վերահսկողություն որևէ կերպ չի իրականացվում:

Վերջին սրսկումը պետք է լինի բերքահավաքից քսանհինգ օր առաջ:

Խորհրդային ժամանակ ոչ ոք իրավունք չուներ թույն պարունակող բերք վաճառել, բայց այսօր դա չի ստուգվում:

Նախկինում հնարավորություն կար շուկայում ստուգել բերքի **որակը** հատուկ սարքերի միջոցով, բայց այսօր մեզ կկախեն ստուգելու դեպքում:

Անասնաբուժությունը պետք է ապապետականացվի, որովհետև միևնույն է անասնաբույժի հիմնական եկամուտը գոյանում է մասնավոր այցերից:

Հատկապես օրգանիկ դաշտերում անհրաժեշտ է ստեղծել **էկոինսպեկցիա**:

Գյուղացուն չի հետաքրքրում կերի և դեղի ժամկետանց լինելը, քանի որ որևէ մեկը չի **հսկում** գործընթացը:

Պետք է ստեղծել **էկոինսպեկցիա**, որը կկարողանա վերահսկել բոլոր սրսկումները և տուգանքներ կիրառի:

Ուրիշ երկրներում կա **էկոինսպեկցիա**, որը վերահսկում է դեղերի դաշտը:

Սպանդանոցները ձեռք չեն տալիս գյուղացուն, մարդիկ նախընտրում ենք իրենք մորթեն վաճառեն:

Որակի ստուգման գործում էլ կոռուպցիա կար:

Կերային բաղադրիչների վրա չկա որևէ վերահսկողություն: Ով ուզում է, կեր է սարքում և ծախում, չկան վիտամինային միացություններ, վաճառում են միայն դատարկ թեփը:

Ստուգումները խիստ մակերեսային են: Խորքային ուսումնասիրություններ և անալիզներ չեն լինում:

Մի քանի մասնավոր կազմակերպություններ կեր են սարքում, բայց որևէ հսկողություն չկա իրենց գործունեության նկատմամբ: Ինձանից բացի այսօր բոլորը կեր ծախող են:

Մեր վերամշակող կազմակերպությունները պիտի զբաղվեն նրանով, որ փչացած բերք չլինի:

Մի կիլո ապրանք չպետք է գետնին մնա, ամբողջը պետք է ենթարկվի վերամշակման:

Պետությունը պիտի համակարգի գինու որակի խնդիրը. 40,000-անոց գինին շատ ավելի վատ համ ունի, քան մեր տեղի որոշ արտադրանք, բայց ինչպե՞ս դա ապացուցենք:

Պետք է լինեն պետական **սպանդանոցներ**, որտեղ գյուղացին առանց մտածելու կարողանա հանձնի իր արտադրած միսը:

Սպանդանոցները շատ լավ բան են: Բայց դրանք կոնկրետ մարդկանց են պատկանում: Կարելի է համայնքներում ստեղծել սպանդահրապարակներ, որտեղից միսը գնեն փոքր խանութները:

Սպանդանոցները պահանջում են մեկ օրում 600 ոչխար, եթե այդ թիվը չի ապահովվում չեն մթերում:

Կազմակերպություն կա օրական քսան տոննա պանիր է արտադրում, բայց այդքան կաթ չկա երկրում, տեսչությունը պետք է հետևի որակին:

Գյուղացու արտադրած պանիրը շուկայում վաճառվելուց առաջ չի ստուգվում, օրենքի բաց է:

Պետական **վերահսկողություն** չկա անասնամթերքի նկատմամբ, անասնաբուժական լաբորատորիաների գործառույթն էր, բայց դրանք էլ փակեցին:

Թուրքական լոլիկը օլիգարխը մտցնում է շուկա, թունավորում մեր ժողովրդին, գյուղացուն էլ խեղճացնում:

Մինչև հիմա եղել է մի քանի ստուգող մարմին սննդի անվտանգության մասով: հիմա մեկ միասնական է, դա ճիշտ է:

Տուբերկուլյոզը պատվաստում են միան այն դեպքում, երբ մարզում վարակ կա, սա պարտադիր պատվաստում չէ:

Մթերումը պետք է կատարվի ապրանքի անալիզն անելուց հետո: Միայն որակով ապրանքը պետք է մթերվի:

Սննդի անվտանգության մասով պետք է լինի մեկ կենտրոնացված պատասխանատու կառույց:

Քանի որ գումար չի տրվում, ես հիվանդ կենդանին մորթելու եմ ուղարկեմ ձեզ, մեզ պահեմ առողջը:

Հիվանդ անասունի մսի վաճառքը գրեթե անհնար է: Սննդի անվտանգության տեսչությունը հսկում է:

Համայնքային անասնաբույժը պետք է անվտանգության նորմերին հետևի համայնքում:

Գյուղացին հիվանդ միսն է ուղարկում վաճառքի, հո հիմար չի, որ ինքը ուտի այդ մսից:

Անասունի միսը հանձնելու համար, անասնաբույժի սերտիֆիկատ է անհրաժեշտ: Հիվանդ կենդանու միսը չի վաճառվի:

Սատկած կովը վիզը կտրում ենք, գումի շուկայում էժան վաճառում: Սննդի տեսչությունը ոչինչ չի արել դեռ:

Պետական ծառայությունների մեջ պետք է ավելացնել տուբերկուլյոզի դեմ պատվաստումները:

Մեզ անհրաժեշտ են սերմնաբուծարաններ, որտեղ կբուծենք մեր տեղական սերմերը:

Մեր յուրահատկություններից ելնելով՝ Արտաշատից բերված սերմն անարդյունավետ է, իսկ Շիրակից բերվածն ավելի լավ է հարմարեցվում: Այդ իսկ պատճառով մեզ տեղական սերմնաբուծարաններ են պետք, որտեղ կփորձարկենք ու լավագույն սերմնատեսակը կստանանք:

Ապրանքի որակը մեզ մոտ չեն ստուգում: Իմ որակով ապրանքն ավելի էժան է, քան ուրիշի անորակը:

Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ

Ներմուծումների պատճառով, կարտոֆիլի գինը նվազում է և գյուղացին վնաս է կրում՝ չկարողանալով վաճառել իր արտադրանքը:

Պետությունը պետք է երաշխավորի, որ ներմուծման քանակը այնքան կլինի, որ գյուղացին վստահ կլինի, թե կկարողանա վաճառել խելամիտ գնով իր արտադրանքը:

Պետությունը պետք է երաշխավորի ոչ թե նվազագույն, այլ լողացող գին՝ ասենք հարյուրից ոչ պակաս ու հարյուր ութսունից ոչ ավել:

Խորհրդային Միության օրոք գիտական մտքի երեսուն տարվա զարգացման արդյունքում մենք ստացանք ոչխարի տեսակ, որը հրաշալիորեն ադապտացված էր մեր բնակլիմայական պայմաններին: Բայց հիմա բուրդը գին չունի: Գառը մորթում ենք, բուրդը վառում:

Հիմա այնպիսի վիճակ է, որ մարդիկ հող ունենալով, նույնիսկ չեն գնում վերցնելու սեփականության վկայականը կադաստրից:

Կաթի մթերման գինը շատ ցածր է, բայց խանութում մի քանի անգամ թանկ է վաճառվում կաթնամթերքը:

Գյուղացին ցանում է, բերք չի ստանում, հիասթափվում է, դրա համար շատ բան ներկրվում է:

Եթե մարդը աճեցնում է կարտոֆիլը հիսուն դրամ ինքնարժեքով, վաճառում է հիսունով, բնականաբար ձեռնտու չէ:

Կաթի մթերման գինը իջեցրել են: Իսկ կաթնամթերքի գինը արդյո՞ք իջել է: Ո՛չ: Պետությունը այստեղ պետք է կարգավորողի, ոչ թե միջամտողի դեր ստանձնի:

Սխտորի ցանքատարածություններն ավելացրել ենք, աշխատատար չի ու ավելի **եկամտաբեր** է, քան կարտոֆիլը:

Մինչև հիմա կաթի ոլորտում մոնոպոլիան, մաֆիան է գործում: Բոլոր կաթ մթերողները նույն կենտրոնից են ղեկավարվում: Հենց լակտացիոն սեզոնը գալիս է, նրանք մթերման գինը իջեցնում են: Իսկ ձմռանը գյուղացին կաթով չի զբաղվում, այլ գոմաղբով:

Եթե գյուղացին որակով ապրանք արտադրի, իրացման խնդիրներ չեն առաջանա:

Ես աճեցնում եմ լավանդա, ազնվամորի, բույսեր որոնք ավելի թանկ են վաճառվում, իսկ մարդիկ կպել են կարտոֆիլից:

Կաթի գնի նվազման պատճառով գյուղացին շահագրգռված չէ աշխատել:

Գյուղմթերքի գների կայունացումը մինչև գյուղացին չզգա, ոչ մեկին չի վստահի:

Պետությունը պետք է գյուղ մթերքի գինը կարգավորվի ներմուծման արհեստական նվազեցման շնորհիվ:

Պետությունը պետք է իջեցնի այն ապրանքների ինքնարժեքը, որը օգտագործում է գյուղացին: Նախկին իշխանությունն կոռուպցիոն սխեմաների պատճառով, բարձրացրել է շատ ապրանքների ինքնարժեքը, որի պատճառով գյուղ մթերքի վերջնական արժեքը ավելի թանկ է ստացվում, քան ներմուծվող մթերքների դեպքում:

Պետք է լինի պետության կողմից ճանաչված միջնորդ կազմակերպություն, որը կկատարի գնումներ:

Վերավաճառողը թույլ չի տալիս որ մթերողները գան հասնեն գյուղացուն, ինքն է վերցնում տանում:

Գյուղացին պետք է իմանա, որ իր բերքի իրացումը վաղը երաշխավորված է:

Մեր տարածաշրջանում ոչ մեկ արտահանմամբ չի զբաղվում, դրա համար էլ մենք հատուկ սերտիֆիկատներ չենք տրամադրում, հատուկ զննման մեր արտադրանքը չի ենթարկվում, ոչ մեկ մեզնից ոչինչ չի ուզում:

Կարտոֆիլի իրացման խնդիր չունենք, խնդիրը իրացման գինն է:

Չստանդարտեցված խառը սորտերով օրինակ կարտոֆիլը վաճառվում է ՌԴ-ում, բայց ոչ ԵՄ երկրներում:

Պետք է մարդը հնարավորություն ունենա ընտրել՝ որտեղ ապրել, գյուղում, թե քաղաքում, հետևաբար և զբաղվել գյուղատնտեսությամբ, թե այլ գործունեությամբ: Մեր մոտ մարդիկ ստիպված են գյուղում ապրում:

Մեր համար բաց է ԵՄ շուկան, ԵԱՏՄ շուկան, մեզ մնում է միայն սերտիֆիկատ հանել և արտահանել:

Գրեչկայի ինքնարժեքը երկու հարյուր դրամից մի քիչ ավել է, բայց գինը շուկայում ութ հարյուր դրամից իջավ երեք հարյուրի:

Երևանի գյուղմթերքների տոնավաճառները մեզ հասանելի չեն, կարևոր է բայց, որ սեփականատերը վաճառի, ոչ թե վերավաճառողը:

Խոտաբույսերի բիզնեսը շատ ձեռնտու է, մենք շատ գնորդներ էլ ունենք, բայց այսօր անգամ մի մեքենա չենք կարողանում ձեռք բերել, որ ուսներիս դրած չբերենք:

Երկրի ներսում սպառման խնդիր ունենք նաև այն պատճառով, որ սպառողների թիվն է պակասում:

Առանց պետության աջակցության տեղական արտադրանքի դուրս բերումը միջազգային շուկա, գրեթե անհնար է:

Պետական աջակցություն պետք է լինի արտադրանքի իրացման համար, թեկուզ ոչ բարձր գնով, օրինակ կտավատը, որ հիմա չես կարող վաճառել, անասնակեր է դարձել:

ԽՍՀՄ տարիներին մեր տարածաշրջանում ցանվում էր 1400 հա կարտոֆիլ, այս տարի ցանվել է 228 հա. Չկա շուկա:

Պետությունը պետք է աջակցի բերքի արտահանման հարցում ԵԱՏՄ:

Պետք է լինի մարզում մի կառույց, մի բազա, մի գնող կազմակերպություն, որ ինքը կարտահանի գյուղացու արտադրանքը:

Ինֆորմացիայի պակաս կա որ պետական կառավարման համակարգում հասկանան, որ տեղական միջոցներով օրինակ կարելի է կտավատի ձեթի արտադրությունը կազմակերպել ու զարկ տան տեղական արտադրությանը ու արտահանմանը:

Այսօր մենք բանակը կերակրում ենք դրսից բերած անորակ մսով, աբսուրդ է, թող պետությունը երաշխավորի փոքր տնտեսություններին, որ այսքան արտադրեն համապատասխան գնով պետությունը կգնի:

Գյուղացին այնքան է խաբվել, հիասթափվել, որ չի ուզում ոչ մեկի հետ աշխատել, ասում է, արի և տար իմ բակից իմ արտադրանքը, ոչ մեկ գործընկեր չի էլ փնտրում, պայմանագրային հարաբերություններ ոչ մեկին պետք չեն:

Մեծ ծախս է ապրանքը ԵԱՏՄ հանելը: Պետությունը պետք է օգնի այդ հարցում:

Կարող է ընդհանուր հավաքման կայաններ ու փոքր գործարաններ լինեն կոնկրետ ապրանքի արտադրության ու վերամշակման շուրջ: Փոքր ձեռնարկություններ կան, որ օրինակ կտավատի ձեթը հանում ենք, 4000-ով ենք 1 լ կարում վաճառել ներքին շուկայում:

Պետությունը պետք է տեղի գյուղարտադրողին աջակցի, ներկրման սահմանափակումներ են պետք, արտասահմանից կարտոֆիլ է ներկրվում:

Պետությունը պետք է ստեղծի միջնորդ վերավաճառող կազմակերպություն:

Պայմանագրային հարաբերությունները երազանք է գյուղացու համար, որ գան իր ծառը, հողը վարձակալեն ինչ-որ ժամանակով:

Պետությունը պետք է առաջարկ-պահանջարկի հարցը վերցնի իր վրա:

Այստեղ էլ պայմանները պետք է հստակ լինեն, մի օրինակ՝ 1-ին տարին 4տ բերք ստացավ, գնեց, հետո ավել էր, ասում էր ես 4տ-ի տերն եմ:

Պետությունը պետք է մաքսային հարկեր դնի ներմուծվող ապրանքի վրա, որպեսզի մեր ապրանքը սպառվի:

Պետք է ստեղծվի այնպիսի ճանապարհներ և պայմաններ, որպեսզի գյուղացին անձամբ իր արտադրանքը արտահանի:

Համայնքների զարգացման ծրագրով բերեցին, գրեչկա ցանեցինք, հոյակապ բերք ստացվեց: Ֆինանսավորման մի մասը այնուամենայնիվ չտվեցին, կիսատ մնաց՝ արտադրություն չհիմնվեց: Փոխարենը մեծ քանակությամբ գրեչկա բերեցին դրսից, գինը իջավ, հիմա իրացման խնդիր ունենք:

Երաշխավորված գինը մեզ համար երազանք է:

Պետությունը պետք է նվազեցնի գյուղմթերքի գնի սկայնությունը:

ԵՄ արտահանման համար պետք է Էկոսերտիֆիկատ, որի ձեռքբերումը ֆինանսի և ռիսկերի հետ է կապված:

Ամենադժվար խնդիրը գյուղմթերքի ստանդարտեցումն է, ցանում են տարբեր սորտեր, շուկան պահանջում է նույն ստանդարտով:

Գյուղմթեքի իրացման խնդիր կա:

Արտադրողը ստանում է ավելի քիչ եկամուտ քան վերավաճառողը, որովհետև այդ շուկայում նույնպես կա մոնոպոլիա և գնման գին է թելադրում վերավաճառողը:

Պաշտպանության նախարարությունն այսօր փոքր չափսերով արտադրանք չի ընդունում, բա գյուղացին էլ չի իմանում ինչ անի այդ կարտոֆիլը, վերջում էլ թափում ենք:

Եթե լինի ստանդարտեցում կլինի արտահանում, ներքին շուկայի բավարարում:

Անհրաժեշտ է ավելացնել գյուղմթերքի շուկաները, որտեղ գյուղացին անձամբ տանի վաճառի իր արտադրանքը:

Պետությունը պետք է կարգավորի շուկան, գնագոյացմամբ, միջին գին սահմանի գյուղմթերքի համար, որ վերավաճառողները գյուղացուց շատ չօգտվեն:

Սպանդանոցը էժան է վերցնում միսը անասնապահից, ավելի լավ է մենք մորթենք տանք շուկա:

Սպանդանոցները լավ բան են, բայց ռիսկայնությունը շատ մեծ է, եթե կենտրոնացված լինի, շուկան կարող է թանկանալ, ինքը մենաշնորհ կունենա: 2 տարբերակ է լինում, կամ գյուղացին պետք է ավելի էժան վաճառի, կամ ապրանքի գինը կավելանա, քանի որ մի օղակ՝ սպանդանոցը ավելանում է:

Մենք իրացման, շուկա մտնելու խնդիր էլ ունենք, ճանապարհաճախսն էլ շատ-շատ է:

Անասնապահության մեջը երկու վատ բան կա, կաթի գինը, որը շատ տարբեր է բոլոր գյուղերում ու ցածր է ընդհանուր առմամբ՝ 80-130 դրամ: Նույն գործարանը տարբեր տեղերից տարբեր գներով է առնում, պետք է ուսումնասիրել ու կայունացնել գինը:

Այսօր պետք է փորձել ուրիշներից տարբեր լինել, առավել մրցունակ լինել, այնպիսի արտադրանք ունենալ, կամ այնպիսի բույսեր աճեցնել, որ ուրիշ տեղ չկա: Օրինակ մենք հիմա բրոկոլի ենք ցանում, սկզբից չէինք էլ հասկանում, ինչպես օգտագործել:

Ոչ ավանդական բուսաբուծությամբ եմ զբաղվում՝ բրոկոլի աճեցրեցինք: Շատ ավելի լավ ստացվեց, քան Արարատյան դաշտի բրոկոլին: Բայց հիմա ցանքատարածության ու գումարի խնդիր ունենք, բայց մեծ հեռանկար կա, եթե ստացվի:

Պետք է ապահովագրել նաև ապրանքի իրացումը, ոչ միայն արտադրությունը:

Երաշխավորված գինը պետք է պատվերով լինի, այսքան հա, այս սերմով, այս գնով կվերցնեմ, կվաճառեմ ապրանքդ, որ ռիսկերը նվազեցվի, պետական աջակցությունն ու ապահովագրությունը այդպիսին լինի:

Պետությունը պետք է երաշխավորի, որ գյուղացու բերքի որոշակի տոկոսը տարվա վերջին ինքը կգնի կամ կօգնի իրացնել:

Երաշխավորված գինը պետք է պատվերով լինի, այսքան հա, այս սերմով, այս գնով կվերցնեմ, կվաճառեմ ապրանքդ, որ ռիսկերը նվազեցվի, պետական աջակցությունն ու ապահովագրությունը այդպիսին լինի:

Եթե մարդը իմանա, որ իր արտադրանքը, օրինակ մեղրը, կվաճառվի, երբեք բնությանը չի կպնի, անտառ չի կտրի:

Հացահատիկ կարելի է ներկրել, բայց կարտոֆիլ, պոմիդոր, ձմերուկ ներկրելն ուղիղ հարված է մեր գյուղացուն...

Ներկրած պոմիդորը սիրուն «սալֆետկի» մեջ փաթաթած գալիս է, մեր ճխլտված պոմիդորը չեն գնում: Բայց կարելի է, չէ՞, սա պահածոյացնել:

Մթերողի, արտադրողի հետ խոսում եմ, ասում է ինձ համար ավելի շահավետ է դրսից պոմիդորի մածուկ ներկրել 20 դրամով, քան քեզանից 40-ով պոմիդոր առնել:

Գյուղացին իրացման խնդիր ունի: Ցորենի արտերը ստիպված արոտավայրի են վերածում: Թող պետությունը երաշխավորված նվազագույն գին սահմանի ցորենի համար:

Իրացումը պետք է շոգեքարշի պես իր հետևից տանի գյուղատնտեսությունը: Առաջնային է ոչ թե արտադրելը, այլ իրացման հարցերը կարգավորելը:

Գյուղացու համար խոչընդոտող է այն, որ շուկայում չկա երաշխավորված գին:

Գյուղացին ամբողջ տարին տանջվում է և էժան գնով չպիտի հանձնի իր ապրանքը:

Մենք չպետք է իրացման հետ կապված մեր հույսը դնենք միայն ՌԴ-ի վրա, այլ պետք է գտնենք եվրոպական նոր շուկաներ:

Գյուղացին պատրաստ է արտադրել եվրոպական չափանիշներին համապատասխան մրցունակ արտադրանք:

Այսօր ոչ մի գյուղացի չգիտի, թե ինչ չափանիշների պետք է համապատասխանի իր արտադրած բերքը:

Ապրանքի համար կարևոր է հումքի գինը հստակ սահմանել: Մի լիտր կաթը և պաղպաղակը նույն գնով են վաճառվում:

Պետական գործարանը շահույթի հետապնդման խնդիր չունի և կարող է ավելի բարձր գնով մթերել ապրանքը:

Մի քանի տարի հետո մենք մրգի իրացման հետ խնդիրներ ենք ունենալու, որովհետև բերքը շատ է լինելու, իսկ իրացման շուկան՝ փոքր:

Գյուղացին արտադրում է, բայց չի կարողանում իրացնել իր արտադրանքը: Չկա ուրիշ օղակ, որը կզբաղվի այդ հարցով:

Դաշտում այս պահին մի քանի տոննա սալոր ունենք, բայց չկա պետական մարմին, որը զբաղվի այս հարցով, իսկ գյուղացու համար արդեն միևնույն է գինը:

Գյուղացին ժամանակ չունի շուկայում մեծ քանակի բերք վաճառի, և կանգնում է բերքը իրացնելու լուրջ խնդրի առաջ:

Պետությունը պետք է կարողանա ապահովել գյուղացու արտահանման անվտանգությունը կամ պայմանները:

Այս տարի արտահանողները շատ էին, գյուղատնտեսական շուկաներից շատ չեմ օգտվել: Տարուց է կախված, թե իրացումն ինչպես կանեմ:

Շատ չրանոցներ են բացվել ու երբեմն շատ ավելի ձեռնտու է միրգը հանձնել իրենց, քան արտահանողներին: Գրեթե նույն գինն են առաջարկում ու անգամ փոքր միրգն են վերցնում:

Պետությունը պիտի որոշակի գին սահմանի, օրինակ՝ պոմիդորն՝ 80 դրամ, և բոլորը պիտի այդ գինը վճարեն:

Վրաստանում արգելք է դրած հայկական գյուղատնտեսական ապրանքների ներմուծման և վաճառքի վրա:

Մեր կառավարության գլխավոր խնդիրը այն է, որ ճիշտ քաղաքականության միջոցով այնպես անի որ արտահանման խնդիրներ չառաջանան:

Գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքը ձևավորում է ընդունողը:

Մեր գիտելիքները չեմ բավարարում օրգանիկ ապրանք արտադրելու համար, ուստի չենք կարում արտահանենք ԵՄ:

Արտահանման հարցը լուծվի, ճանապարհները բաց լինեն, արտաքին շուկաներում պետությունը լինի մեր թիկունքին:

Պետք է շատանան «Սպայկա» ընկերության նման ընկերությունները:

Անհրաժեշտ է մթերման գների վերաբերյալ տեղեկատվության պակասը լրացնել, մթերման գներ սահմանել, գյուղացու հոգեբանությունը փոխել, ստեղծել արհմիություններ, տեղեկացվածությունը ապահովել, իրացման ու արտահանման խնդիրները լուծել:

Կան գյուղացիներ, որ շատ լավ գիտեն սեփական արտադրանքի ինքնարժեքը, բայց չի կարողանում իրացնել այդ գնով:

Ջերմոցները կառուցել են շատ, բայց արտադրանքի իրացման խնդիրն է շատ ակտուալ:

Զարմանալի է, որ գյուղում հացը, ձուն, մսամթերքը կամ կաթնամթերքը խանութից են գնում:

Արտադրողը պետք է իրացման հետ կապ չունենա, պետք է գան դաշտից տանեն գյուղացու բերքը:

Երբ արդեն տեղի բերքը կա, չպետք է դրսից ներկրեն:

Պետք է ստեղծվեն ընկերություններ կաղամբ արտադրողների և այլն: Հավաքվում են ու որոշում, որ կոնկրետ գնից ցածր չեն վաճառելու:

Պետության կողմից իրացման հարցում ոչ մի աջակցություն չունենք:

Մեր ապագան լավ դիզայնով, փաթեթավորված ապրանքի արտահանումն է:

Ծիրանը միակ միրգն է, որ դուրս է գալիս երկրից բոլոր տեսակի շրջափակումների պայմաններում: Անգամ արտահանվել է ռուս-վրացական պատերազմի ժամանակ:

Որ հաշվարկում եմ խաղողի, կաթի գնով, վերամշակումից հետո վաճառվող ապրանքների վաճառքը որ նայում ես, ոնց որ գյուղացուն հիմարի տեղ դնեն, ով է տեսել 20%-ից ավել շահույթ ունենան:

Մենք պետք է ունենանք պաշտպանված և երաշխավորված շուկա:

Գյուղացին պետք է իմանա, որ ապրանքը որակով արտադրելու դեպքում իրացման խնդիր չի ունենա:

Պետությունը երբեք չի իրականացնի պայմանագրային գնումները, քանի որ դա պետության համար մեծ բեռ է:

Պետք է ապահովել գյուղմթերքի ինքնարժեքի իջեցում, որպեսզի վերջինս մրցունակ լինի շուկայում:

Պետությունը պետք է ներկրման համար հարկերը ավելացնի, որպեսզի գյուղացու արտադրանքը իրացվի երկրի ներսում:

Շուկաների ստեղծումը նպատակահարմար չեն, քանի որ չեն կարողանում ապահովել մեծ իրացում:

Ժամանակին վրացիները գալիս էին մեկ շաբաթ քնում էին դեղձի դաշտերի տակ, որպեսզի բերքը իրենց հասնի: Հիմա մաքսերի պատճառով էլ չեն գալիս:

Արտահանման խնդիրները հիմնականում կախված են փաստաթղթերի հետ: Սահմանային անցակետերում երկար ժամանակ ստիպված ես լինում սպասել:

Վրացական շուկան փակեցին մեզ համար, հիմա խաղողը, խնձորը չենք կարողանում արտահանել:

Գյուղացուն ավելի ձեռնտու է մի տեղ իրացնել իր արտադրանքը, ոչ թե մի մասը տալ ֆուռին, մյուսը՝ չրանոցին, էն երրորդն էլ՝ Արթֆուդին: Մանավանդ, որ չրանոցը սորտավորումն ավելի խղճով է անում, քան ֆուռը:

Ամեն գյուղացի չի կարող արտահանմամբ զբաղվել, գյուղացու համար ավելի ձեռնտու է բերքը տալ մթերող կազմակերպություններին:

Երևանյան մեծածախ շուկաները գյուղացիների մեծ մասի համար հասանելի չեն:

Մարզերում մեծածախ վաճառքի կետերի մոնոպոլիա է:

Երաշխավորված գինը նվազագույն ինքնարժեքից պետք է բարձր լինի:

Ներմուծումը պետք է քվոտավորվի: Թուրքիայից ներ է կրվում տարբեր քիմիկատներով, գենետիկորեն մոդիֆիկացված ապրանքներ: Պետք է որակի խիստ վերահսկողություն սահմանել ու արգելել նման ապրանքի մուտքը Հայաստան:

Եթե ՊՆ-ն ընդունի կոնկրետ քանակ, ասենք կաղամբի, մենք մեր անելիքը կիմանանք:

Մենք պետք է ջուր ունենանք, շուկա և պաշտպանված լինենք կարկտահարությունից:

Եթե իմանամ, որ երաշխավորված կայուն գին կլինի, ես շատ կարտադրեմ:

Լարսի անցակետը երբ որ փակվում է, ապրանքը փչանում է ճանապարհին, նոր ապրանքը չեն ընդունում, գինը իջեցնում են:

Նախկին իշխանությունների ժամանակ ապրանքը վերցնում էին պաշտոնյաներին պատկանող հողատարածքներից, սովորական գյուղացին բերքը չէր կարող իրացնել:

Եթե մեր արտադրանքը փաթեթավորվի այստեղ, աշխատատեղ կլինի: Պետությունը թող աջակցի դրան, որ պատրաստ արտադրանք արտահանենք:

Պետությունը պիտի ենթակառուցվածքներ ապահովի, օրինակ՝ նորոգված ճանապարհները ու ելքի ալտերնատիվներ: Միայն Լարսով լայն արտահանում կազմակերպել հնարավոր չի:

Լարսում էլի խնդիրներ առաջացան միջպետական պայմանավորվածության մասով ու ծիրանը փչացավ:

Ճանապարհները վերանորոգված չեն:

Մենք ամեն օր աղոթում ենք, որ Լարսը չփակվի:

Պետք է ՌԴ դուրս գալու նոր ճանապարհ բացել:

Լարսի անցակետում 7 օր մնացել է ծիրանը, իսկ վառելիքը կրկնակի գնով են վաճառել վարորդներին, որպեսզի սառնարանները միացրած պահեն ու բերքը չփչանա:

Պետք է գործեն մեծ թվով մթերող կազմակերպություններ, որոնք կունենան իրենց մեքենաները, քանի որ սառնարանային տնտեսությունները հնարավորություն չունեն ինքնուրույն իրացնել բերքը:

Լավ գյուղմթերք ունենալուց հետո էլ պետք է պետությունը անպայման երաշխավորի իրացումը. Թուրքիայում օրինակ պետությունը խրախուսում է այն կազմակերպություններին, որոնք արտահանում են:

Գյուղացու համար մշակումը ավելի հեշտ է անցնում քան իրացումը:

Մեր սեղանի սորտերը իրացվել են Վրաստանում առաջ, հիմա իրենց մոտ քաղաքականություն է փոխվել, սեփական արտադրանքն են առաջ տալիս: Մեզ էլ է նման քաղաքականություն պետք:

Այս տարի մեր գյուղից ութ-ինը հոգի իրենք իրենց ծիրանը տարան Ռուսաստան: Ավելի շահեցին, քան առաջ, որ միջնորդներն էին տանում:

Խաղողի իրացումը շատ դժվար է: Խառը սորտերը արտահանվում է ԵԱՏՄ, տեխնիկական սորտը վերցնում են գինու կոնյակի գործարանները, շատ ցածր գներով, խաբում են քաշում քիչ են վճարում:

Գյուղացիական արտադրանքի բրենդավորման կամ գովազդի հարցը գրեթե չի քննարկվում:

Երաշխավորված գների մեխանիզմն անարդյունավետ է: Օրինակ՝ այս տարի 100 դրամով պոմիդոր ընդունեցին, պահեստավորեցին: Հաջորդ տարի ինչո՞ւ պիտի նույնքանով ընդունի:

Ծիրանի և դեղձի հարցում խնդիր չկա - Սպայկան վերցնում է: Եթե Ծառուկյանը խաղողները ընդունում է ու չխաբեն, ամեն ինչ լավ կլինի:

Մրցակցություն չկա երբ ոչ թե արտադրողն է գին թելադրում, այլ ընդունողը:

Քանի որ մենք իրացման հարցով չենք զբաղվում, նաև գովազդի հարցով էլ չենք հետաքրքրվում:

Կախված ենք Լարսի ճանապարհից, այլընտրանք է պետք: Իրացումը նաև դրանից է կախված:

Փաթեթավորում պիտի լինի, որակի վերահսկողություն, մարքեթինգ... Գյուղացին էս ամեն ինչն ինքնուրույն ո՞նց պիտի անի:

Կարևորը իրացման հարցի լուծումն է: Շղթայի մյուս հատվածներն ինքնաբերաբար կգործեն:

Անասնապահությունը չի զարգանում, որովհետև կաթնամթերքների ընկերություններ կան, որոնք միլիոններով պարտքեր ունենք գյուղացուն:

Արտահանման գինն էլ պետք է հստակ դնի պետությունը:

Անասունների գինը թանկանում է, բայց մսի գինը շատ չի բարձրանում. ձեռնտու չի լինում անասուն պահելը:

20 տարի է գյուղատնտեսական ապրանքները չեն թանկանում, դա վերավաճառողների համար է միայն, ոչ գյուղացու: Ինտերնետը բացում գներն են նայում, Վ. Տերտերյանի ասածներն են լսում, ոնց որ մեր գյուղում չապրեն:

Մենք այսօր անորակ դեղամիջոցներ ունենք, նաև ժամկետանց են, պարարտանյութեր չունենք նորմալ, մենք վատ սերմեր ունենք, վերահսկողություն չկա, հետևաբար վատ արտադրանք ունենք, հետևաբար արտահանում չունենք:

Մենք **իրացման** մեծ խնդիր ունենք, մենք շատ հեռու ենք երևանյան շուկայից:

Ջերմոցային տնտեսություն ունեմ, լոլիկ եմ արտադրում, հիմա չգիտեմ ես արտադրությամբ զբաղվեմ, թե հետո էլ մտածեմ որ խանութ տանեմ, ինչպես **իրացնեմ**:

Մարդիկ գյուղատնտեսությունից հրաժարվում են: Ուզում ենք պետությունը երաշխավորված ձևով գա մեզանից միսը **գնի** ու ասի՝ գնացեք բանկից փողը ստացեք:

Եթե դու բարձր որակի գյուղատնտեսական արտադրանք տաս, ապա **իրացման** խնդիր չի լինի: Բայց պրոբլեմը նրանում է, որ գյուղացին ռեսուրս չունի այդ բարձր որակի գյուղատնտեսությունը վարելու համար:

Եղեգնաձորում շատ հողեր կան, որ չեն էլ մշակվում. մի քանի անգամ ցանում են, **եկամուտ** չեն ունենում, հիասթափվում են: Բայց պետք է ինչ որ նոր բաներ մտածել, նոր տեխնոլոգիաներ ներդնել, ոչ թե հիասթափվել ու արտագաղթել:

Բոլոր համայնքներում առնվազն հինգ հարյուր հեկտար հող չի մշակվում: Տեխնիկան բերենք, ի՞նչ անենք: Գյուղացուն երաշխիք է պետք պետության կողմից իրացվելիության: Այդ դեպքում այդ հողերն էլ կմշակվեն ու հավելյալ ու նոր տեխնիկան իմաստ կունենա:

Իրացման խնդիրը լուծելու համար, նախ պետք է որակյալ արտադրանք ունենալ, դրա համար պետք է նորագույն ինֆորմացիա ունենալ, նորագույն տեխնիկա, լավ պատրաստված մասնագետներ ունենալ, հողերի մոնիթորինգ անել, նոր արդեն շուկաների ուսումնասիրություն անել:

Գյուղացուն ոչ թե կարկուտն է վնաս տալիս, այլ մթերման խնդիրը: Մեր տարածաշրջանում մթերումը շատ վատ է կազմակերպված:

Հարկային տեսանկյունից կոոպերացիա ստեղծելը ճիշտ չէ:

Մեր կոոպերացիան այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, բայց **հարկային** և վարկային բեռի պատճառով մեր ամբողջ եկամուտը ուրիշներին ենք տալիս:

ԱԱՀ **հարկը** բավականին բեռ է կոոպերատիվի համար, աշխատանքները դժվարանում են, որովհետև ամեն ինչ ձեռք են բերում շուկայից՝ շուկայական գներով:

Եկեք ապահովագրությունը մտցնենք, երկու-երեք տարի աշխատենք, ոտքի կանգնենք, նոր **հարկվենք**:

Այսօր մարդիկ ավելի պարտաճանաչորեն են **հարկ** վճարում, ավելի գիտակցաբար:

Եթե ցանկացած գյուղմթերք արտադրողի ասես, որ պիտի անգամ մեկ լումա **հարկվես**, չի համաձայնի:

Դեռ գյուղատնտեսությունը **հարկելը** շատ շուտ է:

Ամենակարևոր բանը՝ գյուղացուն չի կարելի նեղացնել:

Սողանքային տարածք ունեցող գյուղացին նույն **հարկն** է վճարում, ինչպես նորմալ հող ունեցողը, դա արդար չէ:

Քաղաքացին պետք է **հարկ** տա, որ գյուղացին ապրի, գյուղացին տանջվում է, քաղաքացին Հյուսիսային պողոտայում զբոսնում է:

Հարկ մուծելը պետք է պարտադիր պայման լինի բոլորի համար:

Պետությունը պետք է մաքսային **հարկեր** դնի ներմուծվող ապրանքի վրա, որպեսզի մեր ապրանքը սպառվի:

Պետությունը կոոպերատիվները պետք է **չհարկի**:

ԱԱՀ-ն գյուղացու համար՝ կոոպերատիվ, թե ոչ, սխալ է:

Գյուղատնտեսական արտադրողը երբեք չի հարկվել, բայց վերավաճառողը պետք է **հարկվի**, որովհետև վերավաճառողը գերշահույթ է ստանում, արտադրողը՝ տուժում է:

Մեկ հեկտար հողի համար **հարկերը** Հայաստանում ավելի շատ են, քան աշխարհի տարբեր երկրներում:

Մասնավոր ձեռնարկատիրոջը պետք է ազատել **հարկերից** և ուղղորդել, որ գումարները ներդնի գյուղտեխնիկայի ձեռք բերման մեջ և վարձակալությամբ աշխատի գյուղացու համար:

Պետությունը հատուկ **հարկային** համակարգ պիտի ստեղծի մեզ համար, և մի քիչ էլ պետք է ճկուն լինի:

Իրացման խնդիր ունենք նաև, թող ստեղծեն հավաքագրման կետեր, ես էլ հանգիստ իմ լոլիկը կտանեմ կտամ. գյուղացի մարդ եմ, իմ գործով կզբաղվեմ՝ իմ այգին կջրեմ:

Ճանապարհների խնդիրը մեզ մոտ մեծ խնդիր չի հիմա. համայնքները կամաց-կամաց լուծում են էս խնդիրը:

Թող պետությունը ինքը մթերի կաթը, միսը: Մեր տարածքի կաթը մթերում է Մարիաննա ընկերությունը շատ ցածր գներով:

Պետությանը ինչի համար պետք է **հարկ** տամ. ճանապարհներն այնքան վատ են, ուր են գնում իմ հարկերը:

Ճանապարհը թիվ մեկ խնդիրն է, վերամշակող ձեռնարկություններ են պետք: Մեր գյուղերում նման ձեռնարկություններ չկան:

ԱԱՀ-ի դեմ ոչինչ չենք կարող ասել. թող մարդիկ եկամուտ ստանան և հարկերը վճարեն:

Արտահանման ոլորտում թող պետությունը օգնի խոշորին: Մանրն էլ թող արտահանի խոշորի միջոցով:

Սպայկան իր համար գյուղմթերք գնելիս փչացնում է գյուղացու ապրանքը. 100 կգ միրգ ընտրելու համար մեկ տոննա կարող է փչացնել:

Հողի **հարկի** վերանայում է պետք՝ այն չի փոխվել ինչնականներին հողի սեփականաշնորհումից հետո:

Հացահատիկի մշակումը ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի համար, ու այս ոլորտում հաստատ պետությունը պետք է երաշխավորի իրացումը:

Գյուղատնտեսությունը, ի տարբերություն պետական աշխատանքի, հաստատուն եկամուտ չի ապահովում, բնականաբար, երիտասարդների համար այն գայթակղիչ չէ:

Գյուղապրանքի գների սանդղակ պետք է սահմանել՝ կախված ապրանքի որակից ու այլ հատկանիշներից:

Անհատ գյուղացին իր պանիրն ու մեղրը միայն իր հարազատների շրջանում է կարողանում վաճառել, բայց դրանով ինչպե՞ս եկամուտ ապահովել:

Գյուղատնտեսությունը պետք է **չհարկել**, գյուղացու գործը դժվար է, շահույթը՝ քիչ:

Պանիրը հասցրել եմ Երևան, հազար դրամով հանձնել եմ, իսկ խանութը վաճառել է հազար հինգ հարյուրով: Էլ ի՞նչ պիտի լինի գյուղացու վիճակը:

Թուրքական լոլիկը օլիգարխը մտցնում է շուկա, թունավորում մեր ժողովրդին, գյուղացուն էլ խեղճացնում:

Ռուսական շուկայում հիմա ինֆլյացիա է, դժվար է դարձել իրացումը: Մյուս խնդիրը Լարսն է:

Մեր արտադրանքը քիչ է, մեծ պայմանագրեր չենք կարողանում կնքել:

Վարուցանքից առաջ պետությունը պետք է կարողանա կենտրոնացված տեղեկատվություն կազմակերպել, թե այդ տարի ինքն ինչի կարիք է ունենալու: Իսկ գյուղացին պիտի կարողանա գնահատել իր հողն ու հասկանա, թե պետության կողմից տրամադրված կարիքներից ինքը որը կարող է ապահովել:

Իրացումն ամենացավոտ հարցն է:

Մեր գյուղի ճանապարհները քարուքանդ են, դրա պատճառով գյուղացին կտրվում է շուկայից:

Մթերումը պետք է տեղում կազմակերպվի: Շատ մթերքներ մինչև հասցնում ես շուկա, փչանում են:

Համայնքի տեղակայումը նույնպես կարևոր է սպառման համար:

Իրացման համար ծավալ է պետք: Երեք ծառ ունեցողի համար անհամեմատ ավելի բարդ է իրացնելը:

Մեր համայնքը շուկայից մոտ ինը կմ հեռու է, չենք հասցնում հասցնել շուկա:

170 դրամով վաճառվում է մեկ լիտր սովորական ջուրը, իսկ կաթի արժեքը ֆիքսել են 110 դրամ:

Գյուղնախարարությունը պետք է զբաղվի իրացման հարցով: Մեզնից առնում են միսը երկու հազարով, հետո վաճառում երեք հազար հինգհարյուրով: Միջնորդը շահում է, գյուղացին ու քաղաքացին տուժում են:

Վերավաճառողները միշտ ավելի շատ են եկամուտ ստանում քան արտադրողը: Արդար չէ:

Մի հետաքրքիր բան կա. ոչ մի գյուղացի հարուստ չի: Գուցե նրանից է, որ մենք ամենաքիչն ենք օգտվում պետական աջակցությունից կամ մեր կենսամակարդակի բարձրացումը ամենադժվարն է:

Մենք չունենք կայուն շուկա: Ես միսը առնում եմ 3000 դրամով, բայց ավելի էժան եմ վաճառում:

Երիտասարդները տեղափոխվում են քաղաքներ, ոչ ոք գյուղում չի ցանկանում ապրել: Գյուղատնտեսական գործունեության ծանրությունից նրանք խուսափում են:

Եթե գյուղատնտեսության մեջ քսան տոկոս եկամտաբերություն չունես, ապա ավելի լավ է ոչինչ չանես:

Երբ մեր երկրի բնակչությունը դառնա գնողունակ, այդ ժամանակ գյուղատնտեսությունը կզարգանա:

1000 գլուխ ոչխար ունեմ, սպառման խնդիր չունեմ, պարսիկները գալիս տանում են:

Մեր կաթի գինը ընկնում է, որովհետև արտասահմանից շատ էժան գնով կաթի փոշի են ներկրում: Լիտրը 100 դրամը ծիծաղելի գին է:

Մեր հարևան գյուղ բեռնատար է գալիս ու բերքը տանում: Իսկ մեր գյուղը տուժում է վատ ճանապարհներ ունենալու պատճառով:

Գյուղացին չգիտի՝ ինչպես գովազդի իր ապրանքը:

Գյուղացին ժամանակ չունի զբաղվի իրացման հարցով. նա արտադրող է ոչ թե իրացնող:

Գյուղ ապրանքի իրացման խնդիրը այն է, որ գյուղացուն դժվար է տանել, վերավաճառողն էլ թանկ է վաճառում:

Մեծ քանակի խաղող արտադրելը խնդիր է: Շատը չեմ կարող իրացնել, պետք է հանձնեմ գործարանին, իսկ գները շատ ցածր են:

Մենք ունենք ռեսուրսներ և ավելացնելու մեր արտադրանքի քանակը, մենք իրացման խնդիր ունենք, այդ պատճառով չենք ավելացնում:

Պետք է ապրանքը հստակ երաշխավորված գին ունենա, այլ ոչ թե գինն անընդհատ փոխվի:

Եթե էկո ապրանքի գինը երկու անգամ ավելի լինի, քան սովորական ապրանքի, ապա ես մեծ հաճույքով դրանով կզբաղվեմ:

Չորս տոննա խնձորից մեկուկես տոննա վաճառեցի, մեկը տվեցի կովերին, մնացածից էլ օղի քաշեցի: Որքանո՞վ է սա շահավետ: Իրացումն է պետք է ապահովել: Օրինակ՝ եթե սառնարան էլ ունենանք, Երևան հասցնելը մեծագույն խնդիր է, իսկ մթերման հիմնական կետը մայրաքաղաքն է:

Նպաստ չեն տալիս այն գյուղացուն, ով նույնիսկ մի կով ունի: Մեկ կովը տարեկան մոտ երկու հարյուր հազար դրամի եկամուտ է, իսկ նպաստը տարեկան կտրվածքով դրանից ավել է ստացվում: Էլ ինչո՞ւ է պետք կով պահել:

Եթե կաթի գինը ֆիքսեն ավելի բարձր, կավելացնեմ անասուններիս գլխաքանակը: Մորթում եմ անասուններս, վաճառում:

Ժամանակին արտահանման հետ կապված խնդիրներ են եղել, ուստի գյուղացին չի մտածում արտահանելու մասին:

Ցորենի ինքնարժեքի ու գնման գնի միջև տարբերությունը այնքան չնչին է, որ իմաստ ընդհանրապես չկա դրանով զբաղվելու: Այս դեպքում շատ մեծ ծավալի դեպքում կարելի է միայն օգուտ ունենալ:

Վայոց Ձորի հեռավորությունը Երևանից իրացումը դարձնում է ամենամեծ խնդիրը: Մինչև հասցնում ենք Երևան, գյուղմթերքի ինքնարժեքն ավելանում է, իսկ ինքնարժեքն այստեղ բավականին տարբերվում է Արարատյան դաշտավայրի բերքի ինքնարժեքից:

Գյուղացին պատրաստ է բերքը էժան տալ, եթե մթերող լինի:

Մինչև ցանքը պետք կարողանամ շուկան գնահատել, օրինակ՝ տաս հեկտար վարունգ ու պոմիդոր եմ ուզում ցանել, ի՞նչ եմ անելու այդ բերքը: Հաճախ ես չգիտեմ... Ինձ պետք է օգնել, որ ես հասկանամ ինչի՞ կարիք կա, ո՞ւմ եմ տալու այդ բերքը:

Սպառման մեծ խնդիր ունենք: Այս տարի մեղրն է շատ լավ՝ շատ մեղր կա: Բայց ձեռքը կրակն ենք ընկել՝ չենք կարողանում իրացնել:

Պարսիկները չեն գնում ոչխար 45000 դրամով: Նրանք բերում են տալիս են հայ գյուղացուն որ պահի, հավաքում տանում են: Գյուղացուն դարձնում են հովիվ, ոչ թե ֆերմեր:

Էսօրվա դրությամբ անասունի հատուկ կերը իննսուն ութ տոկոսը տնտեսությունների չի օգտագործում, և արդյունքում ստացվում է մաքուր էկո ապրանք, որը պետք է բարձր գին ունենա, բայց սովորական գնով է իրացվում:

Եղեգնաձորում շատ հողեր կան, որ չեն էլ մշակվում. մի քանի անգամ ցանում են, եկամուտ չեն ստանում, հիասթափվում են, էլ բան չեն անում, բայց այդպես չի:

Իմ այգու բերքը չեմ հանձնում գործարանին: Շատ ցածր գնով են մթերում: Նախընտրում եմ փոխել հարևանների հետ կարագի, մսի հետ: Հինգ անգամ ավելի եմ շահում:

Գյուղացին ստիպված ինքն է գնում խնդրում, որ իր բերքը տանեն ու չի կարողանում ռեալիզացնել ամբողջը:

Մենք ուրիշ երկրից ինչի՞ պետք է բերք կամ անասուն բերենք, եթե մերն ունենք: Պետությունը պետք է միջամտի այս հարցին ու սահմանափակումներ մտցնի:

Մասնավոր հատվածը խաբում է գուղացիներին, նրանք նախապես սահմանում են իրենց ուզած ցածր գինը, իսկ գյուղացին ստիպված այդ ցածր գնով վաճառում է:

Ես ուզում են երաշխիքներ ունենալ, երբ որ ունենամ գիշեր-ցերեկ կաշխատեմ:

Շատ կարևոր է ունենալ մթերման կետեր, հավաքագրման կետեր, գյուղատնտեսության նախարարությունը չպետք է նստի թուղթ գրի-ջնջի, այլ պետք է աշխատի մեզ հետ, մեզ մոտ:

Գյուղատնտեսության ոլորտում խոշորները թելադրողի դերում են: Կարող են մի տարի իրենց արտադրանքը շատ ցածր գնով իրացնել ու մնացածին դուրս մղել շուկայից: Հետո մյուս տարի, երբ արդեն ուրիշ խաղացողներ շուկայում չկան, գինը զգալի բարձրացնում են:

Ժ. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԿՈՌՈՒՊՑԻԱ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ

Գյուղացու կողքին ոչ ոք չի կանգնում:

Գյուղական համայնքներում ներդրումներ են կատարվում, բայց հաճախ դրանք համայնքի պահանջով չեն լինում: Համայնքը ինքը պետք է խնդիրը տեսնի և ներդրում պահանջի:

Համայնքների արդյունավետ կառավարումը բացակայում է:

Պետությունը պետք է կարողանա որևէ կերպ մասնակցություն ունենալ տեղական գյուղատնտեսական արտադրանքի առաջնայնությունը ապահովելու համար:

Բնապահպանության նախարարությունը ինչու չի հետևում ձկնորսության ժամանակավոր արգելքին:

Ունենք պահպանվող տարածքներ, որտեղ անասուն արածեցնելն արգելվում է, բայց մեկ է արածեցնում են, բարձիթողի վիճակ է:

Տարիներ շարունակ մեր տարածաշրջանում կարողացել ենք ինքնաբավ գյուղատնտեսություն ունենալ: Համակարգման ու ճիշտ տեղաբաշխման հարց է:

Նույն հողակտորի վրա տարիներով նույն բան ցանելը բերում է հողի բերրիության կորստի: Բայց այսօր գյուղապետը չի կարող գնալ ու գյուղացու ձեռքից հողը առնել կամ չթողնել, որ նույն բանը ցանի: Պետք է պետությունը դա կարգավորի, ասենք օրենքով:

Անգամ եթե ամեն ծառի մոտ մի նախարար կանգնի, եթե ցուրտ եղավ ու ջեռուցում չեղավ, կկտրեն ծառերը:

Պետությունը պետք է դառնա գյուղացու գործընկերը:

Սոցիալական համակարգից գնացել են կապիտալիստական, մարդիկ պետք է սրտացավություն ունենան, որ աշխատեն:

Այսօր պետությունը անհայտ մարդկանց միջոցով է տալիս վակցինան, որը փորձարկված չէ, և խնդիրների դեպքում բերողը պատասխանատվության չի ենթարկվում:

Աշխարհում մինչև մրցակցություն չլինի, զարգացում չի լինի:

Եթե վարակ է տարածվում գյուղացին է փորձում կանխել այն, պետությունը չի խառնվում:

Այսօր հսկողության պակաս կա թունաքիմիկատների ու պարարտանյութերի նկատմամբ: Օրինակ, գյուղացին կարող է թույն փչել այն տեղը, որտեղ մեղուներն են այցելում:

Մարզի ռազմավարության մեջ կարևոր է հստակ սահմանել գերակա ուղղությունները և շարժվել դրանց ուղղությամբ, այլ ոչ թե թողնել թղթի վրա:

Պետությունը մոռացել է անասնապահության ոլորտի խնդիրների մասին դրանով զբաղվում են միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ:

Անհրաժեշտ է մշակութային հեղափոխություն, որպեսզի ամեն ինչը տեղը ընկնի:

Եթե մենք մեր երկրում ընդունում ենք տնտեսական մրցակցությունը, պետք է դա ներդնենք նաև մեր առօրյա կյանք:

Մարզպետարանում նստած են մարդիկ, ովքեր պետական աջակցությունները ճիշտ չեն վերաբաշխում և մարզպետարանները պետք է կազմալուծել:

Հիմա այնպիսի վիճակ է, որ մարդիկ հող ունենալով, նույնիսկ չեն գնում վերցնելու սեփականության վկայականը կադաստրից:

Չունես գյուղատնտեսություն, չունես երկիր:

Նախկին գյուղնախարարի անունը լսելի վրաներս դուրս է տալիս. պատահական մարդիկ են, որովհետև մեզ մոտ ընտրությունները փողով էր:

Պետությունը պետք է լինի գյուղացու կողքին, բայց գյուղացին էլ պետք է լինի պետության կողքին:

Գյուղմթերքի գների կայունացումը մինչև գյուղացին չզգա, ոչ մեկին չի վստահի:

Եթե ցանկանում եք Հայաստանում գյուղատնտեսությունը զարգանա, ապա պետությունը պետք իր վրա վերցնի ոլորտը, թալանած փողերը վերադարձնի ու զարգացնի:

Պետությունը խանգարում է գործարարներին գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար:

Վստահություն չկա նույնիսկ մարզպետարանի կողմից ներմուծվող ու գյուղացուն տրամադրվող սերմերի հանդեպ:

Դատական համակարգի հանդեպ գյուղացին վստահություն չունի:

Օրենքները չեն գործել, ստեղծվել է այնպիսի համակարգ, որ մարդիկ այդ համակարգին չեն վստահում և ալտերնատիվ լուծումը գտնում են հանցավոր համակարգում ու եթե լուծումը այդտեղ էլ չի գտնվում նրանք արտագաղթում են ու շատ հողեր անմշակ են մնում:

Կայացած ֆերմերներին մեր երկրում պիտի փայփայեն:

Գյուղացին պետք է աշխատասեր լինի ու հույսը չդնի պետության վրա:

Պորտաբույծ գյուղացուն պետք է գյուղից վտարել:

Քիմիկատի որակի նկատմամբ հսկողություն չկա, անվերահսկելի չափաքանակով օգտագործվում է: Արդյունքում նաև հողն է փչանում, ու էդ ամեն ինչը ծովն է գնում:

Այսօր պետք է կտրել գյուղացու շղթաները, նրան ազատություն տալ ինքնուրույն գտնելու ճամփաներ:

Պետության մասնակցությունը գյուղոլորտի աշխատանքների պլանավորման հարցում:

Գյուղացիական կյանքը ճիշտ ձևով չի լուսաբանվում:

Գյուղացու հոգսը պետք է ճիշտ ներկայացվի:

Գյուղատնտեսությունը չպետք է մնա միայն գյուղացու ուսերին, պետությունը անպայման պետք է վերահսկի, ընդ որում ավելին, քան հիմա է:

Պետությունից ես աջակցություն չեմ սպասում, ես ինքնուրույն եմ ամեն ինչ արել. թող չխանգարի: Սահմանները խաղաղ լինեն, մենք ամեն ինչ կանենք:

Պետությունը պետք է շատ միջպետական պայմանագրեր կնքի:

Մենք գյուղատնտեսական քաղաքականություն չենք տեսնում:

Գյուղատնտեսական քաղաքականությունը մշակում են ասֆալտի վրա:

Գյուղացիները պետք է մասնագիտական ներկայացվածություն ունենա պետական գերատեսչություններում, որպեսզի իրենց հարցերը ավելի հստակ բարձրացվեն:

Իսլանդիայում իսլանդացու հետ ամուսնացողին պետությունը գումար է տալիս. մեր գյուղերում միջին տարիքը որքան է: Պետք է նպաստել գյուղերի զարգացմանը:

Պետությունը պետք է ռազմավարական մթերքներ արտադրողի կողքին կանգնի:

Գյուղացին այնքան է խաբվել, հիասթափվել, որ չի ուզում ոչ մեկի հետ աշխատել, ասում է, արի և տար իմ բակից իմ արտադրանքը, ոչ մեկ գործընկեր չի էլ փնտրում, պայմանագրային հարաբերություններ ոչ մեկին պետք չեն:

Պետությունը պետք է բոլոր ճանապարհները բաց թողնի և գյուղացուն հնարավորություն տա ինքնուրույն ընտրություն կատարել:

Գյուղատնտեսության ճիշտ PR էլ է անհրաժեշտ:

Սովետական տքնաջան աշխատող մարդու ողնաշարը ջարդեցին, եվրոմուտիլովշիկները այնպես արեցին, որ գյուղացին այլևս չուզենա աշխատի: Հաջորդ սերունդը գյուղատնտեսությամբ ընդհանրապես էլ չի զբաղվի:

Գյուղատնտեսական հանցանքների դեպքում գյուղացին մեկը մյուսի վրա գործ չի տալիս:

Գյուղվարչությունը պետք է որոշի, թե որ տարածքին ինչ սերմնացու է պետք, ոչ թե նայեն, թե ինչն է էժան ու դա բերեն, բաժանեն:

Այսօր ամեն ինչ կենտրոնացած է մեգապոլիսում՝ Երևանում: Հռոմի ու պրովինցիաների պես, Հռոմը պրովինցիայից տեղյակ չէ, պրովինցիան էլ՝ Հռոմից: Մեկը թշվառության մեջ է, մեկը՝ փառքի:

Պարենային ինքնաբավության խնդիրը պետք է լուծվի, հողերի մեծ մասը չի մշակվում:

Երիտասարդ ընտանիքները, որոնք որ նախաձեռնում են գյուղատնտեսությամբ զբաղվել, պետք է ունենան առավելություններ:

Այսպես թե այնպես մարդիկ տարածաշրջանում ապրում են ու իրենք ուզում են այս հողը մշակել:

Գյուղացու և հողի հոգեբանական կապն է կտրվել:

Վառելիք էին տալիս նպատակային օգտագործման համար, ասենք, հազար հեկտար մշակելու համար, բայց այդ հազար հեկտարը չէր մշակվում, վառելիքը գյուղում էր օգտագործվում:

Անհրաժեշտ է, որ պետությունը գյուղացու մոտ վերականգնի իր վստահությունը, որ կանչեն մի բան առաջարկեն, հավատամ ու հետևեմ: Կոռուպցիան պիտի վերացվի սուբսիդավորման ու մյուս բնագավառում, օրինական լինի, բանկերը լոմբարդներ չլինեն գյուղ վարկի համար:

Պետք է ապահովագրել նաև կառավարության սխալներից: Փորձ ունենք, որ Գյուղնախարարի որոշումներից տուժել կամ փչացել են այգիները:

Մեր ժողովուրդը ամեն ինչի պատրաստ է, եթե համոզված լինի, որ օրենքները իսկապես կգործեն:

Մենք անհնարինը անում ենք, օգնող չկա:

Գյուղատնտեսությունը պետք է հեռու լինի քաղաքականությունից:

Այսօր մեր ջրային ռեսուրսները սխալ կառավարման արդյունքում այլ պետություններին է գնում, մենք էլ մնում ենք առանց ջուր: Մինչև ջրի հարցը չլուծվի, ոչ մի հարց չի լուծվելու: Այս հարցը պետք է պետությունը լուծի:

Գյուղնախարարության աշխատակիցները իրենց խորհուրդներով ու զգուշացումներով ուշանում են:

Գյուղնախարարությունը կարող է մասնակցել որակյալ պարարտանյութերի ներմուծման գործում, հակառակ դեպքում օլիգարխները առաջնորդում են բիզնես շահով, ոչ թե արդյունավետությամբ:

Ակնհայտ է, որ այս ոլորտում կա վերահսկողության բաց, պետք է ճիշտ աշխատի ողջ համակարգը, բոլոր շղթաները: Կա հսկայական օրենսդրական բաց:

Մարզպետարանի հետ պետք է աշխատել, բաշխել, թե, օրինակ, այս տարի, ի՞նչ է ավելի անհրաժեշտ արտադրել. էսքան տոննա խաղող, էսքան կարտոֆիլ... Մենք ինչպե՞ս իմանանք, թե ինչի կարիք կա: Էս տարի վարունգը թանկ էր, որոշում ենք հաջորդին վարունգ ցանել: Պլանավորում ընդհանրապես չկա:

Գյուղնախարարությունը պարարտանյութերը ուշացնում է:

Սուբսիդավորման ապրանքները համայնքապետը բաժանում է ծանոթ բարեկամներին:

Սուբսիդիան ձևի համար հայտարարվում է, օդի մեջ անհետանում:

Կոռուպցիայի պատճառով սուբսիդավորվող տեխնիկան գյուղացուն վաճառվում է անհամեմատ թանկ գնով:

Երբ այգիս ցուրտը տարավ, որտեղ տարիներով 15 աշխատող եմ ունեցել, դիմեցի մարզպետարան, որ ցածր տոկոսով վարկ տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին մերժել անհիմն պատճառներով, խաբեբայության նման մի բան էր սա:

Գյուղացին վարկերի տակ է ինչպես բնության և պետության քաղաքականության, այնպես էլ միջոցների ոչ ճիշտ կառավարման պատճառով:

Վարկերը տրամադրելուց գյուղացին խաբվում է:

Նախ պետք է պահենք հողը, լավ հող ունենանք, պետք է պետությունը կես գին դարձնի կալիումական աղի և ֆոսֆորաթթվի գինը, որ հողը նորից իր գործը անի: Պետությունը միայն վարկ տալու համար չէ: Գյուղատնտեսությունը պետք է ճանաչվի առաջին ռազմավարական ուղղություն:

Մեզ մոտ գյուղատնտեսության խնդիրը հիմնային է, մինչև արմատական խնդիրները չվերացնենք, որևէ լուծում չի լինի:

Յուրաքանչյուր մարզ ունի իրեն յուրահատուկ գյուղատնտեսություն, ամեն մեկս պիտի անի այն, ինչ հնարավոր է անել և ոչ թե այն, ինչ ուզում է:

Պետության կողմից տրված աջակցությունը պետք է լինի ուղիղ գյուղացուն ու որպես միջնորդ չհանդիսանա համայնքապետարանը:

Որոշ վայրերում գյուղատնտեսությունը զարգացնելու փոխարեն, տուրիստական կետեր են ստեղծում, որոնք, թվում է, ավելի քիչ արդյունավետ է:

Մենք նոր զարգացող երկիր ենք, բայց անցում ենք կատարել բացարձակ լիբերալ հարաբերությունների: Մինչդեռ պիտի ընտրեինք պետության մասնակցության տարբերակը:

Պետության տրամադրած դիզվառելիքը անորակ է, որի օգտագործման պատճառով վնաս է կրում տեխնիկան:

Իսրայելը անհող երկիր է, բայց այսօր առաջատար է գյուղատնտեսության ոլորտում, որովհետև կառավարիչը այնտեղ իր անձնական շահի մասին չի մտածում: Մեզ մոտ սերունդներ պիտի փոխվեն, կոռուպցիոն ռիսկերը շատ մեծ են:

Այսօր ստեղծված քաղաքական իրավիճակի պատճառով գյուղապետերը ոչ մի ծրագիր չեն իրականացնում՝ մտածելով, որ շուտով նա այլևս այդ պաշտոնին չի լինի:

Պետական գործարանը շահույթի հետապնդման խնդիր չունի և կարող է ավելի բարձր գնով մթերել ապրանքը:

Մեր երկրում միջոցները այնքան են փոշիացված, որ անիմաստ է մտածել գյուղատնտեսության զարգացման մասին:

Գյուղատնտեսության բնագավառում կառավարման առումով մասնատվածություն կա:

Պետությունը գյուղատնտեսության ոլորտում պետք է լինի առաջին բիզնեսմենը:

Մեր երկրի նման տնտեսություն ունեցող երկրի համար կարևոր է պետության ուղղակի մասնակցությունը գյուղատնտեսությանը:

Գյուղատնտեսության վարման տեսանկյունից, եթե գնահատականը լինի տաս, մեզ մոտ ամենաշատը երկուսն է գնահատականը:

Ջուրը մեր մարզում ամենագլխավոր խնդիրն է, իսկ պետական կառույցները սին խոստումներ են տալիս:

ՋՕԸ շատ անարդյունավետ են աշխատում, եթե ես դատի տամ անգամ, ես տանուլ կտամ, ես պաշտպանված չեմ իրենց վատ գործունեությունից. իրավական դաշտում պետք է փոփոխություններ իրականացնել: ՋՕԸ մեզնից չի վախենում, ինչպես ուզում է, այնպես էլ վարվում է: Մենք այսօր ոչ մի ոլորտում պաշտպանված չենք:

ՋՕԸ ոչ մի պատասխանատվություն չի կրում ոչ մի բանի համար, մի բան էլ նա է դատի տալիս գյուղացիներին:

Գյուղատնտեսության վերաբերյալ լրատվությունը պետք է պրոֆեսիոնալ լինի, մի սխալ բառը կարող է ազդել ամբողջ ոլորտի վրա:

Մենք ինքներս մեր երկրի գյուղատնտեսությունը դրել ենք ծանր պայմանների մեջ:

Մարզպետարաններին կից գյուղատնտեսական բաժինները պետք է ավելի արդյունավետ աշխատեն:

Դժգոհ ենք գյուղնախարարության աշխատանքից: Պետական կառավարման ինստիտուտի զարգացման խնդիր կա:

Սպանդանոցի օրինակով ասեմ, որ պարզվեց, որ ամեն անասունից իրենց բաժինն ունեին: Պետք է եթե մի տեղ լինի հանձնելու, կարևոր է համակարգային մոտեցում, որ ամեն ինչ կարգավորվի ու խնդիրներ չլինեն:

Մենք ռեսուրսներ ունենք գյուղատնտեսությունը զարգացնելու համար. ճիշտ չենք կառավարում:

Մինչև նախարարությունը չհրահանգի, ԳԱՄԿ-երը ոչ մի ձայն չեն հանում, իրենք պետական աշխատող են՝ վախեցած:

Այսօր համար առաջին խնդիրներից նաև գյուղացու հավատի վերականգնումն է:

Պարարտանյութերի շուկան կարգավորել է պետք:

Պետք է համակերպվել ստուգողների, ստուգումների հետ, որ կարողանաս արտադրանքդ իրացնել:

Չկա ոլորտ որտեղից պետք է սկսել: Բոլոր ոլորտներում խնդիրներ կան: Համակարգային փոփոխություն է պետք:

Գյուղատնտեսական շղթային պետական համալիր կարգավորում է անհրաժեշտ. սածիլի ձեռքբերումից մինչև արտադրանքի վաճառք:

Նախկին իշխանությունների ժամանակ ապրանքը վերցնում էին պաշտոնյաներին պատկանող հողատարածքներից, սովորական գյուղացին բերքը չէր կարող իրացնել:

Մի քանի հոգի այսօր ամբողջ շուկան աղտոտում են, ինչ ուզում, այն էլ վաճառում են, սերմերի բիզնեսը այսօր Բերբերյանինն է, ու իրենք էլ փչացնում են մեր տնտեսությունը:

Պետությունը սովորել է, ամեն ինչ դնում է համայնքի վրա, որ պահի անասնաբուժ, բայց սա պետության վերցնելիք միջոցառումներն են:

Գյուղացուն պետք է օգնել, որ իմանա, թե ինչ կուլտուրաներ մշակի... Օրինակ՝ ԽՍՀՄ-ի ժամանակ խորդենի էինք մշակում, բայց հիմա չգիտենք ինչ անենք: Մենք մշակող ենք, իսկ հիմա ստիպված ենք ժամերով շուկաներում նստել: Պետությունը պիտի մեզ հուշի, թե ինչ է անհրաժեշտ մշակել և մեր արտադրանքի իրացման հարցը լուծի:

ՋՕԸ-երում կոռուպցիայի բարձր մակարդակ է:

Ցանկացած բուժանյութի խանութ մտնենք, ամբողջը կրիմինալ է:

Հիմնականում ուժեղին պիտի օգնեն որ թույլերը տեսնեն, ձգտեն ուժեղանալ:

Թույլին փոքր չափով պիտի օգնեն, մեծին՝ մեծ:

Թող գյուղացին չաշխատի, տեսնեմ քաղաքացի կինը ո՞նց ա զոնտիկի տակ քաղաքում ման գալու...

Մենք այսօր մեր թոռների հացն ենք ուտում, տաս տարվա մեջ մեր հողը շարքից դուրս է գալու:

Գյուղատնտեսության նախարարությունը չի կարող ստանձնել պատասխանատվություն, քանի որ զրկված է ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու իրավունքից:

Ի տարբերություն եզդիների, մենք գերադասում ենք գյուղատնտեսությամբ զբաղվելուց բացի նաև «ապրել»: Այսօրվա գյուղատնտեսությունը ենթադրում է առավոտից իրիկուն անհոգնել աշխատանք:

Մենք չենք կարող երկու հարյուր տարվա ճանապարհը երկու տարում անցնել:

ՋՕԸ-ի կառավարման մեծ խնդիր ունենք:

Որակի ստուգման գործում էլ կոռուպցիա կար:

Գյուղատնտեսության վիճակը կատաստրոֆա է՝ հաշվի առնելով մեր երկրի վիճակը հատկապես, զենքից ոչ պակաս կարևոր է պարենով ապահովությունը:

Գյուղապետարանն էլ որ ձեռք է բերում տեխնիկա, ԽԾԲ-ով են տրամադրում:

Պետությունը պետք է մտածի գյուղացուն օգնի, հարստացնի: Այսօր գյուղի բնակչության տասը տոկոսնա իրոք գյուղատնտեսությամբ զբաղվում, մնացածը ուղղակի մի կերպ յոլա են տանում:

Գյուղացիների իրավունքների մասին խոսողները կողմնապահ են կամ պրոֆեսիոնալներ չեն:

Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել **բնապահպանական** խնդիրներին:

Բնապահպանական շերտերը իսպառ վերացել են, ժամանակին կային ու շատ օգնում էին:

Բոլոր հողերը արդեն սեփականացվել են ու **բնապահպանական** շերտեր ստեղծելը դարձել են դժվար:

Դաշտապաշտպան շերտը պետք է ստեղծվի պետության կողմից, քանի որ անհատ գյուղացին այդքան հնարավորություն չունի:

Անասնապահությունը զարգանում է եզդիական գյուղերում, բայց մերոնք ասում են, որ արոտավայր չկա ու մեր մոտ չի զարգանում:

Ապահովագրական ընկերությունների վերաբերյալ **վստահություն** չկա:

Պետությունից նվեր չենք ակնկալում, պետք չէ: Ճիշտ քաղաքականություն ենք ակնկալում գյուղատնտեսության ոլորտում:

Նպաստները, որոնք տրամադրվում են անապահովության համար, պետք է գյուղացուն տրամադրվի:

Մեզ մոտ **կլանային** համակարգ է գործում: Եթե ծանոթ ունես, կկարողանաս ջրել քո այգին:

Երեք տարի **ՋՕԸ**-ն ժողով չի արել, բնակչությանը հաշվետվություն չի ներկայացրել:

Սուբսիդավորման ցանկացած տարբերակ օգտակար լինել, կարևորը կոռուպցիա չլինի:

Մեր իշխանությունները և քաղաքացիներն ապրում ենք տարբեր իրականություններում:

Նախարարության կողմից կան ստեղծված աջակցության կենտրոններ, բայց արդյունավետ չեն աշխատում. մոտ չեն նրանք հասարակ գյուղացուն:

Համայնքապետը պիտի վստահություն վայելի գյուղացիների շրջանում ու աղետի դեպքում ճիշտ հաշվի վնասները:

Մասնավորը առանց պետության աջակցության չի կարող զարգացնել գյուղատնտեսությունը:

Մինչ այժմ մարզպետարանից ոչ մի պաշտոնյա չի եկել և չի հետաքրքրվել գյուղացու խնդիրներով:

Ժողովուրդը հիասթափված է ամեն ինչից, մեզ շունչ է պետք, որպեսզի «դուխով» կպնենք աշխատանքի:

Բնապահպանության նախարարությունը չեմ լսել որ խառնվի գյուղացիների գործերին, արգելի անասուններին մտցնել այս կամ այն տարածք:

Հողային օրենսգրքում փոփոխություններ պետք է իրականացվեն:

Գյուղապետը թևերը կտրած մարդ է, նա միայն թիվ տալու համար է աշխատում:

Գյուղապետարանները միայն քաղաքական կառույցից պետք է վերածվեն տնտեսական կառույցների, որպեսզի ավելի արդյունավետ իրականացվի գյուղատնտեսությունը, սա հնարավորություն կտա ավելի խստացնել վերահսկողությունը:

Կոմունիստները որ հետ գան, ամեն ինչ իրա տեղը կընկնի:

Չկա մի բնագավառ, որ ստուգող մտնի ու ապականված չլինի: Մի քիչ արդարություն կա ներքին օղակներում, բայց մեզ էլ բանի տեղ դնող չկա:

Միևնույն է մենք աշխատելու ենք, մեր խնդիրներն ենք փորձելու լուծել, քննարկելու ենք, հետո նորից գնանք մեր գործին, մեր իրականությանը:

Համայնքները խոշորացնելու փոխարեն, պետք է մարզպետարանները ցրել, սարքել շրջանային միավորներ:

Մարզպետարանները պետք է անհատապես զբաղվեն գյուղացիական տնտեսություններով:

Կառավարության համապատասխան աշխատակիցները պետք է մասնագետ լինեն:

Գյուղատնտեսությունը որպեսզի զարգանա, պետք ա այն դիտարկել որպես բիզնես, օրինակ կաթից պետք է արտադրել ոչ թե չանախ, այլ ռոքֆոր պանիր:

Տրակտորային պարկը, թունաքիմիկատներով բուժման կենտրոնները պետք է համայնքի ենթակայության տակ լինեն:

Մեր գյուղատնտեսությունը զարգացնելու համար մի որևէ զարգացած գյուղատնտեսությամբ երկրի օրինակ վերցրեք:

Եթե գյուղատնտեսության մեջ ներդրումներ չանեն, ոչինչ չի փոխվի:

Պետք է դիտարկել, տեսնել, տալ հանձնարարական: Եթե չկատարի, ստուգում անել ու պատժել:

Կառավարությունը փող է տալիս պարապ հաստիքների, որոնք փաստացի ոչնչով չեն զբաղվում պետք է դա վերացվի:

Գյուղատնտեսության զարգացումը մի քանի պրոցեսների ամբողջություն է: Մի փուլով չի կարող լուծվել:

Մինչ հիմա խախտողների հանդեպ միայն եղել է պատժելու քաղաքականություն: Պետք է որոշակի ժամանակ տալ, եթե չլուծի խնդիրը, նոր պատժել:

Գյուղացին շատ աշխատասեր չի, ցավոք, գյուղացին միշտ սպասում է օգնության:

Պետք է պետությունը գյուղացուն ստիպի, որ իր հողի վրա տնտեսություն վարի, կամ եթե դա չի անում, ապա վարձակալության դիմաց տա այն մարդուն, որը կօգտագործի այդ հողը:

Եթե ինչ որ մեկը իր հողը չի մշակում, թող ձեռքից պետությունը վերցնի:

Եթե իրապես գյուղին ուշադրություն դարձվի, գյուղացին կմնա իր համայնքում, սա պետական կարևորության խնդիր է:

Պետք է գյուղացիների գործունեության քարտեզագրում արվի, ըստ այդմ էլ կորոշվի ինչի կարիք կա:

ՏԻՄ փոփոխություններ են պետք իրականացնել, մի երեսուն տարի էլ էդ փոփոխությունները կգնան, մենք կմեռնենք:

Ամենակարևորը այսօր նա է, որ մենք պետք է նորովի մտածենք, համախմբվենք, միասին իրար հետ աշխատենք, հույսներս չդնենք միայն պետության վրա: Տարիների փորձը ցույց է տալիս, որ պետությունը մեր բոլոր հարցերը չի կարող լուծել:

Քանի խելոքները մտածում են, պետք է գժի քայլ արվի:

Եթե չկա գյուղատնտեսության հստակ ռազմավարություն չկա, մնացածն անիմաստ է:

Այսքան ժամանակ գյուղապետերն են յոլա տանում բնակչությանը. գյուղապետը բացի գյուղապետությունից ամեն ինչ անում է:

Մարզպետարանը վերահսկողության իրավունք չձոնի:

Պետական կառավարման համակարգը չի հասկանում գյուղացուն:

Մարդիկ պետք է միավորվեն, մի կուլտուրա արտադրեն. պետությունն էլ պիտի ուղղորդի այս ամենը:

Նախ պետք է համապատասխան օրենսդրական դաշտ ունենանք, հետո նոր մտածենք ինչպես աշխատենք:

Վայոց Ձորում անմխիթար վիճակում են գետերը: Դա լուրջ **բնապահպանական** խնդիր է:

Մենք սպանում ենք մեր **բնաշխարհը**, ձուկ չկա ... և դա կապած է ՀԷԿ-երի հետ:

ՀԷԿ-երը մեծ ազդեցություն են ունենում եղանակի և հողի վրա: Հիմա ամեն ինչ խախտվել է, ոչ մի բան հնարավոր չէ կանխատեսել:

Եղեգիս գետի վրա մոտ տասը ՀԷԿ կա, դա ո՞նց կարող է չազդել բնության վրա:

Անտառը վերանում է ՀԷԿ-երի ու հանքերի պատճառով:

Բնությանը այստեղ ոչ թե գյուղատնտեսությունն է թշնամի, այլ բիզնեսը:

Գյուղացին ոչ մի անտառ չի հատում, դա մի մեծ բիզնես է, որի հետ գյուղացին կապ չունի:

Անտառը մեզ համար օգտակար է: Անպայման պիտի լինի, որ ժողովուրդը հատապտուղ հավաքի:

Շատ են եղել գյուղատնտեսության թեմայով քննարկումներ, սակայն արդյունք չեն տվել:

Բնապահպանները թույլ չեն տալիս սպանել գիշատիչ կենդանիներին: Կամ պետք է գայլերին վերացնենք, կամ ոչխարներին:

Լիդիան Արմենիան եկավ մեզ մոտ, հիմա ոչ մեկ չի ուզում այլևս անասնապահությամբ զբաղվի:

Վայոց Ձորում հատուկ մոտեցում է պետք արդյունավետ գյուղատնտեսական գործունեություն կազմակերպելու համար. հողը էրոզիայի է ենթարկված, կրծողների դեմ մեր ուժն էլ չի պատում, Նորավանքի շուրջ ժայռերը կարող են մի օր շուռ գալ, գետը կտրել ու զրկել ջրից, հողի բաղադրության մեջ կավի քանակությունը չափազանց մեծ է: Այս խնդիրները լուծելու համար պետական մոտեցում է պետք. հասարակ գյուղացին, ինքնուրույն կամ կոլեկտիվ, սրանց լուծում չի կարող տալ:

Արփան տարբեր համայնքներով է անցնում: Վեց մետր հեռավորություն են թողել գետից բոլոր համայնքներում: Մինչև օտարման գոտիների սահմանները այդ վեց մետրերի վրա բարդիներ կարելի է

տնկել: Նախ՝ գետի ափերն ամրանում են, ճյուղերը վաճառվում են որպես ցախ, բարդու փայտն էլ՝ շինանյութ: Այս ամենը առնվազն տաս տարվա ընթացքում:

Համայնքների խոշորացումը շատ վատ է ազդում նաև գյուղատնտեսության վրա:

Պետությունը պետք է կարգավորի շուկայական տնտեսությունը:

Վերահսկողությունը պետք է խիստ լինի, քանի որ հակառակ դեպքում չարաշահումներ են լինում, չնայած նույնիսկ կառավարության պատվիրած սերմերն են անորակ:

Գյուղացին նման է երեխայի այսօր. անընդհատ սպասում է իր ծնողի՝ պետության օգնությանը:

Մեր մարզի պես աղքատ մարզի համար կենսական է պետության աջակցությունը:

Էնքան ենք միջամտել բնության գործերին, որ հիմա բնությունը «նագլիացել» ու մեզ պատասխան է տալիս:

Գյուղատնտեսությունը այսօր մահամերձ է, կամ ավելի վատ... և վերակենդանացման կարիք կա:

Գյուղում բիզնես չկա, գյուղը զբաղված է սեփական ինքնաբավությունը ապահովելու խնդրով:

Եթե գյուղատնտեսությունը զարգանա, արտագաղթի տեմպերն էլ կնվազեն, սա պետական անվտանգության խնդիր է:

Պետք է տեսնել, որ գյուղում ով ավելի շատ է զբաղվում գյուղատնտեսությամբ կամ անասնապահությամբ ըստ այդմ տա օգնություն:

4. Սոցիալական երկխոսություն

Ա. ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

Մեր մարզի վարելահողերը շատ քիչ են, գյուղացու հողատարածքները փոքր են, գյուղատնտեսությունը չի արդարացնում իրեն:

Փոքր ծավալ ունեցող տնտեսությունները **չեն կարող մրցել** մեծ տնտեսությունների հետ:

Փոքր տնտեսության վրա ծախսված **միջոցները անիմաստ կորչում են**:

Գյուղատնտեսությունը վատ վիճակում է մեզ մոտ, սխալ ձևով **սեփականաշնորհում** արեցին, տարբեր զոնաների բաժանեցին: Ցանքաշրջանառությունը չենք կարողանում իրականացնել:

Գյուղացին կաշկանդված է, քանի որ հողի **սեփականաշնորհումը** սխալ է կատարվել:

Գյուղացին մի հեկտար հող ունենալով ոչ մի օգուտ չի կարող ստանալ: Պետք է **մեծացնել հողակտորները**:

Մեր համայնքում **հողակտորները փոքր են**, մարդիկ մասսայաբար հրաժարվում են հողագործությունից, քանի որ փոքր հողակտորի վրա տնտեսություն վարելը մեծ ինքնարժեքի է բերում: Մարդիկ ուղղակի սոված չմնալու համար զուտ իրենց ընտանիքի համար են բույս աճեցնում:

Անտեր լիքը հողեր կան, որ տերերը Ռուսաստաններում են, դրանց կարգավիճակը ոնց պետք է լինի:

Առանց մարդկանց սեփականության իրավունքը ոտնահարելու, պետք է մտածել հողակտորների **խոշորացման** մասին:

Կարելի է ստեղծել գյուղատնտեսական կոլեկտիվներ, **անջրդի հողատարածքների** նկարներն ուղարկել այդ կոլեկտիվներին, նրանց ապահովել գյուղատնտեսական տեխնիկայով և կողմնորոշել, թե ինչպես այս կոլեկտիվները կարող են մշակել այս տարածքները:

Բազմաթիվ համայնքներ կան՝ **անմշակ հողերով**, որոնք ավելանում են: Անհրաժեշտ է նախաձեռնող խումբ, որը կգնահատեր, թե ինչքան անմշակ հող կա համայնքում, կմիավորեր դրանք, բաժնետերեր կդառնային մի մեծ տնտեսության ու կսկսեին շահավետ տնտեսություն վարել:

Հացառատ թաղամասում մանր-մունր հողակտորները անտերության են մատնված, տերերը Ռուսաստանում են, թող **միավորեն** այդ հողերը, տան ֆերմերներին, որ մշակվի:

Մեծ հողակտորի համար պետք է նաև շատ տեխնոլոգիաներ կիրառել, իսկ փոքրի վրա **ձեռքով էլ կարող ես աշխատել**:

Մեծ հողակտորը **մեծ ծախսեր** է պահանջում, **շատ աշխատողներ**, **տեխնոլոգիաներ**:

Պետք է կոոպերատիվների այնպիսի ձևեր մշակենք, որոնց դեպքում յուրաքանչյուրը կպահպանի իր **սեփականությունը**:

Թող ներդրողներ գան, մեր հողերը անհատույց տրամադրենք, մենք էլ գնանք նրանց մոտ որպես վարձու աշխատող աշխատենք: Միաժամանակ այդ հողերը մնան որպես մեր **սեփականություն**: Միայն թե թող մեզ մոտ գյուղատնտեսությունը կայանա ու զարգանա:

Մենք չենք ուզում կոլխոզ ստեղծենք, մենք ուզում ենք հողը **վարձակալման** գրասենյակ ստեղծել, որտեղ մարդիկ միասին աշխատեն և միասին էլ օգուտ քաղեն:

Անհատական կոոպերացիա պետք է լինի, այսինքն, կոոպերատիվի անդամները պետք է, օրինակ, նույն բանը արտադրեն, բայց ամեն մեկը իր հողատարածքը ունենա, կամ իր ջերմոցը:

Հայերի **մենթալիտետի** պատճառով երբեք հողերը իրար չեն միացնի:

Գյուղացին պետք է **հոգեբանորեն** էլ պատրաստ լինի խոշորացմանը:

Հայ ազգի **մենթալիտետը** թույլ չի տալիս միավորված աշխատել:

Կոոպերատիվը շատ լավ բան է, բայց մեր **մենթալիտետի** դեպքում մի քիչ անհնարին է:

Կոոպերացիայի ձախողման հիմնական խնդիրներն են՝ **մենթալիտետը**, իրար հանդեպ **անվստահությունը**, **ֆինանսների** բացակայությունը, աջակցության բացակայությունը:

Կոոպերատիվում գլուխ պահողներ շատ են լինում, դրա համար էլ **վստահություն** չկա դրա հանդեպ:

Կոոպերատիվի ձախողման պատճառը անդամների՝ միմյանց **չվստահելն** է:

Կոոպերացիաները ժամանակին անկում ունեցան, որովհետև միմյանց հանդեպ **վստահություն** չունեին գյուղացիները:

Գյուղատնտեսության զարգացման համար **անհաժեշտ է** գյուղացիական տնտեսությունների միավորում: Միասին ավելի հեշտ է հաղթահարել խնդիրները:

Փոքր հողատարածքները մարդկանց եկամուտի հիմնական աղբյուրը չեն, մարդիկ հակված չեն խոշոր ներդրումներ անել:

Մեր հողերը **փոքր** են և իմաստ չկա թանկ գներով նոր տեխնոլոգիաներ գնել:

Գործից չհասկացող գյուղացիներին կարելի է **միավորել և կցել** հաջողակ գյուղացիներին:

Մարդիկ **սկսել են հավատալ** կոոպերացիաներին մեր տարածաշրջանում:

Կոոպերատիվների ստեղծումը միակ ճիշտ ճանապարհն է մեր երկրում: Շատ կարևոր բան է, որ կարող անում ես դրսում հանդես գաս, որպես **իրավաբանական անձ**:

Կոոպերացիաներ ստեղծելը մեզ համար բավականին բարդ է եղել **սկզբից**. մարդիկ **բացարձակապես չէին հավատում**, մտածում էին էլի կոլխոզ ենք ստեղծում:

Այսօր մարդիկ **ավելի բաց են**, ընդունում են մեր օգնությունը՝ կոոպերացիա ստեղծելու, գալիս են սեմինարների, լսում են ուրիշների խորհուրդները: **Առաջ այդպես չէր**...

Կոոպերացիան օգնում է շատ հարցեր ավելի **հեշտ** լուծել:

Տնտեսությունների միավորման դեպքում պետք է լինի ռեսուրսների համատեղ **կառավարում**:

Կոոպերատիվում **արտադրանքը** պետք է համամասնորեն բաժանվի, ով ունի մի հեկտար, դրան համապատասխան բերք պիտի ստանա ու **բաշխումն** էլ համամասնորեն պիտի լինի, ով ավել՝ ավելին:

Կոոպերացիան կայանում է **ինքնաբերաբար**, երբ մի քանի մարդ, տեսնելով խնդիրները, որոշում են **համագործակցել**:

Ունենք **ոչ ֆորմալ** խմբեր որոնք կոոպերատիվի չեն վերածվել բայց աշխատում են իրար հետ:

Պետք է տեղի ունենա **հողերի խոշորացում** ու ստացվի ոչ պետական կոոպերացիա, որի պատճառով արդյունք կլինի:

Կա կարտոֆիլագործների, չիչխանարտադրողների խմբեր որոնք ֆորմալ խմբեր են, որոնք աշխատում են իրար հետ:

Կոոպերատիվները այսօր սեփական արժեք ստեղծելու **հնարավորություն ունեն**՝ դրսի միջոցներով ու ծրագրերով անգամ,

Մեր պայմաններում կոոպերատիվները չեն գործելու, քանի որ հողերի չափերն են տարբեր, մշակում են տարբեր բաներ ու ազգային **մենթալիտետը** հաշվի առնելով կոնֆլիկտները շատ են լինելու: Ֆերմերային տնտեսությունն ավելի արդյունավետ եմ համարում:

Մեր **մենթալիտետի** դեպքում կոոպերացիան հնարավոր չէ:

Մեր հասարակությունը պատրաստ չէ կոոպերացիա ստեղծելու՝ մենք վարելու, **կառավարելու մշակույթ** չունենք:

Մանր տնտեսությունները չեն ցանկանում միավորվել, որովհետև դրանք ունեն յուրահատուկ **բնավորություն**:

Միավորման **կազմակերպիչները** գյուղատնտեսությունից շատ հեռու են: Սա շատ նուրբ խնդիր է:

Ով հողը ասֆալտից չի տարբերում, որոշում է միավորում կազմակերպել: Մեր տարածաշրջանում բոլոր տնտեսությունները **բաժանվում են**:

Կոոպերատիվի ստեղծումը դա **հինգ հոգու հարստացում** է:

Կոոպերատիվն **այսօրվա գաղափար չէ**, այսօր ամեն մեկը իր հողակտորն ունի, քիչ թե շատ վերամշակում ենք:

Գյուղացին **համաձայն չէ** կոոպերատիվների ստեղծմանը, որովհետև համաձայնություն չի լինում **բաշխման** հարցում:

Կոոպերատիվներում շղթան ամբողջական չի գործում, չկա **համագործակցությունը** և **աշխատանքի հավասար բաժանումը**:

Մեր մոտ կոոպերացիան **թղթի վրա** է:

Կոոպերատիվները ձեռք են տալիս միայն պետությանը, որ հեշտ կառավարի, ինձ դա **ձեռնտու չի**:

Կոոպերացիան լավ բան է, բայց **զարգացում չունի**:

Կոոպերատիվների գոյությունը **անիմաստ է** այս պահի դրությամբ:

Արարատյան դաշտի համար կոոպերատիվներ ստեղծելը **հետքայլ** է. այսօր կոոպերատիվների **ռիսկերը** ո՞վ է վերցնելու իր վրա:

Պետք է այնպիսի հարկային քաղաքականություն վարվի, որպեսզի կոոպերացիաները, խոշորացումը **ավելորդ բեռ** չդառնան. ցանկություն լինի մեծանալ:

Կոոպերատիվը, պիտի նորից **պլանային**

տեղեկացվածություն է պետք:

Կոոպերատիվների կանոնադրությունը փոխվել է, և **հինգ հոգին** էլ կարող են համարվել կոոպերատիվ, սա մի քիչ ավելի իրատեսական է: Կոոպերատիվների կանոնադրությունը փոխվել է, և հինգ հոգին էլ կարող են համարվել կոոպերատիվ, սա մի քիչ ավելի իրատեսական է:

Պիտի միավորվեն արտադրողները, որպեսզի կարողանան թելադրել իրենց **արտադրանքի գինը և իրենց աշխատանքի պայմանները**:

Ինչ տարբերություն գյուղացին **վարձու աշխատող** է, թե ֆերմեր:

Մասնավոր, այլ ոչ թե պետական խոշորացում է անհրաժեշտ: Անգամ եթե վարձակալությամբ իրականացվի խոշորացումը, չաշխատող գյուղացին էլ կսկսի աշխատել, թեկուզ որպես **վարձու** աշխատող:

տնտեսության անցնի, հակառակ դեպքում իրացման խնդիր կունենա:

Հողերի խոշորացումը վաղ թե ուշ լինելու է, ավելի էժան կնստի դրա մշակելը: Բայց առաջիկա տասը տարում դեռ **գյուղացին պատրաստ չի** լինի դրան:

Ես երբեք չեմ միանա կոոպերացիային, քանի որ հայի **բնավորության** պատճառով երկու հոգի նույնիսկ չեմ կարողանում լեզու գտնել, ինչպես կարող են մի քանի հոգի հաշտ ու համերաշխ համագործակցեն:

Կոոպերատիվների անհաջողության դեպքում միշտ մեղքը գցում են կոոպերացիայի **ղեկավարի** վրա:

Կոոպերացիայում ռիսկային է **միջոցների և ներդրումների անհավասարությունը**:

Կոոպերացիաներ ստեղծեցին, բայց եթե **մեր ձայնը չեն լսում**, էլ իմաստը որն է... կամ էլ կառավարման մոդելը պետք է փոխել:

Հայերը **թիմային խաղացողներ չեն** կոոպերատիվի մեջ միավորվելու համար՝ ամեն մեկը վերմակն իր վրա կքաշի:

Կոոպերացիան էֆեկտիվ գործոն կլինի, եթե չլինի **կոռուպցիա**:

Կոոպերատիվի **վերահսկողության** կարիք կա:

Մեզ մոտ գործում է հողերի ջրարբիացման ծրագիր, ստեղծվում են կոոպերատիվներ, բայց պետք է նայել հստակ ծառայում է նպատակին, թե ուղղակի «**պտիչկա**» է դրվում:

Կոոպերացիան միայն **թղթի վրա է**, իրականում մարդիկ **չեն կարողանում համագործակցել**:

Կոոպերատիվի ցուցակագրված անդամների մեծ մասը **տեղյակ չէ**, որ կոոպերացիայի անդամ է:

Կոոպերացիայի դեպքում **ծախսերը** բավականին մեծ են լինում:

Այս պահին գյուղացին ավելի **մրցունակ է անհատապես**, այլ ոչ թե կոոպերացիայի կազմում:

Հողերի միավորումը **անհնար է**, կոոպերացիան կարող է աշխատել **անասնապահության** բայց ոչ երբեք հողերի միացման հարցում:

Անասնապահության դեպքում միգուցե կոոպերատիվն արդարացված է, իսկ հողի դեպքում՝ ոչ, քանի որ մեծ ու փոքր հողատարածքներ կան: 91-ից հետո բացվեցին, բայց չգործեցին: Հիմա էլ չեն գործելու:

Անասնապահության ոլորտում ինչ որ տեղ հնարավոր է աշխատել կոոպերացիայով,

այգեգերծության պարագայում անհնար է:

Կոոպերատիվները պետք է քվոտայով աշխատեն, սովետի պայմանները պետք է փոխվեն կոոպերատիվներ կազմելու:

Օլիգարխները հարյուրավոր հեկտարներով հողեր ունեն մեր մարզում, ես ունեմ մեկ հեկտար, արդյոք օլիգարխը կմիավորվի մեկ հեկտար ունեցողի հետ:

Եթե իմ հողը **ջրի** մոտ է, լավ տարածք է, կյանքում չեմ համաձայնվի կոոպերացիայի մեջ մտնեմ ուրիշների հետ:

Մի կաթիլ մեղրի նման, պետք է շիրա տան, որ ժողովուրդը շահագրգռվի խոշորացմամբ: Թե չէ **դժվար կլինի** կոոպերատիվներ ստեղծելը:

Եթե կոոպերացիան ճիշտ կազմակերպեն, խնդիրներ չեն առաջանա: **Կոլխոզ** տեսել ենք, կոոպերացիան դրա մինի-տարբերակն է:

Քաղաքական համակարգը այնպես արեց, որ ժողովուրդը այսօր **թշնամացել** է, ինչ կոոպերացիա էլ ստեղծել:

Հեռավոր գյուղերում պետք է մարդկանց **պարզ բացատրվի**, թե ինչ է կոոպերատիվը, իրավունքները, պարտականությունները:

Ոչ թե կոոպերատիվի գաղափարն է վատը, այլ ուղղակի մարդիկ ովքեր զբաղվում են խնդրում **կոմպետենտ չեն**, նրանք **սրտացավ չեն**, դրա համար էլ գյուղատնտեսությունը հետընթաց է ապրում:

Կոոպերատիվն ունի մոտ երեսուն անդամ, բայց իրար **հանդիպում են միայն ժողովների ժամանակ**:

Գաղափարապես կոոպերատիվը շատ լավն է, բայց **պրակտիկայում անհնար է** իրականացնել:

Մեր կոոպերատիվը, որն ստեղծվել և միշտ աջակցվում էր Օքսֆամի կողմից, շատ էլ լավ աշխատում էր՝ հավասար պայմաններով, անգամ սոցիալական ծրագրեր էինք իրականացնում: Հիմա որ **այլևս աջակցություն չկա**, մենք չենք կարողանում արդյունավետ աշխատել:

Կոոպերատիվները նախկին **կոլխոզներն** են, ոչ մի բան չի փոխվել դրանց գործունեության մեջ:

Մարդիկ **սովոր են իրենց անհատական** տնտեսությունը վարել: Կոոպերատիվի կարիք չեմ տեսնում:

Կոոպերատիվի համար պետք է լինի նորմալ կանոնադրություն և ճիշտ **վերահսկողություն**:

Եթե մի քիչ **ժողովրդավարություն** լինի, կոոպերատիվը կաշխատի:

Դեռ **չի հասունացել այն պահը**, որ մենք հաջողված կոոպերատիվներ ունենանք: Տալիս են մի համակարգիչ ամբողջ կոոպերատիվին ու կռիվ է սկսվում այն օգտագործելու համար:

Կոոպերացիաները մեր մարզում օգուտ չեն տա, փոքր են մեր ցանքատարածքները, **անորակ են հողերը**:

Սովետի ժամանակ խոշոր էր, հետո էլի մասնավոր, հիմա նորից խոշորացում... մենք խոմ **էքսպերիմենտների** դաշտ չենք:

Մեր մարզում **հողերը փոքր են ու անբերրի**, խոշորացումը դժվար կլինի:

Խոշորացո՞ւմ, թե՞ ոչ. պատասխանը պետք է տալ՝ ելնելով համայնքի **առանձնահատկություններից**: Օրինակ՝ համայնքներ կան, որի բնակիչներն ավելի շատ ներգրավված են **ինտելեկտուալ աշխատանքում**: Արդյոք խոշորացումը նպատակահարմար է այստեղ: Պետք է բոլոր համայնքներում առանձին քննարկել այս խնդիրը:

Վայոց Ձորում հատուկ մոտեցում է պետք արդյունավետ գյուղատնտեսական գործունեություն կազմակերպելու համար. հողը էրոզիայի է ենթարկված, կրծողների դեմ մեր ուժն էլ չի պատում, Նորավանքի շուրջ ժայռերը կարող են մի օր շուռ գալ, գետը կտրել ու զրկել ջրից, հողի բաղադրության մեջ կավի քանակությունը չափազանց մեծ է: Այս խնդիրները լուծելու համար պետական մոտեցում է պետք. հասարակ գյուղացին, **ինքնուրույն կամ կոլեկտիվ, սրանց լուծում չի կարող տալ:**

Կոոպերացիա ստեղծելու արդյունքում շատ գյուղացիներ կդառնան ուղղակի վարձու աշխատողներ:

Հողերի կտրտվածությունը բերում է **գյուղտեխնիկայի** շահագործման անմատչելիության:

Եթե կոոպերատիվներին ես տրամադրում

Եթե պետությունը կոոպերատիվ է ստեղծել, բայց **կարիքները հաշվի չի առ**նում, ասում ենք այս սարքավորումն է մեզ պետք, բայց մեզ տալիս են ուրիշ **տեխնիկա**, որովհետև ասում են ծրագրով

տեխնիկան, իրենք շատ սրտացավ են լինում, շատ ավելի արդյունավետ են օգտագործում:

Համայնքի բնակիչը տեղյակ չէ, որ իր համայնքում գոյություն ունի կոոպերատիվ ու կարող է իրեն **տեխնիկա տրամադրել**:

Կոոպերատիվներին **տեխնիկա** տալուց ոչ միայն պետք է կարիքը հաշվի առնել, այլև պայմաններդ, ռելիեֆդ, քանի որ ունենք դեպքեր, երբ տրված տեխնիկան մեր հողում ու պայմաններում չի աշխատում:

Կոոպերացիաների ստեղծումը կանխեց **գյուղտեխնիկայի** աշխատանքի գների աճը, սպասարկումը դարձրեց գյուղացու համար ավելի մատչելի:

Կոոպերացիան տեսնում եմ միայն **մեքենատրակտորային կայանի** դեպքում: Մնացած դեպքերում փորձը ցույց է տալիս, որ կոոպերացիան արդյունավետ չէ:

Տեխնիկան պետք է կենտրոնացնել. թող մի կազմակերպություն դա իրականացնի ու ոչ պետական լինի:

Տեխնիկան ու հողը առանձին են: Պետք է **միանան**:

Կոոպերացիաների զարգացմանը աջակցություն չի ցուցաբերվում: Պետք է ձեռք բերել **գյուղտեխնիկա**, **սառնարաններ**, որոնք գյուղացին իրեն չի կարող թույլ տալ:

Առանձին կոոպերատիվ պիտի լինի **տեխնիկական պարկ** պահելու համար, սակայն պետական վերահսկողության ներքո:

Կոոպերացիայի ստեղծմանը պետք է նպաստի **ենթահամակարգերի** ներդրումը, որը բացակայում է:

Հողերի խոշորացումից առաջ, նախ պետք է **տեխնիկական պարկեր** լինեն:

Տեխնիկան երբ բերվում է կոոպերատիվ, այն օգտագործվում է բոլորի համար:

Ով շահագրգռված է **տեխնիկա** ձեռք բերել, մտնում է կոոպերատիվի մեջ:

Կոոպերատիվները կունենան սեփական մեխանիզմները և դրսից եկողը չի կարող գին պարտադրել: Համայնքի սեփականություն **տեխնիկան** ամենաճիշտն է:

Պետք է հարևանությամբ գտնվող մանր հողակտորները, նույն մշակաբույսով զբաղվեն կամ, ավելի լավ է, խոշորացում իրականացվի, որպեսզի **տեխնիկայի** օգտագործումը իմաստ ունենա ու ընդհանուր ծախսերը պակասեն:

դա է նախատեսված, իմաստը էլ որն է, որ քննարկենք մեր կարիքներն ու կարծիքները:

Որպես կոոպերատիվի անդամ, մենք շատ ենք դիմել, որ մեզ օգնեն **մեքենա** ձեռք բերել, մինչ օրս չի հաջողվել. **թղթաբանությունը շատ է**:

Կոոպերատիվները պետք է **վերացվեն**, քանի որ ոչ մի օգուտ չեն տալիս ու չեն կատարում իրենց ֆունկցիան՝ կոոպերատիվի անդամներին ավելի **էժան գնով տեխնիկա չի տրամադրում**:

Կոոպերատիվները ստեղծվելու ընթացքում կոլեկտիվ **տեխնիկան** մտել է գյուղ ու դարձել **մենաշնորհ**:

Կոոպերատիվին տրված **տեխնիկան** եթե չես էլ օգտագործում, բայց դրա վարձավճարը մեկ է մուծում ենք. **մենեջմենթի** խնդիր կա:

Մենք կարող ենք կոոպերատիվ ստեղծել այսօր, **տեխնիկա** վերցնենք, վարկ վերցնել, բայց սա **թղթի վրա** է մնալու միայն նորից:

Գյուղտեխնիկայի հարցը ևս խնդիր է, սկզբից բերեցին ու կոոպերատիվներին տվեցին ու հարմար էր անցան մի քանի տարի լիզինգով սկսեցին տրամադրել ու գրեթե **երկու անգամ թանկ**:

Մեր հողերը փոքր են և իմաստ չկա թանկ գներով նոր **տեխնոլոգիաներ** գնել:

Տեխնիկա ձեռք բերելու համար կոոպերատիվները շատ հարմար են, բայց հետագա աշխատանքը՝ կախված՝ մեր մենթալիտետից չի աշխատի:

Կոոպերատիվները ստեղծվում են, որպեսզի ինչ-որ մեկի համար ձեռք բերեն **տեխնիկա** և վերջ:

Մենք խոշորացած համայնք ենք, ունենք ավտոպարկ, որը մեզանից քսան կիլոմետր հեռու է և արդյունավետ չի: Մեզ ասում են՝ ձեզ **տեխնիկա** տվել ենք, բայց այդ տեխնիկան մեր մոտ չի կարող հասնել:

Գյուղտեխնիկան շատ թանկ է, գյուղացին չի կարող մենակ գնել տեխնիկա, իսկ կոոպերատիվում **վստահություն չկա**, որ բոլորով պատասխանատու կլինեն վարկի համար:

Վերնաշենում արդեն երեք տարի է հիմնադրվել կոոպերատիվ, բայց մեխանիզմ պետք է տրամադրվեր, որոշակի գումար է մուծվել, բայց մինչ այժմ **ձգձգում են**:

Համայնքի խոշորացման արդյունքում մենք կարողացանք **սառնարանային** տնտեսություն ձեռք բերել: Բայց ոչ բոլոր համայնքները կարող են իրենց դա թույլ տալ:	
Թող թունաքիմիկատի ամբողջական **ծառայությամբ** հենց կոոպերատիվը զբաղվի. խորհրդատվություն, վաճառք, կիրառում... Մարդիկ պետք է գիտակցեն, որ խոշորացման արդյունքում իրենք նոր հնարավորություններ կունենան, նոր **ծառայություններն** ավելի հասանելի կլինեն: Մարդիկ միավորվում են, **թունաքիմիկատները** գնում են միասին, որպեսզի գնեն մեծածախի գնով: Կոոպերատիվ ստեղծելը չի նշանակում, որ հողերը պարզապես միավորում են: Կոոպերատիվը ենթադրում է նոր **տեխնոլոգիաների** ներդնում: Մեծ հողատիրոջը ձեռք կտա ունենալ **հակակարկտային** ցանցեր, **փոքրերին ձեռք չի տա**: Ոչ բոլոր հողերն են մշակվում, ոռոգվող հողերի մոտ քսանհինգ տոկոսն են մշակվում մեր մարզում: Վայոց Ձորը դարձել է ավելի ռիսկային, կիսաչոր-անապատային գոտի: Ցածր եկամտաբերության պատճառով հրաժարվում են մշակել: Եթե կոոպերատիվներ լինեն, դա կարելի է **ապահովագրել**: Գյուղատնտեսական հողատեսքերը պետք է խոշորացվեն: Փոքր հողակտորները ոչ ոք չի ապահովագրի:	Կոոպերացիայի միջոցով ֆեդերացիայից օրինակ **պարարտանյութ** էինք ստանում ու բաժանում գյուղացուն՝ նույն գնով ու աշնանը հավաքում դրա փողը: Բայց դատական քաշքշուկների մեջ ընկանք ու հազիվ ապացուցեցինք, որ գումար չենք աշխատել արանքում:
Պետությունը պետք է **սուբսիդիա** տա արդեն **կայացած** կոոպերացիաներին: Պետությունը պետք է կոոպերատիվին ընդառաջի, ամեն հեկտարի հաշվով **անհատույց գումար** տա: Հակառակ պարագայում դժվար գյուղատնտեսությունը զարգանա: Կարևոր է քննարկել, թե **սուբսիդավորման** դեպքում ոնց է կոոպերտիվին **վարկ** տրվելու, գրավ են ուզելու, անդամներից ում բնակարանը պետք է **գրավ** դնել, նման հարցերը պետք է հասկանալ նաև: **Սուբսիդիան** թող տրվի փոխառության, պարտքի ձևով, բերքը վաճառելուց հետո, կոոպերատիվը թող վերադարձնի: Պետք է **սուբսիդավորել**, որ կոոպերացիաները զարգանան. դա կշահագրգռի գյուղացիներին միավորվել: Կոոպերատիվներին պետությունը **ֆինանսավորում** է ամբողջ աշխարհում, մեզանում	Կոոպերացիան պետք է խնդիրների գիտակցումից սկսվի. **սուբսիդիա տալով կոոպերացիա չես ստեղծի**: **Սուբսիդավորումը** շատ կարևոր է, բայց ավելի մեծ կոոպերատիվների համար: Քանի որ կոոպերատիվի նախագահը բարձ, վտանգավոր տարիքում է, **վարկ չեն տրամադրում**: Բանկերը **հրաժարվում են կոոպերատիվներին ֆինանսավորել**: Նրանք գիտեն, որ սրանք չաշխատող կառույցներ են: Կոոպերատիվի անդամները **գումար չունեն** որպեսզի ներդնեն **համաֆինանսավորման** համար: Կոոպերատիվը պետք է ունենա բյուջե, որը չգիտեմ ոնց կարող է ձևավորվել, քանի որ բոլոր անդամները **վարկերի** տակ են:

դա ևս պետք է արվի, որ կարողանան կոոպերատիվները կայանան: **Սուբսիդիա** ստանալու լավագույն տարբերակը հողերի խոշորացումն է: Հողերը պետք է միավորել, որպեսզի **սուբսիդավորումն** ավելի արդյունավետ լինի: Խոշորացումը հնարավորություն կտա մշակել նաև անմշակ հողերը, որոնք այսօր ձեռքից գնում են:	
Մարդիկ **միավորվում են**, որ մեծ քանակությամբ օրինակ **միս արտադրեն և հանձնեն** կոնկրետ ռեստորաններին, առանց միջնորդի: Արտահանման ոլորտում թող պետությունը օգնի խոշորին: **Մանրն էլ թող արտահանի խոշորի միջոցով**: Կարելի է բոլոր մեղվաբույծներին երկարաժամկետ հատվածում միավորել, ու մեղրը համատեղ հանձնել **մթերման**:	**Խոշոր արտադրողները չեն աշխատում** կոոպերացիաների հետ, նախընտրում են անհատ ֆերմերների: Խնդիր ունենք կոոպերատիվի ու մթերողի հետ **պայմանագրեր** կապելու հետ, ուզում են **անհատների հետ կնքեն**, քանի որ համարում են, որ այդպես ռիսկը ավելի քիչ է, չեն ուզում ընդհանուր կոոպերատիվի հետ գործ ունենալ որպես մեկ միավոր: Այսօրվա կաթի **մթերման գների** պայմաններում անասուն պահելը լրիվ անիմաստ է դառնում է: Էլ չենք խոսում կոոպերատիվների մասին: Կոոպերատիվների **անդամավճարների** պատճառով գյուղացին երկար չէր մնում:
Իսկ **կոոպերատիվի բյուջեն** անհրաժեշտ է իր ադմինիստրատիվ ծախսերը փակելու համար գոնե:	**Հարկային** տեսանկյունից կոոպերացիա ստեղծելը ճիշտ չէ: Մեր կոոպերացիան այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, բայց **հարկային** և **վարկային** բեռի պատճառով մեր ամբողջ եկամուտը ուրիշներին ենք տալիս: ԱԱՀ **հարկը** բավականին բեռ է կոոպերատիվի համար, աշխատանքները դժվարանում են, որովհետև ամեն ինչ ձեռք են բերում շուկայից՝ շուկայական գներով: Պետությունը կոոպերատիվները պետք է **չհարկի**: **ԱԱՀ-ն** գյուղացու համար՝ կոոպերատիվ, թե ոչ, սխալ է: Երբ կոոպերատիվով է ապրանք արտադրվում, **հարկերի** հաշվին ավելի թանկ է դառնում, իսկ գյուղացին կարում է առանց դրա անի ու մրցակցության խնդիր կա:

Մի քանի օր առաջ **կարկուտը վերացրեց** հացահատկի մեր **ամբողջ բերքը**:

Անտառաշերտերի նվազումը նույնպես նպաստում է բնական աղետների բացասական ազդեցությանը գյուղատնտեսությանը:

Գեղարքունիքում հրատապ է ապահովագրությունը. ամեն տարի **երաշտից** ու **կարկուտից տուժում ենք**:

Կարկտահարությունից տուժածները երազում են ապահովագրության մասին:

Մարդիկ մեծ վարկեր են վերցնում, թանկարժեք սերմ գնում, բայց **կարկտահարության** պատճառով **ամբողջ բերքը կորցնում են**:

Կարկուտից այս տարի **շատ ենք տուժել**:

Գեղարքունիքում ամբողջ տարին ռիսկային է գյուղատնտեսության համար՝ **գերխոնավությունից մինչև երաշտ**:

Կարկտահարությունը տարածված է, բայց հակակարկտային համակարգ չունենք ընդհանրապես: Այստեղ ամենանպատակահարմարը երևի կրակող համակարգերի տեղադրումն է, ցանցը շատ թանկ է ու մենք չունենք այդ այգիները, ոնց Արարատյան դաշտավայրում, որպեսզի արդարացված լինի այդ ծախսը:

Ապահովագրությունը լավ բան է, այս տարի օրինակ **ցուրտը տարավ այգիս ու պարտքերի տակ եմ**:

Ավելի լավ է **կանխարգելել** ռիսկը, քան աղետներից հետո վնասները փոխհատուցի, սա նաև աշխատանքային մշակույթի համար է լավ գյուղացու:

Սուբսիդավորված **վարկերը բնական աղետների պատճառով դառնում են բեռ**:

Մեր տարածաշրջանում **հաճախ են կարկուտները**, բայց ոչ մի **պաշտպանություն չունենք**:

Վայոց ձորում **կարկտահարությունը մշտական երևույթ է, չկա որ մի կարկտակայան**:

Մեր համայնքում արջեր ու գայլեր են գալիս ու մեծ վնաս տալիս: Ի՞նչ կարող ենք մենք անել:

Ամեն դեպքում **պետությունը պետք է մասնակցի** աղետների դեմ պայքարին:

Տարերային աղետների պատճառով բերքի վնասի դեպքում վարկային մարումների հարցում **պետական աջակցության կարիք կա**:

Այսօր խնդիրները շատ-շատ են, և **կարկուտը առաջնային խնդիր համարելը սխալ է**:

Գյուղացուն **ոչ թե կարկուտն է վնաս տալիս, այլ մթերման խնդիրը**: Մեր տարածաշրջանում մթերումը շատ վատ է կազմակերպված:

Կարկտից տուժածներին որևէ **աջակցություն** մինչև հիմա **չի եղել**:

Մեր մարզում ոչ մի **հակակարկտային կայան չկա:**

Երբ այգիս ցուրտը տարավ, որտեղ տարիներով

Ֆրանսիացի խաղողագործի հետ էի խոսում, ով ասում էր, որ պետությունը պարտադիր ապահովագրում է գյուղատնտեսությունը, հատկապես բնական **աղետների** դեպքում: Դա **իրական օգնություն** է:

15 աշխատող եմ ունեցել, դիմեցի մարզպետարան, որ ցածր տոկոսով վարկ տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին մերժել անհիմն պատճառներով, **խաբեբայության** նման մի բան էր սա:

Փոխհատուցումն էլ գրոշներ են ու ծիծաղելի՝ 40,000 դրամ են մի անգամ տվել ամեն տնտեսությանը, կամ էլ ջրի հարկն են զիջում:

Համայնքապետը պիտի վստահություն վայելի գյուղացիների շրջանում ու **աղետի դեպքում ճիշտ հաշվի վնասները**:

Մեր համայնքում **կարկուտի համար գյուղացին մի լումայի աջակցություն չի ստացել**: Պիտի ճանապարհ փակե՞նք, որ մեր ձայնը լսվի:

Բնական աղետների դեմ պայքարի միջոցները պետք է համակարգված լինեն, չի **կարող մեկը դնել, մյուսը չէ**...

Կարկուտը Լոռում երկու հատ կարտոլ ու փորչուլուխ է ջարդել, Արմավիրում՝ խաղող, պոմիդոր, ծիրան... Գյուղնախարարը եթե տարբերություն չի տեսնում, ի՞նչ զարգացում պիտի ակնկալել;:

Շատ արդիական է **հակակարկտային** ցանցերը, թող **ապառիկով** տան գյուղացուն:

Ավելի լավ է **այգիները պաշտպանեն հակակարկտային համակարգերով, քան ապահովագրել**:

Հակակարկտային ցանցերի ներդրումը շատ **ավելի արդյունավետ կլինի քան ապահովագրությունը**:

Կարկտապաշտպան որևէ համակարգի ներդրումը Հայաստանում **միանշանակ պետք է**:

Ռուսաստանից հրթիռային կայաններ են բերել, տեսնենք դա ինչ օգուտ կտա կարկուտի դեմ:

Առաջին հերթին պետք է ներդնել **հակակարկտային կայաններ և ցանցեր**:

Սովետի ժամանակ երկու **հակակարկտային կայան** կար, **շատ արդյունավետ գործում էր**, ոչ-ոք մարզում կարկուտ չէր տեսել:

Փոքր գյուղերի համար **«զենիթներն» էլ մեզ բավարար են կարկուտի դեմ** պայքարելու համար:

ԱԻՆ-ը շատ լավ իրականացնում է վերահսկողությունը, նրանք պետք է նաև տեղադրումն իրականացնեն:

Հակակարկտային ցանց տեղադրելիս պետք է անպայման հասկանալ, օրինակ տվյալ տարածաշրջանում ինչ է աճում, **գոտիականությունն** է, եթե թզուկաճ ծառեր կան, այո, պետք է ցանց տեղադրել:

Կարկտահարությունը տարածված է, բայց **հակակարկտային համակարգ չունենք** ընդհանրապես: Այստեղ ամենանպատակահարմարը երևի կրակող համակարգերի տեղադրումն է, ցանցը շատ թանկ է ու մենք չունենք այդ այգիները, ոնց Արարատյան դաշտավայրում, որպեսզի արդարացված լինի այդ ծախսը:

Զենիթային համակարգը **միայն բիզնես էր, ոչ մի օգուտ չէր տալիս:**

Հրթիռային **հակակարկտային կայաններն իրենց արդարացնում են, եթե յոթ կիլոմետրից ցածր են**:

Փոքր կարկտակայանը որ կան հիմիկվա՝ **գազագեներատորները, ընդհանրապես արդյունավետ չեն** մեր դեպքում:

Այսօր մեր ունեցած **հակակարկտային կայանները բացարձակ արդյունավետ չեն**, հատկապես մեծ տարածքների համար չէ, բարձրադիր տարածքների համար էլ չէ:

Հրթիռային համակարգերը այսօր **անարդյունավետ են** աշխատում, պետք է ներդնել ավելի **հզոր** համակարգեր:

Եղած հակակարկտային կայաններն օգնում են **թույլ ամպերի** դեպքում: **Հզորություն չունեն**, ասում են **օրիգինալ գազը** չեն լցնում մեջը:

Ֆինանսների բացակայության պատճառով **չեն օգտագործվում այն հրանոթները**, որոնք ժամանակին շատ արդյունավետ էին:

Թե՛ գազային, թե՛ հրթիռային **հակակարկտային կայանները չեն արդարացնում** իրենց: **Լուծումը հակակարկտային ցանցերն** են:

Ամեն այգու վրա հնարավոր չէ հակակարկտային ցանց քաշել: Պետք է **հասցեական** լինի:

Հակակարկտային կայանները **չաշխատեցին** Հայաստանում, գյուղացիները շատ մեծ կորուստներ ունեցան:

Սովորական բնական գազով են աշխատում **հակակարկտային կայանները**, ու բնականաբար, **անարդյունավետ** են:

Ացետիլային գազով հակակարկտային կայանը միգուցե արդյունավետ լիներ, հրթիռայինին ծանոթ չենք:

Հակակարկտային կայանները **արդյունք տալիս են, բայց քիչ են:**

Հակակարկտային համակարգերը որ ներդրեցին բոլորը ծափ էին տալիս, հիմա **պարզվեց որ ոչինչ է:**

Հակակարկտային կայանների հետ կապված **տեխնոլոգիական խնդիր կա**:

Հակակարկտային **կայանները և ցանցերը տեղադրեցին, բայց որ կարկուտը եկավ, բերք չմնաց**:

Այժմ ներդրված **հակակարկտային համակարգերը** այսօր **արդյունավետ չեն**:

Մեր հարևան գյուղում հակակարկտային կայան կա, իրենց մոտից հեռացնում են ամպերը ու մենք մնում ենք առանց անձրևի:

Մեր տարածաշրջանում **հակակարկտային կայանները չեն աշխատի** ռելիեֆի պատճառով: **Ցանցեր է պետք** ներդնել:

Հակակարկտային ցանցերը մեծ տարածքի վրա է արդարացնում: Վայոց Ձորում նման տարածքները քիչ են, մեկ հեկտարի վրա դնելը չի լինի:

Մեր լավագույն հողերը խոշոր հողատերերինն է, օլիգարխներինը: Եթե իրենք **ցանց չեն**

Պետություն-գյուղացի հիսուն-հիսուն պետք է ներդրում անեն կարկտապաշտպան ցանցերի դեպքում: Եթե գյուղացին փող դնի, սրտացավ կլինի ցանցերի նկատմամբ: Իսկ **կայանները մենակ պետությունը** պետք է անի:

Ցանկալի է **հակակարկտային** միջոցներ ձեռք բերելու **վարկային միջոցներ կամ սուբսիդիաներ** լինեն:

Սուբսիդիաները թող ուղղվեն կարկուտից պաշտպանված ցուցադրական այգիներ հիմնելուն:

Հակակարկտային ցանցերը ճիշտ տեղադրելու համար կարևոր է **պետության սուբսիդավորումը**:

Ապահովագրական ընկերությունները իրենց եկամուտից կարող են հատկացնել **հակակարկտային միջոցներին**, իրենց համար էլ է շահավետ, քիչ տուժող կլինի, քիչ կվճարեն:

Կառավարությունը **պետք է օժանդակի**, որ գյուղացիները տեղադրեն **հակակարկտային կայանները և նրանց տարեկան ծախսերը**:

Հրթիռային համակարգը շատ թանկարժեք է ու օդը կեղտոտում է, դրա փոխարեն պետությունը պիտի **ցանցեր արտադրի ու անվճար բաժանի** գյուղացուն:

տեղադրել, ուրեմն մի բան գիտեն:

Հակակարկտային կայաններն այսօր ուղղակի **սակավ ֆինանսական միջոցների վատնում են**, որովհետև բոլորովին **արդյունավետ չեն**:

Հակակարկտային ցանցը **ցրտահարությունից չի փրկի**, սա մեզ համար առաջնային է, այդ ցանցերը շատ թանկ են, անգամ գիտակցելով, որ այն շատ արդյունավետ է, **ոչ մի գյուղացի չի կարող իրեն թույլ տալ գնել**, անգամ եթե գիտակցում է, որ մի յոթ տարի իր բերքը ապահովագրված է լինելու կարկուտից և նույնիսկ որոշ վնասատուներից:

Հակակարկտային կայանները օգտագործվում է **միայն խաղողագործության** համար: Իսկ **մասնավորի եկամուտները չեն բավարարի** հակակարկտային կայանի կառուցման համար: **Երաշտ** է լինում, բայց պետությունը երաշտ չի հայտարարում: Արդյունքում ապահովագրական ընկերությունը փոխհատուցում չի տալիս:

Եթե **ցանցերը** տրվեն երկար ժամանակով, 5-6 տարով, կկարենանք ձեռք բերել:

Հակակարկտային ցանցերը **շատ արդյունավետ են, բայց թանկ են**:

Մեծ հողատիրոջը ձեռք կտա ունենալ **հակակարկտային ցանցեր, փոքրերին ձեռք չի տա**:

Հակակարկտային կայանները **արդյունավետ են, բայց շատ թանկ են** գյուղացին իրեն թույլ տալ չի կարող:

Քանի՞ տարի պետք է աշխատեմ, որ **հակակարկտային ցանցերի վարկերը** փակեմ:

Կողմ ենք հակակարկտային ցանցերին, իհարկե **թանկ է, բայց ավելի արդյունավետ**:

Եթե **մատչելի** լինեն, ապա գյուղացիների 90 տոկոսը **կտեղադրի կարկտապաշտպան ցանցերը**:

Հակակարկտային ցանցերի գների և սուբսիդավորված վարկերի մասին **գյուղացին իրազեկված** չի:

Հակակարկտային կայանները կամ կարկուտի դեմ պայքարի այլ միջոցները **մատչելի չեն**:

Եթե **պայմանները հարմար լինեն**, մենք էլ կուզենք հակակարկտային համակարգի ներդրման հարցում ներդրում ու մասնակցություն ունենալ:

Արդյոք բնական աղետների դեմ պայքարի միջոցների ներդրումը չպիտի **ազդի գյուղարտադրանքի գների վրա**:

Պետք է տնտեսագիտական ճիշտ հաշվարկներ անել՝ նոր ձեռք բերել հակակարկտային ցանցեր, պետք է հաշվի առնել նաև գոտիականությունը, **բացարձակ ձեռնտու չէ վարկ վերցնել ու ցանց գնել**:

Բնական աղետների դեմ պայքարի շատ լավ միջոցներ կան, բայց անգամ ամենաէժանները **ֆինանսապես հասանելի չեն** միջին վիճակագրական գյուղացուն:

Ոչ մի գյուղացի իր **գրպանից փող չի տա հակակարկտային ցանց** գնելու համար, **շատ թանկ** է, և կոնկրետ մեր տարածքի համար դա **ձեռնտու չի**:

Հակակարկտային ցանցերը պետք է **մատչելի լինեն** բոլոր գյուղացիների համար:

Կարկտապաշտպան ցանցի ծախսը մեկ հեկտարի համար ինն ամբողջ յոթ միլիոն դրամ է կազմում: Մեզ **լուրջ աջակցություն է պետք** այս հարցում:

Գ. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքում **հրատապ է** ապահովագրությունը. ամեն տարի երաշտից ու կարկուտից տուժում ենք:

Եթե ապահովագրման համակարգը իսկապես **արդար** աշխատի, միանշանակ կողմ ենք:

Ապահովագրությունը **սկզբում բեռ կլինի գյուղացու վրա, հետո՝ ոչ**:

Ավելի լավ է եկամուտից տասը տոկոսը տանք ապահովագրության:

Ապահովագրությունը միանշանակ **լուծում է**:

Մեքենաների ապահովագրության մասին էլ **ասում էին սկզբում որ բեռ է**, հետո պարզվեց շատ օգտակար էր:

Պարտադիր ապահովագրությունն ինչի համար է, որ **խոտհարք չդառնան հողերը մեր**, Վիճվարչության ցույց տված թվերը լրիվ սուտ բաներ են:

Կարկտահարությունից տուժածները **երազում են** ապահովագրության մասին:

Ապահովագրությունն այսօր **ամենակարևոր** բանն է մեզ համար, անպայման պետք է անցնել այդ համակարգին:

Ապահովագրական համակարգը լավ բան է, **հարցի լուծում է**:

Պետք է ապահովագրել նաև ապրանքի

Գյուղացին բերքը վաճառելու **շուկա չունի, որ ապահովագրի** բերքը:

Նախ պետք է գյուղացուն սովորեցնել հողից **բերք ստանալ, նոր ապահովագրել**:

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսությունը հիմնականում **օգուտ չի բերում**, որի պատճառով էլ **ժողովուրդը չի կարող վճարել ապահովագրության համար**:

Մասնավոր ապահովագրությունները վախենում են գյուղացու հետ ապահովագրության պայմանագրեր կնքել, քանի որ վստահություն չունեն, որ **գյուղացին եկամուտ կունենա**:

Խոշոր ֆերմերները հաստատ կապահովագրեն, **մանրերի համար դժվար կլինի**:

Մանր տնտեսություններով անհնար է ապահովագրություն կազմակերպել: Անհրաժեշտ է **միավորել** տնտեսությունները:

Այսօր գյուղացու համար անգամ **մեկ լուման է բարդ տալ ուրիշին**, թող **խոշորները սկսեն** պարտադիր վճարել ապահովագրական վճարները:

Կարծում եմ ապահովագրությունը պետք է սկսել **խոշորներից**:

Կողմ եմ գյուղապահովագրմանը, բայց **ոչ այս գյուղատնտեսության զարգացման պայմաններում**: Այս պայմաններում անիմաստ է:

իրացումը, ոչ միայն **արտադրությունը**:

Անկախ ամեն ինչից գյուղապահովագրությունը այսօր **անհրաժեշտություն է**:

Ապահովագրությունը **լավ բան է**, այս տարի օրինակ ցուրտը տարավ այգիս ու պարտքերի տակ եմ:

Սուբսիդիաներով **վարկը ռիսկ չի լինի** գյուղացու համար, եթե ունենանք ապահովագրություն:

Ոչ մի գյուղացի չի ուզում ցանց ունենալ, որովհետև թանկ արժե, ուստի **մտածում է ապահովագրելը ավելի արդյունավետ է**, քան ինքնուրույն պաշտպանվելը:

Ապահովագրությունը **անհրաժեշտություն** է: Եվրոպայում **պետությունը** երբեք մասնավորի **վնասները չի փոխհատուցում**, այլ այդ ամենը թողնում են ապահովագրությանը:

Պետք է լինի **հստակ նախագծված սխեմա**՝ ապահովագրության համակարգին անցնելու համար:

Տարածաշրջանի համար **ամենակարևոր** խնդիրներից մեկը ապահովագրությունն է: Օրինակ՝ մեր մարզում կարկուտը շատ է, շատ հաճախ սեզոնի վերջում բերք չենք ստանում:

Չորս տարի առաջ դեպք պատահեց ֆերմայի հետ: Գայլը հոշոտեց կենդանիներին: Կառավարությունից եկան, փոխհատուցում խոստացան: Հարկայինը եկավ տուգանեց, ասում էր վաճառել ես, չես ասում: Եթե **ապահովագրություն լիներ, նման խնդիր չէր լինի**:

Բնական աղետների դեմ պայքարի լավագույն միջոցը կարող է ապահովագրությունը լինի, բայց միևնույն է դա **պետք է շատ մտածված լինի** և **հարմար**:

Ոչ բոլոր հողերն են մշակվում, ոռոգվող հողերի մոտ քսանհինգ տոկոսն են մշակվում մեր մարզում: Վայոց Ձորը դարձել է ավելի ռիսկային, կիսաչոր-անապատային գոտի**: Ցածր եկամտաբերության** պատճառով հրաժարվում են մշակել: Եթե **կոոպերատիվներ** լինեն, դա կարելի է ապահովագրել:

Գյուղատնտեսական հողատեսքերը պետք է **խոշորացվեն**: Փոքր հողակտորները ոչ ոք չի ապահովագրի:

Չեմ պատկերացնում **ինչպես ապահովագրական ընկերությունը կփոխհատուցի մի ամբողջ համայնքի վնասը**:

Երաշտ է լինում, բայց պետությունը երաշտ չի հայտարարում: Արդյունքում ապահովագրական ընկերությունը **փոխհատուցում չի տալիս**:

Ապահովագրության **գները** պետք է խելամիտ լինեն գյուղացու համար:

Գյուղ ապահովագրության հարցում գյուղացու համար **հասանելիության** խնդիրն է կարևոր:

Ապահովագրական ընկերությունն էլ, գյուղացին էլ պետք է **գնահատեն բոլոր ռիսկերը**, որը ձեռնտու լինի:

Գյուղացու համար շատ կարևոր է իմանալ ապահովագրության համար նախատեսված **նվազագույն վճարը**:

Ապահովագրության ամենաանհրապույր ասպեկտը **թղթաբանությունն** է:

Ապահովագրությունը **երբեք չի փոխհատուցի** վատ բնակլիմայական պայմանների համար: Էլ ի՞նչ իմաստ ունի այն:

Ասենք ես արտադրում եմ 30 տոննա խաղող: Կոնյակի գործարանի հետ պայմանագիր ունեմ այդքան խաղողի իրացման համար: Հանձնումից մի շաբաթ առաջ կարկուտը բերքն ամբողջությամբ փչացնում է: Ապահովագրական ընկերությունը **որքանո՞վ կփոխհատուցի**... Սա է պետք քննարկել:

Գյուղատնտեսության ապահովագրությունը կարող է հարցեր լուծել, եթե միայն **թղթի վրա** չլինի, այլ իրապես գործի:

Ի տարբերություն մյուս ոլորտների, մեր երկրում գյուղատնտեսության ապահովագրությունը շատ **ռիսկային է**:

Ավելի լավ է այգիները **պաշտպանեն հակակարկտային համակարգերով, քան ապահովագրել**:

Ապահովագրություն ասվածը խիստ **վերացական**

է:

Գյուղացիների **մեծ մասը պատրաստ չէ** պարտադիր ապահովագրության, քանի որ չունեն բավարար **դրամագլուխ** ներդրումներ կատարելու համար:

Գյուղացին երբեք **չի ուզի իր հույսը դնել ապահովագրության վրա**:

Հակակարկտային ցանցերի ներդրումը շատ ավելի արդյունավետ կլինի քան ապահովագրությունը:

Ապահովագրական ընկերությունների համար, բայց, դժվար թե շահավետ լինի, **շատ ռիսկային է** ոլորտը, մեր կլիման լավը չէ:

Երաշխավորված գինը պետք է պատվերով լինի, այսքան հա, այս սերմով, այս գնով կվերցնեմ, կվաճառեմ ապրանքդ, որ ռիսկերը նվազեցվի, պետական աջակցությունն ու ապահովագրությունը այդպիսին լինի:

Անասնապահության ոլորտի ապահովագրության խնդիրը նրանում է որ հինգ հարյուր հազար դրամանոց անասունի սատկելու դեպքում **փոխհատուցում** են օրինակ հարյուր հազարը:

Գյուղատնտեսությունը պետք է ապահովագրվի, անհրաժեշտ է: Բայց **չեմ հավատում**, որ կլինի: Երկիրը մենակ մեքենաներն է ապահովագրում, քանի որ ձեռնտու է:

Գյուղատնտեսությունը ռիսկային ոլորտ է, **դժվար թե** մտցնեն ապահովագրություն:

Եթե գյուղապահովագրության տոկոսները բարձր լինեն, գյուղացին **պատրաստ չէ վճարել**:

Անասունների ապահովագրությունը **ռիսկային է**: Եթե իմ կովը մի սարում սատկի, ինչպե՞ս եմ ապացուցելու որ սատկել է, կամ գայլը կերել է:

Գյուղապահովագրությունը պետք է **շահավետ** լինի երկու կողմերի համար էլ՝ գյուղացու էլ ապահովագրողի էլ:

Եթե համայնքներում **ոռոգման խնդիրը** չենք լուծում, ապահովագրությունը դառնում է **անիմաստ**:

Գյուղատնտեսական ապահովագրության **գումարը չափազանց մեծ է լինելու**. ո՞ր գյուղացին կկարողանա նման գումար վճարել:

Ապահովագրական ընկերությունների վերաբերյալ **վստահություն չկա**:

Նախ պետք է կարկուտից և այլ աղետներից պաշտպանվելու համար համակարգեր ներդնել, կաթիլային ոռոգում ապահովել, նոր ապահովագրության համակարգը ներդնել:

Ապահովագրությունը **պետք է պարտադիր լինի**:

Մեր բնակլիմայական պայմանների համար ապահովագրությունը **պարտադիր է**, հատկապես մեր մարզի համար:

Ապահովագրությունը ամենաճիշտ քայլն է, **եթե կամավոր լինի՝ գյուղի 5%-ը հազիվ ապահովագրի**, դրա համար հողերի մեծ մասը ցանքսեր են դարձել, խոտ են ցանում, որ ռիսկերն ավելի քիչ լինեն:

Կամավոր ապահովագրությունը ձեռնտու չէ, քանի որ քչերն են ցանկություն հայտնում:

Պարտադիր ապահովագրությունը կարող է բերել հողերի հանձնմանը, դա էլ կբերի հողերի **խոշորացման**:

Ապահովագրական **գործակալությունները չեն ստանձնի կամավոր** ապահովագրությունները, գումարները շատ քիչ կլինեն:

Այսօր կովն արժե հազար հինգ հարյուր դոլար, իսկ հին ժիգուլին հարյուր դոլար: Հարյուր դոլարանոց ժիգուլին **պարտադիր** ապահովագրվում է, իսկ կովը՝ ոչ:

Գյուղատնտեսությունը **պարտադիր** ապահովագրել է պետք, այլապես մեր այս խոսակցությունները կլինեն անիմաստ:

Գյուղատնտեսությունը պետք է **պարտադիր** ունենա իր ապահովագրությունը: Գյուղացին ունի դրա կարիքը:

Ապահովագրությունը ոչ թե պետք է այլ **անհրաժեշտ է**: Գյուղացին պատրաստ չէ բնության արհավիրքներին:

Գյուղացին **պատրաստ է** իր եկամտի մի մասը տալ ապահովագրությանը:

Պարտադիր ապահովագրություն է կարևոր, որ դա լինի իսկապես գործող, ոչ թե ձևական:

Ապահովագրությունը սկզբնական շրջանում պետք է **պարտադիր** լինի, և **պետությունը սուբսիդավորի** ապահովագրության վճարի մի մասը:

Ապահովագրական համակարգը **պարտադիր** է, քանի որ գյուղացին առանց ապահովագրության մեծ վտանգի տակ է:

5-7% վարկեր են մեզ պետք, ինչպես Իսրայելում, որտեղ **ամբողջ գյուղատնտեսական գործունեությունն** է ապահովագրված:

Եթե **գինը մատչելի** լինի, թող **պարտադիր** լինի

Մենք գիտենք, որ այլ վայրերում, ուր կարկուտ է եղել և ապահովագրված են, բայց նրանք էլ **գոհ չեն**:

Եթե ապահովագրությունը եղավ **կամավոր** և դա իրեն արդարացրեց, մարդիկ տեսան, որ ամեն ինչ նորմալ աշխատում է, մի տարի հետո անպայման կմիանան այդ համակարգին:

Կարծում եմ ճիշտ է ապահովագրությունը **կամավորից սկսելը**:

Ապահովագրությունը պետք է **անպայման լինի կամավոր**:

Ապահովագրությունը պետք է **գյուղացու համար հասկանալի** լինի: Գյուղացին դա **պետք է յուրացնի և համոզվի**:

Ապահովագրությունը լավ բան է, բայց եթե ժամանակին արվի: Թողնենք **ըստ ցանկության՝ կամավոր**: Բերքի կորստից ելնելով կամաց-կամաց ավելի շատ կընդգրկվեն:

Ցանկացած պարագայում ապահովագրումը **պետք է կամավոր լինի**:

Մի մասը **տեղյակ չի**, որ **կամավոր** ապահովագրություն կա:

Ապահովագրությունը պետք է լինի **կամավոր**, որին ժամանակի ընթացքում բոլորը կմիանան:

Սկզբնական շրջանում պետք է **կամավոր** լինի ապահովագրությունը, պետությունը պետք է որոշ չափով օգնի, մասնակցի, մինչև գյուղացին ոտքի կանգնի:

Ապահովագրությունը պետք է սկզբից **կամավոր** լինի, հատկապես ձեռ կտա **խոշորներին**, **մանրներն** էլ անպայման կմիանան ընթացքում:

Ցանկալի է **կամավոր** գյուղապահովագրություն, որովհետև մեքենաների պարտադիր ապահովագրությունը կարծես, թե իրեն չի արդարացնում:

Գյուղացին եթե չունի առանձնապես կորցնելու բան, նրան **ձեռք չի տա պարտադիր** ապահովագրությունը: Եթե օրինակ հարյուր հատ անասուն ունի, կուզենա ապահովագրել, օրինակ՝ տասին:

Ապահովագրությունը ցանկալի է **կամավոր** լինի, պարտադիր բաղադրիչը միշտ խանգարում է:

Պարտադրելու կարիք չկա, եթե մարդը ուզում է տուժել ու փոխհատուցում չստանալ, թող **ինքը որոշի**:

Կողմ եմ ապահովագրությանը, բայց **ոչ պարտադիր** հիմունքներով:

Կամավոր պետք լինի ապահովագրությունը,

գյուղապահովագրությունը, բոլորն էլ կապահովագրեն:

Ապահովագրությունը պետք է լինի **պարտադիր**, բայց միևնույն ժամանակ **պետությունը պետք է անպայման աջակցի**, հատկապես սկզբից:

Եթե ուզում են գյուղատնտեսությունը զարգանա, պետք է **անպայման** ապահովագրեն:

Եթե գյուղատնտեսության ապահովագրումը լինի **կամավոր, ապա ոչ մեկ չի ապահովագրվի**:

Եթե ապահովագրությունը կամավոր լինի, շատ քիչ մարդ կհամաձայնի: Պետք է **պարտադիր** ապահովագրություն մտցնել, որը մատչելի կլինի:

Եթե պետությունը չաջակցի, ոչ մի մասնավոր ապահովագրելու ռիսկին չի գնա: **Պարտադիր պետք է լինի**, կամավորի դեպքում կարող է շատերը չմասնակցեն:

Անասնապահության մեջ ապահովագրությունը պետք է լինի **պարտադիր**, որպեսզի կարողանանք բանկերում անասունները գրավադրել գուղատնտեսական վարկերի ժամանակ:

Ապահովագրություն ներդնելուց առաջ **պետությունը** պետք է **որոշակիորեն իր վրա վերցնի բեռը**. օրինակ՝ սուբսիդավորման միջոցով: Իսկ ներդրումը պետք է կամավոր լինի, գոնե սկզբնական փուլում:

Եթե **պետությունը** չաջակցի, ոչ մի մասնավոր ապահովագրելու ռիսկին չի գնա: Պարտադիր պետք է լինի, կամավորի դեպքում կարող է շատերը չմասնակցեն:

Ապահովագրության հարցում **մեկնարկային փուլում թող պետությունն օգնի**, 50% առաջին անգամ մասնակցի:

Պետք է **սկզբից գյուղացուն օգնեն**, որ մտնի ապահովագրության համակարգի մեջ:

Բնակլիմայական պայմանների շարունակական վատթարացումը ապահովագրությունն ավելի անհրաժեշտ է դարձնում, բայց բնակչության մեծ մասը հնարվորություն չունի, **գոնե կեսը պետք է սուբսիդավորվի պետության կողմից**:

Գյուղատնտեսությունը **պետական գարանտի** որոշակի կայուն աջակցություն էլ պետք է տրամադրվի պետության կողմից:

Վայոց Ձորի տարածաշրջանը շատ ռիսկային է գյուղատնտեսության համար, ուստի ապահովագրությունը շատ կարևոր է, բայց կարծում եմ, որ այն **չպետք է պարտադիր լինի**:

Գյուղացուն **չես կարող պարտադրել** ապահովագրվել: Պետք է մեխանիզմներ մշակվեն:

Իմ կարծիքով ապահովագրությունը սկզբում պետք է լինի **կամավոր**, **հետո դառնա պարտադիր**:

Ապահովագրությունը կարելի է **երկու փուլով** կազմակերպել՝ **սկզբում կամավոր**, **հետո՝ պարտադիր:**

Ավելի լավ է սկզբում գյուղապահովագրությունը **պիլոտային կամավոր** լինի, հետո նոր որոշել՝ պարտադիր, թե՝ չէ:

Ապահովագրությունը կարող է լինել **սկզբում ըստ ցանկության հետո պարտադիր**:

Ապահովագրություն ներդնելուց առաջ պետությունը պետք է որոշակիորեն իր վրա վերցնի բեռը. օրինակ՝ սուբսիդավորման միջոցով: Իսկ ներդրումը պետք է **կամավոր** լինի, գոնե սկզբնական փուլում:

Ավելի լավ է ապահովագրությունը սկզբում **կամավոր** լինի, հասկանանք՝ լավ է աշխատում, թե ոչ, **հետո նոր պարտադիր**:

Առաջարկվում է, որ **մեծ համայնքները հանդիսանան որպես ապահովագրական ընկերություն** ու իրականացնեն ընկերության ֆունկցիաները:

Բանկային համակարգը գյուղացու շնորհիվ գերշահույթ ունի, թող դրա մի մասով **պետությունը աջակցի** ապահովագրությանը:

Ապահովագրական ընկերությունները պետք է իրենց վրա վերցնեն նաև մեծ ցանքատարածություններ ունեցող գյուղացիների ապահովագրման խնդիրը ու նախապես վճարեն նաև ենթակառուցվածքների ստեղծման համար:

Եկեք ապահովագրությունը մտցնենք, երկու-երեք տարի աշխատենք, ոտքի կանգնենք, **նոր հարկվենք**:

Ապահովագրական ընկերությունները լուրջ միջոցներ պետք է **ներդնեն** գյուղատնտեսության ոլորտում:

Ապահովագրական ընկերությունները իրենց եկամուտից կարող են հատկացնել **հակակարկտային միջոցներին**, իրենց համար էլ

մեծ կարիք ունի, այսինքն ապահովագրության, որովհետև գյուղատնտեսությունը արտադրություն է բաց երկնքի տակ ու կախված է Աստծո քմահաճույքից:

Առաջարկվում է, որ ապահովագրության համակարգը պետք է լինի կամ **պետական հոգածության** ներքո կամ այլ ծրագրերի շրջանակներում:

Պետությունը թող սուբսիդավորի ապահովագրական համակարգի վճարները:

Պետք է **սուբսիդավորել** համակարգերի ներդրումը՝ ապահովագրություն, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Մասնավոր ապահովագրական համակարգը գյուղատնտեսության մեջ ռիսկային է շատ, հետևաբար **պետության երաշխավորությունը անհրաժեշտ է**:

Ապահովագրական համակարգի վճարումները **սկզբնական շրջանում գյուղացու փոխարեն պետք է կատարի պետությունը**:

Ֆրանսիացի խաղողագործի հետ էի խոսում, ով ասում էր, որ **պետությունը պարտադիր ապահովագրում է գյուղատնտեսությունը**, հատկապես բնական աղետների դեպքում: Դա իրական օգնություն է:

Ցանկալի է, որ պարտադիր գյուղապահովագրությունը լինի **պետական հովանավորությամբ**:

Պետությունը պետք է մի քանի տարի գյուղացուն սատար կանգնի, մինչև ապահովագրական ծառայությունները բարելավվեն:

Ապահովագրությանը պետք է **պետական** մոտեցում լինի:

Մասնավոր ապահովագրական համակարգը գյուղատնտեսության մեջ ռիսկային է շատ, հետևաբար **պետության երաշխավորությունը** անհրաժեշտ է:

Պետությունը պետք է թելադրի, որ ապահովագրական ընկերությունը իր գործունեությունը ծավալի գյուղատնտեսության ոլորտում:

Պետությունը ապահովագրության հիսուն տոկոսը թող **սուբսիդավորի**, մյուսը թողնի գյուղացին որոշի:

Պետությունը թող ապահովագրական կազմակերպությանը վճարի որոշ գումար, վերադարձնելու պայմանով, երբ որ այդ ընկերությունը կայանա:

է շահավետ, քիչ տուժող կլինի, քիչ կվճարեն:

Ապահովագրական ընկերությունը թող գումարը շատ վերցնի, բայց լիիրավ **վերահսկողություն** ապահովի, հատկապես ՋՕԸ-երին վերահսկի:

Պետք է նաև ունենալ ճիշտ **ենթակառուցվածքներ**, որոնք կապահովեն ապահովագրման համակարգը:

Պետությունը և գյուղացին պետք է ունենան պայմանագրային հարաբերություններ, և պետությունը պետք է լինի հենց այդ «ապահովագրական կազմակերպությունը»: Ապահովագրությունը բիզնես է, ռիսկայնությունը հաշվի առնելով **պետությունը** պետք է իր մասնակցությունն ունենա:	
Համաձայն եմ կոնկրետ կարկուտից կամ **կոնկրետ վտանգից** ապահովագրել, բայց ոչ «Կասկո» անել: Պետք է լինեն ապահովագրության **տարբեր սակագներ** կախված այս կամ այն տարածաշրջանի ռիսկերից՝ ցրտահարություն, կարկտահարություն: Պետք է հասկանալ, թե **ինչ դեպքեր** է ապահովագրում ապահովագրողը՝ երաշտ, վարակիչ հիվանդություններ, թե բոլոր դեպքերում: Պետք է **տարբեր լինեն ապահովագրության վճարները՝ մեծ** կազմակերպությունները այլ վճար թող տան, **փոքրերը՝** այլ: **Ռիսկային գոտում** գտնվող համայնքներում **փոխհատուցումը պետք է ավելի բարձր լինի**: Անհրաժեշտ է հստակ սահմանել փոխհատուցման չափը: Պետք է ապահովագրությունը **չդիտարկվի բիզնես՝** ապահովագրողի համար. շատ կարևոր է, թե ով է ապահովագրում և **ինչ պայմաններով**: **Վստահության չկա պետական ապահովագրության** նկատմամբ, քանի որ նախադեպ է եղել առաջ, որ գողացել են փողը: Այդ վստահության բացակայության պատճառով գյուղացիները կամավոր չեն ապահովագրում: Պետք է գտնել **մասնավորներ**, ովքեր գյուղացու համար վստահելի են: Կան առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ կարգի հողեր, որոնց **ապահովագրական վճարը պետք է տարբեր լինի**: Պետք է հասկանալ, թե **ինչ դեպքեր է ապահովագրում** ապահովագրողը՝ երաշտ, վարակիչ հիվանդություններ, թե բոլոր դեպքերում: Ապահովագրելու համար բոլորին **մի սանդղակով չպիտի հաշվեն,** յուրահատկությունները շատ են: Պետք է լինեն ապահովագրության **տարբեր սակագներ** կախված այս կամ այն տարածաշրջանի ռիսկերից՝ ցրտահարություն, կարկտահարություն: Պետք է **մարզային առանձնահատկությամբ**	Ապահովագրությունը պետք է **խտրականություն չդնի** թե որ մշակաբույսը ապահովագրի, որ այգին, որը չի:

տարբերվի ապահովագրական վճարները: Մի տեղ հողերը բերրի են, մի այլ վայրում ոչ: Տարբեր են ոռոգման վճարները:

Ապահովագրությունը լավ կլինի որ **երկկողմանի** լինի, ինչպես **ծախսերը**, այնպես էլ **շահույթն** ապահովագրի, կասկոյի պես, բայց ա ևս ընտրության վրա պետք է լինի գյուղացու:

Ի՞նչ պայմաններով է իրականացվելու ապահովագրությունը: Այն պետք է լինի կատարված ծախսի համար: Օրինակ՝ մեկ հեկտար խաղողի արտադրության համար անհրաժեշտ է տաս միլիոն դրամ: **Այս ծախսը պետք է ապահովագրվի**:

Օրինակ, շատ տաք եղանակին, ջրային **տնտեսությունը կարող է յոթ օրով անջատել ջուրը**. արդյոք ապահովագրական գործակալությունը դա ֆինանսավորելու է, թե ոչ, և նման շատ օրինակներ՝ բույսերի հիվանդություններ և այլն:

Պետք է ապահովագրել նաև կառավարության սխալներից: Փորձ ունենք, որ Գյուղնախարարի որոշումներից տուժել կամ փչացել են այգիները:

Ապահովագրությունը պետք է լինի **երկաստիճան**՝ ինչպես ԱՊՊԱ-ն, և ԿԱՍԿՈ-ն:

Գյուղատնտեսության մեջ կարելի է ապահովագրել **միայն կենդանիները**:

Վրաստանի կարտոֆիլագործության ապահովագրման փորձը պետք է ուսումնասիրել ու կիրառել:

Անասնապահությունը ավելի **քիչ ռիսկային է**, ապահովագրությունը պետք է սկսել անասնապահությունից:

Ապահովագրության **կարիք ունի** առավելապես **այգեգործությունը**:

Անասնապահության մեջ պետք չի պարտադիր ապահովագրություն, իսկ **այգեգործության** պարագայում պարտադիր է:

Անասնապահության մեջ ապահովագրությունը պետք է լինի պարտադիր, որպեսզի կարողանանք բանկերում անասունները գրավադրել գուղատնտեսական վարկերի ժամանակ:

Որոշ մարզերում ապահովագրական փաթեթներ են առաջարկում: Մեր մարզին էլ են նման փաթեթներ պետք: **Կախված եկամտաբերությունից, հողատարածքի** չափից՝ կորոշվեն տոկոսադրույքները:

Տարբերակված մոտեցում է պետք ապահովագրության ներդրման համար: Օրինակ՝

խաղողն ու ընկույզը տարբեր գին ունեն, ու կախված մշակաբույսից, պետք է տարբեր փաթեթներ առաջարկել:

Անասնապահության ապահովագրության հնարավորությունը շատ ցանկալի կլիներ:

Արտահանելիս շատ կարևոր է սահմանին ապահովագրել արտադրանքը. ապահովագրությունը շատ կարևոր բան է:

Դ. ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Բնակլիմայական պայմանների շարունակական վատթարացումը ապահովագրությունն ավելի անհրաժեշտ է դարձնում, բայց բնակչության մեծ մասը հնարվորություն չունի, գոնե կեսը **պետք է սուբսիդավորվի** պետության կողմից:

Պետությունը պետք է սուբսիդիա տա **արդեն կայացած** կոոպերացիաներին:

Պետությունը թող սուբսիդավորի **ապահովագրական** համակարգի վճարները:

Պետք է սուբսիդավորել **համակարգերի ներդրումը**՝ ապահովագրություն, կաթիլային ոռոգման համակարգ և այլն:

Սուբսիդիաները **վառելիքի, ցանքի**, ցույց տվեց, որ մարդիկ սկսեցին ընդլայնել իրենց գործունեությունը:

Ենթակառուցվածքի ստեղծումը երբեք հոգս չի, հոգսն այն է, որ հասցնենք սպասարկել ենթակառուցվածքներն ու ծառայությունները: Ենթակառուցվածքների շահագործումն ու պահպանությունը պետք է իրականացվի պետության սուբսիդավորմամբ անպայման:

Սուբսիդավորումը լավ բան է, **ազատում է ռիսկերից**:

Սուբսիդիան պետք է տրվի **հող մշակողին**: **Դիզվառելիքին**, **պարարտանյութին**, **սերմնացուին** պետք է տալ սուբսիդա:

Կարելի է սուբսիդավորել **խոշորացողներին**:

Սուբսիդիան պետք է տալ **հող մշակողին**, ոչ թե ուժեղ ու թույլ, հարուստ ու աղքատ նայել:

Պետք է **սուբսիդավորել բոլորին** անկախ նրանից բարվոք բնակլիմայական պայմաններում է հողատարածքը, թե վատ:

Մեր երկրում ռեսուրսի կեսը չի օգտագործվում, նա ով **կարողանում է ճիշտ աշխատել**, կարել հենց նրան սուբսիդավորել և նրան տալ մնացած չմշակվածը:

Կոոպերացիան պետք է խնդիրների գիտակցումից սկսվի. **սուբսիդիա տալով կոոպերացիա չես ստեղծի**:

Պետությունը նախապես պետք է սուբսիդավորի, հետագայում **աստիճանաբար նվազեցնի** սուբսիդավորման աստիճանը:

Գյուղատնտեսության սուբսիդավորումը մինչև հիմա **հարստացնում էր օլիգարխներին**. սուբսիդավորվում էր դիզվառելիքը, քիմիկատը: Պետք է սուբսիդավորել ցանքսի հեկտարը:

Առանց սուբսիդիայի մի կերպ աշխատում ենք:

Սուբսիդավորումը ճիշտ է, եթե ճիշտ է իրականացվում, **առանց ծանոթ-բարեկամի, առանց կոռուպցիայի**:

Մինչև 70 տոկոս **ոռոգման կորուստ** կա, սուբսիդիայի մեծ մասը գնում է դրան:

Պետությունը սուբսիդավորում է, բայց գյուղացին հաճախ **նպատակային չի օգտագործում** վարկը, որովհետև չկա վերահսկողություն:

Կյանքը ցույց տվեց, որ սուբսիդավորումը **բլեֆ էր**. սուբսիդավորման գումարը գնում էր Ֆլե-ին ու մյուս օլիգարխներին:

Վառելիքը պետք է չսուբսիդավորվի, քանի որ մեխանիզատորը էժան գնով գնում է, բայց գյուղացուն ասում է գին՝ հաշվարկված շուկայականով ու գյուղացին չի զգում, որ սուբսիդիա կա:

Եթե ապացուցվի, որ տարիների սուբսիդավորման արդյունքում **ցանքատարածություն** է ավելացել կամ գյուղացու **եկամուտն** է ավելացել, ես կփոխեմ իմ անունը:

Եթե գյուղացին **սխալ տեխնոլոգիա** կիրառի, **ի՞նչ օգուտ** կարող է տալ սուբսիդավորումը:

Եթե 1 հա ցորեն մշակեմ, ապա պետք է հասկանալ տվյալ գոտում դա ինչ ծախսեր է ենթադրում ու ըստ դրա սուբսիդավորեն հող

Սուբսիդիան պետք է **հավասար** տրվի, եթե գյուղացին հող է մշակում, չպետք է նայել ինքը ինչ պայմաններում է գտնվում:

Պետությունը թող սուբսիդավորի **բոլորին հավասար՝ խոշորին էլ, փոքրին էլ**:

Մարզի կտրվածքով **առաջնահերթություններ** են. գյուղտեխնիկայի թարմացում, վարելահողերի խոշորացում, որակյալ **թունաքիմիկատների** սուբսիդավորում, սերմերի ոլորտի կարգավորում՝ որակի և գների առումով:

Պետք է փորձնական սուբսիդավորել **ցորենի ցանքը** (ոչ թե վառելիքը կամ պարարտանյութը), իսկ վերահսկողության համար, ասենք, օգտագործել դրոններ՝ տեսնել ցանքը իրոք կա, թե չէ:

Պետք է գյուղացիներին օբյեկտիվ **դասակարգել** ու ըստ այդմ սուբսիդիա տրամադրել, արդար կլինի:

Սուբսիդավորումը պետք է ուղղվի **կայացած** ֆերմերներին և տնտեսություններին:

Սկզբնական շրջանում պետք է կամավոր լինի **ապահովագրությունը**, պետությունը պետք է որոշ չափով օգնի, մասնակցի, մինչև գյուղացին ոտքի կանգնի:

Ցանկալի է, որ պարտադիր **գյուղապահովագրությունը** լինի պետական հովանավորությամբ:

Ապահովագրությունը սկզբնական շրջանում պետք է պարտադիր լինի, և պետությունը սուբսիդավորի ապահովագրության վճարի մի մասը:

Պետությունը պետք է մի քանի տարի գյուղացուն սատար կանգնի, մինչև **ապահովագրական** ծառայությունները բարելավվեն:

Սուբսիդիաներով վարկը ռիսկ չի լինի գյուղացու համար, եթե ունենանք **ապահովագրություն**:

Պետությունը **ապահովագրության** հիսուն տոկոսը թող սուբսիդավորի, մյուսը թողնի գյուղացին որոշի:

Ապահովագրությունը պետք է լինի պարտադիր, բայց միևնույն ժամանակ պետությունը պետք է անպայման աջակցի, հատկապես սկզբից:

Կամավոր պետք լինի **ապահովագրությունը**, որոշակի կայուն աջակցություն էլ պետք է տրամադրվի պետության կողմից:

Պետությունը թող **ապահովագրական** կազմակերպությանը վճարի որոշ գումար, վերադարձնելու պայմանով, երբ որ այդ մշակողին: **Պետք չի առանձին-առանձին վառելիք, պարարտանյութ ֆինանսավորեն**, որ **թափանցիկ չլինի**:

Սուբսիդավորումը պետք չէ նախապես անել, պետք է տեսնել ով ինչ է անում, **ըստ դրա տալ**:

Դասընթացներ են անցկացնում, հետո խոսք տալիս սուբսիդավորված վարկ, բայց հետո գնում ես բանկ, ասում են՝ դու **գերծանրաբեռնված** ես, քեզ չենք կարող սուբսիդավորված վարկ տալ, պետք է մեծ տոկոսով սովորական վարկ վերցնես:

Որտեղ պետությունը գումար ավելի շատ է կորցնում, այդ տարածքներում **քիչ պետք է սուբսիդավորում**, ավելի բարվոք պայմանների պետք է նայել նախապատվություններ տալուց:

Սուբսիդավորման համար **մրցակցային նորմալ պայմաններ չեն ստեղծված**: Տեղ չի տրվում սկսնակ ֆերմերներին: Պետք է լինի քաղաքականություն, որը նոր սկսող ֆերմերին սուբսիդավորի:

Սուբսիդավորման մինիմալ գումարը՝ երեք միլիոնը, **հասանելի չէ** բոլորին:

Գյուղացուն **սուբսիդավորելը սխալ է**: Դա նման է Փարոսին, չեն աշխատում, որ նպաստ ստանան:

Տոհմային ցեղերի սուբսիդավորումը կարևոր է, բայց **վատ է, որ 25-ից պակաս չեն տալիս**:

Գյուղացուն ավելի ձեռնտու է **ոչ թե սուբսիդիա, այլ ապրանքը իրացնելու օգնություն**:

ՋՕԸ-ի սուբսիդավորումն **անարդար** է, քանի որ սրանք նախատեսված են իբր շահույթ չհետապնդող կազմակերպություններ, սակայն պրակտիկան այլ բան է ցույց տալիս. դրանք գնալով հարստանում են: Մինչդեռ պետք է սուբսիդավորել հենց անհատ ջրօգտագործողին:

ՋՕԸ-ի սուբսիդավորումն **անարդար** է:

Մեզ մոտ հարցերի հարցը ոռոգումն է, և պետությունը պետք է զբաղվի կաթիլային ջրամատակարարման հարցերով, պետությունը պետք է դա **ամբողջությամբ ֆինանսավորի** և ոչ թե սուբսիդավորի:

Սուբսիդավորումները ընկալվում էին որպես **փող աշխատելու միջոց**:

Սուբսիդավորման **70 տոկոսը տեղ չի հասնում**:

Ցանկալի է, որ սուբսիդավորման փոխարեն **ապառիկ գումար** ձևակերպվի:

Կարևոր է քննարկել, թե սուբսիդավորման դեպքում ոնց է **կոոպերտիվին** վարկ տրվելու,

ընկերությունը կայանա:

Ապահովագրություն ներդնելուց առաջ պետությունը պետք է որոշակիորեն իր վրա վերցնի բեռը. օրինակ՝ սուբսիդավորման միջոցով: Իսկ ներդրումը պետք է կամավոր լինի, գոնե սկզբնական փուլում:

Եթե պետությունը չաջակցի, ոչ մի մասնավոր **ապահովագրելու** ռիսկին չի գնա: Պարտադիր պետք է լինի, կամավորի դեպքում կարող է շատերը չմասնակցեն:

Պետք է սուբսիդավորել, որ **կոոպերացիաները** զարգանան. դա կշահագրգռի գյուղացիներին միավորվել:

Կոոպերատիվներին պետությունը ֆինանսավորում է ամբողջ աշխարհում, մեզանում դա ևս պետք է արվի, որ կարողանան կոոպերատիվները կայանան:

Հավասար պետք է լինի սուբսիդավորումը: Օրինակ՝ ես մի կով ունեմ, դա ավելի թանկ է, քան խոշոր ֆերմերի մի քանի տասնյակ կովերը:

Դրսի ներկրածը մեր տեղականի կեսն արժի՞... առանց սուբսիդավորման **տեղականը** չենք կարողանա ապահովել:

Սուբսիդավորումը շատ կարևոր է, բայց ավելի **մեծ կոոպերատիվների** համար:

Սուբսիդավորումները **բոլորին** պետք է հասանելի լինի՝ և՛ մեծ տնտեսություններին, և՛ փոքրերին:

Պետությունը պետք է առաջնահերթ սուբսիդավորի **պարարտանյութը**, **թունաքիմիկատները**, **սերմը**, **վառելիքը**:

Ցանկալի է **հակակարկտային** միջոցներ ձեռք բերելու վարկային միջոցներ կամ սուբսիդիաներ լինեն:

Եթե սուբսիդիան տրամադրվի **պարարտանյութ** ներկրող կամ վաճառողին և նա «նիսյա» մեզ տա բերքը ստանալուց հետո վճարենք:

Հակակարկտային ցանցերը ճիշտ տեղադրելու համար կարևոր է պետության սուբսիդավորումը:

Սուբսիդիաները թող ուղղվեն **կարկուտից** պաշտպանված ցուցադրական այգիներ հիմնելուն:

Տարբերակված մոտեցում է պետք սուբսիդավորման համար՝ **խոշորին**՝ խոշոր, **փոքրին**՝ փոքր:

Գյուղացուն **ամեն ինչի համար էլ անհրաժեշտ է սուբսիդավորել**՝ օբյեկտիվ ուսումնասիրությունների պայմաններում: Չեմ ասում 1 հա ունեցողը գնա ասի տեխնիկա տուր գրավ են ուզելու, անդամներից ում բնակարանը պետք է գրավ դնել, նման հարցերը պետք է հասկանալ նաև:

Վերջին երկու տարին **վառելիքի** սուբսիդավորում **չի եղել**:

Սուբսիդավորման ապրանքները **համայնքապետը բաժանում է ծանոթ բարեկամներին**:

Սուբսիդավորված **պարարտանյութը** շատ **անորակ** է:

Նախկին իշխանության ժամանակ **կոռուպցիան** սխեմաների պատճառով գյուղացուն սուբսիդավորվող **պարարտանյութը** վերջնական սպառողին թանկ էր հասնում:

Սուբսիդիան **ձևի համար** հայտարարվում է, **օդի մեջ անհետանում**:

Ահռելի փողեր են գնում սուբսիդիաների վրա, ավելի ճիշտ կլինի **այլ տեղ ներդնել**:

Կոռուպցիայի պատճառով սուբսիդավորվող **տեխնիկան** գյուղացուն վաճառվում է անհամեմատ **թանկ գնով**:

Հակակարկտային ցանցերի գների և սուբսիդավորված վարկերի մասին գյուղացին **իրազեկված չի**:

Երբ այգիս ցուրտը տարավ, որտեղ տարիներով 15 աշխատող եմ ունեցել, դիմեցի մարզպետարան, որ ցածր տոկոսով վարկ տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին **մերժել անհիմն պատճառներով**, **խաբեբայության** նման մի բան էր սա:

Նախ պետք է պահենք հողը, լավ հող ունենանք, պետք է պետությունը կես գին դարձնի կալիումական աղի և ֆոսֆորաթթվի գինը, որ հողը նորից իր գործը անի: **Պետությունը միայն վարկ տալու համար չէ**: Գյուղատնտեսությունը պետք է ճանաչվի առաջին ռազմավարական ուղղություն:

Հիմա սուբսիդիա են տալիս գյուղացուն, սելիտրա, սերմեր, վառելիք: Բայց **արդյունք չկա**, չենք իմանում ում հասավ կոնկրետ:

Կաթիլային ոռոգման ու հակակարկտային ցանցերը սուբսդիավորելիս **պետությունը չպիտի ուղղորդի ումից առնել**: Թող ֆերմերը **որոշի ումից ձեռք բերի**:

Սուբսիդավորման ցանկացած տարբերակ օգտակար լինել, կարևորը **կոռուպցիա չլինի**:

ինձ:

Միայն **մեծերի** սուբսիդավորումը կբերի նրան, որ փոքրերը կսկսեն հողերը վաճառել:

Մեր մոտ մի հեկտարի վրա մեկ միլիոն երկու հարյուր հազար ծախս է արվում, իսկ Գեղարքունիքում էդպիսի տեղ չկա, որ նման ծախս արվի: Իհարկե, **տարբերակված** պիտի լինի սուբսիդավորումը:

Եթե սուբսիդավորեն մենակ **թույլերին**, մի տարի հետո բոլորը թույլ կդառնան:

Պետությունը պետք է **սուբսիդավորի առանց գրավադրման**, բայց մեծ պատասխանատվությամբ հետևի:

Գոտիականությունն էլ պետք է հաշվի առնել կազմակերպելու համար գյուղատնտեսությունը, օրինակ Էջմիածնի տարածաշրջանում ջերմոցներ, Արմավիրում այգիներ, մշակաբույսեր, Բաղրամյանի տարածաշրջանում ավելի շատ անասնապահությունը: Նման հարցերը պետք է հաշվի առնի պետությունը սուբսիդավորման ուղղություններն ընտրելիս ու նախապատվությունը տալ նրան, որտեղ ինչը լավ է լինում:

Այսօր մենք մեր մարզում, սուբսիդավորման շնորհիվ, ունենք **ջերմոցներ**, որոշել ենք **գաճաճ կեռասի ծառեր** աճեցնել:

Պետությունը պետք է սուբսիդիա տրամադրի **կաթիլային համակարգի** ստեղծման համար:

Պետությունը սուբսիդավորում է **անասնաբուժության** չորս **ծառայություն**: Իսկ մյուս մասը մնում է գյուղացու վրա:

Գյուղացիներին պետք է սուբսիդավորել **ըստ գյուղացու փաստացի զբաղվածության ոլորտի**, այսինքն գյուղացին էդ սուբսիդիան օգտագործի այն ոլորտում, ինչը որ ինքը կարողանում է անել:

Թող պետությունը սուբսիդավորի ոռոգումը: **Ոռոգումը դառնա ձրի**:

Սուբսիդիա ստանալու լավագույն տարբերակը **հողերի խոշորացումն** է:

Միայն **դիզվառելիքի** վարկը պետք է սուբսիդավորել:

Սուբսիդիան պետք է տալ **շատ խիստ ուսումնասիրված տնտեսությանը**, որը իսկապես այդ գումարով կարող է զարգանալ և դրա կարիքն իսկապես ունի:

Գյուղատնտեսությունն այնքան անկանխատեսելի է, որ շղթայի **բոլոր օղակներն** էլ պետք է սուբսիդավորվեն:

Եթե մարդը չի կարողանում կամ ուզում աշխատել, **ոչ մի սուբսիդիա չի օգնի**:

Սուբսիդավորման համակարգը այնքան **կոռումպացված** է այսօր, որ **զրո էֆֆեկտիվություն** ունի:

Պետությունը բերում է **անորակ սերմեր**, սուբսիդիայով տալիս են մեզ և մրցունակ արտադրանք չի ստացվում:

Դիզվառելիքի գները անընդհատ փոխվում են: Ասենք, էսօր դրա գինը տասը հազար դրամ է, և քեզ սուբսիդավորված ութ հազարով են տալիս: Հետո որոշ ժամանակ տևում է, մինչև վառելիքը բերեն հասցնեն քեզ: Երբ հասնում է քեզ, պարզվում է դիզ. վառելիքը արդեն շատ ավելի էժան է՝ ասենք, յոթ հազար դրամ: Էդ **սուբսիդիան դառնում է լրիվ անիմաստ**:

Մեզ սուբսիդավորում պետք է տնտեսությունը կայացնելուց: Դրանից հետո, **սուբսիդիա պետք չէ**:

Պետությունը վարկը **սուբսիդավորելու փոխարեն**, թող **լավ անասուններ ներմուծի**:

Սուբսիդավորում կա ինտենսիվ այգի ստեղծելու համար, սակայն **բանկը** վարկը տալիս է ինչ-որ կազմակերպության, որը որոշում է **ինչ-որ անհասկանալի մշակաբույս արտադրել**, իսկ գյուղացու համար, որը գիտի ինչը երբ ու որտեղ ավելի լավ կաճի, այդ **ֆինանսական միջոցները հասանելի չեն**:

Գյուղացի կա, որ **ծույլ է**, ի՞նչ իմաստ ունի իրեն սուբսիդիա տրամադրել:

Վայոց ձորում հողի մեկ հեկտարի մշակման մասով գներն ամենաթանկն են, մոտ հիսուն հազար դրամ: Տեխնիկան թեև սուբսիդավորված է ձեռք բերում տերը, բայց **գինը չի էժանացնում**:

Պետք է **մոնիտորինգ** անցկացնել գյուղում, որ տեսնեն, թե ով ինչպես է աշխատում, հետո նոր սուբսիդիա տան:

Սուբսիդիաների տրամադրման ժամանակ, բոլորը **օգտվում են բացի գյուղացուց ու պետությունից**:

Ես գումար եմ վճարել երեք ամիս առաջ, մի կերպ ստացել եմ իմ պարարտանյութը գյուղապետարանի միջոցով. մի քանի օր հետո նույն պարարտանյութը **խանութում ավելի էժան** եմ տեսել. էլ ինչիս էր պետք այդ օգնությունը:

Նախորդ տարիներին **սերամցու տվեցին, նորմալ չաճեց**, բայց ֆերմերին ստիպեցին վճարել:

Հողերը պետք է **միավորել**, որպեսզի սուբսիդավորումն ավելի արդյունավետ լինի: **Խոշորացումը** հնարավորություն կտա մշակել նաև անմշակ հողերը, որոնք այսօր ձեռքից գնում են:

Սուբսիդավորումը պետք է **տարբերակված** լինի: Արտադրողին այլ չափի տան, իսկ մշակող գյուղացուն՝ այլ:

Սուբսիդիաները պետք է **նպատակային** տրվեն: Գործից հասկացող մարդկանց պետք է տան:

Բնական աղետների դեմ պայքարի շատ լավ միջոցներ կան, բայց անգամ ամենաէժանները **ֆինանսապես հասանելի չեն** միջին վիճակագրական գյուղացուն:

Ավելի լավ է **վարկեր** տան, ամեն գյուղացի իր հարցերը լուծի:

Պարարտանյութի ու վառելիքի փոխարեն թող գումարը տան:

Մեզ պետք է, որ **սուբսիդավորումը լինի դրամական**, այլ ոչ թե, ասենք, դիզվառելիքի տեսքով:

Պետք է սուբսիդավորել **կոնկրետ գյուղացուն, ոչ թե ավելի մեծ միավորումներին, գյուղերին, համայնքներին**:

Եթե վարկը ձևակերպում են, տան **անձամբ գյուղացուն**, առանց միջնորդ կազմակերպության ու հենց գյուղացուն էլ հսկեն:

Ես վարկ եմ ուզում **կաթիլայինի** համար, ինձ ասում են՝ կտան, բայց էն դեպքում, եթե տվյալ կազմակերպությունը անցկացնի այդ համակարգը: **Ինձ փողը տվեք**, ես ինքս ամեն ինչ կկազմակերպեմ:

Ջրի կորուստները նվազեցնելու համար կաթիլային ոռոգումը խրախուսելու համար, **անտոկոս վարկեր** պետք է տալ սրա համար:

Ո՞վ է տալիս կաթիլային ոռոգման համար ցածր տոկոս վարկեր, գյուղացին այդպիսի **վարկերից տեղյակ չեն**:

Դիզվառելիքի, պարարտանյութի սուբսիդավորում ես չեմ ընդունում: **Խոշոր գումար պահանջվող դեպքերում** է ինձ պետք, որ պետությունը օգնի: Ընդհանրապես օգնել պետք է ըստ կոնկրետ ծրագրի:

Վարկային բեռը, միևնույն է, **մնում է գյուղացու ուսերին**:

Սուբսիդավորված **վարկերը բնական աղետների պատճառով դառնում են բեռ**:

Նորմալ **վարկերի** քա՞նի տոկոսն է ծառայում բուն **նպատակին**:

Սուբսիդիաների որոշ մասն է հասնում գյուղացուն: Կամ գյուղացին սուբսիդավորված վարկը **այլ նպատակներով** է օգտագործում:

Սուբսիդիա պետք է ստանա հաջողակ գյուղացին. նա եկամուտ կարող է ստանալ, անհաջողակը գնում **iPhone է առնում**:

Պետք է գյուղացու համար այնպիսի **վարկ** տրամադրել, որ նա գերադասի այդ վարկը հենց գյուղատնտեսության համար վերցնի:

Գյուղացին իրեն տրամադրված **վարկը ոչ նպատակային** է իրացնում: Կով գնելու փոխարեն հեռուստացույց է գնում:

Գյուղատնտեսական **վարկերը վերցնում են ու նպատակին չեն ծառայեցնում**, պետք է լինի լուրջ վերահսկողություն:

Սուբսիդիան պետք է **նպատակային** բաժանվի, ոչ թե **ձևական**:

Դեմ եմ փող տալուն: **Փողը թուլացնում է աշխատողին**: Ոնց որ նպաստ ստանալը օրինակ: Գյուղացին ոչինչ չի անում, որ միավորը չբարձրանա, նպաստից չկտրվի:

Բանկին դիմել եմ, ասել եմ, որ իրավիճակը փոխվել է երկրում, ինձ ուղարկել են դասընթացի, բայց մեկա **բանկը վարկ չի տալիս, չի հանել սև ցուցակից**:

Գյուղատնտեսական վարկերը ինչպես և մյուս

վարկերը պետք է **վերահսկողություն** ունենան:

Մեր կոոպերացիան այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, **բայց հարկային և վարկային բեռի** պատճառով մեր ամբողջ **եկամուտը** ուրիշներին ենք տալիս:

Մենք չենք կարողանում **մինիմալ պայմաններ** ստեղծել, որպեսզի Սևան զբոսաշրջիկ բերենք, չունենք այդ հնարավորությունները, թող մեզ օգնեն, լավ պայմաններով վարկեր տան:

Գյուղացուն այսօր **ոչ թե վարկ է պետք տալ, այլ սովորեցնել**, թե ինչից ինչ է պետք ստանալ:

Գյուղվարկերի համար մեծ խնդիր է **դոլարի և դրամի տատանումները**:

Տարերային աղետների պատճառով բերքի վնասի դեպքում վարկային մարումների հարցում **պետական աջակցության** կարիք կա:

Մարդիկ **մեծ վարկեր** են վերցնում, թանկարժեք սերմ գնում, բայց կարկտահարության պատճառով **ամբողջ բերքը կորցնում են**:

Ինձ **ձեռք չի տա լիզինգով** գյուխտեխնիկա գնել:

Գյուղտեխնիկայի քանակի խնդիր գրեթե չունենք, հնացած էլ կա, նորերն էլ՝ **լիզինգով**:

Սուբսիդավորումը լավ բան է, բայց մարդիկ ամեն դեպքում **խուսափում են վարկ վերցնելուց**:

Բանկերը պետք է ճիշտ ձևով տրամադրի վարկը: Շատ գյուղացիներ և ֆերմերներ բողոքում են բանկերում առաջացող խնդիրներից:

Գյուղացին **վարկերի տակ է** ինչպես **բնության** և **պետության քաղաքականության**, այնպես էլ **միջոցների ոչ ճիշտ կառավարման** պատճառով:

Վարկերը տրամադրելուց **գյուղացին խաբվում է**:

Մեր մեծ սխալը գյուղացուն ֆինանսական աննորմալ վիճակի մեջ դնելն էր: Գյուղացու համար **չպետք է լինի նման վարկավորում**:

Քանի՞ տարի պետք է աշխատեմ, որ հակակարկտային ցանցերի **վարկերը փակեմ**:

Սառնարանային տնտեսությունները պետք է լինեն բոլոր մարզերում: Մարդիկ սեփականաշնորհում են դրանք, բայց չեն կարողանում օգտագործել, որովհետև **վարկ չեն տալիս**:

Գյուղացուն վարկ չեն տալու որ մեծ հողատարածք ցանի ու **անձամբ վաճառի Ռուսաստանում**: Եթե մեծ հողատարածք ունենամ կվաճառեմ դրսում:

Քանի որ կոոպերատիվի նախագահը բարձ, վտանգավոր **տարիքում** է, վարկ չեն

	տրամադրում: Ես երեք միլիոն դրամ վարկի համար դիմել էի, բայց արդեն մի քանի ամիս է, **չեն տալիս**: Բանկերը **հրաժարվում են կոոպերատիվներին** ֆինանսավորել: Նրանք գիտեն, որ սրանք չաշխատող կառույցներ են: Այնքան **թուղթ** են ուզում մի հատ վարկ տալու համար, որ մի **հազար անգամ գնալ-գալուց** հետո այնպես ես **հիասթափվում**, որ դու ես պատրաստ լինում վճարել, որ քեզ այլևս վարկ չտան: Գյուղատնտեսության **վարկերը մարելու** համար գյուղացին ստիպված գնում է Ռուսաստան:
Եթե բարձր տոկոսով վարկերը մինչև հիմա փակել ենք, մինչև 24%-ով, ցածր տոկոսով **ինչի չպետք է ուզենք ու չկարողանանք**: **Բարձր տոկոսով** վարկերը շատ լավ է, դա ստիպում է գյուղացիներին ավելի զգոն լինել:	**Վարկային** կազմակերպությունը տալիս է սուբսիդավորված վարկ ցածր տոկոսներով, բայց **գյուղացու եկամուտը այնքան քիչ է, որ ծանրաբեռնվում է վարկերով**: Վարկը պետք է **անտոկոս** լինի գյուղացու համար, կամ շատ ցածր լինի, այնքան էլ ընթացիկ ծախսեր ես անում, որ անիմաստ է լինում այդ վարկը վերցնել: Վարկի **տոկոսը** պետք է իջեցնել, գյուղացուն գիտելիքով զինել, վարկերի ժամկետներն էլ երկարացնել: Վարկերի **տոկոսադրույքը** այնքան բարձր է, որ գյուղացին չգիտի աղետի դեպքում ինչպես պիտի փակի վարկերը: Պետությունը պետք է գյուղացուն սուբսիդավորի փոքր **տոկոսադրույքով** վարկեր տա: 16-24 տոկոսանոց վարկերով անհնար է աշխատել: Սուբսիդավորվող վարկերը, բացի **կաթիլային** և **ցանցային** ոռոգումը, բավականին **մեծ տոկոսներ** են պահանջում, որն արդեն **անարդյունավետ** է դարձնում նման վարկերից օգտվելը: **Բանկերը** մտածված գյուղացուն գցում է **բարձր ռիսկայնության** շահառուների ցանկում, որպեսզի վարկերը **բարձր տոկոսադրույքով** տան: Գյուղացիները տարիներ շարունակ **ֆինանսական մեծ բեռի** տակ են, քանի որ **տոկոսադրույքները շատ բարձր են**: Սահմանադրությունն ինչի՞ հետ համեմատելով ընդունեցին՝ Ֆրանսիայի: Եկեք **վարկերն** էլ ֆրանսիականի հետ համեմատենք: Մեզ մոտ շատ բարձր են տոկոսները: Վարկավորման **տոկոսադրույքները շատ բարձր** են:

	Կարտոֆիլի համար **գոնե երեք-հինգ տոկոս** պետք է լինի վարկի տոկոսադրույքը: Անտառ կտրելն արգելված է, մյուս կողմից էլ գյուղացու վրա փաստացի **բարձր տոկոսով վարկեր** են թողնում: Փակուղային է վիճակը: Բանկը այնպիսի պայմաններ են առաջարկում, որ գյուղացին երբեք չի կարող ապահովել ու **ցածր տոկոսով վարկը միֆ է**, հետո կարող են զանգել ւ ասել, որ կարանք ավելի բարձր տոկոսով վարկ տանք. տեխնիկա է ինչ-որ սա: Կայուն շուկայի ստեղծումն ու երկարաժամկետ **ցածր տոկոսով վարկերը** առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ են: Մեզ համար կարևոր է **ցածր տոկոսով երկարաժամկետ** վարկերի տրամադրումը:
	Գյուղատնտեսական տեխնիկայի **լիզինգի ժամանակահատվածը** պետք է երկարացնել մինչև տաս տարի և ավելին, որպեսզի ես կարողանամ և՛ ընտանիքս պահել, և՛ գյուղատնտեսական գործունեությանը մասնակցեմ: Գինին սարքելուց անմիջապես հետո չի վաճառվում: Գոնե երկու տարի պիտի պահես, որ շշալցնես: Կաթիլային ոռոգման դեպքում հինգ տարով են առաջարկում վարկը, իսկ գինու արտադրության համար՝ մեկ տարով: Որքանո՞վ է սա խելքին մոտ: Սուբսիդավորվող վարկն **առնվազն երեք տարվա համար** պետք է տրվի գինեգործության համար: Վարկերի տրամադրման կանոնները վերանայման կարիք կա՝ մասնավորապես **ժամկետների** մասով: Գյուղացուն **չպետք է տալ կարճաժամկետ վարկեր**: Գյուղատնտեսության մեջ ցանկացած ներդրում պահանջում է **առնվազն երեք տարի** որպեսզի արդյունքը տեսնենք, հետևաբար վարկերը պետք է սկսենք մարել երեք տարի հետո: Այնտեղ, որտեղ հարթավայր է, մեխանիզացիան հեշտ է օգտագործել: Իսկ մենք համայնքներ ունենք, որտեղ կոմբայն չկա, որ հացահատիկ հավաքի: Ասենք, լիզինգով կոմբայն վերցրեցի: Դա աշխատելու է երկու ամիս միայն, մինչդեռ ես **12 ամիս պիտի վճարեմ լիզինգը**:
	Պետությունը սուբսիդավորում է գյուղատնտեսական վարկերը, բայց մեզ **վարկ չեն տալիս, անգամ գրավի դիմաց**: Պետք է ապացուցես որ գյուղատնտեսությամբ զբաղվում ես, որ սուբսիդավորվող վարկ

	ստանաս: Պահանջում են **մեծ տարածքներ, անասունների մեծ գլխաքանակ**: Ով **անասուն** չունի, **ռիսկային** է դառնում նրան վարկ տրամադրելը: Գյուղացուն առանց **գրավի** հակակարկտային ցանցի համար վարկ չեն տալիս: Ես բանկ եմ դիմել սուբսիդավորվող վարկի համար, բայց **մերժել են անասուն չունենալու պատճառով**:
Ով կարողանում է, ասենք, **տասը միլիոն վարկ** վերցնի բանկից, զբաղվում է ծիրանի արտահանմամբ, հետո գնում Լարսում մնում բերքը փչացնում է, գալիս ասում է՝ մենք պետք է ծիրանը հիմա հարյուր դրամով գնենք, որ փչացածի տեղը հանենք: Գյուղացին էլ ընտրության հնարավորություն չունի, ստիպված էժան տալիս է:	ACBA բանկը, որ գյուղատնտեսական բանկ էր, հիմա ձևը փոխել են, 3.000.000-ից ոչ պակաս վարկ չի տալիս, իսկ ինձ՝ գյուղացուս համար դա **մեծ բեռ է, ինչ եմ անում այդքանը**: Աքբա բանկով **լիզինգով** հնարավոր է գումարներ վերցնել, բայց **տեխնիկան անմատչելի է, ամբողջ կյանքդ չես կարող փակել**: Պետությունը գյուղացուն տալիս է հինգ տոկոսանոց վարկ, բայց **նվազագույն շեմը** երեք միլիոն դրամ է: Գյուղացին, որին մեկ միլիոն դրամ է պետք, չի կարողանում օգտվել: Պետությունը արտոնյալ վարկեր է տալիս ինտենսիվ այգիների համար, բայց մարդիկ միևնույն է խուսափում են այդ վարկերից, քանի որ **գումարն է մեծ ստացվում**՝ քսանհինգ միլիոն դրամ մի հեկտարին:

Գյուղատնտեսական **ենթակառուցվածքները** ահավոր վիճակում են:

Գյուղատնտեսության զարգացման գործում կարևոր դեր ունի **ջրամատակարարումը**, մեր մոտ այդ խնդիրը շատ խորն է:

Մեր ջրերը ձրի գնում են թուրքին, իսկ մենք **ջուր չունենք**:

Հողերի **ոռոգելիության** մակարդակը մտահոգիչ է:

Ենթակառուցվածքները մեր **ամենացավոտ** տեղն է:

Ենթակառուցվածքների բացակայությունը խնդիր է:

Երեսուն տարի յոթանասուն տոկոս կորստի պայմաններում հնարավոր էր մի քանի անգամ **նորոգել ոռոգման համակարգը**:

Մինչև **70 տոկոս ոռոգման կորուստ** կա, սուբսիդիայի մեծ մասը գնում է դրան:

Ունենք **70 տոկոս ջրային կորուստներ**:

Ամենակարևորը ոռոգման հարցն է, որը գյուղերի մեծ մասին ունի: Մոտ **90 տոկոս կորուստներ** ունենք:

Համայնքների **ոռոգման ներքին ցանցի** վիճակն անմխիթար է ու այստեղ պետք է ներդրումներ արվեն:

Եղեգնուտում 4 **խորքային հորի** ծրագիր կա, բայց վերջին ժողովին ասում են փող չկա, եկեք 2-ը սարքենք:

Կան գյուղեր, ուր **ոռոգման ջուրը ավելի ուշ է հասնում**: Բնականաբար իրենց նկատմամբ **վերաբերմունքը այլ** պետք է լինի:

Ջրի խնդիր ունենք: Ընդամենը մի քանի կիլոմետր խողովակաշարի խնդիր ունենք, չենք կարողանում լուծել այդ խնդիրը: Պետք է Ակնալճից խողովակաշարով ինքնահոս ջուրը բերել:

Ճիշտ **ջրամատակարարումից** շատ բան է կախված: Գյուղացին շատ **գումար է կորցնում**, եթե ոռոգումը ճիշտ չի կազմակերպվում:

Ենթակառուցվածքների առկայության դեպքում, գյուղացիները բնությանը ավելի **խնայողաբար** կվերաբերվեն:

Խոտաբույսերի բիզնեսը շատ ձեռնտու է, մենք շատ գնորդներ էլ ունենք, բայց այսօր անգամ մի **մեքենա** չենք կարողանում ձեռք բերել, որ

Մեծ համայնքների համար ենթակառուցվածքների համար ներդրումները արդարացված են, բայց **փոքր** համայնքների համար՝ ոչ: Այսինքն՝ էլի **հարուստը շահեց,** աղքատը՝ ոչ:

Ջուրը մեր մարզում **ամենագլխավոր խնդիրն** է, իսկ **պետական կառույցները սին խոստումներ** են տալիս:

Մեզ մոտ **կլանային համակարգ** է գործում: Եթե **ծանոթ** ունես, կկարողանաս ջրել քո այգին:

Մինչև **ջուրը ինքնահոսով** հասնում է մեր գյուղ, ջուր չի մնում: Ջուրը **ճիշտ չի բաշխվում** մեզ մոտ:

Մեր գյուղում **ջրամատակարարման խնդիր չունենք**, գետ և առու ունենք, ու ոչ մի գումար չենք մուծում, որովհետև մեր սարերի ջուրն է:

Համայնքապետարանը պետք է **ջրելու հստակ հերթ** սահմանի, որ **առավելություններ** ունեցողներ չլինեն:

ուսներիս դրած չբերենք:

Սառնարանային տնտեսությունները պետք է լինեն բոլոր մարզերում: Մարդիկ սեփականաշնորհում են դրանք, բայց չեն կարողանում օգտագործել, որովհետև վարկ չեն տալիս:

Գյուղատնտեսական ինֆրաստրուկտուրաներ էլ չկան: Օրինակ **լաբորատորիաներ**: Մասնագետները աչքաչափով են ստուգում որակը:

Զարթոնքում ոռոգման ջրերն Արմավիրի ու Մեծամորի կոյուղաջրերն են, տանում են, ստուգում, նորմալ արդյունքներ են... Ի՞նչ վերահսկողության մասին է խոսքը: Տարբեր պետական մարմիններին դիմել ենք **մաքրման կայաններ** սարքելու համար, առայժմ անարդյունք:

Եթե համայնքներում **ոռոգման** խնդիրը չենք լուծում, **ապահովագրությունը** դառնում է անիմաստ:

Հայաստանի տարածքների մեծ մասն **անջրդի** են, ուստի առաջարկում եմ **դարավանդներ** սարքել և **մասրենի տնկել**: Սա իսկապես շահավետ ծրագիր կլինի:

Ջրի խնդիր էլ ունենք, մեզ օգնություն է պետք այդ հարցում, ուզում ենք **վերականգնել** մեր **խնձորի այգիները**:

Այսօր շատ կարևոր է **ոռոգման** համակարգի **արդիականացումը**, որովհետև գործող համակարգն ամբողջությամբ կոռումպացված է:

Միջնակարգ դպրոցի կոլեկտիվով կցանկանայինք օգտագործել համայնքի չմշակվող հողատարածքները: Ցանկապատման ու **ջրի առկայության** դեպքում կարող ենք **ծաղիկների ջերմոցային տնտեսություն** վարել:

Եթե իմ հողը **ջրի մոտ է**, լավ տարածք է, կյանքում չեմ համաձայնվի **կոոպերացիայի** մեջ մտնեմ ուրիշների հետ:

Գյուղատնտեսական ապրանքի **վերամշակման** զարգացումը գյուղերում խիստ անհրաժեշտ է և շատ շահավետ կարող է լինել:

Պետք է մեր հարստությունը՝ **ոռոգման ջուրը** չպետք է մեր երկրից դուրս տան: Գյուղատնտեսության համար սա ստրատեգիական հարց է:

Նախապես **տարվա սկզբում ծանուցումն** էլ շատ կարևոր է, թե **ջրային ռեսուսները** որքան են ու հաշվի առնենք մշակաբույսերը ընտրելիս:

Պետք է այնպես անել, որ **ջրի**

հասանելիությունը բոլորին **հավասար** լինի կամ ըստ պահանջարկի, ոչ թե ավել կամ պակաս:

Այսօր մեր **ջրային ռեսուրսները** սխալ կառավարման արդյունքում այլ պետություններին է գնում, մենք էլ մնում ենք առանց ջուր: Մինչև ջրի հարցը չլուծվի, ոչ մի հարց չի լուծվելու: Այս հարցը պետք է պետությունը լուծի:

Ջան ֆիդայի մոտ **ջրամբար** կառուցելու և՛ տեղ կա, և՛ անհրաժեշտություն, իսկ պետությունը մինչ օրս **ոչ մի աշխատանք** չի կատարել էտ ուղղությամբ:

Թուրքիան արդեն **երեք ջրամբար** է կառուցել ու կուտակումներ է կատարել:

Ջրային ենթակառուցվածքների ստեղծման համար կատարվում են աշխատանքներ, բայց **ոչ բավարար**:

Բամբուկների պատճառով ջրի մեծ կորուստներ է լինում, քանի որ բամբուկները գյուղացուն հասանելիք ջրի մեծ մասը «քաշում են»:

Զարթոնքում նախկինում Սև **ջրերից** էինք օգտվում, որոնք ուղղեցին դեպի Մասիս **ձկնաբուծության** համար: Ոչինչ չենք կարողանում անել այս առումով:

Ջրանցքների կապիտալ վերանորոգում է անհրաժեշտ:

Եթե ուզում ենք գյուղատնտեսություն զարգացնել, պետք է դիֆերենցված մոտեցում ցուցաբերել: Չպետք է, օրինակ, Արարատյան դաշտում ու մեզ մոտ **ջուրը նույն գինը ունենա**:

Մեզ մոտ ձմեռը ութ ամիս է, իսկ Արարատյան դաշտում՝ չորս: Առաջարկում եմ, որ **գազի գինը** տարբեր լինի:

Ոռոգման **ջրի էժանացում**, թունաքիմիկատներ՝ էժան և որակով, մեխանիզմների զարգացում, իրացման աջակցություն: Սա է բանաձևը զարգացման:

Ջրի վարձերը բարձր են, վերցրել են սովետական ժամանակի նորմատիվները հա-ին 1000 լ է պետք, բայց մենք փորձարկել ենք, որ դրա 50%-ը բավարարում է: Եթե 50%-ով վարձը էժանացնեն, բոլորին էլ ավելի հեշտ կլնի, իսկ գումարները հավաքելը դժվար է:

Մինչև ջուրը հասնում է մեզ, ՀԷԿ-երը գիտեք ինչ **գումարներ** են աշխատում ու ինչ աննշան գին են վճարում, իրենք գերշահույթ են ստանում՝ օգտագործելով իմ ջուրը, թող մի մասը՝ իմ ուսերին դրվածի **իրենք վճարեն**, իրենք իմ հասանելիք ջուրն են օգտագործում:

Մեկ լիտր **ոռոգման ջուրը 90,000 դրամ է:**

Մեր գյուղում ջրամատակարարման խնդիր չունենք, գետ և առու ունենք, ու ոչ մի **գումար չենք մուծում**, որովհետև մեր սարերի ջուրն է:

Գյուղացին չորրորդ ձեռքն է՝ ջուրը ջրամբարից Ախուրյան ջրառն է վերցնում, հետո՝ ՋՕԸ-ն, հետո նոր մենք...

Հողի տեսակները հաշվի չեն առնում, թե տարվա կտրվածքով քանի անգամ պետք է ջրել, հստակ քանակ է որոշված բոլորի համար ու հերիք չի ամեն տարի վ**ճարում եմ էտ ֆիքսված քանակի համար**, բայց չեմ ջրում այդքան, նաև **առանձնահատկությունները** հողի հաշվի առնվեն:

Ժողովուրդը չի կարողանում **ջրի վճարները** տալ, որովհետև ոչ մի աշխատանք չկա մեզ մոտ:

Երբ ջուրը ինքնահոսով գնում է Նախիջևան, ո՞վ է վճարում դրա համար: Իսկ երբ մենք ենք տանում մեր հողերը ջրելու, **մեծ գումարներ** ենք վճարում:

Կառավարությունը պետք է ստեղծի **սիմվոլիկ գումար ջրի վարձի համար**, օրինակ հեկտարի ջրապահովումն արժի որոշակի գումար ըստ մշակաբույսերի: Սա հնարավորություն կտա գյուղացուն նախապես իմանալ գումարի չափը:

Ես այգի եմ տնկել, բայց խնդիրներ կան ջրելու հետ կապված. կամ ջուր չկա, կամ **եղածն էլ թանկ է**:

Ես տարեկան մոտ 100.000 դրամ **ջրի համար վճար** եմ տալիս, իսկ մեր ջրերն էլ դուրս են գալիս երկրից ու անիմաստ հոսում:

Որոշ համայնքներում **ջրի վարձը** 11 դրամ է, սակայն կարիք կա **վերանայել այս սակագինը** Վայոց Ձորում, որտեղ կավի պատճառով հսկայական ծավալով ջուր է կորչում: Այստեղ որոշ տոկոսով պետք է սակագինն իջեցվի:

Նախ պետք է կարկուտից և այլ աղետներից պաշտպանվելու համար համակարգեր ներդնել, **կաթիլային ոռոգում** ապահովել, նոր ապահովագրության համակարգը ներդնել:

Կաթիլային համակարգը ամբողջապես փոխում է **մշակման ընթացքը և ծախսերը**:

Կաթիլային համակարգի մասին մենք **ոչինչ չգիտեինք**, մեզ եկան և **սովորեցրեցին**, ցույց տվեցին, սկսեցինք օգտվել, շատ **գոհ ենք**:

Շատ **ցանկալի** կլիներ, որ **Վայոց Ձորի** մարզում ներդրվի **կաթիլային ոռոգման** համակարգ, որովհետև **քարքարոտ հողեր** են, որը թույլ է տալիս, որպեսզի **ջուրն ավելի ներքև իջնի**:

Կաթիլային ոռոգում որոշ տնտեսություններ արդեն ներդրել են: **Շատ օգտակար** բան է, քանի որ **համակարգիչն** է որոշում, թե երբ և ինչքան ջրի, ու ըստ այդմ խուսափում **գերոռոգումից** կամ **ուշ** ջրելուց: Բացի դրանից կարող ես նույն համակարգով **պարարտանյութ**

Կաթիլային ոռոգման համակարգի անհրաժեշտությունը մեզ մոտ էդքան էլ **կարևոր չի**, ոչ համապատասխան **մշակաբույս** ունենք, կարտոֆիլ ենք աճեցնում, որը կաթիլայինով չես ոռոգի: Չնայած որ կաթիլային համակարգը **կտնտեսեր** ջրի օգտագործումը, ինչի խնդիրը ունենք:

Կաթիլային ոռոգումը օգտակար է **միայն ջերմոցային** տնտեսության համար: Այլ դեպքերում **ծախսերը շատ** են լինում:

Համայնքներ կան, որտեղ **կաթիլային ոռոգումն անիմաստ է**, քանի որ **այլ օգտակար եղանակներ** կան:

Կաթիլային ոռոգման համակարգը չի աշխատում այստեղ ու նպատակահարմար չէ:

Մեր երկրում անապատացում է սկսվում, մենք **կաթիլային ոռոգում չենք կարող** իրականացնել:

Կաթիլային ոռոգումը բերելու է հողի

տաս: Բայց քանի որ մեր տարածաշրջանում **ջրի խնդիր որպես այդպիսին չկա**, **քչերն են հետաքրքրված** կաթիլային համակարգով:

Պետք է **սուբսիդավորել** համակարգերի ներդրումը՝ ապահովագրություն, **կաթիլային ոռոգման** համակարգ և այլն:

Ջրի կորուստները նվազեցնելու համար **կաթիլային ոռոգումը** խրախուսելու համար, **անտոկոս վարկեր** պետք է տալ սրա համար:

Թող **կաթիլային համակարգը պետությունը ստեղծի**, ընդհանուր մի աղբյուր ստեղծի, որ մի քանի տնտեսություն օգտվի: Մի հոգին մեկ միլիոն չի կարող ծախսել:

Մեզ մոտ հարցերի հարցը **ոռոգումն** է, և պետությունը պետք է զբաղվի **կաթիլային ջրամատակարարման** հարցերով, **պետությունը պետք է դա ամբողջությամբ ֆինանսավորի** և ոչ թե սուբսիդավորի:

Ո՞վ է տալիս **կաթիլային ոռոգման** համար **ցածր տոկոս վարկեր**, գյուղացին այդպիսի վարկերից **տեղյակ չեն**:

Պետությունը պետք է **սուբսիդիա** տրամադրի **կաթիլային ոռոգման** համակարգի ստեղծման համար:

Այսօրվա որևէ փոքր տնտեսություն ի վիճակի չի անցնել **կաթիլային համակարգի** առանց **պետական աջակցության**:

Գինին սարքելուց անմիջապես հետո չի վաճառվում: Գոնե երկու տարի պիտի պահես, որ 22ալցնես: **Կաթիլային ոռոգման դեպքում հինգ տարով** են առաջարկում վարկը, իսկ գինու

տեխնիկական վիճակի **դեգրադացման**, և իսկական **աղետի** է բերելու:

Որոշ պտղատու ծառերի համար մուչապատումը ևս լուծում է, **կաթիլայինին հավասար**:

Ամեն տեղ չէ, որ կաթիլային համակարգը իրեն արդարացնում է:

Կաթիլային ոռոգման օգտակարությունը հասկանալու համար, նախ պետք է հասկանանք դրա արժեքը:

Հողի որոշ հատվածներ է հնարավոր **կաթիլային** համակարգով ջրել, մյուս մասը շատ **ծախսատար է**:

Կաթիլային ոռոգման համակարգի օգտակարության մասին պատկերացումները չափազանցված են:

Սուբսիդավորվող **վարկերը**, բացի **կաթիլային** և **ցանցային** ոռոգումը, բավականին **մեծ տոկոսներ** են պահանջում, որն արդեն **անարդյունավետ** է դարձնում նման վարկերից օգտվելը:

Կաթիլային ոռոգման ու հակակարկտային ցանցերը **սուբսդիավորելիս** պետությունը չպիտի ուղղորդի **ումից առնել**: Թող ֆերմերը որոշի ումից ձեռք բերի:

Ավելի լավ է **անհատներին ֆինանսավորեն**, որպեսզի ենթակառուցվածքները պահպանի: Ես մեծ այգի ունեմ, որտեղ ջուրը գետով է գնում, ինձ եթե ֆինանսավորեն ու խողովակ քցեմ այդ նույն ջրով մի քանի այգի կջրվի:

ՋՕԸ-ի սուբսիդավորումն անարդար է:

ՋՕԸ-ի սուբսիդավորումն անարդար է, քանի որ սրանք նախատեսված են իբր շահույթ չհետապնդող կազմակերպություններ, սակայն պրակտիկան այլ բան է ցույց տալիս. դրանք գնալով հարստանում են: Մինչդեռ պետք է **սուբսիդավորել հենց անհատ ջրօգտագործողին**:

ՋՕԸ շատ անարդյունավետ են աշխատում, եթե ես դատի տամ անգամ, ես տանուլ կտամ, ես պաշտպանված չեմ իրենց վատ գործունեությունից. իրավական դաշտում պետք է փոփոխություններ իրականացնել: ՋՕԸ մեզնից չի վախենում, ինչպես ուզում է, այնպես էլ վարվում է: Մենք այսօր ոչ մի ոլորտում **պաշտպանված չենք**:

Պայմանագրային հարաբերությունները պետք է **միակողմանի** չլինեն, **միայն իրենց շահերն են, ոչ մեր**, այ որ մեզ էլ համապատասխան ջրով են ապահովում ու այգիս չորանում է, ես էլ

արտադրության համար՝ մեկ տարով: Որքանո՞վ է սա խելքին մոտ: Սուբսիդավորվող վարկն առնվազն երեք տարվա համար պետք է տրվի գինեգործության համար:

Խորքային **հորերի սպասարկումը պետության** գործն է:

Պետությունը պետք է անիմաստ կորչող **ջուրը հասցնի գյուղացուն**:

Թող պետությունը **սուբսիդավորի** ոռոգումը: **Ոռոգումը դառնա ձրի**:

Մեր համայնքը՝ Գնդեվազը հայտնի է իր ծիրանով ու այստեղ ծիրան է պետք աճեցնել՝ դա է թելադրում շուկան: Բայց ծիրան աճեցնելու համար, մեզ պետք է, որ, ասենք, ոռոգման համար **առաջին մի քանի տարին պետությունը օգնի**, մինչև ծառը սկսի բերք տալ:

կարողանամ դատի տալ:

Պայմանագիրը կնքում են, ջրաղբյուրում ջուր չկա ու իրենք **ալտերնատիվ չունեն**, թե նման դեպքում ինչ պետք է անել:

Ջուրը **սուբսիդավորվում** է, բայց **գյուղացին չի զգում** դա:

Ջուրը պետք է տալ **համայնքին**, այլ **ոչ թե ստեղծել ջրային տնտեսություններ**, քանի որ համայնքը ավելի լավ գիտի իր խնդիրները:

2. ԳՅՈՒՂՏԵԽՆԻԿԱ

Գլխավոր խնդիրը **գյուղտեխնիկայի թարմացումն** է:

Մարզի կտրվածքով առաջնահերթություններ են. **գյուղտեխնիկայի** թարմացում, վարելահողերի խոշորացում, որակյալ թունաքիմիկատների սուբսիդավորում, սերմերի ոլորտի կարգավորում՝ որակի և գների առումով:

Այսօր **գյուղտեխնիկայի հարցը լուրջ** է, որովհետև փչանալու դեպքում մասնագետ չկա: Չկա ինժեներ պատրաստող որևէ օղակ:

Գյուղատնտեսական տեխնիկան **մասնավոր** է և շատ **հին**:

Ռազմավարական քայլ՝ ստեղծել հնարավորություններ չմշակվող վարելահողերի մշակման համար, որոնք այսօր կազմում են շուրջ 40000 հեկտար, որի համար անհաժեշտ է **գյուղտեխնիկայի թարմացում**, էժան վառելանյութ, որակյալ սերմնացու և իրացման շուկայի կարգավորում, արտահանման շահավետ պայմաններ:

Գյուղտեխնիկան ընդհանուր **մաշված** է:

Գյուղտեխնիկան **մաշված** է, թարմացման կարիք կա:

Տեխնիկաները բարոյապես, ֆիզիկապես **մաշված** են, նոր տեխնիկայի խնդիր ունենք: եթե նոր տեխնիկան մեկ հեկտարը կվարի մեկ ժամում, մենք օրերով ենք վարում:

Գյուղտեխնիկայի **մաշվածությունը** լուրջ խնդիր է, մեծ ծախսեր ենք անում վերանորոգելու

Գյուղտեխնիկայի **քանակի խնդիր գրեթե չունենք**, հնացած էլ կա, նորերն էլ՝ լիզինգով:

Տեխնիկա ունենք, դրանից չենք նեղվում, ավելի շատ **մասնագետների վճարելիության** հարցն է: Դա մտել է հարկային դաշտ:

Պետության տրամադրած **դիզվառելիքը անորակ** է, որի օգտագործման պատճառով **վնաս է կրում տեխնիկան**:

Բոլոր համայնքներում առնվազն հինգ հարյուր հեկտար հող չի մշակվում: **Տեխնիկան բերենք, ի՞նչ անենք**: Գյուղացուն երաշխիք է պետք պետության կողմից իրացվելիության: Այդ դեպքում այդ հողերն էլ կմշակվեն ու հավելյալ ու նոր տեխնիկան իմաստ կունենա:

համար:

Երկար տարածքի վրա, միանգամից մի քանի գյուղ մի կոմբայն է սպասարկում: Այն էլ **մաշված**:

Եթե **կոոպերատիվներին** ես տրամադրում տեխնիկան, իրենք շատ սրտացավ են լինում, շատ ավելի արդյունավետ են օգտագործում:

Կոոպերացիաների ստեղծումը **կանխեց գյուղտեխնիկայի աշխատանքի գների աճը**, սպասարկումը դարձրեց գյուղացու համար ավելի մատչելի:

Տեխնիկա ձեռք բերելու համար **կոոպերատիվները** շատ հարմար են, բայց հետագա աշխատանքը՝ կախված՝ մեր մենթալիտետից չի աշխատի:

Կոոպերատիվները ստեղծվում են, որպեսզի ինչ-որ մեկի համար ձեռք բերեն տեխնիկա և վերջ:

Տեխնիկան երբ բերվում է **կոոպերատիվ**, այն օգտագործվում է բոլորի համար:

Ով շահագրգռված է տեխնիկա ձեռք բերել, մտնում է **կոոպերատիվի** մեջ:

Կոոպերատիվները կունենան սեփական մեխանիզմները և դրսից եկողը չի կարող գին պարտադրել: Համայնքի սեփականություն տեխնիկան ամենաճիշտն է:

Պետք է հարևանությամբ գտնվող մանր հողակտորները, նույն մշակաբույսով զբաղվեն կամ, ավելի լավ է, **խոշորացում** իրականացվի, որպեսզի տեխնիկայի օգտագործումը իմաստ ունենա ու ընդհանուր ծախսերը պակասեն:

Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումն անհատի կողմից նպատակահարմար չէ, այն պետք է ստեղծվի **պետության** կամ **կոոպերատիվների** կողմից, որպեսզի կամայական **գնագոյացումից** չտուժենք:

Պետությունից խնդրում ենք մի փոքր **աջակցություն** նոր տեխնիկայի տեսքով:

Տեխնիկան պետք է **կենտրոնացնել**. թող մի կազմակերպություն դա իրականացնի ու **ոչ պետական** լինի:

Հողերի **խոշորացումից** առաջ, նախ պետք է **տեխնիկական պարկեր** լինեն:

Տեխնիկան ու հողը առանձին են: Պետք է **միանան**:

Պետք է լինի գյուղապետարանին կից **գյուղտեխնիկայի հավաքակայան**, որը պետք է

Եթե պետությունը **կոոպերատիվ** է ստեղծել, բայց կարիքները հաշվի չի առնում, ասում ենք **այս սարքավորումն է մեզ պետք**, բայց մեզ տալիս են **ուրիշ տեխնիկա**, որովհետև ասում են ծրագրով դա է նախատեսված, իմաստը էլ որն է, որ քննարկենք մեր կարիքներն ու կարծիքները:

Կոոպերատիվները պետք է վերացվեն, քանի որ ոչ մի օգուտ չեն տալիս ու չեն կատարում իրենց ֆունկցիան՝ **կոոպերատիվի անդամներին ավելի էժան գնով տեխնիկա չի տրամադրում**:

Համայնքի բնակիչը **տեղյակ չէ**, որ իր համայնքում գոյություն ունի կոոպերատիվ ու կարող է իրեն **տեխնիկա տրամադրել**:

Կոոպերատիվները ստեղծվելու ընթացքում կոլեկտիվ **տեխնիկան** մտել է գյուղ ու դարձել **մենաշնորհ**:

Կոոպերատիվներին տեխնիկա տալուց ոչ միայն պետք է կարիքը հաշվի առնել, այլև պայմաններդ, ռելիեֆդ, քանի որ ունենք դեպքեր, երբ տրված տեխնիկան մեր հողում ու պայմաններում չի աշխատում:

Կոոպերատիվին տրված **տեխնիկան** եթե չես էլ օգտագործում, բայց դրա **վարձավճարը** մեկ է մուծում ենք. **մենեջմենթի** խնդիր կա:

Գյուղտեխնիկայի հարցը ևս խնդիր է, սկզբից բերեցին ու **կոոպերատիվներին** տվեցին ու հարմար էր անցան մի քանի տարի լիզինգով սկսեցին տրամադրել ու **գրեթե երկու անգամ թանկ**:

Գյուղտեխնիկան շատ թանկ է, գյուղացին չի կարող մենակ գնել տեխնիկա, իսկ **կոոպերատիվում վստահություն չկա**, որ բոլորով պատասխանատու կլինեն վարկի համար:

Մեր գյուղում երկար ժամանակ չէր մշակվում, հիմա սկսել են մշակել, գյուղում **կոմբայն չկա,** կողքի գյուղից բերելու ենք, կարող է **կամայական գին** ասել:

Հին տեխնիկայի պատճառով հացահատիկի վերամշակման ժամանակ 40 տոկոս **կորուստ** է ունենում գյուղացին, իսկ նոր տեխնիկայի **վարձակալության գինը թանկ** է և այդ գործով զբաղվում է **գյուղապետի եղբայրը**:

Գյուղապետարանն էլ որ ձեռք է բերում տեխնիկա, **ԽԾԲ-ով են տրամադրում**:

Գյուղ տեխնիկայի **մոնոպոլիան** նույնպես

վճարովի հիմունքներով տեխնիկա տրամադրի բոլորին անխտիր:

Այսօր բացակայում է այն **օղակը**, որը կօգնի գյուղացուն գյուղտեխնիկայի օգտագործման հարցում:

Թող ստեղծեն **մեքենա-տրակտորային պարկեր** առաջվա նման, տրակտորիստը ուղղակի աշխատավարձ ստանա, ոչ թե կամայական գնով սպասարկի գյուղացուն:

Վարչապետը որ լինեի, կբերեի **գյուղապետին** կտայի երկու տրակտոր, որը կծառայի ամբողջ գյուղին, պետությունը պետք է գյուղացուն դուխ տա:

Համայնքին թող գումար տրամադրվի, տեխնիկա գնի համայնքը:

Կողմ եմ որ **մեքենաների պարկ** ստեղծվի **պետության** կողմից, ֆերմերը պայմանագիր կնքի հետը և բերքը ստանալուց հետո վճարի:

Սովխոզտեխնիկայի պես կառույց է պետք, որը գյուղացիներին կապահովի գյուղտեխնիկայով:

Այսօր մեծ խնդիր է գյուղտեխնիկայի մաշվածությունը: Պետք է **գյուղտեխնիկայի կենտրոնական պարկ** ստեղծել:

Մասնավոր ձեռնարկատիրոջը պետք է ազատել հարկերից և ուղղորդել, որ գումարները ներդնի գյուղտեխնիկայի ձեռք բերման մեջ և **վարձակալությամբ** աշխատի գյուղացու համար:

Կոոպերատիվները կունենան սեփական մեխանիզմները և դրսից եկողը չի կարող **գին պարտադրել**: Համայնքի սեփականություն տեխնիկան ամենաճիշտն է:

Գյուղացին պատրաստ չէ գյուղտեխնիկա գնի: Պետք է **պետությունը** զբաղվի այդ հարցով:

Տեխնիկան պետք է **պետությունը** տա **համայնքին**, համայնքում աշխատի գյուղացու համար, հետո բերքահավաքի վերջում գյուղացուց **գանձվի այդ գումարը**:

Մեքենա-տրակտորային **պարկեր** պետք է սարքվեն:

Գյուղատնտեսությունը ցիկլային գործընթաց է. ամեն մեկի ձեռքում մի բան է, **տեխնիկան մեկի ձեռքում է, հողը մյուսի**, նույնը նաև դեղերի դեպքում է, այդ շղթան պետք է լինի մի հոգու ձեռքում:

Կրծողների դեմ պայքարը պետք է **կենտրոնացված** լինի, որովհետև եթե ես ինչ-որ կերպ իմ մկների դեմն առնեմ, հարևանի հողից են մտնելու... Ինչպես կան **տրակտորային պարկեր**, որոնցից բոլորն օգտվում են, այնպես էլ հանգեցնում է **գների աճին**:

Գյուղտեխնիկան ներմուծում են **մոնոպոլիաները**, ինչ գին ուզում դնում են:

Համայնքի ղեկավարի կողմից **սխալ ցուցակագրում** է տեղի ունենում և տեխնիկայի օգտագործման **սխալ վերաբաշխում**:

Գյուղտեխնիկայի բացակայության պատճառով **այլ գյուղից** է տեխնիկա բերելու համար գյուղացին մեկ հեկտարի համար **կրկնակի է վճարում**, քան այն գյուղերում որտեղ տեխնիկա կա:

Ինձ **ձեռք չի տա լիզինգով** գյուխտեխնիկա գնել:

Աքբա բանկով **լիզինգով** հնարավոր է գումարներ վերցնել, բայց տեխնիկան **անմատչելի** է, ամբողջ կյանքդ չես կարող փակել:

Մեծ հողատերերին 20 հա ու ավելի ձեռք կտա **տեխնիկա առնել**, հակառակ դեպքում գումարով **վարձում** են:

Տասը տոկոսն է ապահոված տեխնիկայով, **թանկ** հաճույք է:

91 թվականից հետո նոր տեխնիկա ձեռք չի բերվել: Պետությունը պետք է օգնի, որպեսզի տեխնիկայի օգտագործման սանդղակ ձևավորվի: Օրինակ՝ մեկ հեկտարը վարելու համար 40,000 փող են ուզում: Մինչդեռ 20,000 է նման ծառայության գինը: Այսօր մասնավորն է թելադրում գինը:

Տրակտոր ու տեխնիկա ամբողջովին **մասնավորի** ձեռքին է. **գնագոյացումն** ամբողջովին **կամայական** է:

Տեխնիկան տվել են **խոշոր համայնքներին**, բայց որևէ մեկը հաշվի չի առել, դա **կերիքի** բոլոր գյուղերին, թե ոչ:

Մենք **խոշորացած համայնք** ենք, ունենք ավտոպարկ, որը մեզանից քսան կիլոմետր հեռու է և արդյունավետ չի: Մեզ ասում են՝ ձեզ **տեխնիկա տվել ենք**, բայց այդ տեխնիկան **մեր մոտ չի կարող հասնել**:

Տեխնիկայի օգտագործումն էլ է **ծանոթ-բարեկամներով**, այդպես չպետք է լինի:

Այնտեղ, որտեղ հարթավայր է, մեխանիզացիան հեշտ է օգտագործել: Իսկ մենք համայնքներ ունենք, որտեղ կոմբայն չկա, որ հացահատիկ հավաքի: Ասենք, **լիզինգով** կոմբայն վերցրեցի: Դա աշխատելու է երկու ամիս միայն, մինչդեռ ես **12 ամիս պիտի վճարեմ լիզինգը**:

Գյուղատնտեսական տեխնիկայի **լիզինգի ժամանակահատվածը** պետք է **երկարացնել** մինչև տաս տարի և ավելին, որպեսզի ես

բուժման կենտրոններ են պետք, որոնք կմշակեն որոշակի ժամանակացույց, որով կկատարվի համայնքի բոլոր գյուղատնտեսական հողերի բուժումը:

կարողանամ և՛ ընտանիքս պահել, և՛ գյուղատնտեսական գործունեությանը մասնակցեմ:

Ռազմավարական **ծրագրի** ներկայացուցիչները ասում են պետք է լինի տեխնիկա, որպեսզի սկսեն շինարարությունը, մյուս կողմն էլ նշում է մինչև շինարարությունը չվերջանա, տեխնիկա չենք տա: Սա մի **փակ շղթա** է:

Է. ԳԻՏԵԼԻՔ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Գյուղատնտեսական կանոնները խախտվում են, **անգրագետ աշխատանքի** շնորհիվ բերքի մեծ մասը փչանում է:

Մենք **նոր գիտելիքների մեծ կարիք** ունենք, հատկապես նոր **տեխնոլոգիաների** վերաբերյալ: Ինտենսիվ գյուղատնտեսության փոխարեն, էքստենսիվ ենք անում:

Լուրջ կարիք կա **գիտելիքի**, **վերապատրաստման**:

Գիտելիքի մեծ պակաս կա: Պետք է վերականգնել **գիտահետազոտական ինստիտուտները**, **գիտական միտքը**:

Գիտելիքի լուրջ պակաս կա նույնիսկ **սերմերի** մասին **տեղեկատվության պակաս** գյուղացու համար: Սերմի թարմացում պետք է ապահովվի:

Զբոսաշրջիկ գրավելու համար մենք նաև համապատասխան **բիզնես գիտելիք չունենք**, միայն Սևան ունենալը բավարար չէ:

Հրթիռային կայանները որոնք տեղադրված են արդյունավետ չեն, որովհետև **գիտելիքներ չունեն աշխատացնողները**:

Գյուղացին այսօր չի կարող անգամ իր արտադրանքի ինքնարժեքը հաշվարկել, գյուղացին ոչ մի **բիզնես գիտելիք չունի**՝ չարչարվում է և **զրո արդյունք** ստանում:

Այսօր **գյուղի և ոչ մի դպրոցում հասարակ հիմունքներ չեն դասավանդվում**՝ գյուղատնտեսությանը վերաբերող, գյուղի երեխան տնտեսություն վարել սովորում է իր ծնողներից, նրանք էլ իրենց հերթին սովորել են իրենց ծնողներից, բայց աշխարհը առաջ է գնում, պետք է առաջ գնալ:

Մեր ունեցած փորձը հերիք չէ բնական աղետների դեմ պայքարելու համար:

Մեր **գյուղացին**, առանց ամաչելու կասեմ, որ ներկայում լրիվ **անգրագետ** է. մենք ինֆորմացիայի պակաս ունենք, հատկապես նոր

Մենք շարունակում ենք աշխատել **նույն մեթոդներով**, ինչ հիսուն տարի առաջ: Ու սա **ավելի արդյունավետ է**, քան նոր մեթոդները:

Հողը **ճիշտ մշակելը** և օգուտ քաղելը **շատ թանկ է** նստում գյուղացու վրա:

Եթե անգամ հին մեթոդներ են գերակշռում գյուղատնտեսությունում, բայց այսօր կա **ինտերնետ** ու անհրաժեշտության դեպքում կարում են մտնենք ու մեզ անհրաժեշտ ինֆորմացիան վերցնենք:

ինֆորմացիայի:

Այսօր ոչ մի գյուղացի **չգիտի**, թե ինչ **չափանիշների** պետք է համապատասխանի իր արտադրած բերքը:

Գյուղացին սեփական արտադրանքի **ինքնարժեքը** չի կարողանում **հաշվել**:

Մեր գիտելիքները չեն բավարարում օրգանիկ ապրանք արտադրելու համար, ուստի չենք կարողանում արտահանել ԵՄ:

Մենք շատ հաճախ մեր **բերքը կորցնում** ենք միայն նրա համար, որ պարզապես **սխալ ենք** շատ բաներ անում, չենք իմանում ինչ պետք է անել:

Ես եկել եմ մի եզրակացության. ամենակարևորը՝ մարդ պետք է բաց լինի նոր բան սովորելու, նոր բան օգտագործելու, մեր **ինֆորմացիան շատ հին** է:

Հրեաները իրենց անապատ երկիրը սարքեցին հրաշք վայր, իսկ մեր **բարբարոսները**՝ մեր դրախտային երկիրն անապատ:

Մեր գյուղացու **գիտելիքները** և **տեխնոլոգիաները** շատ քիչ են բնական աղետների դեմն առնելու համար:

Եթե զգամ, որ **խորհրդատուն** կոմպետենտ է տվյալ մարզի գյուղատնտեսության առանձնահատկություններին, կլսեմ իր խորհուրդները:

Խորհրդատվությունը շատ կարևոր է, թող լինեն մասնագիտացված հաստատություններ:

Գյուղացու համար **խորհրդատվությունը կարևոր է**, եթե օգուտ չքաղես, վնաս հաստատ չի լինի:

Ես շատ-շատ եմ **կարևորում խորհրդատվությունը**՝ կան իրոք լավ մասնագետներ, ովքեր մեծ օգնություն կարող են տրամադրել, նրանց պետք է ընդունել, լսել:

Պետք է լինի **խորհրդատվական կենտրոններ**, որոնք հուշեն՝ սա արտադրի, էդքան արտադրի:

Գյուղացուն այսօր ոչ թե վարկ է պետք տալ, այլ **սովորեցնել**, թե ինչից ինչ է պետք ստանալ:

Նախ պետք է գյուղացուն **սովորեցնել** հողից բերք ստանալ, նոր ապահովագրել:

Գյուղացին պետք է ճիշտ **կրթվի**:

Գյուղացին պետք է հաղթահարի պապական գաղափարախոսությունը, մենք պետք է **սովորենք լսել այլ մարդկանց**, թեկուզ և ավելի երիտասարդ, թեկուզ և այլ երկրներից ժամանած, իսկ մեզնից շատերը այսօր վստահում ենք

Գյուղացիները **բոլոր դարձել են ագրոնոմ**, զոոտեխնիկ այս 20 տարում, ինչ խորհրդատվություն:

Գյուղացին հիմա մեծ կարիք ունի խորհրդատվության, բայց **չի գիտակցում** դա:

Խորհրդատվական ծառայությունների բյուջեյով կարող ենք գյուղատնտեսական **շատ այլ հարցեր** լուծել:

Խորհրդատվության փոխարեն կարելի ավելի շատ **իրազեկման** վրա ծախսել:

Հայաստանում **խորհրդատվական** բոլոր ծախսերը **արդյունավետ չեն եղել**:

Հայաստանի **գյուղացուն անհնար է բան սովորեցնել**, նա միշտ կասի դու ինձ սովորեցնելու բան չունես:

Գյուղացին **կսովորի կողքի հարևանից**, պետք է օրինակ տեսնի որ հաջողվել է:

Գրականությունից ենք օգտվում համապատասխան, որ ճիշտ կատարենք ամբողջ պրոցեսը:

Խորհրդատվությունը երբեմն օգտակար է, բայց ոչ միշտ: Ես ավելի լավ գիտեմ, թե մեր բնակլիմայական պայմաններում ինչն է աշխատում: Խորհրդատվությունը սովորաբար բերրի հողերում մշակման համար է: Մեր հողի

միմիայն մեզ, **ավանդույթները պետք է փոխել**:

Պետք է **եռամսյա դասընթաց** կազմակերպել գյուղացիների համար, թե ինչպես ճիշտ վարել տնտեսությունը:

Այսօր մարդիկ ավելի բաց են, ընդունում են մեր օգնությունը՝ կոոպերացիա ստեղծելու, գալիս են սեմինարների, **լսում են ուրիշների խորհուրդները**: Առաջ այդպես չէր...

Մի անգամ ենք ընդամենը հավաքվել տարբեր գյուղերից, որ հասկանանք ով ինչն է ամենալավը արտադրում, աճեցնում, հիմա էլի **տեղեկատվություն** միմյանց մասին չունենք:

Եթե մի գյուղում ինչ որ մի նորամուծություն են օգտագործում, մյուս գյուղերը՝ նույն համայնքի, չեն էլ իմանում դրա մասին, **ինֆորմացիա** տարածելու, **փորձ կիսելու** խնդիր էլ ունենք: Եթե մի գյուղում մի ծրագիր է աշխատում, ապա դրանով էլ ամբողջ գործընթացն ավարտվում է:

Գյուղացին **ուսուցման և խորհրդատվության** կարիք ունի, քանի որ շատ տեխնոլոգիաներ օգտագործելու հմտություն չունեն:

Խորհրդատվությունը և դասընթացները շատ կարևոր են գյուղացու համար: Մեզ մոտ ժամանակ առ ժամանակ այգիները վնասող հիվանդությունները մուտացիայի են ենթարկվում:

Գյուղացին **խորհրդատվության կարիք շատ ունի**: Ոմանք չեն լսում, բայց ավելի շատ են նրանք, ովքեր որակյալ խորհրդի կարիք ունի:

Պետք է ինչ որ տեղ լինի, որ գյուղացին դիմի՝ մասնագիտական **խորհրդատվություն** ստանալու համար:

Ինֆորմացիայի պակաս ու **խորհրդատվության** կարիք կա բուժանյութերի ու հիվանդությունների վերաբերյալ, ցանքաշրջանառության մասին տեղեկատվություն տրվի գյուղացուն, բազա ստեղծվի ինչ-որ, որ մենք չդնենք ու բոլորս այդ տարի ցանենք նույն մշակաբույսը:

Ժամանակակից տեղեկատվական գործիքները՝ բջջայիններ, համակարգիչներ կարող են օգնել ժամանակին **խորհրդատվություն** ստանալու համար:

Գյուղապետարանում կա գյուղատնտես, ով մեզնից առավել ոչինչ չգիտի, ցավոք, մենք այսօր մասնագիտական **խորհրդատվության** պակաս ունենք:

Խորհրդատվություն պետք է գյուղացուն ամեն դեպքում, մարդ կա ինտերնետն էլ չգիտի ինչ է, մյուսը սովորելու ժամանակ ու ցանկություն չունի, մեկ ուրիշն էլ կարող է չիմանա, որտեղից գտնել որակն այն չէ, պետք է անընդհատ ոռոգել:

Խորհրդատվության կարիքը չունենք, քանի որ ամեն մեկը իր փորձի վրա է սովորում:

Խորհրդատուների մեծ մասը չի տիրապետում պրակտիկ գիտելիքների:

Գյուղնախարարության աշխատակիցները իրենց **խորհուրդներով ու զգուշացումներով ուշանում են**:

Խորհրդատվությունը անիմաստ գումարի ծախս է, մասնագետը տեսականորեն ինչ-որ բաներ է սովորել, բայց գյուղացին պրակտիկ տարիներով գիտի իր հողը:

Խորհրդատվությունը չի կազմակերպվում այնպես, ինչպես պետք է. դա ավելի շատ արվում է անելու համար:

Բոլորն էլ հասկանում են, որ **խորհրդատվությունը** անհրաժեշտ է, պարզապես պետք է դրա կազմակերպման արդյունավետությունը հստակեցնել:

Գյուղացին լավ գիտի իր խնդիրները և ոչ մի **խորհրդատվության** կարիք չունի:

Խորհրդատվությունը պետք է ճիշտ կատարվի: Մեզ պետք է ըստ սեզոնի խորհրդատվություն. ջրելու ժամանակ, ջրի մասնագետ, թունաքիմիկատի ժամանակ՝ դրա մասնագետը և այլն:

Խորհրդատվության վրա չարժե որևէ ծախս անել: Գյուղացին ավելի լավ գիտի իր կարիքներն ու խնդիրները:

Հողի հետ որևէ կապ չունեցող մարդը չպետք է **խորհրդատվություն** տրամադրի գյուղացուն:

Խորհրդատվությունը երբեմն օգտակար է, որովհետև համատեղ քննարկելու արդյունքում գյուղացին շատ բան կարող է սովորել:

Խորհրդատվություն տվողը պետք է իմանա յուրաքանչյուրի հողի կարգը, կատեգորիան, բայց դա անհնար է:

Խորհրդատվության կարիք ունենք, բայց արդյունավետ պետք է լինի:

Գյուղացին ունի **խորհրդատվության**, աջակցության կարիք. սա ներկայացվում է ՏԻՄ ներկայացուցիչների կողմից, բայց համապատասխան **արձագանք չի գտնում** մարզպետարաններում և ավելի բարձր օղակներում:

Նախարարության կողմից կան ստեղծված **աջակցության կենտրոններ**, բայց **արդյունավետ չեն** աշխատում. մոտ չեն նրանք

արժանահավատ տեղեկատվություն: Գյուղական մենեջմենտի **խորհրդատվության** կարիք կա: Շա՛տ: Հիմնականում դեղ ծախողները որակյալ դեղեր չեն բերում և որևէ **խորհրդատվություն** չեն տալիս: Գյուղացին իրեն մենակ է զգում հողի հետ, պետք է մասնագիտական **խորհրդատվություն**: Գյուղերում մասնագետների ու **խորհրդատվության** մեծ կարիք կա: Մենք շատ ենք ուզում մեզ **խորհրդատվություն** մատուցեն, մենք ինքներս հասկանում ենք, որ շատ հետ ենք ընկել իրականությունից, և խորհրդատվությունը պետք է լինի նաև հագեցած պրակտիկայով, արտում, դաշտում պետք է դասընթացներ անցկացվեն: Հաջողված գյուղատնտեսական տնտեսությունների համար հնարավորություն պետք է ստեղծել, որ իրենք կարողանան **խորհրդատվություն** տալ սկսնակներին, որովհետև դրանք պրակտիկայի վրա հիմնված գիտելիք ու հմտություններ ունեն: Ցրտահարության իրական պատճառը շատ դեպքերում գյուղացու անգրագիտությունն է, ասենք անկանոն ոռոգումը: Գիտելիքի ու **խորհրդատվության** առկայության դեպքում կարելի մեծամասամբ խուսափել ցրտահարությունից: **Խորհրդատվության** ժամանակ գյուղացին շատ հարցերի պատասխան է կարողանում ստանալ, փորձի փոխանակություն կատարել: Պետք է կազմակերպվի **օրգանական գյուղատնտեսության դասընթացներ**, սա առաջատար ճյուղ է: Ցանկալի է, որ **հեռուստատեսությամբ** լինի **հաղորդում** կամ անգամ մի ամբողջ ալիք, որը նվիրված լինի գյուղատնտեսությանը: Պետք է գյուղատնտեսության մասին **լրատվություն** լինի. ցանկալի է նույնիսկ **ալիք** լինի:	հասարակ գյուղացուն: Արտադրությունը հիմնականում քննարկում են **մարդիկ, որոնք չգիտեն թե այդ արտադրությունը** որտեղից է սկսվում և վերջանում, դրա համար էլ այս վիճակում ենք:
Գլխավոր խնդիրներից մեկը **կադրերն** են: Գյուղատնտեսությամբ շատերը զբաղվում են ստիպված, բայց **կոմպետենտ չեն**: Նկատելով **մասնագետների պակասի** խնդիրը բոլորը լռում են, որովհետև չկա մասնագետը, չկա մասնագետի համապատասխան վարձատրությունը, որը մեծ վնաս կհասցնի և տնտեսվարողին և սպառողին:	**Մասնագետների** մեծ մասը սրսկելու դեղերը չեն կարողանում տարբերակել: **Ասֆալտի վրայի գյուղատնտեսը** այսօր գյուղատնտեսության ռազմավարություն է իրականացնում, ոչ մի բանից տեղյակ չեն... Մինչև նախարարությունը չհրահանգի, **ԳԱՄԿ**-երը ոչ մի ձայն չեն հանում, իրենք պետական աշխատող են՝ վախեցած:

Նշանակություն չունի մասնավոր թե պետական եթե մասնավոր է ուրեմն ունի **լիցենզիա**:

Այսօր **գյուղատնտեսության** ոլորտը ոչ մի **երիտասարդի չի հետաքրքրում**, ցավոք, պետք է դա էլ փոխել:

Ներկայում մենք **գյուղտնտեսության մենեջերներ** չունենք, ովքեր ուղնուծուծով մենեջեր պետք է լինեն:

Կադրային սովը վերացրեք, իսկ **կադրային սովը** կվերանա միայն այն դեպքում, երբ աշխատավարձերը բարձրացնեն:

Մեզ շրջապատող մուսուլման երկրները շատ լավ գիտեն մեր ոչխարի համը, գիտեն, որ էկոլոգիապես մաքուր է, գիտեն մեր ալպիական արոտավայրերի մասին: Պետք է ոչխարաբուծությունը մեծ ծավալներով զարգացնել: **Պետք են մասնագետներ** առաջին հերթին:

Ո՞ր իրեն հարգող բարձրագույն կրթություն ունեցող տղամարդ կգնա որևէ գյուղում **հիսուն հազար դրամով** հիվանդ կենդանիների ու թրիքի մեջ օր ու գիշեր աշխատի: Բացի դրանից կենդանուց վարակվելու վտանգ կա:

Այսօր **գյուղտեխնիկայի** հարցը լուրջ է, որովհետև փչանալու դեպքում **մասնագետ չկա**: Չկա ինժեներ պատրաստող որևէ օղակ:

Մենք էժան աշխատուժ ունենք: Պետք է ճիշտ **գնահատել** և **տեղաբաշխել** գյուղատնտեսական ռեսուրսները:

Մենք Խորհրդային Միության օրոք ու դրանից հետո հողը նպատակային օգտագործելու փոխարեն, սոցիալական մոտեցում ցուցաբերեցինք ու տվեցինք **բոլորին՝** ակադեմիկոսին, փականագործին և այլն:

Գյուղական համայնքներում պետք է **մասնագետ** լինի, որը ճշգրիտ կստուգի վնասի չափը:

Պետք է ամեն գյուղում հատուկ **մասնագետ** լինի, իրեն կանչեն սովորեցնեն, նա էլ գյուղացիներին սովորեցնի:

Տեխնիկա ունենք, դրանից չենք նեղվում, ավելի շատ **մասնագետների** վճարելիության հարցն է: Դա մտել է հարկային դաշտ:

Մենք այսօր **մասնագետ** չունենք, իրոք չունենք, նորմալ գյուղատնտես չունենք, ում դիմենք:

Գյուղատնտեսական ինֆրաստրուկտուրաներ էլ չկան: Օրինակ լաբորատորիաներ: **Մասնագետները աչքաչափով** են ստուգում որակը:

Մասնագետների ահռելի պակաս կա, շատ

Համակարգիչների մոտ նստում են, անգամ մեր ճանապարհը չգիտեն, ինչպես կարող են հարց լուծել:

հասարակ բաներ կան, որ մենք մինչ օրս չգիտենք:

Պատրաստ եմ լսել եվրոպական տեխնոլոգիաներ ներդնող **մասնագետին**, որը մեզ խորհուրդ կտա ինչպես զարգացնել գյուղատնտեսությունը:

Մենք շատ գյուղատնտեսական հարցեր ունենք, որոնց **մասնագիտական** պատասխանը մենք չենք ստանում:

Տարածաշրջանում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացի չունենք, մեզ մոտ օրինակ՝ խաղող էտող **մասնագետ** չունենք:

Ես պատրաստ եմ այսօր լավ, բանիմաց **մասնագետի** վճարել. բույսերս, ծառերս վարակվում են, ես չգիտեմ, թե ինչ անել, ինչ սրսկել, ում դիմել...

Որպեսզի ամբողջ ինֆորմացիան, ռեալ լինի, պետք է գուղաջակցության **մասնագետները**, գյուղ նախարարության աշխատակիցները պտտվեն գյուղ-առ-գյուղ, տեսնեն խնդիրները, քանի որ յուրաքանչյուր համայնք իր խնդիրն ունի:

Գյուղատնտեսությամբ զբաղվում են **ոչ պրոֆեսիոնալները**, այլ նրանք՝ ում կյանքն է ստիպում:

Ագրոնոմի հաստիքի բացակայության պատճառով գյուղերում խաղողի բերքը վառվեց, քանի որ մարդիկ չգիտեին՝ ոնց սրսկումները ճիշտ կատարեն:

Մի **գյուղատնտեսը**, եթե անգամ շատ ցանկանա, չի կարող **միանգամից տաս գյուղ** սպասարկել:

Գյուղոլորտի **կրթությունը** շատ վատ վիճակում է, ոչ ոք չի ընդունվում ագրարային համալսարան, բայց մոտ երեսուն տոկոս բնակչությունը ֆերմեր է:

Միջին վիճակագրական **գյուղատնտեսը** այսօր ունի **հնագույն ինֆորմացիա**, և **վերապատրաստումներն** էլ մնում են թղթի վրա:

Լավ **ագրոնոմների** մեծ կարիք ունենք: Հիմա գյուղերում ագրոնոմ չունենք:

Սահմանամերձ համայնքներում **աշխատուժի** պակասի պատճառով բերքի մեծ մասը չենք կարողանում հավաքել:

Գյուղերը դարձել են ծերանոցներ, **երիտասարդներ չկան**, որ աշխատեն:

Երիտասարդությունը խուսափում է անասնապահությունից, մեծահասակներն էլ կամաց-կամաց դուրս են գալիս աշխատանքից:

Մարզում հասարակ **գյուղատնտես** չունենք:

Մասնագետի վարձատրությունը չնչին է. մեկ սրսկումը՝ հարյուր դրամ:

Հողատերեր են մարդիկ, ովքեր **հողից շատ հեռու են**, մինչդեռ կան մարդիկ ովքեր կարող են աշխատել, բայց հող չունեն:

Յուրաքանչյուր գյուղ պետք է ունենա հատուկ կցված, շատ բանիմաց, շատ **ժամանակակից գյուղատնտես**, ում հենց պետությունը պետք է վճարի և վերահսկի իր գործունեությունը:

Մարդկային ռեսուրսի լուրջ խնդիր ունենք գյուղերում: Գյուղերը գնում են դեպի ծերացում: Երիտասարդները ուզում են լուրջ երաշխիք ունենան եկամտի, որպեսզի գան հող մշակեն: Պետք է ոտքի կանգնեցնել գյուղատնտեսությունը, որպեսզի երիտասարդները վերադառնան գյուղ: Այսօրվա դրությամբ գյուղում նպաստող ապրող մարդիկ ավելի լավ են ապրում, քան աշխատողները:

Այսօր որակյալ **անասնաբույժներ քիչ կան**:

Ոչ մի համայնք **գյուղատնտես** կամ **անասնաբույժ** չունի, ոչ մի **մասնագետ չկա**: Մասնագետների հարցն է պետք լուծել:

Ծայրահեղ դժվարություններ են ստեղծում **մասնագետների՝ անասնաբույժների** լուրջ պակասը:

Այսօր **անասնաբուժությամբ** ոչ մի երիտասարդ չի զբաղվում, որովհետև ձեռնտու աշխատանք չէ:

Մեր համայնքներից մի քանիսում ռազմագիտության ուսուցիչն է **անասնաբուժությամբ** զբաղվում, որովհետև **մասնագետ չկա**:

Եթե **անասնաբուժությունը մասնավոր** բիզնես դառնա, միանգամից զարգացում կլինի:

Անասնաբույժի վրայից թրիքի հոտ է գալիս, մարդիկ **չեն ուզում անասնաբուժ դառնալ**:

Ընդհանուր առմամբ **դեմ են անասնաբուժության ապապետականացմանը**:

Անասնաբուժությունը ստրատեգիական նշանակություն ունի երկրի համար, որովհետև թշնամին կարող ա քեզ մեծ վնաս տալ, օրինակ, սիբիրախտ տարածելով քո երկրում: **Անասնաբուժությունը** միայն վակցինացիա չէ: Մարդաբուժության պես անասնաբուժությունն էլ է բարդ ոլորտ խիրուրգով, ակուշերով, տրավմատոլոգով և այլն: Պետությունը օգնում է վակցինացիայի դեպքում, մնացածը պետք է դրվի համայնքի վրա՝ համայնքի հաշվին պետք է անասնաբույժ ունենալ:

Բոլոր համայնքներում **անասնաբույժ** է պետք:

Այսօր շատ գյուղեր անասնաբույժ չունեն:

Մեր գյուղերում **անասնաբույժների** խնդիր կա. մասնագետներ չկան:

Գյուղնախարարությունը **անասնաբուժության** գործը կազմակերպելու համար պետական աջակցությունը կենտրոնացրեց իր ձեռքը ու անարդյունավետ է կառավարում: Անհրաժեշտ է մասնավոր անասնաբուժական ծառայությունների կազմակերպումը: Անհրաժեշտ է անասնաբուժական ծառայությունները ապապետականացվի:

Երևանը միակ մեծ քաղաքն է Հայաստանում, որը պիտի շահագրգռված լինի **անասնաբույժների** առկայությամբ բոլոր գյուղական համայնքներում, որովհետև դա ստրատեգիական նշանակության հարց է:

Անասնաբուժական ծառայությունները լինեն տենդերներով, որը կտրամադրի պետությունը մասնավորին ու կիրականացնի վերահսկողություն:

Նեղ մասնագետ **անասնաբույժների** կարիք ունենք, կադր չկա: Այսօր դեղը տալիս ենք անասնաբույժին, ասում է՝ ես չեմ կարող դա ներարկել: Տալիս ենք տիրոջը, նա նույնպես հրաժարվում է:

Ամենամեծ վնասը մեր երկրում հասցրել են **անասնաբուժությանը**, բայց դրան մեծ ուշադրություն պետք է դարձնել:

Անասնաբուժության համար մասնավոր դեղատներից ենք առնում, իսկ պարտադիր միջոցառումները պետության կողմից է արվում:

Անասնաբույժ ենք պահում գյուղում, մինիմում աշխատավարձ ենք տալիս՝ 65000, բոլոր համայնքներն ունեն անասնաբուժ հիմա: Անասնաբույժը շատ անհրաժեշտ է գյուղին ու քիչ ենք վճարում:

Պետական պատվաստումների համար անասնաբուժական կենտրոնից է ստանում աշխատավարձ՝ ըստ գլխաքանակի: **Անասնաբուժության** բնագավառում ոչ մի փոփոխություն պետք չի անել, առաջ, որ կենտրոնացված էր, վատ էր:

Բոլոր ծառայությունները պետք է դառնան բիզնես, որպեսզի աշխատի (**անասնաբուժություն**, կաթի հավաքման սառնարաններ, բեղմնավորում):

Եթե **անասնաբուժությունը** մասնավորեցվի, որակը կբարձրանա, մարդիկ ավելի սրտացավ կդառնան:

Պետությունը սուբսիդավորում է **անասնաբուժության** չորս ծառայություն: Իսկ մյուս մասը մնում է գյուղացու վրա:

Գյուղացին է **անասնաբուժության** դեղերն առնում, դա մեզ ձեռք չի տալիս:

Պետական **անասնաբուժարանից** եթե գան, պետք է մի բան էլ մուննաթ գան, ավելի լավ է մենք գտնենք անասնաբույժի:

Առաջին անգամ մեկ շաբաթ առաջ **անասնաբույժը** եկավ անվճար սրսկեց հավերին. զարմացանք, հիմա չգիտենք դա լավ թե վատ:

Անասնաբույժի աշխատավարձը մեր երկրում այնքան ցածր է, որ նա ձգտում է մի բան էլ վերցնել գյուղացուց:

Գյուղացու համար ձեռնտու է **մասնավոր անասնաբույժ** ունենալը:

Պետք է **պետական անասնաբուժության** մարմինը մնա, բայց ստեղծվեն նաև **մասնավոր** մարմիններ:

Անասնաբույժի աշխատավարձը պետք է բարձր լինի: Կամ կողքից էլի **վճարովի ծառայություններ** անի, որ շահագրգիռ լինեն անասնաբուժությամբ զբաղվելու:

Պետական բյուջեի միջոցներով **անասնաբույժը կատարում է միմիայն սրսկումները**, այլ ֆունկցիաների իրականացնելու համար գյուղացին պետք է իր **գրպանից** «շնորհակալ» լինի անասնաբույժին:

Անասնաբուժությունը պետական որ մնա ավելի լավ է, նորմալ դեղորայք բերի հարմար գներով, թեկուզ 3 գյուղի մեկ անասնաբուժ, վերահսկողությունը պետականի դեպքում ճիշտ է ավելի:

Լավ կլինի **ընտանեկան բժշկի նման** բացվի **անասնաբուժական** ամբուլատորիա:

Մեր **անասնաբուժությունը** մասնագիտական առումով **որակյալ ծառայություններ պատրաստ չի** մատուցել: Մասնավորը կարող է վտանգավոր լինել: Հանուն բիզնեսի վնաս կտան:

Անասնաբուժությունը քսան տարի է բարեփոխման մեջ է: Մնացել է **պետական ու թիվ մեկ սխալն է:** Պետք է մեծ մասը մասնավոր դառնային:

Թող խոշոր ֆերմերները մասնավոր **անասնաբուժ** պահեն, սովորական գյուղացու համար սա վտանգավոր է:

Ես **անասնաբուժ** եմ և սպասարկում եմ երկու գյուղ, բայց արդեն մեծ եմ, ինձ **փոխարինող չկա**:

Անասնաբուժության մեջ էլ պետք է ճանշինների պրակտիկան կիրառել:

Անասնաբույժի մեկ տարվա **աշխատավարձը** պատգամավորի ամսեկան աշխատավարձի կեսն է:

Անասնաբուժությամբ լավ կլիներ **մասնավոր** հատվածը զբաղվեր, քանի որ պետություն չի կարողանում վճարել անասնաբույժին:

Մենք, անկեղծ ասաց, այսօր լավ մասնագետներ ունենք, **լավ անասնաբույժներ** ունենք:

Անասնաբույժին քո մեքենայով տեղափոխում ես, մի **բան էլ գրպանը դնում** ու նոր ճամփում:

Անասնաբույժները օգտվում են գյուղացու **անտեղյակությունից** և ստիպում են երբեմն վճարել այն պատվաստման համար, որը **պետության** հոգսն է:

Օրենքով **անասնաբույժի աշխատավարձը** գոյանում է **ծառայությունների վճարից**, այնքան քիչ է, որ նորմալ աշխատավարձ չի ստանում: Պետք է ստանա համայնքի բյուջեից:

Վերջին հինգ տարում Վայոց Ձորից **ոչ ոք չի գնացել անասնաբուժություն սովորելու**:

Անասնաբուժության մեջ էլ կարող է տենդեր լինել: Անասնաբույժները **մրցեն** միմյանց հետ: Ով իր թիմով լավը կլինի, կաշխատի:

Որպեսզի **մասնավորը** կայանա, **պետության աջակցությունը** կարող է լինել ոչ դրամով: Շենքերը քանդվում են **անասնաբուժական** ծառայությունների: Թող անվարձահատույց տային անասնաբույժին, գնար աշխատեր:

Անասնաբուժությունը չպետք է ապապետականացվի, կարող է համաճարակային բում լինել. անասնաբուժությունը կարելի է դիտարկել որպես ռազմավարական ոլորտ:

Անասնաբույժին չնչին գումար են տալիս ու դրանով անհնար է շատ համայնքներ սպասարկել:

Պետք է լինի **պետական աջակցություն անասնաբուժության ոլորտին**: Ելքը մասնավոր անասնաբուժական ընկերություն կամ կայան զարգացնելն է պետության աջակցությամբ:

Խոշոր ֆերմերներն **անասնաբույժին չեն էլ վճարում**: Իրենք սովորում են սրսկել կովին ու հազար դրամ ավել չեն վճարում:

Համայնքային **անասնաբույժը** պետք է **անվտանգության** նորմերին հետևի համայնքում:

Անասնաբուժական ծառայությունից տուժող

կենդանու համար ո՞վ պետք է փոխհատուցի:

Պետք է դիում գրեմ կառավարություն, որպեսզի **օրը սարքեն 36 ժամ**, որպեսզի կարողանամ սպասարկել գյուղացիներին:

Համայնքային **անասնաբույժը** պետք է անվտանգության նորմերին հետևի համայնքում:

Եթե գյուղացին սխալ **տեխնոլոգիա** կիրառի, ի՞նչ օգուտ կարող է տալ սուբսիդավորումը:

Եղած **տեխնոլոգիաները** չեն բավարարում:

Ինչ էլ առաջարկվի կհամաձայնենք, կարևորը նոր **տեխնոլոգիաները** բերեք:

Այսօր գյուղատնտեսության մեջ նորագույն **տեխնոլոգիաների** կարիքը շատ մեծ է:

Նոր **տեխնոլոգիան** պետք է արդյունավետ և նպատակային լինի:

Գյուղատնտեսության մեջ մենք պետք է արդեն շատ կարևորենք **կրթությունը, գիտությունը**, **նոր տեխնոլոգիաները.** մենք այսօր գիտնականներ չունենք այս ոլորտում:

Մենք նաև **գիտություն** չունենք. Երկիրը ջերմանում է այսօր, գլոբալ տաքացում է, կա ինչ-որ մեկը, որ որևէ բան է անում այս ուղղությամբ, որ վաղը մեզ կօգնի:

Եղեգնաձորում շատ հողեր կան, որ չեն էլ մշակվում. մի քանի անգամ ցանում են, եկամուտ չեն ունենում, հիասթափվում են: Բայց պետք է ինչ որ **նոր բաներ մտածել, նոր տեխնոլոգիաներ** ներդնել, ոչ թե հիասթափվել ու արտագաղթել:

Ավտոմատ կառավարվող համակարգերը այսօրվա խնդիր չեն, դրանք պետք է ապագայում ներդնել:

Մեր հողերը փոքր են և **իմաստ չկա թանկ գներով նոր տեխնոլոգիաներ** գնել:

Միանշանակ ասել, թե **գյուղացին շահագրգռված չէ նոր տեխնոլոգիաներ** կիրառելու հարցում, սխալ է:

Գյուղատնտեսությունը չի կարելի **փորձադաշտ** դարձնել:

Մենք նախկինում իրականացնում էինք **տեխնոլոգիաների գնահատման** ծրագրեր, որոնք ներդրվում էին գյուղացիական տնտեսություններում և նպաստում էին նոր մեթոդների կիրառմանը:

Բնակլիմայական պայմանները նոր տեխնոլոգիաներով չես կարող փոխել. մեր մարզի կլիման այնպիսին է, որ այստեղ նոր մշակաբույսեր գրեթե չեն ադապտացվում: Բերում են հրաշալի մշակաբույսեր, բայց երկու տարվա մեջ այն հարմարվում է մեր հողին. հողն է թելադրողը, ու հաճախ այդ մշակաբույսի արտադրությունը դառնում է անիմաստ:

Նոր **տեխնոլոգիաների** կարիքը շատ կա, բայց **հնարավորություններ չկան**: Մեզ մոտ նույնիսկ տարրական պայմաններ չկան գյուղատնտեսությամբ զբաղվելու համար, ի՞նչ խոսք կարող է գնալ նորագույն տեխնոլոգիաների մասին:

Ներմուծվող **սերմերի** վատ որակի պատճառով գյուղացին վնաս է կրում:

Ռուստովից են վերջերս բերում **սերմնացու** ու հաշվի չեն առնում բնակլիմայական պայմանները, որ այդ սերմնացու մեզ մոտ արդարացված չի: Ավելի լավ է 150 դրամով պիտանի սերմ առնեմ, քան 130 դրամով Ռուսաստանից:

Հիմնականում դրսից ներկրված **սերմերի** պատճառով նոր հիվանդություններ ու մուտացիաներ են առաջանում:

Սերմերի անվերահսկելի շուկան այսօր մեծ խոչընդոտ է. ով պետք է վերահսկի այդ շուկան, մենք չենք էլ իմանում: Այսօր մենք խանութներում

ունենք ժամկետանց, անորակ թունաքիմիկատներ:

Սերմերի ու **բուժանյութերի** հարցում են պետք խորհրդատվությունները: **Գենամոդիֆիկացված** սերմեր են բերում, գնում ենք, չենք էլ իմանում ինչ ենք առնում: Բուժանյութերն էլ խաբում են՝ մեկը մյուսի անվան տակ տալիս ու շատ հաճախ փչացնում են եղածը:

Հողի ճիշտ նախապատրաստումը և լավ **սերմացուն** ամենակարևոր նախապայմաններն են, մենք ներկայում մի նորմալ սերմ չունենք:

Գյուղ արդյունաբերությունն էլ զարգացած չէ: Դժվար է որակյալ **սերմ** կամ **պարարտանյութ** գնել, անգամ թանկից դեպքում երաշխիք չկա:

Պետք է ճիշտ ընտրվի **սերմացուի** բաժանման ժամանակահատվածը:

Հին սերմերն ավելի դիմացկուն ու բերքատու էին: Վարունգ եմ ցանում, հենց առաջին պտուղը դառն է: **Սերմերը** մենք ենք հավաքում ու աշխատում ենք հին սերմերը բազմացնել:

Սերմերի ձեռքբերման գործընթացը պետք է վերահսկել. խաբում են անխղճորեն...

Գյուղացին մի տարի տեսնելով, որ պետական **սերմացուները** օգուտ չեն տալիս, հաջորդ տարի, ստիպված մեքենա են վերցնում գնում Սիսիանի սերմնաբուծարան սերմ բերելու:

Խաղողի սորտեր կան, որ հիմա արդեն կորստի եզրին են:

Գյուղացուն պետք է օգնել, որ իմանա, թե **ինչ կուլտուրաներ մշակի**... Օրինակ՝ ԽՍՀՄ-ի ժամանակ խորդենի էինք մշակում, բայց հիմա չգիտենք ինչ անենք: Մենք մշակող ենք, իսկ հիմա ստիպված ենք ժամերով շուկաներում նստել: Պետությունը պիտի մեզ հուշի, թե ինչ է անհրաժեշտ մշակել և մեր արտադրանքի իրացման հարցը լուծի:

Հազարամյակների մարտահրավերներ ծրագիրը գիրք ուներ, որտեղ կային գները՝ **ըստ կուլտուրաների և տարածքների**, այսօր այդ ձեռնարկի մասին ոչ ոք չի էլ հիշում:

Արարատյան դաշտավայրում գարնանցան ցորենի **ցանելը** արդյունավետ չի, բերքը շատ քիչ է, բայց ամեն տարի բերում են ու դա ենք վերցնում ստիպված, աշնանացան չեն բերում:

Կառավարությունը պետք է մասնագետների միջոցով հասկանա, թե որ **հողում ինչ է պետք ցանել**, որ օգուտ լինի:

Գյուղնախարարությունը պետք է կոնկրետ ուղղություններ տա: Բայց դա չի աշխատում:

Նոր կուլտուրաները երբեմն ավելի մեծ եկամուտ են ապահովում, օրինակ՝ ընկերներիցս մեկը ծնեբեկ է աճեցնում ու շատ լավ է ստացվում: Բայց եթե նման խորհուրդները Երևանից են տալիս, ես ուղղակի չեմ լսում դրանք: Իրենք կարդում են, իսկ ես՝ աշխատում: Ո՞վ ավելի լավ գիտի...

Ի՞նչ արտադրության մասին է խոսքը, երբ **զիբիլը փաթեթավորում են**, բերում Հայաստան, ցանում ես, չգիտես ինչ ա դուրս գալիս...

Բնակլիմայական պայմանների փոփոխությունից հետո մեր տարածաշրջանում պետք է նոր ուսումնասիրություն կատարվի ու մրգերի ու բանջարաբոստանային **կուլտուրաների նոր սորտեր** բերեն այստեղ ըստ այդմ:

Պետք է քայլերի հետևյալ հաջորդականությունը մեր համայնքում. (ա) նոր բնակլիմայական պայմանների համար նոր ուսումնասիրություն, թե ինչ տեսակի **ինչ մշակաբույսեր մշակել**, (բ) հողի ու բույսերի լաբորատոր ուսումնասիրություն դրանք ճիշտ բուժելու համար:

Մասրենով հարուստ տարածքներում օձերի քանակն էլ է շատ, իսկ օձի թույնը դեղագործության մեջ ամենաշատը կիրառվող բաղադրիչներից է: Մասրենու արտադրությունն այսպիսով կրկնակի շահավետ է:

Խաղողագործությունը, **մեղվաբուծությունը**, **անասնապահությունը** և **պտղաբուծությունը** մարզի առաջնահերթություններն են:

Պարարտանյութերը ցածրորակ են:

Գյուղնախարարությունը **պարարտանյութերը ուշացնում** է:

Ազոտով հողը **պարարտացնելու** պատճառով **հողը փչանում** է: Դա բնապահպանական լուրջ վտանգ է:

Պարարտանյութեր կան, որ բարձր **ջերմաստիճանի** դեպքում, ուղղակի ընդհանրապես չեն աշխատում:

Պարարտանյութ և **թունաքիմիկատ** ներկրող կազմակերպությունները պետք է **որակյալ** ապրանք ներկրեն:

Պարարտանյութի ներկրումը չպիտի լինի **մոնոպոլ** բիզնես, պետք է սահմանված **գին** լինի պետության կողմից, գնային շեմ լինի հստակ:

Ավելի լավ է էնպես անել, որ **հողը ուրիշ նյութերով չաղտոտվի**, քան պայքարել միայն աղակալման դեմ:

Թող **թունաքիմիկատի ամբողջական ծառայությամբ** հենց կոոպերատիվը զբաղվի. խորհրդատվություն, վաճառք, կիրառում...

Թունաքիմիկատը անհրաժեշտ է, բայց դրանով պետք է մասնագետը զբաղվի, այլ ոչ թե ամեն մեկը ինչքան ուզենա փչի: Պետք է նախապես զգուշացնել բոլորին փչելուց առաջ, պետք է իմանալ որ սեզոնին է պետք դա անել, ինչ դոզայով և այլն:

Առանց լաբորատոր զննման ոչ մի գյուղացի չի իմանա, թե դա ինչ էֆֆեկտիվության **թունաքիմիկատ** է, ինչ որակ ունի:

Թունաքիմիկատները ունեն հատուկ պահպանման պայմաններ, օրինակ հատուկ ջերմաստիճան, հասարակ գյուղացին անգամ դա էլ չգիտի:

Կան խանութներ, որտեղից գյուղացին **թունաքիմիկատը** գնում է "նիսյա", բնականաբար այդտեղ նաև անորակ է:

Սովետական Միության ժամանակ «կուկուռուզնիկներով» **կրծողների դեմ պայքար**

էր տարվում: Տարեկան երկուսից երեք անգամ և՛ անտառային, և՛ գյուղատնտեսական հողերում այս աշխատանքներն արվում էին, երբեմն անգամ ըստ պահանջի: Նման մոտեցում է պետք:

Կրծողների դեմ պայքարը պետք է կենտրոնացված լինի, որովհետև եթե ես ինչ-որ կերպ իմ մկների դեմն առնեմ, հարևանի հողից են մտնելու... Ինչպես կան տրակտորային պարկեր, որոնցից բոլորն օգտվում են, այնպես էլ բուժման կենտրոններ են պետք, որոնք կմշակեն որոշակի ժամանակացույց, որով կկատարվի համայնքի բոլոր գյուղատնտեսական հողերի բուժումը:

Այսօր ամբողջ **դեղորայքը** ներմուծվում է, շատ կեղծ և անորակ ապրանքներ կան շուկայում, հատուկ վերահսկողություն է պետք սահմանել այս ոլորտում:

Գյուղացին փող է տալիս, **կեր** ու **դեղ** առնում, բայց դրանց որակից տեղյակ չէ ու հույսը դնում է տվողի խղճի վրա:

Վճարովի ծառայությունները կարևոր են, քանի որ գոյացած վճարներով հնարավոր կլինի հետագայում այդ ծառայությունները բարելավել:

Այսօր **վարելահողը** դարձրել են **խոտհարք**, խոտհարքը՝ **արոտավայր**, իսկ արոտավայրերը դեգրադացվել են:

Պետք է **ջեռուցման** ճիշտ տարբերակներ գտնենք, որ բնությանն էլ չվնասենք:

Արևային **էներգիա արտադրողների** համար պետք է բարձրացնեն սակագինը, այլապես նպատակահարմար չի լինի:

Բարձրադիր հողեր, **թեք լանջեր** ունենք Գեղարքունիքում: Մենք չենք կարողանում **ցանքաշրջանառություն** հանել. հարթ գոտիներում կարտոֆիլ, ցորեն, գարի... ոչ ավել:

Մենք որպես ՀԿ օգնել ենք իջևանատներին, անգամ **արևային էներգիա** ստանալու սարք ենք տրամադրել, գազ չկար, հիմա էլ շատ լավ գործում են այդ կառույցները:

Պետությունը պետք է ուղղորդի գյուղացուն՝ **իրացման ճիշտ ուղիներ** գտնելու հարցում:

Վերջին սրսկումը պետք է լինի բերքահավաքից քսանհինգ օր առաջ:

Եղեգները այսօր լուրջ խնդիր են, ես իմ ուժերով են այսօր պայքարում, բայց ինչու այս խնդիրը լուծում չունի:

Այգիների կողքին էլ **ծառեր չեն տնկում**, դա էլ է վնասում գյուղատնտեսությանը:

Հատուկ ցեղերի բերելն էլ պետք է հասկանալ **գոտիականությունն** ու **պայմանները** ու ըստ դրա բաժանեն: Ես կողմ եմ, որ թե թեկուզ թանկ են, բայց իրենց ծախսը հանում են, խաչասերումն էլ կարող է մեր տեսակները բարելավել:

Ոչխարաբուծությունը կամաց-կամաց վերանում է, որովհետև բուրդ չենք մշակում, կաշին թափում ենք:

Կարելի է **տիբեթյան յակեր** բուծել: Հովիվ պետք չի, գայլերից չի վախենում, բարձր գոտի ենք՝ ամեն ինչ նպաստավոր է:

Չկան **անասուն պահելու** համապատասխան պայմաններ:

Անասնապահության համար պետք է ներդնել **սեզոնային սրսկումների** համակարգ:

Անասնապահության ոլորտի՝ **բեղմնավորման**, սպանդանոցների խնդիրը մնացել է գյուղացու ուսերին:

Ոչխարի բուրդը խուզում են ու վառում, որովհետև բրդի **վերամշակում** չի արվում:

«Չոր արմատից հանել բույս կարելի բան չի դնել հույս», դուք 20 լ կովին ավելի շատ կեր կտաս, թե 1լ: Իմաստ չունի ռիսկային տեղերում, վատ պայմաններում **փողեր դնել**: Բայց այդ 1-ից պետք է տաս կեր, որ դառնա 20լ:

Պետության տրամադրած **դիզվառելիքը անորակ** է, որի օգտագործման պատճառով վնաս է կրում տեխնիկան:

Պետական ծառայությունների մեջ պետք է ավելացնել **տուբերկուլյոզի դեմ պատվաստումները**:

Պետք է գյուղացիների գործունեության **քարտեզագրում** արվի, ըստ այդմ էլ կորոշվի ինչի կարիք կա:

Արարատյան դաշտում **բերքատվությունը** երեք անգամ ավելի է քան մեր մարզում: Մեր հողերը երրորդ-չորրորդ կարգի հողեր են:

Պետք է լուրջ **ուսումնասիրություն** իրականացվի գոտիականության, որ այնտեղ, որտեղ մարդիկ պետք է խոշոր եղջերավոր անասնապահությամբ զբաղվի, խնձորի այգիներ չտնկեն:

Սովետը փլուզվելուց հետո ոչ մեկ չի եկել, հողի նմուշ չի վերցրել տանի **փորձաքննության**, որ ճիշտ ախտորոշում տա, ու մենք իմանանք կոնկրետ ինչ հիվանդություն ունենք ու ինչ բուժում կիրառենք: Արդյունքում սխալ բաներ ենք անում ու էլ ավելի վատթարացնում բերքի ու հողի վիճակը:

Սննդի անվտանգությունը պետք է մնա **պետության** վրա:

Բրուցելոզի դեպքում **հարկադիր մորթ** պետք է իրականացվի, բայց դրա համար **պետության աջակցությունն է պետք** գյուղացուն:

Հատկապես օրգանիկ դաշտերում անհրաժեշտ է ստեղծել **էկոինսպեկցիա**:

Սննդի **անվտանգության** համակարգը լավ բան է, բայց մեխանիզմները ամբողջական չեն մշակված և շատ կարևոր է, որ մշակաբույսերի հետ կապված ստուգումներ անցկացնեն, հատկապես **թույների չափաբաժնի** համար:

Պետք է ստեղծել **էկոինսպեկցիա**, որը կկարողանա վերահսկել բոլոր սրսկումները և տուգանքներ կիրառի:

Ուրիշ երկրներում կա **էկոինսպեկցիա**, որը վերահսկում է դեղերի դաշտը:

Մինչև հիմա եղել է մի քանի ստուգող մարմին սննդի անվտանգության մասով: հիմա մեկ **միասնական** է, դա ճիշտ է:

Սննդի անվտանգության մասով պետք է լինի մեկ **կենտրոնացված** պատասխանատու կառույց:

Պետական ծառայությունների մեջ պետք է ավելացնել **տուբերկուլյոզի** դեմ պատվաստումները:

Մեզ անհրաժեշտ են **սերմնաբուծարաններ**, որտեղ կբուծենք մեր տեղական սերմերը:

Մեր յուրահատկություններից ելնելով՝ Արտաշատից բերված սերմն անարդյունավետ է, իսկ Շիրակից բերվածն ավելի լավ է հարմարեցվում: Այդ իսկ պատճառով մեզ տեղական **սերմնաբուծարաններ** են պետք, որտեղ կփորձարկենք ու լավագույն սերմնատեսակը կստանանք:

Եթե վարակ է տարածվում գյուղացին է փորձում կանխել այն, **պետությունը չի խառնվում**:

Գյուղատնտեսությունը չպետք է մնա **միայն գյուղացու ուսերին**, պետությունը անպայման պետք է վերահսկի, ընդ որում ավելին, քան հիմա է:

Զարթոնքում ոռոգման ջրերն Արմավիրի ու Մեծամորի կոյուղաջրերն են, տանում են, ստուգում, նորմալ արդյունքներ են... Ի՞նչ վերահսկողության մասին է խոսքը: Տարբեր պետական մարմիններին դիմել ենք մաքրման կայաններ սարքելու համար, առայժմ անարդյունք:

Սննդի անվտանգության համակարգը Հայաստանում **լիարժեք չի գործում** ու նրանց իրավունքները սահմանափակ են:

Որակի ստուգման գործում էլ **կոռուպցիա** կար:

Որակի **վերահսկողություն որևէ կերպ չի իրականացվում**:

Խորհրդային ժամանակ ոչ ոք իրավունք չուներ **թույն պարունակող բերք** վաճառել, բայց այսօր դա չի ստուգվում:

Նախկինում հնարավորություն կար շուկայում ստուգել բերքի **որակը** հատուկ սարքերի միջոցով, բայց այսօր **մեզ կկախեն ստուգելու դեպքում**:

Պտուղը տասն անգամ **սրսկում** են, բայց ո՞վ ունի դրա իրավունքը:

Վերջին **սրսկումը** պետք է լինի բերքահավաքից քսանհինգ օր առաջ:

Գյուղացուն չի հետաքրքրում **կերի և դեղի ժամկետանց** լինելը, քանի որ որևէ մեկը չի հսկում գործընթացը:

Կերային բաղադրիչների վրա չկա որևէ վերահսկողություն: Ով ուզում է, կեր է սարքում և ծախում, չկան վիտամինային միացություններ, վաճառում են միայն դատարկ թեփը:

Ստուգումները խիստ **մակերեսային** են: Խորքային ուսումնասիրություններ և անալիզներ չեն լինում:

Մեր վերամշակող կազմակերպությունները պիտի զբաղվեն նրանով, որ **փչացած** բերք չլինի:

Մի քանի մասնավոր կազմակերպություններ **կեր** են սարքում, բայց որևէ հսկողություն չկա իրենց գործունեության նկատմամբ: Ինձանից բացի այսօր բոլորը կեր ծախող են:

Պետությունը պիտի համակարգի գինու որակի խնդիրը. 40,000-անոց գինին շատ ավելի վատ **համ** ունի, քան մեր տեղի որոշ արտադրանք, բայց ինչպե՞ս դա ապացուցենք:

Պետական **վերահսկողություն չկա** անասնամթերքի նկատմամբ, անասնաբուժական լաբորատորիաների գործառույթն էր, բայց դրանք էլ փակեցին:

Կազմակերպություն կա օրական քսան տոննա պանիր է արտադրում, բայց այդքան կաթ չկա երկրում, տեսչությունը պետք է հետևի **որակին**:

Գյուղացու արտադրած պանիրը շուկայում վաճառվելուց առաջ **չի ստուգվում**, օրենքի բաց է:

Թուրքական լոլիկը օլիգարխը մտցնում է շուկա, **թունավորում** մեր ժողովրդին, գյուղացուն էլ խեղճացնում:

Տուբերկուլյոզը պատվաստում են միան այն դեպքում, երբ մարզում վարակ կա, սա պարտադիր պատվաստում չէ:

Մթերումը պետք է կատարվի ապրանքի **անալիզն** անելուց հետո: Միայն **որակով** ապրանքը պետք է մթերվի:

Ապրանքի **որակը** մեզ մոտ չեն ստուգում: Իմ որակով ապրանքն ավելի էժան է, քան ուրիշի անորակը:

Սպանդանոց պետք է ստեղծվի մարզում, բակում ենք մորթում անասուններին:

Սպանդանոցների կառուցումը կարող է ստեղծել մրցակցային պայմաններ, պետք է շարունակել աջակցել այդ ծրագրին:

Սպանդանոցները լավ բան են, բայց ռիսկայնությունը շատ մեծ է, եթե կենտրոնացված լինի, շուկան կարող է թանկանալ, ինքը մենաշնորհ կունենա: 2 տարբերակ է լինում, կամ գյուղացին պետք է ավելի էժան վաճառի, կամ ապրանքի գինը կավելանա, քանի որ մի օղակ՝ սպանդանոցը ավելանում է:

Պետք է հստակ գործի **սպանդանոցի** վերաբերյալ օրենքը: Ով որտեղ ուզի, անասուն է մորթում: Իսկ սպանդանոցներում հնարավոր է այս գործընթացը անվտանգ դարձնել:

Բոլոր մարզերում կային **սպանդանոցներ**, բայց մասնավորեցնելուց հետո ամբողջը քանդեցին:

Ես իմ պահած անասունին **իմ ձեռքով չեմ սատկացնի**: Անցյալ տարի անասունս հիվանդ էր, գլուխն արագ կտրեցի, ավելի էժան գնով հանձնեցի խանութին: Ո՞վ ա ստուգելու...

Սպանդանոցը էժան է վերցնում միսը անասնապահից, ավելի լավ է մենք մորթենք տանք շուկա:

Միջանկյալ օղակը գյուղացու ու մթերողի մեջ պետք է չլինի, թող գյուղացու հետ անմիջական հարաբերություններ լինեն:

Արմավիրում **սպանդանոց** չկա: Սակայն միայն սպանդանոց հանձնելը գյուղացուն ձեռնտու չի: Պետք է խանութներ հանձնելու հնարավորությունը չսահմանափակել:

Սպանդանոցը ԱՊՀ-ի պես բան էր՝ ոչ ոք իմաստը չհասկացավ:

Սպանդանոցները ձեռք չեն տալիս գյուղացուն, մարդիկ նախընտրում ենք իրենք մորթեն վաճառեն:

Սպանդանոցները պահանջում են մեկ օրում 600 ոչխար, եթե այդ թիվը չի ապահովվում չեն մթերում:

Սատկած կովը վիզը կտրում ենք, գումի շուկայում էժան վաճառում: Սննդի **տեսչությունը ոչինչ չի արել** դեռ:

Գյուղացին **հիվանդ միսն** է ուղարկում վաճառքի,

Պետք է լինեն պետական **սպանդանոցներ**, որտեղ գյուղացին առանց մտածելու կարողանա հանձնի իր արտադրած միսը:

Սպանդանոցները շատ լավ բան են: Բայց դրանք կոնկրետ մարդկանց են պատկանում: Կարելի է համայնքներում ստեղծել **սպանդահրապարակներ**, որտեղից միսը գնեն փոքր խանութները:

Անասունի միսը հանձնելու համար, անասնաբույժի **սերտիֆիկատ** է անհրաժեշտ: Հիվանդ կենդանու միսը չի վաճառվի:

Հիվանդ անասունի մսի վաճառքը գրեթե անհնար է: Սննդի անվտանգության **տեսչությունը հսկում է**:

հո հիմար չի, որ ինքը ուտի այդ մսից:

Համայնքային **անասնաբույժը** պետք է անվտանգության նորմերին հետևի համայնքում:

Քանի որ գումար չի տրվում, ես **հիվանդ կենդանին մորթելու եմ ուղարկեմ ձեզ**, մեզ պահեմ առողջը:

Թ. ԻՐԱՑՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՀԱՐԿՈՒՄ

Կաթի մթերման **գինը** շատ ցածր է, բայց խանութում մի քանի անգամ թանկ է վաճառվում կաթնամթերքը:

Կաթի մթերման **գինը** իջեցրել են: Իսկ կաթնամթերքի գինը արդյո՞ք իջել է: Ո՛չ: **Պետությունը** այստեղ պետք է **կարգավորողի**, ոչ թե **միջամտողի** դեր ստանձնի:

Մեր կաթի գինը ընկնում է, որովհետև արտասահմանից շատ էժան գնով կաթի փոշի են **ներկրում**: Լիտրը 100 դրամը ծիծաղելի գին է:

Եթե մարդը աճեցնում է կարտոֆիլը իննսուն դրամ **ինքնարժեքով**, վաճառում է հիսունով, բնականաբար **ձեռնտու չէ**:

Կաթի **գնի** նվազման պատճառով գյուղացին շահագրգռված չէ աշխատել:

Գյուղմթերքի **գների** կայունացումը մինչև գյուղացին չզգա, ոչ մեկին չի վստահի:

Կարտոֆիլի իրացման խնդիր չունենք, խնդիրը իրացման **գինն** է:

Գրեչկայի **ինքնարժեքը** երկու հարյուր դրամից մի քիչ ավել է, բայց **գինը** շուկայում ութ հարյուր դրամից իջավ երեք հարյուրի:

Անասնապահության մեջը երկու վատ բան կա, կաթի **գինը**, որը շատ տարբեր է բոլոր գյուղերում ու ցածր է ընդհանուր առմամբ՝ 80-130 դրամ: Նույն գործարանը տարբեր տեղերից տարբեր գներով է առնում, պետք է ուսումնասիրել ու կայունացնել գինը:

Սպանդանոցները լավ բան են, բայց ռիսկայնությունը շատ մեծ է, եթե կենտրոնացված լինի, շուկան կարող է թանկանալ, ինքը

Գյուղմթեքի **իրացման** խնդիր կա:

Իրացումն ամենացավոտ հարցն է:

Սպառման մեծ խնդիր ունենք: Այս տարի մեղրն է շատ լավ՝ շատ մեղր կա: Բայց ձեռքը կրակն ենք ընկել՝ չենք կարողանում **իրացնել**:

Գյուղացին ստիպված **ինքն է գնում խնդրում**, որ իր բերքը տանեն ու չի կարողանում **ռեալիզացնել** ամբողջը:

Մենք ունենք ռեսուրսներ և ավելացնելու մեր արտադրանքի քանակը, մենք **իրացման խնդիր** ունենք, այդ պատճառով չենք ավելացնում:

Ջերմոցները կառուցել են շատ, բայց արտադրանքի **իրացման** խնդիրն է շատ ակտուալ:

Մենք պետք է ջուր ունենանք, **շուկա** և պաշտպանված լինենք կարկտահարությունից:

Կարող է ընդհանուր հավաքման կայաններ ու փոքր գործարաններ լինեն կոնկրետ ապրանքի արտադրության ու **վերամշակման** շուրջ: Փոքր ձեռնարկություններ կան, որ օրինակ կտավատի ձեթը հանում ենք, **4000-ով** ենք 1 լ կարում վաճառել ներքին շուկայում:

Մի քանի տարի հետո մենք մրգի **իրացման** հետ խնդիրներ ենք ունենալու, որովհետև բերքը շատ է լինելու, իսկ իրացման շուկան՝ փոքր:

Պետք է ապահովագրել նաև ապրանքի **իրացումը**, ոչ միայն արտադրությունը:

Եթե մարդը իմանա, որ իր արտադրանքը, օրինակ մեղրը, **կվաճառվի**, երբեք բնությանը չի կպնի, անտառ չի կտրի:

մենաշնորհ կունենա: 2 տարբերակ է լինում, կամ գյուղացին պետք է ավելի էժան վաճառի, կամ ապրանքի **գինը** կավելանա, քանի որ մի օղակ՝ սպանդանոցը ավելանում է:

Սպանդանոցը **էժան** է վերցնում միսը անասնապահից, ավելի լավ է մենք մորթենք տանք շուկա:

Խորհրդային Միության օրոք գիտական մտքի երեսուն տարվա զարգացման արդյունքում մենք ստացանք ոչխարի տեսակ, որը հրաշալիորեն ադապտացված էր մեր բնակլիմայական պայմաններին: Բայց հիմա բուրդը **գին** չունի: Գառը մորթում ենք, բուրդը վառում:

Մինչև հիմա կաթի ոլորտում մոնոպոլիան, **մաֆիան** է գործում: Բոլոր կաթ մթերողները նույն կենտրոնից են ղեկավարվում: Հենց լակտացիոն սեզոնը գալիս է, նրանք մթերման **գինը** իջեցնում են: Իսկ ձմռանը գյուղացին կաթով չի զբաղվում, այլ գոմաղբով:

Պետությունը պետք է իջեցնի այն ապրանքների **ինքնարժեքը**, որը օգտագործում է գյուղացին: Նախկին իշխանությունն կոռուպցիոն սխեմաների պատճառով, բարձրացրել է շատ ապրանքների ինքնարժեքը, որի պատճառով գյուղ մթերքի վերջնական արժեքը ավելի թանկ է ստացվում, քան ներմուծվող մթերքների դեպքում:

Համայնքների զարգացման ծրագրով բերեցին, գրեչկա ցանեցինք, հոյակապ բերք ստացվեց: Ֆինանսավորման մի մասը այնուամենայնիվ չտվեցին, կիսատ մնաց՝ արտադրություն չհիմնվեց: Փոխարենը մեծ քանակությամբ գրեչկա բերեցին դրսից, **գինը** իջավ, հիմա իրացման խնդիր ունենք:

Ապրանքի համար կարևոր է հումքի **գինը** հստակ սահմանել: Մի լիտր կաթը և պաղպաղակը նույն գնով են վաճառվում:

Գյուղատնտեսական արտադրանքի **ինքնարժեքը** ձևավորում է ընդունողը:

Դաշտում այս պահին **մի քանի տոննա սալոր** ունենք, բայց չկա պետական մարմին, որը զբաղվի այս հարցով, իսկ գյուղացու համար արդեն **միևնույն է գինը**:

Կան գյուղացիներ, որ շատ լավ գիտեն սեփական արտադրանքի **ինքնարժեքը**, բայց չի կարողանում **իրացնել** այդ **գնով**:

Պետական գործարանը շահույթի հետապնդման խնդիր չունի և կարող է ավելի **բարձր գնով** մթերել ապրանքը:

Պետք է ապահովել գյուղմթերքի **ինքնարժեքի** իջեցում, որպեսզի վերջինս **մրցունակ** լինի

Երկրի ներսում **սպառման** խնդիր ունենք նաև այն պատճառով, որ սպառողների թիվն է պակասում:

Այստեղ էլ **պայմանները** պետք է հստակ լինեն, մի օրինակ՝ 1-ին տարին 4տ բերք ստացավ, գնեց, հետո ավել էր, ասում էր ես 4տ-ի տերն եմ:

Պետության կողմից **իրացման** հարցում ոչ մի **աջակցություն չունենք**:

Սխտորի ցանքատարածություններն ավելացրել ենք, աշխատատար չի ու ավելի **եկամտաբեր** է, քան կարտոֆիլը:

Այսօր պետք է փորձել ուրիշներից տարբեր լինել, առավել **մրցունակ** լինել, այնպիսի արտադրանք ունենալ, կամ այնպիսի բույսեր աճեցնել, որ ուրիշ տեղ չկա: Օրինակ մենք հիմա **բրոկոլի ենք ցանում**, սկզբից չէինք էլ հասկանում, ինչպես օգտագործել:

Ոչ ավանդական բուսաբուծությամբ եմ զբաղվում՝ բրոկոլի աճեցրեցինք: Շատ ավելի լավ ստացվեց, քան Արարատյան դաշտի **բրոկոլին**: Բայց հիմա ցանքատարածության ու գումարի խնդիր ունենք, բայց մեծ **հեռանկար** կա, եթե ստացվի:

Իրացման խնդիրը լուծելու համար, նախ պետք է **որակյալ արտադրանք** ունենալ, դրա համար պետք է նորագույն **ինֆորմացիա** ունենալ, **նորագույն տեխնիկա**, լավ պատրաստված **մասնագետներ** ունենալ, հողերի **մոնիթորինգ** անել, նոր արդեն **շուկաների ուսումնասիրություն** անել:

Եղեգնաձորում շատ հողեր կան, որ չեն էլ մշակվում. մի քանի անգամ ցանում են, **եկամուտ չեն ունենում**, **հիասթափվում են**: Բայց պետք է ինչ որ **նոր բաներ մտածել**, նոր տեխնոլոգիաներ ներդնել, ոչ թե հիասթափվել ու արտագաղթել:

Եթե **էկո ապրանքի գինը** երկու անգամ ավելի լինի, քան սովորական ապրանքի, ապա ես մեծ հաճույքով դրանով կզբաղվեմ:

Եթե գյուղացին **որակով** ապրանք արտադրի, իրացման խնդիրներ չեն առաջանա:

1000 գլուխ ոչխար ունեմ, **սպառման խնդիր չունեմ**, պարսիկները գալիս տանում են:

Գյուղացին պետք է իմանա, որ ապրանքը **որակով** արտադրելու դեպքում **իրացման** խնդիր չի ունենա:

Ես աճեցնում եմ լավանդա, ազնվամորի, բույսեր որոնք **ավելի թանկ** են վաճառվում, իսկ մարդիկ կպել են կարտոֆիլից:

Շատ չրանոցներ են բացվել ու երբեմն շատ ավելի ձեռնտու է միրգը հանձնել իրենց, քան

շուկայում:

Մրցակցություն չկա երբ ոչ թե արտադրողն է **գին** թելադրում, այլ ընդունողը:

Պետք է ստեղծվեն ընկերություններ կաղամբ արտադրողների և այլն: Հավաքվում են ու որոշում, որ կոնկրետ **գնից** ցածր չեն վաճառելու:

Որ հաշվարկում եմ խաղողի, կաթի **գնով**, վերամշակումից հետո վաճառվող ապրանքների վաճառքը որ նայում ես, ոնց որ գյուղացուն հիմարի տեղ դնեն, ով է տեսել 20%-ից ավել շահույթ ունենան:

Խաղողի իրացումը շատ դժվար է: Խառը սորտերը արտահանվում է **ԵԱՏՄ**, տեխնիկական սորտը վերցնում են գինու կոնյակի գործարանները, շատ **ցածր գներով**, խաբում են քաշում քիչ են վճարում:

Անասունների գինը թանկանում է, բայց մսի **գինը** շատ չի բարձրանում. ձեռնտու չի լինում անասուն պահելը:

Պանիրը հասցրել եմ Երևան, **հազար դրամով** հանձնել եմ, իսկ խանութը վաճառել է հազար հինգ հարյուրով: Էլ ի՞նչ պիտի լինի գյուղացու վիճակը:

170 դրամով վաճառվում է մեկ լիտր սովորական ջուրը, իսկ **կաթի արժեքը** ֆիքսել են 110 դրամ:

Մասնավոր հատվածը խաբում է գուղացիներին, նրանք նախապես սահմանում են իրենց ուզած ցածր գինը, իսկ գյուղացին ստիպված այդ **ցածր գնով վաճառում է**:

Գյուղատնտեսության ոլորտում **խոշորները** թելադրողի դերում են: Կարող են մի տարի իրենց արտադրանքը **շատ ցածր գնով** իրացնել ու մնացածին դուրս մղել շուկայից: Հետո մյուս տարի, երբ արդեն ուրիշ խաղացողներ շուկայում չկան, գինը զգալի բարձրացնում են:

Պարսիկները չեն գնում ոչխար **45000 դրամով**: Նրանք բերում են տալիս են հայ գյուղացուն որ պահի, հավաքում տանում են: Գյուղացուն դարձնում են հովիվ, ոչ թե ֆերմեր:

Էսօրվա դրությամբ անասունի հատուկ կերը իննսուն ութ տոկոսը տնտեսությունների չի օգտագործում, և արդյունքում ստացվում է մաքուր էկո ապրանք, որը պետք է բարձր **գին** ունենա, բայց **սովորական գնով է իրացվում**:

Երբ մեր երկրի բնակչությունը դառնա **գնողունակ**, այդ ժամանակ գյուղատնտեսությունը կզարգանա:

Եթե կաթի **գինը** ֆիքսեն ավելի բարձր, կավելացնեմ անասուններիս գլխաքանակը:

արտահանողներին: Գրեթե **նույն գինն** են առաջարկում ու անգամ փոքր միրգն են վերցնում:

Պետությունը երբեք չի իրականացնի պայմանագրային **գնումները**, քանի որ դա պետության համար մեծ բեռ է:

Նախկին իշխանությունների ժամանակ ապրանքը վերցնում էին **պաշտոնյաներին** պատկանող հողատարածքներից, սովորական գյուղացին բերքը չէր կարող **իրացնել**:

Եթե մեր արտադրանքը **փաթեթավորվի** այստեղ, աշխատատեղ կլինի: Պետությունը թող աջակցի դրան, որ պատրաստ արտադրանք արտահանենք:

Գյուղացու համար մշակումը ավելի հեշտ է անցնում քան **իրացումը**:

Կարևորը **իրացման** հարցի լուծումն է: Շղթայի մյուս հատվածներն ինքնաբերաբար կգործեն:

Մենք այսօր **անորակ** դեղամիջոցներ ունենք, նաև ժամկետանց են, պարարտանյութեր չունենք նորմալ, մենք վատ սերմեր ունենք, վերահսկողություն չկա, հետևաբար վատ արտադրանք ունենք, հետևաբար **արտահանում** չունենք:

Եթե դու բարձր **որակի** գյուղատնտեսական արտադրանք տաս, ապա իրացման խնդիր չի լինի: Բայց պրոբլեմը նրանում է, որ գյուղացին ռեսուրս չունի այդ բարձր որակի գյուղատնտեսությունը վարելու համար:

Գյուղապրանքի **գների սանդղակ** պետք է սահմանել՝ կախված ապրանքի որակից ու այլ հատկանիշներից:

Մեծ քանակի խաղող արտադրելը խնդիր է: Շատը չեմ կարող իրացնել, պետք է հանձնեմ գործարանին, իսկ **գները** շատ ցածր են:

Ցորենի **ինքնարժեքի** ու **գնման** գնի միջև տարբերությունը այնքան չնչին է, որ իմաստ ընդհանրապես չկա դրանով զբաղվելու: Այս դեպքում շատ **մեծ ծավալի** դեպքում կարելի է միայն **օգուտ** ունենալ:

Գյուղացին պատրաստ է բերքը **էժան** տալ, եթե **մթերող** լինի:

Մինչև ցանքը պետք կարողանամ **շուկան գնահատել**, օրինակ՝ տաս հեկտար վարունգ ու պոմիդոր եմ ուզում ցանել, ի՞նչ եմ անելու այդ բերքը: Հաճախ ես չգիտեմ... Ինձ պետք է օգնել, որ ես հասկանամ ինչի՞ կարիք կա, ո՞ւմ եմ տալու այդ բերքը:

Մորթում եմ անասուններս, վաճառում:

Վերավաճառողը թույլ չի տալիս որ մթերողները գան հասնեն գյուղացուն, ինքն է վերցնում տանում:

Երևանի գյուղմթերքների **տոնավաճառները** մեզ հասանելի չեն, կարևոր է բայց, որ սեփականատերը վաճառի, ոչ թե **վերավաճառողը**:

Արտադրողը ստանում է ավելի քիչ եկամուտ քան **վերավաճառողը**, որովհետև այդ շուկայում նույնպես կա մոնոպոլիա և գնման գին է թելադրում **վերավաճառողը**:

Անհրաժեշտ է ավելացնել գյուղմթերքի **շուկաները**, որտեղ գյուղացին անձամբ տանի վաճառի իր արտադրանքը:

Երևանյան **մեծածախ շուկաները** գյուղացիների մեծ մասի համար հասանելի չեն:

Մարզերում **մեծածախ** վաճառքի կետերի մոնոպոլիա է:

Այս տարի մեր գյուղից ութ-ինը հոգի իրենք իրենց ծիրանը **տարան** Ռուսաստան: Ավելի շահեցին, քան առաջ, որ **միջնորդներն** էին տանում:

Փաթեթավորում պիտի լինի, որակի վերահսկողություն, մարքեթինգ... Գյուղացին էս ամեն ինչն **ինքնուրույն** ո՞նց պիտի անի:

Գյուղացիական արտադրանքի **բրենդավորման** կամ **գովազդի** հարցը գրեթե չի քննարկվում:

Քանի որ մենք **իրացման** հարցով չենք զբաղվում, նաև **գովազդի** հարցով էլ չենք հետաքրքրվում:

Գյուղացին չգիտի՝ ինչպես **գովազդի** իր ապրանքը:

20 տարի է գյուղատնտեսական ապրանքները չեն թանկանում, դա **վերավաճառողների** համար է միայն, ոչ գյուղացու: Ինտերնետը բացում **գներն** են նայում, Վ. Տերտերյանի ասածներն են լսում, ոնց որ մեր գյուղում չապրեն:

Մենք **իրացման** մեծ խնդիր ունենք, մենք շատ հեռու ենք երևանյան **շուկայից**:

Սպայկան իր համար գյուղմթերք գնելիս փչացնում է գյուղացու ապրանքը. 100 կգ միրգ ընտրելու համար մեկ տոննա **կարող է փչացնել**:

Վերավաճառողները միշտ ավելի շատ են եկամուտ ստանում քան արտադրողը: Արդար չէ:

Մենք չունենք **կայուն շուկա**: Ես միսը առնում եմ 3000 դրամով, բայց ավելի **էժան եմ վաճառում**:

Գյուղ ապրանքի իրացման խնդիրը այն է, որ

Այս տարի **արտահանողները** շատ էին, գյուղատնտեսական շուկաներից շատ չեմ օգտվել: Տարուց է կախված, թե **իրացումն** ինչպես կանեմ:

Գյուղացին ժամանակ չունի շուկայում **մեծ քանակի բերք վաճառի**, և կանգնում է բերքը **իրացնելու** լուրջ խնդրի առաջ:

Գյուղացին այնքան է խաբվել, հիասթափվել, որ չի ուզում ոչ մեկի հետ աշխատել, ասում է, **արի և տար** իմ բակից իմ արտադրանքը, ոչ մեկ գործընկեր չի էլ փնտրում, **պայմանագրային հարաբերություններ** ոչ մեկին պետք չեն:

Պայմանագրային հարաբերությունները երազանք է գյուղացու համար, որ գան իր ծառը, հողը վարձակալեն ինչ-որ ժամանակով:

Գյուղացին արտադրում է, բայց չի կարողանում **իրացնել** իր արտադրանքը: Չկա ուրիշ օղակ, որը կզբաղվի այդ հարցով:

Արտադրողը պետք է **իրացման** հետ կապ չունենա, պետք է գան դաշտից տանեն գյուղացու բերքը:

Պետք է լինի մարզում մի կառույց, մի բազա, մի **գնող կազմակերպություն**, որ ինքը **կարտահանի** գյուղացու արտադրանքը:

Պետությունը պետք է ստեղծի **միջնորդ վերավաճառող** կազմակերպություն:

Պետությունը պետք է **առաջարկ-պահանջարկի** հարցը վերցնի իր վրա:

Պետությունը պետք է նվազեցնի **գյուղմթերքի գնի սկայնությունը**:

Պետությունը պետք է կարողանա ապահովել գյուղացու **արտահանման անվտանգությունը** կամ **պայմանները**:

Պետք է շատանան «**Սպայկա**» ընկերության նման ընկերությունները:

Գյուղացուն ավելի ձեռնտու է **մի տեղ իրացնել** իր արտադրանքը, ոչ թե մի մասը տալ ֆուռին, մյուսը՝ չրանոցին, էն երրորդն էլ՝ Արթֆուռին: Մանավանդ, որ չրանոցը սորտավորումն ավելի խղճով է անում, քան ֆուռը:

Ամեն գյուղացի չի կարող արտահանմամբ զբաղվել, գյուղացու համար ավելի **ձեռնտու** է բերքը տալ **մթերող** կազմակերպություններին:

Շուկաների ստեղծումը նպատակահարմար չեն, քանի որ չեն կարողանում ապահովել **մեծ իրացում**:

Պետք է գործեն **մեծ թվով մթերող**

գյուղացուն դժվար է տանել, **վերավաճառողն** էլ թանկ է վաճառում:

Իմ այգու բերքը չեմ հանձնում գործարանին: Շատ **ցածր գնով են մթերու**մ: Նախընտրում եմ **փոխել հարևանների հետ** կարագի, մսի հետ: Հինգ անգամ ավելի եմ շահում:

կազմակերպություններ, որոնք կունենան իրենց մեքենաները, քանի որ սառնարանային տնտեսությունները հնարավորություն չունեն ինքնուրույն իրացնել բերքը:

Ծիրանի և դեղձի հարցում խնդիր չկա - **Սպայկան** վերցնում է: Եթե **Ծառուկյանը** խաղողները ընդունում է ու չխաբեն, ամեն ինչ լավ կլինի:

Ջերմոցային տնտեսություն ունեմ, լոլիկ եմ արտադրում, հիմա չգիտեմ ես **արտադրությամբ զբաղվեմ, թե հետո էլ մտածեմ որ խանութ տանեմ**, ինչպես **իրացնեմ**:

Իրացման խնդիր ունենք նաև, թող ստեղծեն **հավաքագրման կետեր**, ես էլ հանգիստ իմ լոլիկը **կտանեմ կտամ**. գյուղացի մարդ եմ, իմ գործով կզբաղվեմ՝ իմ այգին կջրեմ:

Արտահանման ոլորտում թող **պետությունը օգնի խոշորին**: Մանրն էլ թող արտահանի խոշորի միջոցով:

Անհատ գյուղացին իր պանիրն ու մեղրը միայն իր **հարազատների շրջանում** է կարողանում **վաճառել**, բայց դրանով ինչպե՞ս եկամուտ ապահովել:

Գյուղացուն ոչ թե կարկուտն է վնաս տալիս, այլ մթերման խնդիրը: Մեր տարածաշրջանում **մթերումը** շատ վատ է կազմակերպված:

Մեր **արտադրանքը քիչ է**, մեծ պայմանագրեր չենք կարողանում կնքել:

Մթերումը պետք է տեղում կազմակերպվի: Շատ մթերքներ մինչև հասցնում ես շուկա, փչանում են:

Իրացման համար **ծավալ է պետք**: Երեք ծառ ունեցողի համար անհամեմատ ավելի բարդ է իրացնելը:

Մեր համայնքը շուկայից մոտ ինը կմ **հեռու** է, չենք հասցնում հասցնել շուկա:

Համայնքի տեղակայումը նույնպես կարևոր է սպառման համար:

Մեր հարևան գյուղ բեռնատար է գալիս ու բերքը տանում: Իսկ մեր գյուղը տուժում է **վատ ճանապարհներ** ունենալու պատճառով:

Գյուղացին ժամանակ չունի զբաղվի իրացման հարցով. նա **արտադրող է ոչ թե իրացնող**:

Գյուղացին պատրաստ է բերքը **էժան** տալ, եթե **մթերող** լինի:

Վայոց Ձորի **հեռավորությունը** Երևանից իրացումը դարձնում է ամենամեծ խնդիրը: Մինչև հասցնում ենք Երևան, գյուղմթերքի ինքնարժեքն

	ավելանում է, իսկ ինքնարժեքն այստեղ բավականին տարբերվում է Արարատյան դաշտավայրի բերքի ինքնարժեքից: Շատ կարևոր է ունենալ **մթերման կետեր**, հավաքագրման կետեր, գյուղատնտեսության նախարարությունը չպետք է նստի թուղթ գրի-ջնջի, այլ պետք է աշխատի մեզ հետ, մեզ մոտ: Չորս տոննա խնձորից մեկուկես տոննա վաճառեցի, մեկը տվեցի կովերին, մնացածից էլ օղի քաշեցի: Որքանո՞վ է սա շահավետ: **Իրացումն է պետք է ապահովել**: Օրինակ՝ եթե **սառնարան** էլ ունենանք, Երևան հասցնելը մեծագույն խնդիր է, իսկ **մթերման հիմնական կետը մայրաքաղաքն է**:
Չստանդարտեցված խառը սորտերով օրինակ **կարտոֆիլը** վաճառվում է **ՌԴ**-ում, բայց ոչ **ԵՄ** երկրներում: Մեր համար բաց է **ԵՄ** շուկան, **ԵԱՏՄ** շուկան, մեզ մնում է միայն սերտիֆիկատ հանել և արտահանել: Գյուղացին **պատրաստ է արտադրել եվրոպական չափանիշներին** համապատասխան մրցունակ արտադրանք: Մենք չպետք է իրացման հետ կապված մեր հույսը դնենք միայն **ՌԴ**-ի վրա, այլ պետք է գտնենք **եվրոպական** նոր շուկաներ: Մեր **ապագան** լավ դիզայնով, փաթեթավորված ապրանքի **արտահանումն** է: **Ծիրանը** միակ միրգն է, որ դուրս է գալիս երկրից **բոլոր տեսակի շրջափակումների** պայմաններում: Անգամ **արտահանվել է** ռուս-վրացական պատերազմի ժամանակ: Խաղողի իրացումը շատ դժվար է: Խառը սորտերը արտահանվում է **ԵԱՏՄ**, տեխնիկական սորտը վերցնում են գինու կոնյակի գործարանները, շատ **ցածր գներով**, խաբում են քաշում քիչ են վճարում: **Ճանապարհների խնդիրը մեզ մոտ մեծ խնդիր չի** հիմա. համայնքները կամաց-կամաց լուծում են էս խնդիրը:	Առանց **պետության աջակցության** տեղական արտադրանքի դուրս բերումը **միջազգային շուկա**, գրեթե անհնար է: ԽՍՀՄ տարիներին մեր տարածաշրջանում ցանվում էր 1400 հա կարտոֆիլ, այս տարի ցանվել է 228 հա. **Չկա շուկա**: Պետությունը պետք է աջակցի բերքի **արտահանման** հարցում **ԵԱՏՄ**: **Մեծ ծախս է** ապրանքը **ԵԱՏՄ** հանելը: **Պետությունը** պետք է օգնի այդ հարցում: **ԵՄ արտահանման** համար պետք է **էկոսերտիֆիկատ**, որի ձեռքբերումը **ֆինանսի և ռիսկերի** հետ է կապված: Ամենադժվար խնդիրը գյուղմթերքի **ստանդարտեցումն** է, ցանում են տարբեր սորտեր, շուկան պահանջում է նույն ստանդարտով: Եթե լինի **ստանդարտեցում կլինի արտահանում**, ներքին շուկայի բավարարում: Այսօր ոչ մի գյուղացի չգիտի, թե ինչ **չափանիշների** պետք է համապատասխանի իր արտադրած բերքը: Մեր գիտելիքները չեմ բավարարում օրգանիկ ապրանք արտադրելու համար, ուստի չենք կարում արտահանենք **ԵՄ**: Մեր տարածաշրջանում ոչ մեկ **արտահանմամբ** չի զբաղվում, դրա համար էլ մենք հատուկ **սերտիֆիկատներ** չենք տրամադրում, հատուկ զննման մեր արտադրանքը չի ենթարկվում, ոչ մեկ մեզնից ոչինչ չի ուզում: **Վրաստանում արգելք** է դրած հայկական գյուղատնտեսական ապրանքների ներմուծման և վաճառքի վրա: Մեր **կառավարության** գլխավոր խնդիրը այն է,

որ ճիշտ քաղաքականության միջոցով այնպես անի որ **արտահանման խնդիրներ չառաջանան**:

Արտահանման հարցը լուծվի, **ճանապարհները** բաց լինեն, **արտաքին շուկաներում պետությունը լինի մեր թիկունքին:**

Ժամանակին **վրացիները** գալիս էին մեկ շաբաթ քնում էին դեղձի դաշտերի տակ, որպեսզի բերքը իրենց հասնի: Հիմա **մաքսերի** պատճառով էլ չեն գալիս:

Արտահանման խնդիրները հիմնականում կախված են **փաստաթղթերի** հետ: Սահմանային անցակետերում երկար ժամանակ ստիպված ես լինում սպասել:

Վրացական շուկան փակեցին մեզ համար, հիմա խաղողը, խնձորը չենք կարողանում արտահանել:

Լարսի անցակետը երբ որ փակվում է, ապրանքը փչանում է ճանապարհին, նոր ապրանքը չեն ընդունում, գինը իջեցնում են:

Մենք ամեն օր աղոթում ենք, որ **Լարսը** չփակվի:

Պետք է **ՌԴ** դուրս գալու նոր ճանապարհ բացել:

Լարսի անցակետում 7 օր մնացել է ծիրանը, իսկ վառելիքը կրկնակի գնով են վաճառել վարորդներին, որպեսզի սառնարանները միացրած պահեն ու բերքը չփչանա:

Խոտաբույսերի բիզնեսը շատ ձեռնտու է, մենք շատ **գնորդներ** էլ ունենք, բայց այսօր անգամ մի **մեքենա** չենք կարողանում ձեռք բերել, որ ուսներիս դրած չբերենք:

Պետք է ստեղծվի այնպիսի **ճանապարհներ** և պայմաններ, որպեսզի գյուղացին անձամբ իր արտադրանքը **արտահանի**:

Մենք իրացման, շուկա մտնելու խնդիր էլ ունենք, **ճանապարհածախսն** էլ շատ-շատ է:

Ինֆորմացիայի պակաս կա որ պետական կառավարման համակարգում հասկանան, որ տեղական միջոցներով օրինակ կարելի է կտավատի ձեթի արտադրությունը կազմակերպել ու զարկ տան տեղական արտադրությանը ու **արտահանմանը**:

Պետությունը պիտի ենթակառուցվածքներ ապահովի, օրինակ՝ նորոգված **ճանապարհները** ու **ելքի** ալտերնատիվներ: Միայն **Լարսով** լայն **արտահանում** կազմակերպել հնարավոր չի:

Լարսում էլի խնդիրներ առաջացան միջպետական պայմանավորվածության մասով ու ծիրանը փչացավ:

Կախված ենք **Լարսի** ճանապարհից,

Մենք պետք է ունենանք **պաշտպանված** և **երաշխավորված** շուկա:

Երաշխավորված գինը մեզ համար **երազանք** է:

Պաշտպանության նախարարությունն այսօր **փոքր չափսերով արտադրանք չի ընդունում**, բա գյուղացին էլ չի իմանում ինչ անի այդ կարտոֆիլը, վերջում էլ թափում ենք:

Պետությունը պետք է կարգավորի շուկան, գնագոյացմամբ, **միջին գին սահմանի** գյուղմթերքի համար, որ վերավաճառողները գյուղացուց շատ չօգտվեն:

Պետք է լինի պետության կողմից ճանաչված **միջնորդ** կազմակերպություն, որը կկատարի **գնումներ**:

Գյուղացին պետք է իմանա, որ իր բերքի **իրացումը** վաղը **երաշխավորված** է:

Պետական աջակցություն պետք է լինի արտադրանքի **իրացման** համար, թեկուզ ոչ բարձր գնով, օրինակ կտավատը, որ հիմա չես կարող վաճառել, անասնակեր է դարձել:

Այսօր մենք բանակը կերակրում ենք դրսից բերած անորակ մսով, աբսուրդ է, թող պետությունը **երաշխավորի փոքր տնտեսություններին**, որ այսքան արտադրեն համապատասխան գնով պետությունը կգնի:

Գյուղացին իրացման խնդիր ունի: Ցորենի արտերը ստիպված արոտավայրի են վերածում: Թող պետությունը **երաշխավորված նվազագույն գին** սահմանի ցորենի համար:

այլընտրանք է պետք: Իրացումը նաև դրանից է կախված:

Ճանապարհները վերանորոգված չեն:

Մեր սեղանի սորտերը իրացվել են **Վրաստանում** առաջ, հիմա իրենց մոտ քաղաքականություն է փոխվել, սեփական արտադրանքն են առաջ տալիս: Մեզ էլ է նման քաղաքականություն պետք:

Ճանապարհը թիվ մեկ խնդիրն է, վերամշակող ձեռնարկություններ են պետք: Մեր գյուղերում նման ձեռնարկություններ չկան:

Մեր գյուղի **ճանապարհները** քարուքանդ են, դրա պատճառով գյուղացին կտրվում է շուկայից:

Ռուսական շուկայում հիմա **ինֆլյացիա** է, դժվար է դարձել իրացումը: Մյուս խնդիրը **Լարսն** է:

Ժամանակին **արտահանման հետ կապված խնդիրներ** են եղել, ուստի գյուղացին չի մտածում արտահանելու մասին:

Երաշխավորված գինը պետք է պատվերով լինի, այսքան հա, այս սերմով, այս գնով կվերցնեմ, կվաճառեմ ապրանքդ, որ ռիսկերը նվազեցվի, պետական աջակցությունն ու ապահովագրությունը այդպիսին լինի:

Պետությունը պետք է երաշխավորի, որ գյուղացու բերքի որոշակի տոկոսը տարվա վերջին ինքը **կգնի** կամ **կօգնի իրացնել**:

Անհրաժեշտ է մթերման գների վերաբերյալ **տեղեկատվության** պակասը լրացնել, **մթերման գներ** սահմանել, գյուղացու հոգեբանությունը փոխել, ստեղծել արհմիություններ, տեղեկացվածությունը ապահովել, իրացման ու արտահանման խնդիրները լուծել:

Երաշխավորված գինը պետք է պատվերով լինի, այսքան հա, այս սերմով, այս գնով կվերցնեմ, կվաճառեմ ապրանքդ, որ ռիսկերը նվազեցվի, պետական աջակցությունն ու ապահովագրությունը այդպիսին լինի:

Իրացումը պետք է շոգեքարշի պես իր հետևից տանի գյուղատնտեսությունը: Առաջնային է ոչ թե արտադրելը, այլ իրացման հարցերը կարգավորելը:

Գյուղացու համար խոչընդոտող է այն, որ շուկայում չկա **երաշխավորված գին**:

Գյուղացին ամբողջ տարին տանջվում է և **էժան գնով** չպիտի հանձնի իր ապրանքը:

Երաշխավորված գինը նվազագույն ինքնարժեքից պետք է բարձր լինի:

Եթե իմանամ, որ **երաշխավորված** կայուն **գին** կլինի, ես շատ կարտադրեմ:

Լավ գյուղմթերք ունենալուց հետո էլ պետք է պետությունը անպայման **երաշխավորի** իրացումը. Թուրքիայում օրինակ պետությունը խրախուսում է այն կազմակերպություններին, որոնք արտահանում են:

Երաշխավորված գների մեխանիզմն անարդյունավետ է: Օրինակ՝ այս տարի 100 դրամով **պոմիդոր** ընդունեցին, պահեստավորեցին: Հաջորդ տարի ինչո՞ւ պիտի նույնքանով ընդունի:

Մարդիկ գյուղատնտեսությունից հրաժարվում են: Ուզում ենք պետությունը **երաշխավորված** ձևով գա մեզանից **միսը** գնի ու ասի՝ գնացեք բանկից փողը ստացեք:

Բոլոր համայնքներում առնվազն հինգ հարյուր հեկտար հող չի մշակվում: Տեխնիկան բերենք, ի՞նչ անենք: Գյուղացուն **երաշխիք** է պետք պետության կողմից **իրացվելիության**: Այդ

դեպքում այդ հողերն էլ կմշակվեն ու հավելյալ ու նոր տեխնիկան իմաստ կունենա:

Հացահատիկի մշակումը ռազմավարական նշանակություն ունի մեր երկրի համար, ու այս ոլորտում հաստատ պետությունը պետք է **երաշխավորի** իրացումը:

Վարուցանքից առաջ պետությունը պետք է կարողանա **կենտրոնացված տեղեկատվություն** կազմակերպել, թե այդ տարի ինքն ինչի կարիք է ունենալու: Իսկ գյուղացին պիտի կարողանա գնահատել իր հողն ու հասկանա, թե **պետության կողմից տրամադրված կարիքներից** ինքը որը կարող է ապահովել:

Պետք է ապրանքը հստակ **երաշխավորված** գին ունենա, այլ ոչ թե գինն անընդհատ փոխվի:

Ես ուզում են **երաշխիքներ** ունենալ, երբ որ ունենամ գիշեր-ցերեկ կաշխատեմ:

Պետությունը պիտի որոշակի **գին սահմանի**, օրինակ՝ պոմիդորն՝ 80 դրամ, և բոլորը պիտի այդ գինը վճարեն:

Պետությունը պետք է երաշխավորի ոչ թե **նվազագույն**, այլ **լողացող** գին՝ ասենք հարյուրից ոչ պակաս ու հարյուր ութսունից ոչ ավել:

Եթե **ՊՆ**-ն ընդունի **կոնկրետ քանակ**, ասենք կաղամբի, մենք մեր անելիքը կիմանանք:

Արտահանման **գինն** էլ պետք է հստակ դնի պետությունը:

Թող **պետությունը ինքը մթերի կաթը**, **միսը**: Մեր տարածքի կաթը մթերում է Մարիաննա ընկերությունը շատ ցածր գներով:

Գյուղնախարարությունը պետք է զբաղվի **իրացման** հարցով: Մեզնից առնում են միսը երկու հազարով, հետո վաճառում երեք հազար հինգհարյուրով: Միջնորդը շահում է, գյուղացին ու քաղաքացին տուժում են:

Այսօր մարդիկ ավելի պարտաճանաչորեն են **հարկ** վճարում, ավելի գիտակցաբար:

Հարկ մուծելը պետք է պարտադիր պայման լինի բոլորի համար:

Քաղաքացին պետք է **հարկ** տա, որ գյուղացին ապրի, գյուղացին տանջվում է, քաղաքացին Հյուսիսային պողոտայում զբոսնում է:

ԱԱՀ-ի դեմ ոչինչ չենք կարող ասել. թող մարդիկ եկամուտ ստանան և հարկերը վճարեն:

Հարկային տեսանկյունից **կոոպերացիա** ստեղծելը ճիշտ չէ:

Մեր **կոոպերացիան** այսօր վայրի դեղաբույսեր է հավաքում, մշակում, բայց **հարկային** և վարկային բեռի պատճառով մեր ամբողջ եկամուտը ուրիշներին ենք տալիս:

ԱԱՀ **հարկը** բավականին բեռ է **կոոպերատիվի** համար, աշխատանքները դժվարանում են, որովհետև ամեն ինչ ձեռք են բերում շուկայից՝ շուկայական գներով:

Եկեք **ապահովագրությունը** մտցնենք, երկու-երեք տարի աշխատենք, ոտքի կանգնենք, նոր

	հարկվենք: Դեռ գյուղատնտեսությունը **հարկելը** շատ **շուտ է**: Եթե ցանկացած գյուղմթերք արտադրողի ասես, որ պիտի անգամ մեկ լումա **հարկվես**, **չի համաձայնի**: Ամենակարևոր բանը՝ **գյուղացուն չի կարելի նեղացնել**: Սողանքային տարածք ունեցող գյուղացին նույն **հարկն** է վճարում, ինչպես նորմալ հող ունեցողը, դա **արդար չէ**: Պետությունը **կոոպերատիվները** պետք է **չհարկի**: **ԱԱՀ**-ն գյուղացու համար՝ կոոպերատիվ, թե ոչ, **սխալ** է: Գյուղատնտեսական արտադրողը երբեք **չի հարկվել**, բայց վերավաճառողը պետք է հարկվի, որովհետև վերավաճառողը գերշահույթ է ստանում, արտադրողը՝ տուժում է: Մեկ հեկտար հողի համար **հարկերը** Հայաստանում ավելի շատ են, քան աշխարհի տարբեր երկրներում: Մասնավոր ձեռնարկատիրոջը պետք է ազատել **հարկերից** և ուղղորդել, որ գումարները ներդնի գյուղտեխնիկայի ձեռք բերման մեջ և վարձակալությամբ աշխատի գյուղացու համար: Պետությունը հատուկ **հարկային** համակարգ պիտի ստեղծի մեզ համար, և մի քիչ էլ պետք է ճկուն լինի: Պետությանը ինչի **հարկ** տամ. ճանապարհներն այնքան վատ են, ուր են գնում իմ հարկերը: Հողի **հարկի** վերանայում է պետք՝ այն չի փոխվել 90-աններին հողի սեփականաշնորհումից հետո: Գյուղատնտեսությունը պետք է **չհարկել**, գյուղացու գործը դժվար է, շահույթը՝ քիչ:
Ներմուծումների պատճառով, կարտոֆիլի գինը նվազում է և գյուղացին վնաս է կրում՝ չկարողանալով վաճառել իր արտադրանքը: Պետությունը պետք է երաշխավորի, որ **ներմուծման** քանակը այնքան կլինի, որ գյուղացին վստահ կլինի, թե կկարողանա վաճառել խելամիտ գնով իր արտադրանքը: Պետությունը պետք է գյուղ մթերքի գինը կարգավորվի **ներմուծման** արհեստական նվազեցման շնորհիվ: Պետությունը պետք է մաքսային հարկեր դնի **ներմուծվող** ապրանքի վրա, որպեսզի մեր ապրանքը սպառվի:	Գյուղացին ցանում է, բերք չի ստանում, հիասթափվում է, դրա համար շատ բան **ներկրվում** է:

Ներմուծումը պետք է քվոտավորվի: Թուրքիայից ներ է կրվում տարբեր քիմիկատներով, գենետիկորեն մոդիֆիկացված ապրանքներ: Պետք է որակի խիստ վերահսկողություն սահմանել ու արգելել նման ապրանքի մուտքը Հայաստան:

Պետությունը պետք է տեղի գյուղարտադրողին աջակցի, **ներկրման սահմանափակումներ** են պետք, արտասահմանից կարտոֆիլ է ներկրվում:

Հացահատիկ կարելի է **ներկրել**, բայց կարտոֆիլ, պոմիդոր, ձմերուկ ներկրելն ուղիղ հարված է մեր գյուղացուն...

Մթերողի, արտադրողի հետ խոսում եմ, ասում է ինձ համար ավելի շահավետ է դրսից պոմիդորի մածուկ **ներկրել** 20 դրամով, քան քեզանից 40-ով պոմիդոր առնել:

Ներկրած պոմիդորը սիրուն «սալֆետկի» մեջ փաթաթած գալիս է, մեր ճխլտված պոմիդորը չեն գնում: Բայց կարելի է, չէ՞, սա պահածոյացնել:

Երբ արդեն տեղի բերքը կա, չպետք է դրսից **ներկրեն**:

Մեր կաթի գինը ընկնում է, որովհետև արտասահմանից շատ էժան գնով կաթի փոշի են **ներկրում**: Լիտրը 100 դրամը ծիծաղելի գին է:

Պետությունը պետք է **ներկրման** համար հարկերը ավելացնի, որպեսզի գյուղացու արտադրանքը իրացվի երկրի ներսում:

Թուրքական լոլիկը օլիգարխը **մտցնում է շուկա**, թունավորում մեր ժողովրդին, գյուղացուն էլ խեղճացնում:

Մենք ուրիշ երկրից ինչի՞ պետք է բերք կամ անասուն բերենք, եթե մերն ունենք: Պետությունը պետք է միջամտի այս հարցին ու **սահմանափակումներ մտցնի**:

Գյուղատնտեսությունը, ի տարբերություն պետական աշխատանքի, **հաստատուն եկամուտ** չի ապահովում, բնականաբար, երիտասարդների համար այն գայթակղիչ չէ:

Երիտասարդները տեղափոխվում են քաղաքներ, ոչ ոք գյուղում չի ցանկանում ապրել: Գյուղատնտեսական **գործունեության ծանրությունից նրանք խուսափում են**:

Մի հետաքրքիր բան կա. ոչ մի գյուղացի **հարուստ** չի: Գուցե նրանից է, որ մենք ամենաքիչն ենք օգտվում **պետական աջակցությունից** կամ մեր կենսամակարդակի բարձրացումը ամենադժվարն է:

Նպաստ չեն տալիս այն գյուղացուն, ով նույնիսկ մի կով ունի: Մեկ կովը տարեկան մոտ երկու

հարյուր հազար դրամի եկամուտ է, իսկ նպաստը տարեկան կտրվածքով դրանից ավել է ստացվում: Էլ ինչո՞ւ է պետք կով պահել:

Եղեգնաձորում շատ հողեր կան, որ չեն էլ մշակվում. մի քանի անգամ ցանում են, **եկամուտ** չեն ստանում, հիասթափվում են, էլ բան չեն անում, բայց այդպես չի:

Եթե գյուղատնտեսության մեջ քսան տոկոս **եկամտաբերություն** չունես, ապա ավելի լավ է ոչինչ չանես:

Զարմանալի է, որ գյուղում հացը, ձուն, մսամթերքը կամ կաթնամթերքը խանութից են գնում:

Անասնապահությունը չի զարգանում, որովհետև կաթնամթերքների ընկերություններ կան, որոնք միլիոններով պարտքեր ունենք գյուղացուն:

Հիմա այնպիսի վիճակ է, որ մարդիկ հող ունենալով, նույնիսկ չեն գնում վերցնելու սեփականության վկայականը կադաստրից:

Պետությունը պետք է դառնա գյուղացու գործընկերը:

Պետությունը պետք է կարողանա որևէ կերպ մասնակցություն ունենալ տեղական գյուղատնտեսական արտադրանքի առաջնայնությունը ապահովելու համար:

Պետությունը պետք է լինի գյուղացու կողքին, բայց գյուղացին էլ պետք է լինի պետության կողքին:

Եթե ցանկանում եք Հայաստանում գյուղատնտեսությունը զարգանա, ապա **պետությունը** պետք իր վրա վերցնի ոլորտը, թալանած փողերը վերադարձնի ու զարգացնի:

Պետությունից ես աջակցություն չեմ սպասում, ես ինքնուրույն եմ ամեն ինչ արել. թող չխանգարի: Սահմանները խաղաղ լինեն, մենք ամեն ինչ կանենք:

Մենք նոր զարգացող երկիր ենք, բայց անցում ենք կատարել բացարձակ լիբերալ հարաբերությունների: Մինչդեռ պիտի ընտրեինք **պետության** մասնակցության տարբերակը:

Պետական գործարանը շահույթի հետապնդման խնդիր չունի և կարող է ավելի բարձր գնով մթերել ապրանքը:

Պետությունը գյուղատնտեսության ոլորտում պետք է լինի առաջին բիզնեսմենը:

Գյուղատնտեսության բնագավառում կառավարման **մասնատվածություն** կա:

Մեր երկրի նման տնտեսություն ունեցող երկրի համար կարևոր է **պետության ուղղակի մասնակցությունը** գյուղատնտեսությանը:

Պետությունը սովորել է, ամեն ինչ դնում է համայնքի վրա, որ պահի անասնաբուժ, բայց սա պետության վերցնելիք միջոցառումներն են:

Գյուղացուն պետք է օգնել, որ իմանա, թե ինչ կուլտուրաներ մշակի... Օրինակ՝ ԽՍՀՄ-ի ժամանակ խորդենի էինք մշակում, բայց հիմա չգիտենք ինչ անենք: Մենք մշակող ենք, իսկ հիմա ստիպված ենք ժամերով շուկաներում նստել: **Պետությունը** պիտի մեզ հուշի, թե ինչ է անհրաժեշտ մշակել և մեր արտադրանքի իրացման հարցը լուծի:

Այսօր մեր ջրային ռեսուրսները սխալ կառավարման արդյունքում այլ պետություններին է գնում, մենք էլ մնում ենք առանց ջուր: Մինչև ջրի հարցը չլուծվի, ոչ մի հարց չի լուծվելու: Այս հարցը պետք է **պետությունը** լուծի:

Գյուղացու կողքին **ոչ ոք** չի կանգնում:

Մենք անհնարինը անում ենք, **օգնող չկա**:

Եթե վարակ է տարածվում գյուղացին է փորձում կանխել այն, **պետությունը** չի խառնվում:

Այսօր **պետությունը** անհայտ մարդկանց միջոցով է տալիս վակցինան, որը փորձարկված չէ, և խնդիրների դեպքում բերողը պատասխանատվության չի ենթարկվում:

Պետությունը մոռացել է անասնապահության ոլորտի խնդիրների մասին դրանով զբաղվում են միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ:

Նախկին **գյուղնախարարի** անունը լսելի վրաներս դուրս է տալիս. պատահական մարդիկ են, որովհետև մեզ մոտ ընտրությունները փողով էր:

Պետությունը խանգարում է գործարարներին գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար:

Գյուղացին պետք է աշխատասեր լինի ու հույսը չդնի **պետության** վրա:

Մենք գյուղատնտեսական **քաղաքականություն** չենք տեսնում:

Գյուղատնտեսական **քաղաքականությունը** մշակում են ասֆալտի վրա:

Գյուղատնտեսությունը պետք է հեռու լինի **քաղաքականությունից**:

Գյուղացիները պետք է **մասնագիտական ներկայացվածություն** ունենա **պետական գերատեսչություններում**, որպեսզի իրենց հարցերը ավելի հստակ բարձրացվեն:

Պետք է ապահովագրել նաև կառավարության սխալներից: Փորձ ունենք, որ Գյուղնախարարի որոշումներից տուժել կամ փչացել են այգիները:

Գյուղնախարարության աշխատակիցները իրենց խորհուրդներով ու զգուշացումներով **ուշանում են**:

Գյուղնախարարությունը պարարտանյութերն ուշացնում է:

Գյուղացին վարկերի տակ է ինչպես բնության և **պետության քաղաքականության**, այնպես էլ միջոցների **ոչ ճիշտ կառավարման** պատճառով:

Պետության տրամադրած դիզվառելիքը անորակ է, որի օգտագործման պատճառով վնաս է կրում տեխնիկան:

Գյուղնախարարությունը կարող է մասնակցել որակյալ պարարտանյութերի ներմուծման գործում, հակառակ դեպքում **օլիգարխները** առաջնորդում են բիզնես շահով, ոչ թե արդյունավետությամբ:

Պարենային ինքնաբավության խնդիրը պետք է լուծվի, հողերի մեծ մասը չի մշակվում:

Նախ պետք է պահենք հողը, լավ հող ունենանք, պետք է պետությունը կես գին դարձնի կալիումական աղի և ֆոսֆորաթթվի գինը, որ հողը նորից իր գործը անի: **Պետությունը** միայն վարկ տալու համար չէ: Գյուղատնտեսությունը պետք է ճանաչվի առաջին ռազմավարական ուղղություն:

Պարարտանյութերի շուկան **կարգավորել** է պետք:

Գյուղատնտեսական շղթային **պետական համալիր կարգավորում** է անհրաժեշտ. սածիլի ձեռքբերումից մինչև արտադրանքի վաճառք:

Չկա ոլորտ որտեղից պետք է սկսել: Բոլոր ոլորտներում խնդիրներ կան: **Համակարգային փոփոխություն** է պետք:

Պետությունը պետք է մտածի գյուղացուն օգնի, հարստացնի: Այսօր գյուղի բնակչության տասը տոկոսնա իրոք գյուղատնտեսությամբ զբաղվում, մնացածը ուղղակի մի կերպ յոլա են տանում:

Պետության մասնակցությունը գյուղոլորտի աշխատանքների պլանավորման հարցում:

Պետությունը պետք է շատ միջպետական պայմանագրեր կնքի:

Իսլանդիայում իսլանդացու հետ ամուսնացողին **պետությունը** գումար է տալիս. մեր գյուղերում միջին տարիքը որքան է: Պետք է նպաստել գյուղերի զարգացմանը:

Պետությունը պետք է ռազմավարական մթերքներ արտադրողի կողքին կանգնի:

Պետությունից նվեր չենք ակնկալում, պետք չէ: Ճիշտ **քաղաքականություն** ենք ակնկալում գյուղատնտեսության ոլորտում:

Մասնավորը առանց **պետության աջակցության** չի կարող զարգացնել գյուղատնտեսությունը:

Մեր մարզի պես աղքատ մարզի համար կենսական է **պետության** աջակցությունը:

Պետությունը պետք է կարգավորի շուկայական տնտեսությունը:

Մարդիկ պետք է միավորվեն, մի կուլտուրա արտադրեն. **պետությունն** էլ պիտի ուղղորդի:

Եթե ինչ որ մեկը իր հողը չի մշակում, թող

Դժգոհ ենք **գյուղնախարարության** աշխատանքից: Պետական կառավարման ինստիտուտի զարգացման խնդիր կա:

Մենք ռեսուրսներ ունենք գյուղատնտեսությունը զարգացնելու համար. **ճիշտ չենք կառավարում**:

Մինչև նախարարությունը չհրահանգի, ԳԱՄԿ-երը ոչ մի ձայն չեն հանում, իրենք պետական աշխատող են՝ վախեցած:

Մեզ մոտ գյուղատնտեսության խնդիրը հիմնային է, մինչև **արմատական խնդիրները չվերացնենք**, որևէ լուծում չի լինի:

Գյուղատնտեսության վիճակը **կատաստրոֆա** է՝ հաշվի առնելով մեր երկրի վիճակը հատկապես, զենքից ոչ պակաս կարևոր է պարենով ապահովությունը:

Գյուղատնտեսության նախարարությունը չի կարող ստանձնել պատասխանատվություն, քանի որ զրկված է ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու իրավունքից:

Նախարարության կողմից կան ստեղծված աջակցության կենտրոններ, բայց **արդյունավետ չեն** աշխատում. մոտ չեն նրանք հասարակ գյուղացուն:

Կառավարությունը փող է տալիս **պարապ հաստիքների**, որոնք փաստացի ոչնչով չեն զբաղվում պետք է դա վերացվի:

Կառավարության համապատասխան աշխատակիցները պետք է **մասնագետ** լինեն:

Պետական կառավարման համակարգը **չի հասկանում** գյուղացուն:

Ամենակարևորը այսօր նա է, որ մենք պետք է նորովի մտածենք, համախմբվենք, միասին իրար հետ աշխատենք, **հույսներս չդնենք միայն պետության վրա**: Տարիների փորձը ցույց է տալիս, որ **պետությունը մեր բոլոր հարցերը չի կարող լուծել**:

Եթե չկա գյուղատնտեսության հստակ **ռազմավարություն** չկա, մնացածն անիմաստ է:

Մեր **իշխանությունները** և քաղաքացիներն ապրում ենք տարբեր իրականություններում:

ձեռքից պետությունը վերցնի:

Պետք է **պետությունը** գյուղացուն ստիպի, որ իր հողի վրա տնտեսություն վարի, կամ եթե դա չի անում, ապա վարձակալության դիմաց տա այն մարդուն, որը կօգտագործի այդ հողը:

Տարիներ շարունակ մեր տարածաշրջանում կարողացել ենք ինքնաբավ գյուղատնտեսություն ունենալ: **Համակարգման** ու ճիշտ տեղաբաշխման հարց է:

Եթե գյուղատնտեսությունը զարգանա, **արտագաղթի** տեմպերն էլ կնվազեն, սա **պետական** անվտանգության խնդիր է:

Հողային **օրենսգրքում** փոփոխություններ պետք է իրականացվեն:

Նախ պետք է համապատասխան **օրենսդրական** դաշտ ունենանք, հետո նոր մտածենք ինչպես աշխատենք:

Վայոց Ձորում հատուկ մոտեցում է պետք արդյունավետ գյուղատնտեսական գործունեություն կազմակերպելու համար. հողը էրոզիայի է ենթարկված, կրծողների դեմ մեր ուժն էլ չի պատում, Նորավանքի շուրջ ժայռերը կարող են մի օր շուռ գալ, գետը կտրել ու զրկել ջրից, հողի բաղադրության մեջ կավի քանակությունը չափազանց մեծ է: Այս խնդիրները լուծելու համար **պետական** մոտեցում է պետք. հասարակ գյուղացին, ինքնուրույն կամ կոլեկտիվ, սրանց լուծում չի կարող տալ:

Գյուղվարչությունը պետք է որոշի, թե որ տարածքին ինչ սերմնացու է պետք, ոչ թե նայեն, թե ինչն է էժան ու դա բերեն, բաժանեն:

Մարզի ռազմավարության մեջ կարևոր է հստակ սահմանել գերակա ուղղությունները և շարժվել դրանց ուղղությամբ, այլ ոչ թե թողնել թղթի վրա:

Մարզպետարանի հետ պետք է աշխատել, բաշխել, թե, օրինակ, այս տարի, ի՞նչ է ավելի անհրաժեշտ արտադրել. էսքան տոննա խաղող, էսքան կարտոֆիլ... Մենք ինչպե՞ս իմանանք, թե ինչի կարիք կա: Էս տարի վարունգը թանկ էր, որոշում ենք հաջորդին վարունգ ցանել: Պլանավորում ընդհանրապես չկա:

Յուրաքանչյուր **մարզ** ունի իրեն յուրահատուկ գյուղատնտեսություն, ամեն մեկս պիտի անի այն, ինչ հնարավոր է անել և ոչ թե այն, ինչ ուզում է:

Եթե իրապես գյուղին ուշադրություն դարձվի, գյուղացին կմնա իր համայնքում, սա **պետական** կարևորության խնդիր է:

Մարզպետարանում նստած են մարդիկ, ովքեր պետական աջակցությունները ճիշտ չեն վերաբաշխում և մարզպետարանները պետք է կազմալուծել:

Վստահություն չկա նույնիսկ **մարզպետարանի** կողմից ներմուծվող ու գյուղացուն տրամադրվող սերմերի հանդեպ:

Երբ այգիս ցուրտը տարավ, որտեղ տարիներով 15 աշխատող եմ ունեցել, դիմեցի **մարզպետարան**, որ ցածր տոկոսով վարկ տան, ուղարկեցին գյուղզարգացման հիմնադրամ գնացինք դասընթացների, որ ցածր տոկոսով վարկ տան, բայց երբ եկավ ժամանակ տալու, բոլորը սկսեցին մերժել անհիմն պատճառներով, խաբեբայության նման մի բան էր սա:

Մարզպետարաններին կից գյուղատնտեսական բաժինները պետք է ավելի արդյունավետ աշխատեն:

Մինչ այժմ **մարզպետարանից** ոչ մի պաշտոնյա չի եկել և չի հետաքրքրվել գյուղացու խնդիրներով:

	Համայնքները խոշորացնելու փոխարեն, պետք է **մարզպետարանները ցրել**, սարքել շրջանային միավորներ: **Մարզպետարանները** պետք է անհատապես զբաղվեն գյուղացիական տնտեսություններով: **Մարզպետարանը** վերահսկողության իրավունք չձոնի:
Գյուղական **համայնքներում** ներդրումներ են կատարվում, բայց հաճախ դրանք համայնքի պահանջով չեն լինում: Համայնքը ինքը պետք է խնդիրը տեսնի և ներդրում պահանջի: Նույն հողակտորի վրա տարիներով նույն բան ցանելը բերում է հողի բերրիության կորստի: Բայց այսօր **գյուղապետը** չի կարող գնալ ու գյուղացու ձեռքից հողը առնել կամ չթողնել, որ նույն բանը ցանի: Պետք է պետությունը դա կարգավորի, ասենք օրենքով: Այսքան ժամանակ **գյուղապետերն** են յոլա տանում բնակչությանը. գյուղապետը բացի գյուղապետությունից ամեն ինչ անում է: Տրակտորային պարկը, թունաքիմիկատներով բուժման կենտրոնները պետք է **համայնքի** ենթակայության տակ լինեն:	**Համայնքների** արդյունավետ կառավարումը բացակայում է: Սուբսիդավորման ապրանքները **համայնքապետը** բաժանում է **ծանոթ բարեկամներին**: **Գյուղապետը** թևերը կտրած մարդ է, նա միայն թիվ տալու համար է աշխատում: **Պետության** կողմից տրված աջակցությունը պետք է լինի ուղիղ գյուղացուն ու որպես միջնորդ չհանդիսանա **համայնքապետարանը**: Այսօր ստեղծված **քաղաքական իրավիճակի** պատճառով **գյուղապետերը** ոչ մի ծրագիր չեն իրականացնում՝ մտածելով, որ շուտով նա այլևս այդ պաշտոնին չի լինի: **Գյուղապետարանն** էլ որ ձեռք է բերում տեխնիկա, ԽԾԲ-ով են տրամադրում: **Համայնքապետը** պիտի վստահություն վայելի գյուղացիների շրջանում ու աղետի դեպքում ճիշտ հաշվի վնասները: **Գյուղապետարանները** միայն քաղաքական կառույցից պետք է վերածվեն տնտեսական կառույցների, որպեսզի ավելի արդյունավետ իրականացվի գյուղատնտեսությունը, սա հնարավորություն կտա ավելի խստացնել վերահսկողությունը: **Համայնքների խոշորացումը** շատ վատ է ազդում նաև գյուղատնտեսության վրա: **ՏԻՄ փոփոխություններ** են պետք իրականացնել, մի երեսուն տարի էլ էդ փոփոխությունները կգնան, մենք կմեռնենք:
ՀԷԿ-երը մեծ ազդեցություն են ունենում եղանակի և հողի վրա: Հիմա ամեն ինչ խախտվել է, ոչ մի բան հնարավոր չէ կանխատեսել: Եղեգիս գետի վրա մոտ տասը **ՀԷԿ** կա, դա ո՞նց կարող է չազդել բնության վրա: Անտառը վերանում է **ՀԷԿ**-երի ու հանքերի պատճառով: Մենք սպանում ենք մեր բնաշխարհը, ձուկ չկա ... և դա կապած է **ՀԷԿ**-երի հետ:	**ՋՕԸ շատ անարդյունավետ են** աշխատում, եթե ես դատի տամ անգամ, ես տանուլ կտամ, ես պաշտպանված չեմ իրենց վատ գործունեությունից. իրավական դաշտում պետք է փոփոխություններ իրականացնել: ՋՕԸ մեզնից չի վախենում, ինչպես ուզում է, այնպես էլ վարվում է: Մենք այսօր ոչ մի ոլորտում պաշտպանված չենք: **ՋՕԸ ոչ մի պատասխանատվություն չի կրում** ոչ մի բանի համար, մի բան էլ նա է դատի տալիս գյուղացիներին:

	ՋՕԸ-երում **կոռուպցիայի** բարձր մակարդակ է: ՋՕԸ-ի **կառավարման** մեծ խնդիր ունենք: Երեք տարի **ՋՕԸ**-ն ժողով չի արել, բնակչությանը հաշվետվություն չի ներկայացրել:
Կայացած **ֆերմերներին** մեր երկրում պիտի փայփայեն: Պետությունը պետք է բոլոր ճանապարհները բաց թողնի և **գյուղացուն** հնարավորություն տա ինքնուրույն ընտրություն կատարել: Այսօր պետք է կտրել **գյուղացու** շղթաները, նրան ազատություն տալ ինքնուրույն գտնելու ճամփաներ: Այսպես թե այնպես **մարդիկ** տարածաշրջանում ապրում են ու իրենք ուզում են այս հողը մշակել: **Երիտասարդ ընտանիքները**, որոնք որ նախաձեռնում են գյուղատնտեսությամբ զբաղվել, պետք է ունենան առավելություններ: **Գյուղացին** նման է երեխայի այսօր. անընդհատ սպասում է իր ծնողի՝ պետության օգնությանը: Թող **գյուղացին** չաշխատի, տեսնեմ քաղաքացի կինը ո՞նց ա զոնտիկի տակ քաղաքում ման գալու...	Պորտաբույծ **գյուղացուն** պետք է գյուղից վտարել: **Գյուղացու** և հողի հոգեբանական կապն է կտրվել: **Գյուղացի** կա, որ ծույլ է, ի՞նչ իմաստ ունի իրեն սուբսիդիա տրամադրել: **Գյուղացին** շատ աշխատասեր չի, ցավոք, գյուղացին միշտ սպասում է օգնության: Եթե ինչ որ մեկը իր հողը չի մշակում, թող **ձեռքից պետությունը վերցնի**: Պետք է պետությունը **գյուղացուն ստիպի**, որ իր հողի վրա տնտեսություն վարի, կամ եթե դա չի անում, ապա վարձակալության դիմաց տա այն մարդուն, որը կօգտագործի այդ հողը: **Գյուղատնտեսության վարման** տեսանկյունից, եթե գնահատականը լինի տաս, մեզ մոտ ամենաշատը երկուսն է գնահատականը: **Մենք ինքներս** մեր երկրի գյուղատնտեսությունը դրել ենք ծանր պայմանների մեջ: Ի տարբերություն **եզդիների**, մենք գերադասում ենք գյուղատնտեսությամբ զբաղվելուց բացի նաև «**ապրել**»: Այսօրվա գյուղատնտեսությունը ենթադրում է առավոտից իրիկուն անհոգնել աշխատանք: Անասնապահությունը զարգանում է **եզդիական** գյուղերում, բայց մերոնք ասում են, որ արոտավայր չկա ու մեր մոտ չի զարգանում: Պետք է **գյուղացիների** գործունեության քարտեզագրում արվի, ըստ այդմ էլ կորոշվի ինչի կարիք կա:
Կոմունիստները որ հետ գան, ամեն ինչ իրա տեղը կընկնի: Մեր գյուղատնտեսությունը զարգացնելու համար մի որևէ **զարգացած գյուղատնտեսությամբ երկրի օրինակ** վերցրեք:	Սովետական տքնաջան աշխատող մարդու ողնաշարը ջարդեցին, **եվրոմուտիլովշիկները** այնպես արեցին, որ գյուղացին այլևս չուզենա աշխատի: Հաջորդ սերունդը գյուղատնտեսությամբ չի էլ զբաղվի: **Գյուղացիների իրավունքների մասին խոսողները** կողմնապահ են կամ պրոֆեսիոնալներ չեն:
	Գյուղատնտեսական հանցանքների դեպքում գյուղացին մեկը մյուսի վրա **գործ չի տալիս**: Մեր ժողովուրդը ամեն ինչի պատրաստ է, եթե համոզված լինի, որ **օրենքները** իսկապես կգործեն:

Սուբսիդավորման ապրանքները **համայնքապետը** բաժանում է **ծանոթ բարեկամներին**:

Սուբսիդիան ձևի համար հայտարարվում է, **օդի մեջ անհետանում**:

Կոռուպցիայի պատճառով սուբսիդավորվող տեխնիկան գյուղացուն վաճառվում է անհամեմատ թանկ գնով:

Վառելիք էին տալիս **նպատակային օգտագործման** համար, ասենք, հազար հեկտար մշակելու համար, բայց այդ հազար հեկտարը չէր մշակվում, վառելիքը գյուղում էր օգտագործվում:

Իսրայելը անհող երկիր է, բայց այսօր առաջատար է գյուղատնտեսության ոլորտում, որովհետև կառավարիչը այնտեղ իր անձնական շահի մասին չի մտածում: Մեզ մոտ սերունդներ պիտի փոխվեն, **կոռուպցիոն ռիսկերը** շատ մեծ են:

ՋՕԸ-երում **կոռուպցիայի** բարձր մակարդակ է:

Ցանկացած բուժանյութի խանութ մտնենք, ամբողջը **կրիմինալ** է:

Նախկին իշխանությունների ժամանակ ապրանքը վերցնում էին **պաշտոնյաներին պատկանող հողատարածքներից**, սովորական գյուղացին բերքը չէր կարող իրացնել:

Մի քանի հոգի այսօր ամբողջ շուկան աղտոտում են, ինչ ուզում, այն էլ վաճառում են, **սերմերի բիզնեսը այսօր Բերբերյանինն է**, ու իրենք էլ փչացնում են մեր տնտեսությունը:

Սպանդանոցի օրինակով ասեմ, որ պարզվեց, որ ամեն **անասունից իրենց բաժինն** ունեին: Պետք է եթե մի տեղ լինի հանձնելու, կարևոր է համակարգային մոտեցում, որ ամեն ինչ կարգավորվի ու խնդիրներ չլինեն:

Որակի ստուգման գործում էլ **կոռուպցիա** կար:

Մեզ մոտ **կլանային** համակարգ է գործում: Եթե ծանոթ ունես, կկարողանաս ջրել քո այգին:

Սուբսիդավորման ցանկացած տարբերակ օգտակար լինել, կարևորը **կոռուպցիա** չլինի:

Չկա մի բնագավառ, որ ստուգող մտնի ու **ապականված** չլինի: Մի քիչ **արդարություն կա ներքին օղակներում**, բայց մեզ էլ **բանի տեղ դնող** չկա:

Մեր երկրում միջոցները այնքան են **փոշիացված**, որ անիմաստ է մտածել գյուղատնտեսության զարգացման մասին:

Անգամ եթե **ամեն ծառի մոտ մի նախարար** կանգնի, եթե ցուրտ եղավ ու ջեռուցում չեղավ,

Բնապահպանության նախարարությունը ինչու **չի հետևում** ձկնորսության ժամանակավոր

կկտրեն ծառերը:	արգելքին: Ունենք պահպանվող տարածքներ, որտեղ անասուն արածեցնելն արգելվում է, բայց մեկ է արածեցնում են, **բարձիթողի վիճակ է**: Այսօր **հսկողության պակաս** կա թունաքիմիկատների ու պարարտանյութերի նկատմամբ: Օրինակ, գյուղացին կարող է թույն փչել այն տեղը, որտեղ մեղուներն են այցելում: Քիմիկատի որակի նկատմամբ **հսկողություն** չկա, անվերահսկելի չափաքանակով օգտագործվում է: Արդյունքում նաև հողն է փչանում, ու էդ ամեն ինչը ծովն է գնում: Գյուղատնտեսությունը չպետք է մնա միայն գյուղացու ուսերին, պետությունը անպայման պետք է **վերահսկի**, ընդ որում ավելին, քան հիմա է: Ակնհայտ է, որ այս ոլորտում կա **վերահսկողության** բաց, պետք է ճիշտ աշխատի ողջ համակարգը, բոլոր շղթաները: Կա հսկայական օրենսդրական բաց: Պետք է համակերպվել **ստուգողների, ստուգումների** հետ, որ կարողանաս արտադրանքդ իրացնել: **Բնապահպանության** նախարարությունը չեմ լսել որ խառնվի գյուղացիների գործերին, արգելի անասուններին մտցնել այս կամ այն տարածք: **Մարզպետարանը** վերահսկողության իրավունք չձոնի: **Վերահսկողությունը** պետք է խիստ լինի, քանի որ հակառակ դեպքում չարաշահումներ են լինում, չնայած նույնիսկ կառավարության պատվիրած սերմերն են անորակ: Պետք է դիտարկել, տեսնել, տալ հանձնարարական: Եթե չկատարի, **ստուգում** անել ու **պատժել**: Մինչ հիմա խախտողների հանդեպ միայն եղել է **պատժելու** քաղաքականություն: Պետք է որոշակի ժամանակ տալ, եթե չլուծի խնդիրը, նոր պատժել:
	Գյուղմթերքի գների կայունացումը մինչև գյուղացին չզգա, **ոչ մեկին** չի **վստահի**: **Վստահություն** չկա նույնիսկ **մարզպետարանի** կողմից ներմուծվող ու գյուղացուն տրամադրվող սերմերի հանդեպ: **Դատական** համակարգի հանդեպ գյուղացին **վստահություն** չունի: Օրենքները չեն գործել, ստեղծվել է այնպիսի համակարգ, որ մարդիկ այդ **համակարգին** չեն

	վստահում և ալտերնատիվ լուծումը գտնում են հանցավոր համակարգում ու եթե լուծումը այդտեղ էլ չի գտնվում նրանք արտագաղթում են ու շատ հողեր անմշակ են մնում: Գյուղացին այնքան է **խաբվել, հիասթափվել**, որ չի ուզում ոչ մեկի հետ աշխատել, ասում է, արի և տար իմ բակից իմ արտադրանքը, ոչ մեկ **գործընկեր** չի էլ փնտրում, պայմանագրային հարաբերություններ ոչ մեկին պետք չեն: Անհրաժեշտ է, որ **պետությունը** գյուղացու մոտ վերականգնի իր **վստահությունը**, որ կանչեն մի բան առաջարկեն, հավատամ ու հետևեմ: Կոռուպցիան պիտի վերացվի սուբսիդավորման ու մյուս բնագավառում, օրինական լինի, բանկերը լոմբարդներ չլինեն գյուղ վարկի համար: **Վարկերը** տրամադրելուց գյուղացին **խաբվում է**: Ջուրը մեր մարզում ամենագլխավոր խնդիրն է, իսկ **պետական** կառույցները **սին խոստումներ** են տալիս: Այսօր համար առաջին խնդիրներից նաև գյուղացու **հավատի** վերականգնումն է: **Ապահովագրական** ընկերությունների վերաբերյալ **վստահություն** չկա: Շատ են եղել գյուղատնտեսության թեմայով քննարկումներ, սակայն **արդյունք չեն տվել**: Ժողովուրդը **հիասթափված** է ամեն ինչից, մեզ շունչ է պետք, որպեսզի «դուխով» կպնենք աշխատանքի: Միևնույն է մենք աշխատելու ենք, մեր խնդիրներն ենք փորձելու լուծել, քննարկելու ենք, հետո նորից գնանք մեր գործին, մեր **իրականությանը**: Այսօր ամեն ինչ **կենտրոնացած է** մեգապոլիսում՝ Երևանում: Հռոմի ու պրովինցիաների պես, Հռոմը պրովինցիայից տեղյակ չէ, պրովինցիան էլ՝ Հռոմից: Մեկը թշվառության մեջ է, մեկը՝ փառքի:
Գյուղացու հոգսը պետք է **ճիշտ ներկայացվի**: Գյուղատնտեսության ճիշտ **PR** էլ է անհրաժեշտ: Գյուղատնտեսության վերաբերյալ **լրատվությունը** պետք է պրոֆեսիոնալ լինի, մի սխալ բառը կարող է ազդել ամբողջ ոլորտի վրա:	Գյուղացիական կյանքը ճիշտ ձևով չի **լուսաբանվում**:
Նպաստները, որոնք տրամադրվում են անապահովության համար, պետք է գյուղացուն տրամադրվի: Գյուղատնտեսությունը որպեսզի զարգանա, պետք ա այն դիտարկել որպես **բիզնես**, օրինակ	Պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել **բնապահպանական** խնդիրներին: **Բնապահպանական** շերտերը իսպառ վերացել են, ժամանակին կային ու շատ օգնում էին: Բոլոր հողերը արդեն սեփականացվել են ու

կաթից պետք է արտադրել ոչ թե չանախ, այլ ռոքֆոր պանիր:

Եթե գյուղատնտեսության մեջ **ներդրումներ** չանեն, ոչինչ չի փոխվի:

Գյուղատնտեսության զարգացումը մի քանի պրոցեսների ամբողջություն է: **Մի փուլով չի կարող լուծվել**:

Քանի խելոքները մտածում են, պետք է **գժի քայլ** արվի:

Գյուղատնտեսությունը այսօր մահամերձ է, կամ ավելի վատ, և **վերակենդանացման** կարիք կա:

Գյուղում **բիզնես** չկա, գյուղը զբաղված է սեփական ինքնաբավությունը ապահովելու խնդրով:

Սոցիալական համակարգից գնացել են կապիտալիստական, մարդիկ պետք է **սրտացավություն** ունենան, որ աշխատեն:

Աշխարհում մինչև **մրցակցություն** չլինի, զարգացում չի լինի:

Անհրաժեշտ է **մշակութային** հեղափոխություն, որպեսզի ամեն ինչը տեղը ընկնի:

Եթե մենք մեր երկրում ընդունում ենք տնտեսական **մրցակցությունը**, պետք է դա ներդնենք նաև մեր առօրյա կյանք:

Չունես գյուղատնտեսություն, **չունես երկիր**:

Որոշ վայրերում գյուղատնտեսությունը զարգացնելու փոխարեն, **տուրիստական կետեր** են ստեղծում, որոնք, թվում է, ավելի քիչ արդյունավետ է:

Պետք է տեսնել, որ գյուղում ով ավելի շատ է զբաղվում գյուղատնտեսությամբ կամ անասնապահությամբ ըստ այդմ տա **օգնություն**:

Հիմնականում **ուժեղին** պիտի օգնեն որ թույլերը տեսնեն, ձգտեն ուժեղանալ:

Թույլին փոքր չափով պիտի օգնեն, մեծին՝ մեծ:

Մենք չենք կարող **երկու հարյուր տարվա ճանապարհը** երկու տարում անցնել:

բնապահպանական շերտեր ստեղծելը դարձել են դժվար:

Դաշտապաշտպան շերտը պետք է ստեղծվի պետության կողմից, քանի որ անհատ գյուղացին այդքան հնարավորություն չունի:

Բնությանը այստեղ ոչ թե գյուղատնտեսությունն է թշնամի, այլ **բիզնեսը**:

Գյուղացին ոչ մի անտառ չի հատում, դա մի մեծ բիզնես է, որի հետ գյուղացին կապ չունի:

Անտառը մեզ համար օգտակար է: Անպայման պիտի լինի, որ ժողովուրդը հատապտուղ հավաքի:

Վայոց Ձորում անմխիթար վիճակում են գետերը: Դա լուրջ **բնապահպանական** խնդիր է:

Բնապահպանները թույլ չեն տալիս սպանել գիշատիչ կենդանիներին: Կամ պետք է գայլերին վերացնենք, կամ ոչխարներին:

Լիդիան Արմենիան եկավ մեզ մոտ, հիմա ոչ մեկ չի ուզում այլևս անասնապահությամբ զբաղվի:

Արփան տարբեր համայնքներով է անցնում: Վեց մետր հեռավորություն են թողել գետից բոլոր համայնքներում: Մինչև օտարման գոտիների սահմանները այդ վեց մետրերի վրա բարդիներ կարելի է տնկել: Նախ՝ գետի **ափերն ամրանում** են, ճյուղերը վաճառվում են որպես ցախ, բարդու փայտն էլ՝ շինանյութ: Այս ամենը առնվազն տաս տարվա ընթացքում:

Էնքան ենք **միջամտել բնության գործերին**, որ հիմա բնությունը «նագլիացել» ու մեզ պատասխան է տալիս:

Մենք այսօր մեր **թոռների հացն** ենք ուտում, տաս տարվա մեջ մեր հողը շարքից դուրս է գալու:

Հավելված 1. Գունային կոդավորում

Գավառ համայնք (ՀՀ Գեղարքունիքի մարզ), 21 օգոստոսի, 2018թ.

Արմավիր համայնք (ՀՀ Արմավիրի մարզ), 23 օգոստոսի, 2018թ.

Եղեգնաձոր համայնք (ՀՀ Վայոց Ձորի մարզ), 24 օգոստոսի, 2018թ.

Հավելված 2. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավոր զարգացումների քննարկման սցենարները

Սցենար 1. «Մայրիկը հենց այսպես էլ նկարագրում էր քեզ...» («Տղամարդիկ»)

2018-2022 թվականներին, շարունակաբար վատթարացող բնակլիմայական պայմաններին և արտաքին շուկաներում աննպաստ զարգացումներին զուգընթաց, գյուղատնտեսությունը ձևավորել է Հայաստանի ՀՆԱ-ի շուրջ 15%-ը, (ագրովերամշակման հետ միասին՝ շուրջ 25%-ը), որի շուրջ 60%-ը՝ բուսաբուծության, 40%-ը՝ անասնապահության ճյուղում: Մինչ երկրի յուրաքանչյուր երրորդ բնակիչ աղքատ է, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը 60%-ը չի գերազանցում:

Գյուղատնտեսությունում ֆինանսական միջոցների անբավարարության, ցածր եկամտաբերության, մեքենայական աշխատանքների դժվարամատչելիության, հողակտորների կտրտվածության, գյուղարտադրանքի իրացման դժվարությունների, սահմանամերձ համայնքներում նաև հողի մշակման վտանգների պայմաններում վարելահողերի 1/3-ը նպատակային չի օգտագործվում, իսկ ավելի քան 230 հազ. հեկտար ոռոգելի հողատարածքներից ոռոգվում է շուրջ 155 հազարը: Թեև տարեկան կապիտալ ներդրումները ոռոգման համակարգում կազմել են ՀՆԱ-ի 0.3%-ը, իսկ 37 ՋՕԸ-ի և 2 ՓԲԸ-ի ընթացիկ ֆինանսական ճեղքվածքը սուբսիդավորվել է ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով՝ տարեկան շուրջ 6.4 մլրդ դրամ ծավալով, ոռոգելի տարածքները 2018-2022թթ. գրեթե չեն ընդլայնվել: Միաժամանակ, գործող համակարգերում բարելավվել են ջրամատակարարման ծառայությունները, բարձրացել է սակագների ծախսածածկումը: Ջանքեր են գործադրվել ոռոգման մեխանիկական եղանակից ինքնահոսին անցնելու, դեգրադացված հողերը շրջանառության մեջ ներառելու, ոռոգման ջրի բարձր պահանջարկ ունեցող հողատարածքներում մշակաբույսերի ճիշտ ընտրության և մշակության ջրախնայողական տեխնոլոգիաների կիրառման ուղղություններով: ՀՀ պետական բյուջեի հաշվին 2 մլրդ դրամ ծավալով սուբսիդավորվել են տարեկան 1600 հա հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Արարատյան հարթավայրի ոռոգելի երկրորդային աղակալված հողերի բարելավման ծրագրի շնորհիվ շուրջ 8 հազ. հա հողատարածքներում կարգավորվել են գրունտային ջրերի մակարդակները, կանխարգելվել է երկրորդային աղակալումը, կանխվել է բնակավայրերի ջրակալումը:

Հաշվի առնելով գյուղատնտեսության վարման բարձր ռիսկայնությունը՝ պետբյուջեի հաշվին ապահովագրական վճարի մասնակի սուբսիդավորման շնորհիվ աստիճանականորեն ներդրվել է նախ, կամավոր, ապա, պարտադիր ապահովագրական համակարգը: Արտահանող ընկերությունները ապահովագրվում են նախաարտահանման և մատակարարված ապրանքի դիմաց գնորդի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից:

Բնակլիմայական ռիսկերի մեղմելուն նպաստել են մասնագիտական, աղետների ռիսկերի կառավարման և այլ ուղղություններով խորհրդատվական ծառայությունները, այդ թվում՝ սերմնաբուծության և սերմարտադրության, սերմերի որակի ստուգման ու փորձարկման, բարձր վերարտադրության սերմերի օգտագործման, ցածրորակ սերմերի և տնկանյութի օգտագործումը կանխելու, նոր բնակլիմայական պայմաններին հարմարվող սորտերի կազմի ընդլայնման, բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի, մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրերի, անասնապահության ոլորտում տնտեսությունների խոշորացման և առևտրային կազմակերպությունների ձևավորման, կոոպերացիային ուղղված գիտահետազոտական ծրագրերի իրականացման, նորամուծություններին, տեխնիկական վերազինմանը և տեխնոլոգիական գործընթացների արդիականացմանն ուղղված ծրագրերը:

Աղքատության բարձր մակարդակի պայմաններում վառելափայտը մնում է գյուղական և քաղաքային բնակչության ստվար շերտերի գոյատևման մատչելի միջոց: Անտառային ռեսուրսներից համայնքների մեծ կախվածության և գերշահագործման արդյունքում խիստ վտանգված են անտառային էկոհամակարգերը: Ապօրինի հատումները տասնապատիկ գերազանցում են թույլատրված ծավալները: Թեև մեղվաբուծությունը և դեղաբույսերի, հատապտուղների, վայրի պտուղների, սնկերի հավաքումը, վերամշակումը և իրացումը զգալի եկամուտներ են ապահովում գյուղական բնակչության համար, այդուհանդերձ, բնափայտի գերհատումները և անտառապաշտպանական միջոցառումների բացակայությունը, անտառային հողերի օգտագործումը հողագործության, անասնապահության, արդյունաբերության նպատակներով, վնասատուներն ու հիվանդությունները, գերարածեցումը, անվերահսկելի հրդեհները, հողմերն ու երաշտը հանգեցրել են անտառների ընդհանուր կենսազանգվածի և պաշարների կորստի, կլիմայական պայմանների փոփոխության, հողերի դեգրադացման և անապատացման:

2022թ. ապրիլին Հայաստանի սահմաններին սկսված լայնածավալ ռազմական գործողությունները նոր մարտահրավեր դարձան երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ստեղծված իրավիճակում երկրի գյուղատնտեսությունը պիտի արձագանքեր պարենային անվտանգության մարտահրավերին:

Սցենար 2. «Բա կարծում ես մի մարդով եզ շուռ տալը հե՞շտ է» («Մենք ենք, մեր սարերը»)

Շուրջ 340,000 գյուղացիական տնտեսություններից յուրաքանչյուրին միջինում բաժին է ընկնում 1.4 հա հողատեսք, այդ թվում՝ 1.1 հա վարելահող, ինչը բացառում է ինտենսիվ տեխնոլոգիաներն ու արդյունավետ տնտեսվարումը: Շուրջ 1,2 մլն մասնատված 3-4 հողակտորի վրա ցածր մրցունակությամբ բնամթերային տնտեսություններն արտադրում էին գյուղարտադրանքի շուրջ 97%-ը: Գյուղաշխատանքների մեքենայացման ցածր մակարդակի, ագրո- և զոո-տեխնիկական կանոնների թերի կատարման, փոխառու և հիմնական միջոցների սղության, արդիական տեխնոլոգիաների ներդրման դանդաղ տեմպերով պայմանավորված՝ աշխատանքի արտադրողականությունը խիստ ցածր էր, ինչը մարտահրավեր էր իրացմանը: 2018-2022թթ. բնակլիմայական նպաստավոր պայմաններում անգամ գյուղարտադրության բարձր ռիսկայնության և ապահովագրության բացակայության, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերի և սպասարկող ենթակառուցվածքների ձևավորման դանդաղ տեմպի պատճառով ներդրողների համար ոլորտը գրավիչ չէր: Գյուղատնտեսության զարգացման գերակա ուղղություններ դարձան պետական ֆինանսական աջակցությունն արտադրությանը, վերամշակմանն ու արտահանմանը և կոոպերացիայի խթանումը:

Պետական բյուջեն սուբսիդավորում էր գյուղատնտեսությանը տրամադրվող վարկերի տոկոսադրույքը. համապատասխան ուսուցում անցած տնտեսվարողներին մինչև 10 մլն դրամ վարկը տրամադրվում էր 5% տոկոսադրույքով: Տարեկան շուրջ 1.1 մլրդ դրամով սուբսիդավորվում էր 90 մլրդ դրամ ընդհանուր ծավալով շուրջ 100,000 վարկ: Մասնակիորեն սուբսիդավորվում էր հողօգտագործողների՝ հանքային պարարտանյութերի և դիզվառելիքի ձեռքբերման ծախսը, տարեկան համապատասխանաբար 2.5 մլրդ և 330 մլն դրամ ծավալով: Արդյունքում 1 կգ ֆոսֆորական և կալիումական պարարտանյութը հասանելի էր 140 դրամով, իսկ 1լ դիզվառելիքը՝ 380 դրամով: Մասնակիորեն սուբսիդավորվում էր ՌԴ-ից ներկրված աշնանացան ցորենի, առվույտի բարձր վերարտադրության սերմերի ձեռքբերումը, ինչի արդյունքում ցորենի ինքնաբավության մակարդակը 2022թ. հասավ 65%-ի: Մասնակիորեն սուբսիդավորվում էին նաև տոհմային անասնագլխաքանակի ձեռքբերման, արհեստական սերմնավորման և թռչնամսի արտադրության ծախսերը, կաթիլային ոռոգման համակարգերի և հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքը, արդիական տեխնոլոգիաների ձեռքբերումը և գյուղտեխնիկայի լիզինգը, ոռոգման ջրի արժեքը, չմշակվող, դեգրադացվող հողերի վերականգնման և օրգանական գյուղատնտեսության զարգացման ծախսերը, վնասատուների դեմ պայքարի միջոցների և նոր հիմնվող մինչև 500մ2 ջերմատների, կաթի հավաքման սառնարանային կետերի և վերամշակման արտադրամասերի կառուցման ծախսերը: Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը մասնակիորեն սուբսիդավորում էր հումքի մթերման նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերը, կաթնամթերքի վերամշակման, մրգերի և բանջարեղենի պահածոյացման, գինու արտադրության, ձկնաբուծության և թռչնաբուծության, սառնարանային և ջերմոցային տնտեսությունների ծախսերը: Սուբսիդավորման արդյունքում վարկառուի կողմից վճարվող տարեկան տոկոսադրույքը չէր գերազանցում 3%-ը: Մասամբ սուբսիդավորվում էին գյուղապահովագրական վճարներն ու կանխավճարները, արտահանմանն ուղղված վարկի տոկոսադրույքը: 2022թ. գյուղատնտեսության վարկավորման ծավալն անցավ՝ 150 մլրդ դրամը, իսկ դրա հարաբերակցությունը ՀՆԱ-ին՝ 20%-ը: Մտահոգիչ էր մնում գործընթացի թափանցիկությունը և կոռուպցիան:

Ապրանքարտադրողների արտոնյալ վարկավորման, նյութատեխնիկական ռեսուրսների տրամադրման և պետական աջակցության տարբերակված քայլերն ուղղվել են խթանելու հողերի և բնական ռեսուրսների համատեղ օգտագործումը, տնտեսությունների միավորումն ու խոշորացումը, կամավոր կոոպերացիան: Մինչև 2022թ. ստեղծվել են սպառողական, արտադրական, մատակարարման, վերամշակող, իրացնող, սպասարկող, այգեգործական, արոտօգտագործողների ավելի քան 500 գյուղատնտեսական կոոպերատիվներ: Մասնակից ֆերմերներին տրամադրվել են սերմեր, տնկիներ, անասուններ, պարարտանյութ, վառելիք, գործիքներ, ագրոտեխնիկա, սարքավորում, լաբորատոր և փաթեթավորման սարքեր, համապարփակ դասընթացներ և խորհրդատվություն, մշակվել են ապրանքանիշեր՝ արժեշղթաներ ներկայացնող կոոպերատիվների համար: Երկրում ստեղծվել են գյուղարտադրանքի առաջնային պահպանման և վերամշակման նոր ենթակառուցվածքներ՝ սառնարաններ, սպանդանոցներ, չորանոցներ, փոխադրման նոր ավտոշարակազմեր: Հիմնանորոգվել են ավտոճանապարհներ, հատկապես հեռավոր լեռնային ու սահմանամերձ բնակավայրերում: Այդուհանդերձ, խոշորացումը տևական գործընթաց է: Արտադրողականության բարձրացման արդյունքում շատ ֆերմերներ դարձել են վարձու աշխատող, գյուղատնտեսական կոոպերատիվները հայտնվել են ավելացված արժեքի հարկման դաշտում և անհավասար մրցակցային պայմաններում:

2021 թվականին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի նոր ալիքը, նավթի գների անկումը, ՌԴ-Վրաստան հարաբերությունների վատթարացման նոր ալիքը, երկրի հյուսիսարևելյան սահմանին լարվածության սրացումը լրջագույն մարտահրավերներ ստեղծեցին Հայաստանի գյուղատնտեսության համար:

Սցենար 3. «Կեղնի՞ մե օրմ, օր տեսնիմ էս աշխարհն ինչի՞ է ըսպես ծուռ...» («Մեր մանկության տանգոն»)

Աշխարհագրական դիրքի, ուղղաձիգ գոտիականության, ռելիեֆի կտրտվածության, սակավահողության և հողի ոչ բավարար խոնավության պատճառով Հայաստանը երկրագործության համար ծայրահեղ ռիսկային երկիր է: Հողերի ավելի քան 70%-ը ենթակա է անապատացման և դեգրադացիայի: 2018-2020թթ. գյուղատնտեսությանը աննախադեպ կորուստներ ու վնաս հասցրին տարերային, տեխնածին և կլիմայի փոփոխության հետ կապված աղետները, դրանց քանակն ու ինտենսիվությունը զգալիորեն ավելացան: Երաշտից, կարկուտից, հեղեղումներից, գարնանային ցրտահարություններից և սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը կազմեց ավելի քան 40 մլրդ դրամ: Տարեկան վնասվում էր մշակաբույսերի և բազմամյա տնկարկների շուրջ 40,000 հա տարածք՝ հիմնականում մարտ-հոկտեմբեր ամիսներին, յուրաքանչյուր 5-րդ համայնքում, կարկտահարության պատճառով: Բերքը կորցնում էր ապրանքային տեսքը, իրացումը՝ դժվարանում, եկամուտները՝ նվազում, իսկ միջին լեռնային գոտում բերքի կորուստը կազմեց մինչև 100%: Այգիների վերականգնումը պահանջում էր ավելի քան մեկ տարի և լրացուցիչ ֆինանսական ներդրումներ: Հովտային գոտիներում կտրուկ ավելացան ուշ գարնանային ցրտահարությունների հաճախականությունն ու ինտենսիվությունը, վնասվում էին մատղաշ մշակաբույսերի սածիլները, ծիլերը, բույսերի ծաղիկները: Կլիմայի փոփոխության արդյունքում կրճատվեցին ջրային ռեսուրսները: Վտանգվեցին բուսաբուծության արտադրանքի շուրջ 70%-ը ապահովող ոռոգվող հողերը. շուրջ 10%-ով կրճատվեց արոտավայրերի մակերեսն ու բերքատվությունը, իսկ ենթալպյան և ալպյան գոտու առավել արժեքավոր արոտավայրերինը՝ 20%-ով: Շուրջ 10%-ով նվազեց խոտհարքների բերքատվությունը, կրճատվեցին կերարտադրության ծավալները, ավելացան կենդանիների հիվանդությունները, բնական-օջախային և տարափոխիկ վարակների տարածումը: Աննախադեպ վնաս պատճառեցին մի կողմից մշակաբույսերի աճի առաջին փուլի հետ համընկնող գարնանային երաշտները, մյուս կողմից՝ գարնանային վարարումներն ու հեղեղումները: Հորդառատ անձրևների հետևանքով սողանքներն ու սելավները շուրջ 100 հազար հա հողերի տարեկան շուրջ 25 մլն ԱՄՆ դոլարի վնաս էին հասցնում: Արարատյան հարթավայրում ձկնաբուծական տնտեսությունների աննախադեպ տեմպերով զարգացումը հանգեցրեց Արարատի և Արմավիրի մարզերում ոռոգման, խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող բազմաթիվ խորքային հորերի թողունակության նվազմանը:

Աղետների կառավարումը, կանխումն ու կանխարգելումը, հետևանքների նվազեցումն ու վաղ ազդարարումը դարձան գյուղարտադրանքի կորուստների նվազեցման գերակա ուղղություն: 2021-2022թթ. ավելացան հակակարկտային հրթիռային համակարգերը, գազագեներատորային և ազդանյութով աշխատող կայանքները վերազինվեցին և տեղակայվեցին սահմանամերձ գոտիներում՝ կանխելով մթնոլորտային ճակատային գործընթացների հետագա զարգացումը, պաշտպանելով մշակվող տարածքների 20%-ը և կրճատելով կարկտահարության պատճառած միջին տարեկան կորուստները ավելի քան 90%-ով: ԵԱՏՄ անդամ երկրներից մատչելի պայմաններով ձեռք բերվեցին նոր սերնդի պայքարի միջոցներ: Հակակարկտային կայանքների պաշտպանությունից դուրս մնացած գոտիներում վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման շնորհիվ (վարկը տրամադրվում էր 2% տոկոսադրույքով) հակակարկտային պոլիմերային հիմքով ցանցերով 100% արդյունավետությամբ պաշտպանվել է շուրջ 1000 հա խաղողի և պտղատու այգի:

Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի պետական սուբսիդավորման արդյունքում հանրապետության բարդ ռելիեֆ ունեցող հողատարածքների զգալի մասը ոռոգվում էր: Ջրի տնտեսումը հասավ ավելի քան 70%-ի, ոռոգման ծախսերը էականորեն կրճատվեցին, իսկ բերքատվությունն ավելացավ 20-50%-ով:

Զարգացավ բնակլիմայական պայմաններին հարմարված սերմացուների սերմնաբուծությունը և ավելացավ անասնագլխաքանակը, բարելավվեցին տոհմային ու մթերատու հատկանիշները: Գետերի ափերին և դաշտերի եզրերին տնկվեց ավելի քան 50,000 ծառ: Բանջարաբուծության մեջ ծավալվեց վաղ գարնանը պոլիէթիլենային թաղանթների տակ բույսերի աճեցումը: Մասնակիորեն սուբսիդավորվում էր փոքր ջերմատների կառուցումը, իսկ արևային էներգիայով աշխատող մեծ ջերմատնային տնտեսությունների կառուցման համար անհրաժեշտ հիմնական սարքավորումների և կոնստրուկցիոն նյութերի ներմուծման համար հարկային էական արտոնություններ սահմանվեցին: Հարկային արտոնություններ և սուբսիդավորում էր տրամադրվում նաև գյուղարտադրության և վերամշակման կոոպերատիվներին՝ լեռնային և սահմանամերձ համայնքներում վերականգնվող՝ արևի, հողմի, երկրի ընդերքի, ջրի էներգիայի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու համար:

Շրջադարձային նշանակություն ունեցավ դաշտային պայմաններում բերքի ստացման ավտոմատ կառավարման համակարգի ներդրման համար կոոպերատիվներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի պետական սուբսիդավորումը (վարկեր՝ 0.5% տոկոսադրույքով): Ավելի քան 300 կոոպերատիվ հնարավորություն ստացավ վեգետացիայի ընթացքում ՏՀՏ տեխնոլոգիաներով հետևել բույսերի աճին ու զարգացմանը, ավտոմատ կարգավորել խոնավությունն ու ոռոգումը, սնուցումն ու պարարտացումը, բուժումը:

Սցենար 4. «Էդ մեքենան ինչքան քոնն է, էդքան էլ իմն է, հասկացա՞ր...» («Խոշոր շահում»)

2019-2020թթ. յուրաքանչյուր երրորդ հայաստանցի բնակվում էր գյուղում: Գյուղատնտեսությունում զբաղված էր շուրջ 400,000-ը՝ երկրում զբաղվածների մեկ երրորդը, գյուղերում զբաղվածների 80%-ը: Գյուղարտադրանքը թողարկում էին հիմնականում տնային տնտեսությունները: Տնտեսությունների փոքր չափերի պատճառով, սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէր, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և վճարովի ծառայություններ է տրամադրում: Փոքր հողակտորների և մասնատվածության պայմաններում մեծանում էր ագրեգատների պարապ ընթացքը: Գյուղտեխնիկայի շուրջ 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել էր: Մաշված և անսարք մեքենատրակտորային հավաքակազմը, նորոգման և տեխսպասարկման մեծ ծախսերը, վառելանյութի և քսայուղերի գերածախսը, բերքի գերնորմատիվային կորուստները տեխնիկայի օգտագործումը ցածր արտադրողական և թանկ էր դարձնում: Մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով մշակության մի շարք գործընթացներ չէին կատարվում կամ կատարվում էին ձեռքով՝ խիստ բարձրացնելով աշխատատարությունը:

Գյուղտեխնիկայի ձեռք բերման ֆինանսական վարձակալության՝ լիզինգի մասնակի սուբսիդավորման (վարկը՝ 2% տոկոսադրույքով) արդյունքում գյուղկոոպերատիվները ձեռք բերեցին տրակտորներ, կոմբայններ, հավաքիչ-մամլիչներ, տրակտորային շարքացաններ, գութաններ, խոտհնձիչներ, կարտոֆիլատնկիչներ և քանդիչներ, կուլտիվատորներ, ֆրեզներ, սրսկիչներ, այդ թվում՝ լեռնային տեղանքին հատուկ: Ի լրումն մեքենայական աշխատանքների՝ կոոպերատիվները մատուցում էին արտադրատեխնիկական սպասարկման և մարկետինգի ծառայություններ: 2020-2022թթ. արդյունավետ մենեջմենթ և նոր տեխնիկական միջոցներ ունեցող գյուղմեքենայական աշխատանքներ իրականացնող տասնյակ կոոպերատիվների շնորհիվ շուրջ 30%-ով բարձրացավ արտադրողականությունը, 20%-ով՝ մշակաբույսերի բերքատվությունը, նվազեց մեքենայական աշխատանքների ծախսը, մշակաբույսերի ցանքատարածությունները դարձան 450,000 հա, ավելացան տեղական արտադրանքի և վերամշակման ծավալները, տեղական արտադրանքը դարձավ ավելի մրցունակ:

Պետությունը մասնակիորեն սուբսիդավորեց առնվազն 15 հա հողատարածք ունեցող տասնյակ կոոպերատիվների՝ գարնանացան ցորենի, ոլոռի, սիսեռի, ոսպի, գարու, եգիպտացորենի, առվույտի, կորնգանի և հնդկացորենի ցանքաշրջանառությունների կիրառմամբ արտադրության ծախսերը: Արդյունքում ավելացավ համախառն բերքը, հացահատիկային, հատիկաընդեղենի և կերային մշակաբույսերի բերքի ինքնաբավությունը, նվազեց ներկրումը, զարգացավ արտադրման, վերամշակման և սպառման արժեշղթան:

Մասնակիորեն սուբսիդավորվում էր նաև սերմնաբուծությունն ու արհեստական սերմնավորման կայանների վերազինումը, բարձր վերարարտադրության սերմերի և տոհմային անասնագլխաքանակի ձեռքբերումը: Համատարած սկսեց կիրառվել արհեստական սերմնավորումը: Խստացվեց գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների հսկողությունը, դրանց բռնկումների կանխարգելման աշխատանքները:

Կաթի հավաքման սառնարանների, սպանդանոցների, անասնաբուժական դեղամիջոցների տեղական արտադրությունը սուբսիդավորելու, ալպիական արոտների բարելավման և նպատակային օգտագործման համակարգի ներդրման, տարածաշրջաններում պետական անասնաբուժական ծառայությունների ապապետականացման, մասնավոր անասնաբուժական ծառայությունների վարկավորումը սուբսիդավորելու, Սիմենթալ, Հոլշտեն, Շվից ցրտադիմացկուն, անասնաշենքերի պահանջ չունեցող, անգամ ձյունածածկ տարածքներում բնական կերահանդակներում արածեցվող Հայլենդյան ցեղերի տավարի ներմուծման, իրանական սպառողների պահանջարկը բավարարելու պայմանների ստեղծման, բրդի և կաշվի պահանջարկը խթանող գործագործության, կոշիկի և հագուստի արտադրության զարգացման արդյունքում խոշոր և մանր եղջերավորների գլխաքանակը 2022 թվականին կրկնապատկվեց՝ հասնելով շուրջ 3 միլիոնի:

Նախընտրելի մասնագիտացումը խթանելու նպատակով 2019-2022թթ. սուբսիդավորման բոլոր ծրագրերն իրականացվեցին՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները և համաչափ զարգացման սկզբունքը, գոտիականության տարբերակված, հասցեական մոտեցումները. սուբսիդավորվում էր առավել բարենպաստ պայմաններ ունեցող և տվյալ գոտու համար համեմատաբար բարձր ավելացված արժեք ապահովող մթերքների արտադրությունը: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման արդյունքում վարկերը տրամադրվում էին 3% տոկոսադրույքով:

Սցենար 5. «Ուրեմն ես՝ Փարսադանի տղա Մուրադս, գամ հասնեմ էստեղ՝ ինձ ասեն «նյե՞տ»...» («Հարսնացուն հյուսիսից»)

2019-2020թթ. գյուղատնտեսության ոլորտում իրականացված մի շարք պետական ծրագրեր նպաստեցին տնտեսությունների խոշորացմանն ու կոոպերացիային, ոռոգման համակարգերի բարելավմանը, արտադրության, վերամշակման և կառավարման նոր տեխնոլոգիաների ներդրմանն ու հզոր ենթակառուցվածքների ստեղծմանը, տեխնիկական վերազինման ու բնակլիմայական աղետների ռիսկերի կառավարմանը, կամավոր ապահովագրական համակարգի ներդրմանը:

Գյուղատնտեսությանը պետական ֆինանսական աջակցությունն ու սուբսիդիաները տրվում էին բացառապես կոոպերատիվների միջոցով: Այգեգործության, ձկնաբուծության և մեղվաբուծության նորաստեղծ կոոպերատիվներին, միավորումներին և ընկերություններին տրամադրվում էր հսկայածավալ աջակցություն: Երիտասարդ և կին ֆերմերների համար սահմանվեցին վարկերի տրամադրման արտոնյալ պայմաններ: Տնտեսությունների խոշորացման արդյունքում հարկային դաշտում հայտնված ֆերմերների միավորումների և վերամշակող ընկերությունների միջև երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունները դարձան համատարած պրակտիկա: Արդյունքում ավելացան լոլիկի, պտղի, խաղողի և կաթի արտադրության ծավալները: Նշված ժամանակահատվածում ավարտվեց գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը, ստեղծվեց հավաքման կետերի և գյուղմթերքների իրացման տեղեկատվական կենտրոնների ազգային ցանց: Երևանում, Գյումրիում և Վանաձորում ստեղծվեցին գյուղմթերքի մշտական տոնավաճառներ:

2020թ. ներդրվեց կարևորագույն գյուղմթերքների երաշխավորված գների համակարգը: Պետությունը կոոպերատիվներից երաշխավորված գնով և չափաքանակով գնում էր գյուղարտադրանքը՝ կանխելով սահմանված նվազագույնից գների նվազումը: Մսամթերքի և կաթնամթերքի շուկայի կարգավորման նպատակով սահմանված գներով վերամշակողներից պետական պահուստի համար գնվում էր կարագ և մսամթերք: Վերջինները կաթ և միս արտադրողներին վճարում էին սահմանված նվազագույն գինը: Երաշխավորված գների և չափաքանակների մասին գյուղմթերք արտադրողները տեղեկացվում էին տարվա սկզբից երեք ամիս առաջ: Ոչ բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող գոտիներում պետությունն իր վրա վերցրեց գյուղվարկերի ևս 2%-ի մարումը: Այդուհանդերձ, անգամ տարածաշրջանում հարաբերական կայունության պայմաններում գյուղմթերքի արտահանումը մնում էր սահմանափակ:

2021 թվականից պետական աջակցությունը մեծապես ուղղվեց արտաքին շուկաներում գյուղմթերքի մրցունակության բարձրացմանն ու արտահանման խթանմանը: Արտաքին շուկաների պահանջներին բավարարող որակի, սառեցման, փաթեթավորման և պահեստավորման ապահովման նպատակով Գյուղատնտեսության զարգացման ներդրումային հիմնադրամի միջոցով իրականացվում էին վենչուրային ծրագրեր: Պետական աջակցությամբ ձևավորվեց հայկական ապրանքանիշ: Արտերկրի ցուցահանդեսներում հայկական գյուղմթերքի գրավիչ ներկայացման նպատակով պետությունը համաֆինանսավորում էր տաղավարի ծախսը: Մեղվաբույծներին տրամադրվում էր խորհրդատվական և տեխնիկական, ինչպես նաև մեղրի և զուգակցվող արտադրանքների (մեղրամոմ, մեղվի թույն) արտադրության և արտահանման աջակցություն:

Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցով սուբսիդավորվում էին արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերությանը, պաշտպանական և ազգային անվտանգության կարիքների համար արտադրությանն ուղղվող վարկերը՝ 3%, իսկ սահմանամերձ բնակավայրերում՝ 7% տոկոսային կետի չափով: Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալությունը տրամադրում էր ապահովագրություն՝ գյուղմթերք արտահանող ընկերությունների կողմից մատակարարված ապրանքի դիմաց գնորդի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից: Արտահանողներին առաջարկվում էր նաև նախաարտահանման ֆինանսավորման ապահովագրության ծառայություն՝ վկայագրի հիման վրա, առանց գրավի, բանկային կարճաժամկետ ֆինանսավորման ծառայություններից օգտվելու հնարավորություն:

Միաժամանակ, Հայաստանը կատարել է ԱՄԿ առջև ստանձնած պարտավորությունները, գյուղարտադրանքի արտահանման համար լրավճար չի տրամադրել, առանձին ապրանքներին աջակցությունը չի գերազանցել գյուղարտադրության արժեքի 5%-ը: Կատարվել են նաև ԵԱՏՄ մասին պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ գյուղապրանքներ արտադրողներին ուղղակի վճարումներ չեն կատարվել, ԵԱՏՄ անդամ-պետությունների գնորդներին գյուղապրանքներ չեն առաջարկվել դրանց շուկայում գներից ցածր գներով: Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում միջպետական և միջազգային, այդ թվում՝ ԵԱՏՄ և ԵՄ ստանդարտների ներդրմանը զուգահեռ, հստակեցվեցին և պարզեցվեցին գյուղմթերքների արտադրության, վերամշակման փաստաթղթաշրջանառությունը, մակնշման, սերտիֆիկացման և արտահանման մի շարք կարևոր ընթացակարգեր, թույլտվություններ: Շատ դեպքերում կիրառվում էր մաքսային պարզեցված ռեժիմ: Արդյունքում, Հայաստանի արտահանման կառուցվածքում գյուղարտադրանքի տեսակարար կշիռը 2022թ. հասավ շուրջ 40%-ի:

Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը



Հավելված 4. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով



Հավելված 5. Գյուղատնտեսական գործունեությամբ եկամուտների ավելացման և պարենային անվտանգության բարձրացման հնարավորությունների զարգացման այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները

Անորոշություններ/առանցքներ

1. Ներմուծման փոխարինման և/կամ արտահանման շուկաներում պայմաններ՝ գլոբալ և տարածաշրջանային ճգնաժամեր և զարգացումներ (նպաստավոր-աննպաստ)
2. Բնակլիմայական պայմաններ (նպաստավոր-աննպաստ)

Կոոպերացիայի առկայությունը և արդյունավետությունը

- Կոոպերացիայի միջոցով մասնակիցների մրցունակության բարձրացմանը նպաստող իրավական կարգավորումը.
- Կոոպերացիայի մասնակիցների կարողություններ.
- Լիդերի դերը կոոպերացիայում.
- Ֆինանսական միջոցների հասանելիություն (ուղիղ ներդրումներ, սուբսիդիաներ, մատչելի փոխառու միջոցներ).

Պետական օժանդակության ծրագրեր (բարելավում)

- Առկա ծրագրեր.
- Առկա նախաձեռնություններ.

Ենթակառուցվածքներ

- Ոռոգման համակարգ.
- Ֆիզիկական ենթակառուցվածք (ջրագծեր, պոմպակայաններ).
- Կառավարում, ՋՕԸ.
- Հաշվառում և հավաքագրում.
- Ջրի և ջրամատակարարման որակ.

Տրանսպորտային ենթակառուցվածքներ

- Ավտոմոբիլային (ներհամայնքային, միջհամայնքային, հանրապետական).
- Միջդաշտային.
- Օդային տրանսպորտ (գին).
- Երկաթգիծ (գին, ծածկույթ). ներպետական և միջպետական.
- Սահմանային անցակետեր (ընթացակարգեր, ֆիզիկական հասանելիություն (օր. Է Լարս)).

Առաջնային պահպանման և վերամշակման ենթակառուցվածքներ

- Կաթի պահպանման սառնարան, միս՝ սպանդանոց, միրգ՝ չորանոց, սառնարան, ներառյալ մեքենաներով փոխադրումը.

Արտադրությանը նպաստող միջոցներ

- Ժամանակակից գյուղտեխնիկա, արտադրության այլ/լրացուցիչ միջոցներ.
- Արհեստական սերմնավորման կայաններ.
- Սերմնաբուծարաններ, տնկարաններ.

Վարչարարություն

- Ընթացակարգեր՝ փաստաթղթեր, թույլտվություններ, սերտիֆիկացիա, մակնշում, ներքին շուկա, սննդի անվտանգություն, երաշխիքներ.

- Պետական գնումների մրցույթների մասնակցություն՝ ընթացակարգեր, էլեկտրոնային գնումների համակարգ (մեխանիզմներ).
- Առկա ընթացակարգերի վերաբերյալ իրազեկում, իրազեկվածություն.
- Սննդի անվտանգության երաշխիքներ (ներդրումներ ապահովելու առումով միջոցներ և գիտելիք).

Մարքեթինգ և իրացում (հանրային ծառայություններ բիզնեսին)

- Արտադրական միջոցների ձեռքբերման այլընտրանքների առկայություն և դրանց մասին իրազեկում.
- Տեղեկատվական ենթակառուցվածքներ (ձեռքբերման).
- Շուկաների մասին տեղեկություններ.
- Տեղեկատվության հասանելիություն.
- Շուկաների վերլուծություններ (որտեղ են ապրանքները մրցունակ).
- Իրացման կազմակերպման պայմանագրային հարաբերությունների զարգացում/խթանում/խրախուսում և օրենքի գերակայություն (contract enforcement), պայմանագրերի իրականացման երաշխիքներ (արդարադատություն և ֆինանսական համակարգ՝ բիզնես օմբուցմեն, արբիտրաժ).
- «սուբսիդավորում» (անուղղակի).
- Իրացման կանխատեսելիության խնդիր. իրացման գործընթացում որոշակիության ավելացում.
- Մարքեթինգային գրասենյակներ. մթերման, հավաքման կայաններ, փոքր ֆերմերներից հավաքում, փաթեթավորում.
- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի մարզային կառույցներ.
- Գյուղմթերքի ձեռքբերման և արտահանման գործընթացում մրցակցային պայմաններ (մոնոպոլիա, արտոնություններ, օլիգոպոլիա, հակամրցակցային պրակտիկա (օր.՝ կաթնամթերքի ոլորտում), արտահանման խոչընդոտներ ներքին միջավայրում).
- ԵԱՏՄ (արտահանման և վերաարտահանման պրակտիկա՝ Թուրքիա-Ռուսաստան շղթա).
- ԵՄ՝ ներդրումների ստանդարտներին համապատասխանեցման համար (սերտիֆիկացում, ստանդարտներ), միջնորդներ (շուկայի միջնորդավորում), շուկայում դիրքի խնդիր
- Փոխադարձ երաշխիքների խնդիրը ողջ շղթայում.
- Արտահանման պայմաններին պետական աջակցության մեխանիզմներ.
- Փոքր vs. մեծ. ստանդարտների խնդիր (ստանդարտներ պահպանման կատարման ապահովում).

Գոտիական առանձնահատկություններ

- Բնակլիմայական պայմաններ.
- Ենթակառուցվածքներ՝ գոտուն բնորոշ.
- Տեխնոլոգիաներ.
- Պետական աջակցություն՝ ըստ գոտիների (այդ թվում՝ ֆինանսներ, արտոնություններ).
- Ունիվերսալ vs. մոդելներ.
- Մշակույթ, սովորություններ, ավանդույթներ, պրակտիկա.
- Մրցակցային առավելություններ (օր՝. ջրի, օդի, հողի որակ, որը հիմք կարող է հանդիսանալ օրգանական գյուղատնտ. համար).

Կանանց ներգրավվածությունը գյուղատնտեսությունում

- Որոշումների կայացում.

Երիտասարդների ներգրավվածություն

Ժամանակակից տեխնոլոգիաներ

- Կարկտապաշտպան ցանցեր.

- Հիդրոպոնիկա.
- Ինտենսիվ այգիներ.
- Վերականգնվող էներգիայի կիրառում.
- Արևային էներգիայով ջերմոցներ.
- ՏՀՏ կիրառում գյուղատնտեսական գործունեությունում.

Բնապահպանական խնդիրներ

Գյուղատնտեսության հարկում

- Գյուղատնտեսական առաջնային արտադրանքի հարկում (մարտահրավերներ և հնարավորություններ).
- Նպատակային սուբսիդավորումներ.

Գյուղատնտեսության ապահովագրում

- Ռիսկերի դիվերսիֆիկացիա (ռիսկերի պատասխանատվության բեռի վերաբաշխում, արտադրող, պետություն, ապահովադիր, ապահովագրող).
- Ապահովագրությունը որպես ծախս.
- Պետության դերը.
- Ճիշտ իրազեկում և օգուտների ներկայացում (ինչ է շահում գյուղացին).

Գյուղատնտեսական կրթություն

Գյուղատնտեսական խորհրդատվություն

- Նոր հմտություններ և գիտելիք.
- Պրակտիկա.
- Նորարարություն.
- Մասնագիտական կադրերի առկայություն.

Գլոբալ և տարածաշրջանային ճգնաժամեր և զարգացումներ

- ՌԴ ճգնաժամի օրինակը.

Ֆինանսավարկային խոչընդոտներ

Բնակլիմայական աղետներ

- Երաշտ, ցրտահարություն, կարկտահարում.

Հակամարտություն, լարվածության սրում կոնկրետ տարածքներում

Լայնածավալ ռազմական գործողություններ

Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը